

Հավելված
ՀՀ կառավարության 2015 թվականի
հունվարի 15-ի N 40 - Ն որոշման

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
2015-2018 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ
ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ**

ՀՐԱՋԴԱՆ 2014

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՈՒՂԵՐՁԸ	5
ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ	7
1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	9
2. ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ.....	15
3. ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՈՒՄ.....	18
4. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ, ՓՄՁ ԵՎ ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾ.....	22
4.1 ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ.....	22
4.1.1 Արդյունաբերության ոլորտի իրավիճակի վերլուծություն.....	22
4.1.2 Արդյունաբերության ոլորտի զարգացման նպատակները և ռազմավարությունը---	27
4.2 ՓՄՁ ԵՎ ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾ.....	34
4.2.1 ՓՄՁ ոլորտի իրավիճակի վերլուծություն.....	34
4.2.2 Ծրագրի արդյունքները և հետագա խնդիրները.....	37
4.2.3 Մասնավոր հատվածի զարգացման հիմնախնդիրները.....	37
4.2.4 Մասնավոր հատվածի զարգացման 2015-2018թթ. առաջնահերթությունները.....	38
4.3 ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ.....	39
4.3.1 Զբոսաշրջության ոլորտի իրավիճակի վերլուծություն	39
4.3.2 Զբոսաշրջության ոլորտի զարգացման ռազմավարությունը.....	42
5. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ.....	44
5.1 Գյուղատնտեսության ոլորտի իրավիճակի վերլուծություն.....	44
5.2 Բուսաբուծություն.....	46
5.3 Անասնաբուծություն.....	48
5.4 Գյուղատնտեսության զարգացման ծրագրի նպատակը և ռազմավարությունը---	57

6.	ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ-----	61
6.1	Ոլորտի իրավիճակի վերլուծություն -----	61
6.2	Բնապահպանության ոլորտի խնդիրները և ռազմավարությունը-----	71
7.	ԿՐԹՈՒԹՅՈՒՆ-----	74
7.1	Կրթության ոլորտի իրավիճակի վերլուծություն-----	74
7.2	Կրթության ոլորտի զարգացման ռազմավարությունը-----	85
8.	ՄՇԱԿՈՒՅԹ, ՍՊՈՐՏ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ-----	88
8.1	Մշակույթ-----	89
8.2	Սպորտ -----	96
8.3	Երիտասարդության հարցեր-----	98
9.	ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ-----	100
9.1	Առողջապահության ոլորտի իրավիճակի վերլուծություն-----	100
9.2	Առողջապահության ոլորտի զարգացման հիմնական ուղղությունները-----	103
10.	ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ-----	106
10.1	Սոցիալական պաշտպանության ոլորտի իրավիճակի վերլուծություն-----	106
10.2	Սոցիալական ապահովություն-----	109
10.3	Սոցիալական պաշտպանության ոլորտի զարգացման նպատակները և ռազմավարությունը-----	118
10.4	Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանություն-----	119
10.5	Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության հիմնախնդիրները և զարգացման ռազմավարությունը-----	120
11.	ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ-----	124
11.1	Քաղաքաշինության ոլորտի իրավիճակի վերլուծություն-----	125
11.2	Քաղաքաշինության ոլորտի զարգացման ռազմավարությունը-----	129
12.	ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ-----	130
12.1	Ճանապարհաշինություն, տրանսպորտային ենթակառուցվածքներ-----	131

12.2	Զրամատակարարում-----	135
12.3	Գերեզմանատների շահագործում-----	137
12.4	Գազամատակարարում-----	138
13.	ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ-----	143
13.1	ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ-----	143
13.1.1	Վարչատարածքային բաժանում -----	143
13.1.2	Գերակայություններ և հիմնախնդիրներ -----	143
13.1.3	Մարզպետարանի կառավարում -----	144
13.1.4	Քաղաքացիական ծառայություն -----	145
13.1.5	Էլեկտրոնային կառավարում-----	146
13.2	ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ-----	146
13.2.1	Համայնքային խնդիրներ -----	146
13.2.2	Համայնքային ծառայություն-----	149
13.2.3	Տեխնիկական ապահովվածություն-----	151
13.2.4	Համայնքների զարգացում-----	151
13.3	ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ-----	154
14.	ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻՑ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ-----	158
14.1	Քարաթափումների կանխարգելում-----	158
14.2	Բնական աղետներ -----	160
14.3	Տեխնածին աղետներ-----	160
14.4	Բնական և տեխնածին աղետների ռիսկի նվազեցում -----	161
14.5	Քաղաքացիական պաշտպանության վիճակը, առկա խնդիրները և առաջարկվող միջոցառումները-----	162
15.	ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ-----	164
16.	ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ-----	166
17.	ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ -----	167



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՈՒՂԵՐՁԸ**

Կոտայքի մարզի զարգացման ծրագրում ներառված են մեր երկրում շարունակաբար իրականացվող բարեփոխումների միտումները և տարբեր կենսական նշանակություն ունեցող խնդիրների լուծման ուղղությամբ տարվելիք աշխատանքների նպատակներն ու ցանկալի արդյունքներ գրանցելու նկարագրությունը, ինչպես նաև ՀՀ Նախագահի ու Կառավարության՝ մարզերում դրական զարգացումներ ապահովելու ծրագրային մոտեցումներն ու դիրքորոշումները:

Կոտայքի մարզի 2015-2018 թվականների զարգացման ծրագիրը հստակ նախանշում է մարզի համայնքների զարգացման առանձնահատկությունները և յուրաքանչյուր համայնքի ենթակառուցվածքների գործունեության բարելավման հեռանկարային ուղղությունները:

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի 2015-2018 թվականների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրը նախորդ՝ ավարտվող ծրագրի տրամաբանական շարունակությունն է՝ նոր որակներով և հիմնախնդիրների լուծման նոր մոտեցումներով, որտեղ հաշվի են առնվել ներկա ժամանակաշրջանի ու հասարակության պահանջները:

Կարող ենք վստահ լինել, որ զարգացման այս ծրագիրը կնպաստի ՀՀ Կոտայքի մարզի համայնքներում առկա հիմնախնդիրների լուծմանը և այս ու նմանատիպ այլ ծրագրերի իրականացման շնորհիվ կապահովվի մարզի տնտեսության զարգացման շարունակականությունը և ազգաբնակչության կենսաապահովման պայմանների բարելավումը:

Հարկ է նշել նաև, որ ծրագրի մշակման ընթացքում հաշվի են առնվել բնակչության տարբեր սոցիալական խմբերի, տնտեսվարող սուբյեկտների, հասարակական և այլ կազմակերպությունների առաջարկություններն ու դիտողությունները:

Կարևորելով ծրագրի բացառիկ նշանակությունը մարզի սոցիալ-տնտեսական զարգացման ասպարեզում Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ու անձամբ իմ կողմից շնորհակալություն եմ հայտնում այս գործում իրենց ներդրումն ունեցած պետական ու հասարակական կազմակերպություններին, տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներին, մարզային զարգացման հանձնաժողովին ու ոլորտային աշխատանքային խմբերին և իրենց անձնական նախաձեռնությունը ցուցաբերած բոլոր անհատներին:

Լիափույս եմ, որ ծրագրի իրագործման արդյունքում իրենց անհրաժեշտ լուծումները կստանան հանրային կարևորության շատ հարցեր և լավագույն հենք կհանդիսանան հաջորդող համանման ծրագրերի մշակման գործընթացներում:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱՄՆ ՄԶԳ - Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային Զարգացման Գործակալություն

ԱԱՊ –առողջության առաջնային պահպանություն

ԱԾԽՄ-առանց ծնողական խնամքի մնացած

ԱՀՌԾ – աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիր

ԱՎԾ - Ազգային վիճակագրական ծառայություն

ԲԲԸ – բաց բաժնետիրական ընկերություն

ԲՀՊՏ - բնության հատուկ պահպանվող տարածք

ԲՍՓՀ - բժշկա-սոցիալական փորձաքննության հանձնաժողով

ԶԼՄ – զանգվածային լրատվության միջոց

ԸԿԵԻՊԲ –ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանություն

ԽՀՀ- խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով

ԾԻԳ - ծրագրերի իրականացման գրասենյակ

ԿԳՆ - Կրթության և գիտության նախարարություն

ԿԴԻՀ- կյանքի դժվարին իրավիճակում հայտնված

ԿԽՀ –կամավոր խորհրդատվություն և հետազոտություն

ՀԳՄՏԾ – հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայություն

ՀԷԿ – հիդրոէլեկտրակայան

ՀԿ – հասարակական կազմակերպություն

ՄԱԿ – Միացյալ ազգերի կազմակերպություն

ՄԶԾ - Մարզի զարգացման ծրագիր

ՄԶՀ - Մարզային զարգացման հանձնաժողով

ՄԻԱՎ/ԶԻԱՀ –մարդու իմունային անբավարարության վիրուս /ձեռքբերովի իմունային անբավարարության հիվանդություն

ՄԳ - մոնիտորինգ և գնահատում

ՄՄԳ - մասնակցային մոնիտորինգ և գնահատում

ՈԱԽ - ոլորտային աշխատանքային խումբ
ՊՈԱԿ –պետական ոչ առևտրային կազմակերպություն
ԶԷԿ – ջերմաէլեկտրակայան
ՍԱՊԾ - Սոցիալական ապահովության պետական ծառայություն
ՄԾՄՏՄ - Սոցիալական ծառայություններ մատուցող տարածքային մարմին
ՄԾՏԳ –սոցիալական ծառայության տարածքային գործակալության
ՍՊԸ – սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
ՏԻՄ - տեղական ինքնակառավարման մարմին
ՓՀԷԿ –փոքր հիդրոէլեկտրակայան
ՓՄՁ - փոքր և միջին ձեռնարկություններ
ՓՄՁ ԶԱԿ - Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն
ՔՊ –քաղաքացիական պաշտպանություն

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Կայուն և արագ տեմպերով Հայաստանում տնտեսական աճի ապահովման, նպատակային սոցիալական քաղաքականության և պետական կառավարման ոլորտի արդյունավետության բարձրացման նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարությունը ընդունել է մի շարք ծրագրեր, որոնք ներառում են մարզերի զարգացման հիմնական ռազմավարական գերակայությունները՝ աղքատության հաղթահարումը, տնական տնտեսական աճի քաղաքականության իրականացման ապահովումը և այլն:

2. Հատկապես աղքատության հաղթահարման ու մարզերի տնտեսական զարգացման համաչափության արդյունավետ ու գործուն մոտեցումների նպատակով ՀՀ կառավարության 2008թ. դեկտեմբերի 18-ի թիվ 38-Ա որոշմամբ հավանություն տրվեց մարզերի զարգացման ծրագրերի մշակման ու իրականացման հայեցակարգին: Կոտայքի մարզի 2015-2018թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրը մշակելիս հիմք է ընդունվել ՀՀ կառավարության՝ մարզերի միջև համեմատություններ կատարելու և յուրաքանչյուրում զարգացման առաջնահերթություններ սահմանելու մեթոդաբանությունը, դրանց մոտեցման սկզբունքներն ու ընթացակարգերը:

3. Մարզային զարգացման ասպարեզում Հայաստանում իրականացվել են մի շարք ծրագրեր, որոնցից յուրաքանչյուրը որոշակի ազդեցություն է ունեցել մարզի զարգացման մոդելի վրա՝ որպես գերակայություն ունենալով տարածքային համաչափ զարգացման սկզբունքը, այն համահունչ դարձնելով կառավարության ընդհանուր պետական ծրագրերի առաջնահերթություններին:

4. Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի մայիսի 19-ի N 511-Ա որոշմամբ հաստատված կառավարության ծրագրում, ինչպես նաև ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 27-ի թիվ 442-Ն որոշմամբ ընդունված ՀՀ 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրում>> ուշադրության են արժանացել Հայաստանում տնտեսական աճի արագացմանը զուգընթաց խորացող տարածքային զարգացման անհամաչափությունների վերացման խնդիրները, որը ենթադրում է, որ անհրաժեշտ կլինի էականորեն արագացնել մարզերի տնտեսական զարգացման տեմպերը՝ դրանք մոտեցնելով Երևան քաղաքի զարգացման տեմպերին:

5. Կոտայքի մարզի զարգացման ծրագրում օգտագործվել են համալիր միջոցառումներ՝ պետական ռազմավարական գերակայությունների առավելագույն արտացոլումն ապահովելու համար: Ծրագրի կազմման ընթացքում հաշվի են առնվել մարզի բոլոր կարիքները, տրվել են դրանց գնահատականները՝ նպատակ ունենալով համակարգված ներկայացնել մարզային կարիքների առաջնահերթությունները և դրանք դարձնել համապետական ծրագրերին համահունչ:

6. Ծրագրի կազմման գործում հաշվի են առնվել մարզի հետևյալ առանձնահատկությունները.

- 1) արդյունաբերական կազմակերպությունների բազմաճյուղությունը,
- 2) մարզի արտադրանքի ծավալի մեջ էլեկտրաէներգիայի արտադրության զգալի կշիռը,
- 3) մարզի՝ առողջարանային ու տուրիզմի գոտի լինելը /այստեղ կարելի է առանձնացնել Ծաղկաձորը, Հանքավանը, Արզնին, Աղվերանը/,

4) Կոտայքի մարզում քաղաքային բնակչության գերակշիռ լինելը՝ 54,2%:

7. ՄԶԾ-ի մշակման ընթացքում առանցքային թիրախ է ընտրվել զարգացման առաջնահերթությունների համապատասխանեցումը համայնքներում առկա հիմնախնդիրների ու ռեսուրսների հետ: Այս առումով ոչ միայն օգտագործվել են մարզպետարանում առկա տեղեկատվական շտեմարանները, այլև ապահովվել է մասնակցային գործընթացն ու բնակչություն-մարզպետարան հետադարձ կապը:

8. Մարզի քաղաքային և գյուղական բոլոր համայնքներում բնակչության տարբեր սոցիալական խմբերի, գործարարների, հասարակական և այլ կազմակերպությունների հետ մարզպետարանի կազմակերպած հանդիպումների արդյունքում համայնքներից ստացված առաջարկությունները, դիտողությունները, հանձնարարականների տեսքով պարբերաբար ներկայացվել են մարզպետարանի աշխատակազմի համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումներին և անհրաժեշտության դեպքում ներառվել են հիմնախնդիրների լուծման ծրագրերում:

9. Մարզպետարանի աշխատանքային խմբերի՝ մարզի համայնքների բնակչության հետ պարբերաբար կազմակերպվող հանդիպումների հիմնական նպատակն է եղել մարզի բնակչության իրական սոցիալ-տնտեսական վիճակի բացահայտումը, քաղաքացիների կողմից առաջ քաշված կարևորագույն հարցերի քննարկումը, հետադարձ կապի ապահովումը, ինչպես նաև մարզի զարգացման խնդիրների վերաբերյալ բնակչության իրազեկության մակարդակի բարձրացումը:

10. Ծրագրի մշակման ընթացքում մարզպետարանը համագործակցել է տեղական և հանրապետական տարբեր կազմակերպությունների ու մարմինների հետ /ԱՎԾ, հանրապետական գործադիր մարմիններ, մարզային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններ/:

11. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2014թ. ապրիլի 14-ի N 178-Ա որոշմամբ ստեղծվել է Կոտայքի մարզային զարգացման հանձնաժողով և 2014թ. ապրիլի 14-ի N 179-Ա որոշմամբ՝ 10 ոլորտային աշխատանքային խմբեր/ՈԱԽ-ներ/, որոնք են.

- 1) մասնավոր հատված, փոքր ու միջին ձեռնարկատիրություն, արդյունաբերություն,
- 2) կրթություն,
- 3) մշակույթ և սպորտ,
- 4) առողջապահություն,
- 5) սոցիալական պաշտպանություն,
- 6) գյուղատնտեսություն,
- 7) բնապահպանություն,
- 8) քաղաքաշինություն,
- 9) մարզային ենթակառուցվածքներ,

10) տարածքային կառավարում, տեղական ինքնակառավարում, քաղաքացիական հասարակություն, արտակարգ իրավիճակներից բնակչության և տարածքների պաշտպանություն:

12. ՈԱԽ-ների գործունեության արդյունքում մշակված ծրագրերը քննարկվել են Մարզային զարգացման հանձնաժողովի /ՄՀՀ/ կողմից և ընդգրկվել են ՄՀԾ-ում:

13. ՄՀԾ-ի իրագործման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները և ծախսման ուղղությունները գնահատված և ըստ ոլորտների ներկայացված են համապատասխան հավելվածներում: Բնականաբար դրանք կենթարկվեն փոփոխության և կվերանայվեն՝ ելնելով տվյալ տարվա համար հաստատված պետական բյուջեով մարզին հատկացվող ֆինանսական միջոցներից և համայնքային բյուջեների եկամուտների հնարավորությունից:

14. ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ - Ծրագրի սկզբում համառոտ ներկայացված է մարզի ընդհանուր բնութագիրը: Այնուհետև համապատասխան գլխում տրվում է աղքատության գնահատականը մարզում, դրա հիմնական պատճառները, դրական կամ բացասական միտումները և դրա կրճատման համար անհրաժեշտ ոլորտային բարեփոխումներն ու զարգացման ուղիները:

15. Մարզի տնտեսական զարգացման ու աղքատության հաղթահարման գլխավոր ուղղությունը՝ արդյունաբերության և էներգետիկայի արդի ներուժի հիման վրա բազմաճյուղ ոլորտների զարգացումն է, փոքր և միջին ձեռնարկատիրության աջակցության և գործարար ակտիվության բարձրացման նպատակով անհրաժեշտ պայմանների ապահովումը: Այս ոլորտի իրավիճակի նկարագիրն ու վերլուծությունը զետեղված է 4-րդ գլխում:

16. Մարզի գյուղատնտեսության ոլորտի ռազմավարությունը ներկայացված է 5-րդ գլխում: Այս ոլորտի հիմնական նպատակը գյուղական ենթակառուցվածքների բարելավումն է, գյուղատնտեսական արտադրանքի ծավալների և ապրանքայնության աճի ու իրացման ապահովումը, դրանով իսկ գյուղացիական տնտեսությունների եկամուտների ավելացումն ու գյուղական աղքատության կրճատումը:

17. Բնապահպանության ոլորտի իրավիճակը, խնդիրներն ու ռազմավարությունը ներկայացված են ծրագրի 6-րդ գլխում: Այստեղ վերլուծվում և ներկայացվում են անհրաժեշտ լուծում պահանջող այնպիսի հիմնախնդիրներ, ինչպիսիք են ընդերքի անկանոն օգտագործումը, ջրային և օդային ավազանների աղտոտումը, անտառային ֆոնդի պահպանումն ու բարելավումը:

18. Մարզի սոցիալական ոլորտների /կրթություն, մշակույթ և սպորտ, առողջապահություն, սոցիալական ծառայություններ/ իրավիճակի վերլուծությունը, հիմնախնդիրներն ու դրանց լուծման համար անհրաժեշտ միջոցառումները ներառված են ծրագրի 7-ից 10-րդ գլուխներում: Առանձին ներկայացնելով նշված ոլորտներում՝ հատկապես կրթության և առողջապահության, վերջին երեք տարիներին կատարված պետական զգալի ներդրումներն ու բարեփոխումները, միաժամանակ առաջարկվում է այդ քաղաքականության շարունակականության ապահովումը պետության կողմից:

19. Քաղաքաշինության ոլորտի հիմնախնդիրներն ու ռազմավարությունը, որոնք ներկայացվում են 11-րդ գլխում, նպատակաուղղված են սողանքային ու աղետավտանգ գոտիներում գտնվող բնակիչների բնակարանային խնդիրների լուծմանը, քաղաքային և որոշ գյուղական համայնքների բազմաբնակարան բնակֆոնդի և ենթակառուցվածքների բարելավման նպատակով անհրաժեշտ միջոցառումների իրականացմանը:

20. Ծրագրի 12-րդ գլխում ներկայացված են մարզային և համայնքային ենթակառուցվածքների իրավիճակի վերլուծությունն ու վերջիններիս բարելավման համար անհրաժեշտ միջոցառումներն ու ներդրումները: Որպես հիմնախնդիրներ կարևորվում են հանրապետական և տեղական

նշանակության ճանապարհների, ջրամատակարարման և ջրահեռացման հարցերը, ինչպես նաև համայնքների գազիֆիկացման խնդիրները:

21. Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման արդյունավետության ու այս գործընթացներում քաղաքացիական հասարակության մասնակցության ակտիվության բարձրացման խնդիրները ներկայացված են 13-րդ գլխում:

22. Հաջորդ /14-րդ/ գլխում ներառված են արտակարգ իրավիճակներից բնակչության և տարածքների պաշտպանության խնդիրները, որոնցում ներկայացված են մարզում ավելի հաճախ կրկնվող և վտանգ ներկայացնող տարերային երևույթների /սողանքներ, քարաթափումներ, սելավներ, ջրհեղեղներ և այլն/, տեխնածին աղետների կանխարգելման և ՀՀ կառավարության 2012 թվականի հոկտեմբերի 25-ի N 1351-Ն որոշմամբ սահմանված կարգով դրանց ռիսկերի նվազեցման համար անհրաժեշտ միջոցառումները:

23. ՄԶԾ իրագործման ընթացքի մոնիթորինգի և գնահատման գործառույթների անհրաժեշտությունը, ծրագրի արդյունավետ իրագործման, անհրաժեշտ փոփոխությունների և շտկումների, ինչպես նաև վերջնական արդյունքի գնահատման միջոցառումներն ու մեխանիզմները ներկայացված են 15-րդ գլխում:

24. Կոտայքի մարզի զարգացման ծրագրի համար պահանջվող ֆինանսական միջոցների վերաբերյալ տեղեկատվությունն ըստ ոլորտների ներկայացված է վերջին՝ 16-րդ գլխում:

25. ՄԶԾ իրագործման պարագայում ակնկալվում է ստանալ հետևյալ հիմնական արդյունքները.

1) Մարզի ընդհանուր զարգացման կայուն աճ, այդ թվում՝

ա. մասնավոր հատվածի և ՓՄՁ զարգացման համար բարենպաստ պայմանների և հնարավորությունների ստեղծում,

բ. բնակչության զբաղվածության աճ և գործազրկության նվազում,

գ. բնակչության եկամուտների աճ և և աղքատության կրճատում,

դ. գյուղատնտեսական մթերքների արտադրության և իրացման ծավալների աճ,

զ. մարզի բնապահպանական իրավիճակի բարելավում,

ե. սոցիալական ոլորտում /կրթություն, մշակույթ, սպորտ, առողջապահություն, սոցիալական ապահովություն/ բնակչությանը տրամադրվող ծառայությունների որակի և մատչելիության մակարդակի բարձրացում,

զ. մարզային և համայնքային ենթակառուցվածքների վիճակի բարելավում:

2) Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման արդյունավետության բարձրացում,

3) Քաղաքացիական հասարակության իրազեկվածություն և մասնակցության ակտիվացում մարզային և համայնքային զարգացման գործընթացներին:

2. ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

26. Մարզկենտրոնը՝ ք. Հրազդան


Տարածքը՝ 2076 քառ. կմ

Բնակչությունը՝ 254700 մարդ / 2014 թ. հունվարի 1-ի տվյալներով/

Քաղաքային՝ 138000 (54,2%), գյուղական՝ 116700 (45.8%)

Համայնքների թիվը՝ 67, որից քաղաքային՝ 7, գյուղական՝ 60

27. Սահմանակից է Տավուշի, Գեղարքունիքի, Լոռու, Արարատի, Արագածոտնի մարզերին և մայրաքաղաք Երևանին:



28. Կոտայքի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական մասում, ծովի մակերևույթից մոտ 900-2500մ բարձրության վրա: Տարածքն ընդգրկում է Հրազդան գետի վերին և միջին ավազանն ու Մարմարիկ գետի ավազանն ամբողջությամբ: Հյուսիսից սահմանափակվում է Գուգանասար, իսկ հյուսիս-արևելքից՝ Հատիսի լեռնազանգվածներով: Հարավ-արևմուտքում աստիճանաբար ցածրանալով՝ ձուլվում է Արարատյան դաշտին: Կոտայքի սարավանդն ընկած է Հրազդան գետի միջին հոսանքի ձախափնյա մասից մինչև Գեղամա լեռների արևմտյան ստորոտը: Հրազդան գետի ձախակողմյան վտակների մի մասը գետնի տակ ներծծված ջրերի շնորհիվ գարնանը դուրս է ցայտում /շատ լինելու պատճառով դրանց անվանում են <<40 աղբյուր>>/: Կոտայքով են հոսում նաև Գետառն ու Ազատը, որոնք ունեն ոռոգիչ նշանակություն: Ոռոգման համակարգում մեծ նշանակություն ունի Ակնա լիճը /3032 մ բարձրություն/, որով ջրարբիացվում են ամառային արոտավայրերը: Հիմնական լեռնագրական միավորներն են Կոտայքի և Եղվարդի բլրաալիքային սարավանդները, Մարմարիկի վտակներով կտրտված Փամբակի լեռնաշղթայի լանջերը, Գեղամա լեռնաշղթայի լեռնաճյուղերն ու լավային հոսքերը: Տիրապետող են կիսաանապատային, լեռնատափաստանային լանդշաֆտները՝ համապատասխան բուսական եւ կենդանական աշխարհներով: Կլիմայական գոտին խառն է, իսկ աշխարհագրական դիրքն, ընդհանուր առմամբ, նպաստավոր: Մարզի տարածքով են անցնում Երևան-Շոթա և Հրազդան-Իջևան երկաթուղիները, իսկ մարզկենտրոնից մինչև մայրաքաղաք հեռավորությունն ընդամենը 45 կմ է: Ազգաբնակչության 97,6 %-ը հայեր են: Մարզում բնակվում են նաև ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ՝ հիմնականում եզդիներ, ասորիներ, քրդեր, հույներ և այլն:

29. Հրազդանի տարածաշրջան: Գտնվում է Հրազդան գետի վերին և միջին ավազանում: Տարածքի մեծ մասն ունի 1500-2400 մ բարձրություն: Առավելագույն բարձր կետը Թեժ լեռան գագաթն է՝ 3101 մ: Հյուսիսում ձգվում են Մարմարիկի վտակներով խիստ մասնատված Փամբակի լեռնաշղթայի լանջերը, արևելքում Գեղամա լեռնաշղթայի հյուսիս-արևմտյան լեռնաճյուղերն ու լավային հոսքերը: Հարավ-արևելքում բարձրանում են Գուֆանասար, Մենակսար հրաբխային կոները: Փամբակի և Ծաղկունյաց լեռների լանջերին տարածված են թխկու, կաղնու, արոսենու անտառները: Կենդանական աշխարհին բնորոշ են եղջերուն, գայլը, աղվեսը, նապաստակը, արջը:

30. Հրազդանի տարածաշրջանում են գտնվում արդյունաբերական քաղաքներ Չարենցավանն ու Հրազդանը և հանգստյան ու առողջարանային քաղաք Ծաղկաձորը:

31. Գյուղական համայնքներն են Ալափարսը, Աղավնաձորը, Արզականը, Արտավազը, Բջին, Լեռնանիստը, Կարենիսը, Հանքավանը, Մարմարիկը, Մեղրաձորը, Սոլակը, Ջրառատը, Քաղսին, Ֆանտանը:

32. Աբովյանի տարածաշրջան: Գտնվում է Ազատ և Հրազդան գետերի միջև՝ Կոտայքի սարավանդի վրա: Հյուսիս-արևելքում բարձրանում են Գեղամա լեռնաշղթայի Աժդահակ լեռը՝ 3597 մ բարձրությամբ և Ողջաբերդի լեռնաբազուկը: Հյուսիսում Հատիս /2528մ/ և Գուֆանասար /2299մ/ լեռներն են՝ հանգած հրաբուխներով: Արևմուտքում ձգվում է Հրազդանի կիրճը, իսկ հարավում՝ Նորքի բարձրությունը: Տարածքով անցնում են Գետառ, Հրազդան, Ազատ գետերը, որոնք ունեն ոռոգիչ նշանակություն: 3030մ բարձրության վրա գտնվում է Ակնա լիճը: Աբովյանի տարածաշրջանում գտնվում է Աբովյան քաղաքը և երիտասարդ Բյուրեղավան քաղաքը:

33. Գյուղական համայնքներն են Ակունքը, Առինջը, Արամուսը, Արզնին, Բալահովիտը, Գեղաշենը, Զառը, Զովաշենը, Զովքը, Կաթնաղբյուրը, Կամարիսը, Կապուտանը, Կոտայքը, Հատիսը, Զորաղբյուրը, Մայակովսկին, Նոր գյուղը, Նուռնուսը, Պտղնին, Ջրաբերը, Ջրվեժը, Գետարգելը, Սևաբերդը, Վերին Պտղնին, Գառնին, Գեղադիրը, Գեղարդը, Գողթը, Հացավանը, Ողջաբերդը:

34. Նաիրիի տարածաշրջան: Գտնվում է Քասախ և Հրազդան գետերի միջև՝ Եղվարդի հրաբխային սարավանդի վրա: Տարածաշրջանի առավելագույն բարձր կետը Արայի լեռան գագաթն է՝ 2575 մ: Այստեղ կլիման չոր ու ցամաքային է: Տարածված են հոտավետ օշինդրը, ուրցը, փետրախոտը, հացազգիները: Նաիրիի տարածաշրջանում են գտնվում Եղվարդ և Նոր Հաճըն քաղաքները՝ առաջինը հայտնի մարզական հագուստի, գինու և կոնյակի արտադրությամբ, իսկ երկրորդը՝ թանկարժեք քարերի մշակմամբ: Գյուղական համայնքներն են Արագյուղը, Արգելը, Բուժականը, Գետամեջը, Զովունին, Զորավանը, Թեղենիքը, Մրգաշենը, Նոր Արտամետը, Նոր Գեղին, Սարալանջը, Քանաքեռավանը, Քարաշամբը, Նոր Երզնկան, Պռոշյանը, Քասախը:

35. ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ: Կոտայքի մարզն իր մեջ ընդգրկում է Հրազդանի, Աբովյանի և Նաիրիի նախկին վարչական շրջանները: Վարչատարածքային միավորը զբաղեցնում է պատմական Հայաստանի Այրարատ նահանգի Կոտայք, Մազազ, Նիգ, Վարաժնունիք, Արագածոտն գավառների

մի մասը: Պատմական տարբեր ժամանակաշրջաններում նրա մոտավոր սահմաններն են եղել Գեղամա և Ծաղկունյաց լեռներից մինչև Արարատյան դաշտն ընկած սահմանները: Տևական ժամանակով նույնիսկ ներկայիս քաղաքամայր Երևանը մտել է Կոտայքի վարչատարածքային միավորի մեջ: Պատմամշակութային և հնագիտական արժեքները փաստում են, որ Կոտայքի ներկայիս մարզի տարածքը մարդկային քաղաքակրթության զարգացման օրրաններից մեկն է: Ըստ որոշ վարկածների՝ Կոտայք անվանումն առաջացել է Խոսրով Կոտակի անունից, իսկ շատ ավելի հեղինակավոր մասնագետներ ու պատմագրական աղբյուրներ Կոտայք անվանը վերագրում են էթնիկական ծագում: Ըստ ուրարտական արձանագրությունների՝ մարզի տարածքն ընդգրկվում էր Էթիունի /Էթիունե/ խոշոր ցեղային միության տիրապետության մեջ: Արշակունիների ժամանակ մարզի հիմնական տարածքը հանդիսացել է արքայական ուստան: Ըստ Հովհաննես Դրասխանակերտցու՝ Կոտայքի Արամոնս գյուղը եղել է կաթողիկոսական կալված: Բագրատունիների ժամանակ մարզի տարածքի մի մասը շնորհվել է Պաիվապունիներին: Հետո այն պատկանել է Իվանե Զաքարյանին և նրան ենթակա հայ իշխաններին: 591թ. բաժանմամբ Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև է բաժանվել նաև Կոտայքի գավառը: 7-րդ դարի երկրորդ կեսից այն եղել է Գրիգոր Մամիկոնյան իշխանի իրավասության ներքո: Սելջուկ-թուրքերի տիրապետությունից հետո՝ 12-րդ դարի վերջից 13-րդ դարի 30-ական թվականներին, այն եղել է Զաքարյանների գերիշխանության ներքո: Պարսկաթուրքական տիրապետության ժամանակ Կոտայքի մարզի տարածքն ընդգրկել է Երևանի խանության Դարաչիչակի, Կըրխ-Բուլաղի, Գառնի-Բասարի /Կարբի-Բասարի/ մահալների մեջ: Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալուց հետո, մինչ ՀԽՍՀ վարչատարածքային բաժանումը /1930թ./, մարզի տարածքը մտնում էր Նոր Բայազետի, Էջմիածնի և Երևանի գավառների մեջ: Կոտայքի մարզը հանդիսանում է Հայկական լեռնաշխարհի հնագույն բնակավայրերից մեկը: Հայկական հելլենիստական ճարտարապետության անկրկնելի մարգարիտն է արևի աստված Միհրի պատվին կառուցված Գառնիի տաճարը /1-ին դար/: Հայկական վիմափոր ճարտարապետության եզակի ու բարձրարվեստ կոթող է Այրիվանք-Գեղարդը: Բազիլիկ և ուշ շրջանի քրիստոնեական գեղեցիկ տաճարներ կան Եղվարդում, Արամուսում, Պտղնիում, Ողջաբերդում, Ծաղկածորում, Բջնիում և Մեղրածորում: Մարզի մի շարք տեղանուններ կապված են հայկական հնագույն ազգային պատմությունների հետ:

3. ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՈՒՄ

36. Բնակչության բարեկեցության աճը և աղքատության դեմ ուղղված պայքարը մնում է ՀՀ կառավարության և երկրի քաղաքացիական հասարակության կարևորագույն և հրատապ խնդիրը, որն ամրագրված է ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 27-ի թիվ 442-Ն որոշմամբ ընդունված «ՀՀ 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրում»:
Ծրագրում ներառված են ամբողջ երկրի մասշտաբով նախանշված գերակա ուղղությունները, որոնք հիմնականում վերաբերում են կայուն տնտեսական աճի ապահովմանը, հանրային կառավարման բարեփոխումներին, սոցիալական զարգացման հիմնախնդիրներին: Ծրագրում ներկայացված են նաև աղքատություն ծնող հիմնական պատճառները, դրա հետևանքով առաջնահերթ դարձած խնդիրները և դրանց լուծման ռազմավարական քայլերն ու գերակա ուղղությունները: Ընդհանրացված տեսքով դրանք հետևյալ գերակա ուղղություններն են.

- 1) տնտեսական աճի ապահովում,
- 2) տարածքային համաչափ զարգացում,
- 3) կոռուպցիայի դեմ պայքար,
- 4) կառավարման համակարգի կատարելագործում,
- 5) հանրային կառավարման մեջ հանրության հնարավորին չափ լայն ընդգրկում,
- 6) հանրության կողմից մոնիտորինգի մեխանիզմների ներդրում:

37. Այս ռազմավարական գերակա ուղղություններով ծրագրային քայլերի իրականացման արդյունքում հնարավոր կլինի հասնել ԱՀԴ ծրագրում որպես նպատակ դրված աղքատության ցուցանիշներին ու երկրի մրցունակության աճին:

38. Աղքատությունը, որպես բազմաչափ երևույթ, պայմանավորված է ոչ միայն բնակչության եկամուտների, այլև սպառման և ծախսերի ցածր մակարդակով: Աղքատության մակարդակի վրա էական ազդեցություն ունեն բազմաթիվ գործոններ (մասնավորապես՝ բնակչության կրթություն, ստանալու, առողջության բավարար մակարդակ, ապահովելու, երկրի հասարակական կյանքին ակտիվ մասնակցություն ունենալու սահմանափակ հնարավորությունները, տարբեր սոցիալական և այլ ռիսկերի նկատմամբ պաշտպանվածության ցածր աստիճանը և այլն): Մեր երկրում աղքատության հաղթահարումը հնարավոր է մարդկանց կենսաբանական (սնունդ, բնակարանի առկայություն, ջրի, էլեկտրաէներգիայի սպառում և այլն), սոցիալական (առողջություն, կրթություն, աշխատանք, նվազագույն տեղեկացվածություն և այլն) և հոգևոր (կարդալու, մշակութային արժեքներին հաղորդակից լինելու հնարավորություն) պահանջմունքների համակցված բավարարման ճանապարհով:

39. Հիմնվելով այդ տրամաբանության վրա՝ Կոտայքի մարզի բնակչության աղքատության հաղթահարման և բարեկեցության բարելավման կարևոր պայմաններից է մարզի սոցիալական բնագավառների՝ առողջապահության, կրթության և սոցիալական պաշտպանության համակարգերի լիարժեք ու արդյունավետ գործունեությունն ու զարգացումը: Իսկ ծրագրի հիմքում դրված են մի շարք գաղափարական հիմնադրույթներ, մասնավորապես՝ հավատարիմ լինելը ՄԱԿ-ի կողմից հռչակված Հազարամյակի զարգացման նպատակներին, եկամուտների արդար վերաբաշխման

ապահովումը և աղքատության հաղթահարումը, աշխատունակ աղքատների սեփական գործ հիմնելուն, եկամուտների ավելացմանը և սեփական աշխատանքով աղքատությունը հաղթահարելու հնարավորությունների ընդլայնումը, բնակչությանը՝ հատկապես աղքատ ընտանիքների և խոցելի խմբերի սոցիալական պաշտպանվածության աստիճանի բարձրացումը նվազագույն կենսական պայմանների երաշխավորությամբ և աղքատանալու վտանգից ապահովագրման միջոցով, որոնք երաշխիք են հանդիսանում մինչև 2018 թվականը զգալիորեն կրճատել աղքատությունը:

40. Աղքատության վերլուծության տվյալները փաստում են, որ աղքատ են բնակչության հետևյալ սոցիալական խմբերը.

- 1) բազմանդամ, հատկապես բազմազավակ ընտանիքների անդամները,
- 2) գործազուրկները և ցածր աշխատավարձով աշխատողները (ներառյալ մշակույթի և արվեստի բնագավառի աշխատողները),
- 3) փախստականները (հատկապես հանրակացարաններում և ժամանակավոր կացարաններում բնակվողները),
- 4) միայնակ կենսաթոշակառուների և հաշմանդամների այն մասը, որոնք բացի կենսաթոշակային ապահովումից, եկամտի այլ աղբյուրներ չունեն,
- 5) չաշխատող երիտասարդ ընտանիքները (այդ թվում՝ ամուսնալուծված և միայնակ մայրերը):

41. ՀՀ ազգային վիճակագրական ծառայության (ՀՀ ԱՎԾ) տնային տնտեսությունների կենսամակարդակի իրականացված հետազոտությունների արդյունքների համաձայն 2013թ. աղքատության մակարդակի տարբերությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի միջին հանրապետական մակարդակի համեմատ տատանվում է: Միջին հանրապետականից բարձր են Շիրակի, Կոտայքի, Լոռու, Գեղարքունիքի, Արարատի մարզերի ցուցանիշները:

Աղյուսակ 3.1

Աղքատության հիմնական ցուցանիշներն ըստ մարզերի 2013թ. (%)

Մարզեր	Ծայրահեղ աղքատ	Աղքատ	Տոկոսն աղքատների մեջ	Տոկոսն ընդհանուր բնակչության մեջ
ք. Երևան	2.1	25.5	26.4	33.0
Արագածոտն	1.1	22.7	2.6	3.6
Արարատ	1.7	32.4	8.2	8.1
Արմավիր	3.3	31.3	8.8	9.0
Գեղարքունիք	2.4	35.8	8.0	7.2

Լոռի	2.6	38.6	12.1	10.0
Կոտայք	5.1	42.5	13.5	10.2
Շիրակ	4.0	45.9	12.1	8.4
Սյունիք	1.8	25.2	3.3	4.2
Վայոց Ձոր	0.7	21.0	1.2	1.9
Տավուշ	2.5	27.7	3.8	4.4
Ընդամենը՝	2.7	32.0	100	100

42. Ըստ աղյուսակ 3.1-ի տվյալների՝ աղքատության ցուցանիշներով Կոտայքի մարզը բարձր աղքատության շրջանում է. մարզի աղքատ բնակչության թիվը 2013թ. կազմել է 42.5 %, որը բարձր է հանրապետական միջին ցուցանիշից՝ 32.0 %-ից:

Աղյուսակ 3.2

Աղքատության մակարդակը ՀՀ մարզերում 2011-2013 թթ. (%)

Մարզեր	2011թ.		2012թ.		2013թ.	
	աղքատ որից	շատ աղքատ	աղքատ որից	շատ աղքատ	աղքատ որից	շատ աղքատ
ք. Երևան	27.5	2.7	25.6	2.2	25.5	2.1
Արագածոտն	20.7	1.1	21.2	0.9	22.7	1.1
Արարատ	39.3	2.5	34.6	2.1	32.4	1.7
Արմավիր	37.0	5.6	34.3	3.4	31.3	3.3
Գեղարքունիք	37.0	1.5	35.5	1.4	35.8	2.4
Լոռի	45.4	4.7	38.7	3.4	38.6	2.6
Կոտայք	45.5	7.1	42.5	5.7	42.5	5.1
Շիրակ	47.7	7.0	46.0	5.5	45.9	4.0
Սյունիք	26.8	1.1	25.6	0.7	25.2	1.8
Վայոց Ձոր	29.9	1.5	20.7	0.5	21.0	0.7

Տավուշ	26.1	1.2	26.7	2.0	27.7	2.5
Հանրապետական միջինը	35.8	3.0	35.0	3.7	32.0	2.7

Աղբյուր՝ <<Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը>> 2012թ., 2013թ., 2014թ.

43. Չնայած նրան, որ աղքատության մակարդակը ՀՀ Կոտայքի մարզում 2013 թվականին 2011թ. համեմատ նվազել է 3.0 տոկոսային կետով (աղյուսակ 3.2), սակայն մարզի ցուցանիշը շարունակում է մնալ բարձր հանրապետական միջին ցուցանիշից:

44. Կոտայքի մարզում աղքատածին գլխավոր գործոններ են հանդիսանում.

1) գործազրկությունը, գլխավորապես մարզի քաղաքային համայնքներում և հատկապես Հրազդան և Չարենցավան քաղաքներում,

2) անօթևան մնացած փախստական ընտանիքների մեծ քանակը,

3) գյուղատնտեսական նշանակության հող ունեցող գյուղացիական տնտեսությունների բարձր տոկոսը (հողերը հիմնականում չեն օգտագործվում որակական ցածր հատկությունների և ֆինանսական միջոցների սղության պատճառով),

4) մարզի գյուղական համայնքներում և հատկապես մինչև 700 բնակիչ ունեցող (Հանքավան, Հատիս, Զովաշեն, Սարալանջ, Սևաբերդ) համայնքներում ենթակառուցվածքների թերզարգացվածությունը,

5) մարզի քաղաքային համայնքների (Հրազդան, Չարենցավան, Բյուրեղավան) կենսագործունեության խիստ կախվածությունը արդյունաբերական խոշոր ընկերություններից:

45. Կոտայքի մարզի աղքատության հաղթահարման գերակա խնդիրները 2015-2018թթ. համար հանդիսանում են.

1) փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման միջոցով քաղաքային համայնքներում զբաղվածության խնդրի լուծում,

2) մարզի տարբեր համայնքներում անօթևան մնացած փախստական ընտանիքների համար բնակարանաշինության ծրագրերի իրականացում,

3) գյուղատնտեսական նշանակության հողերի պիտանելիության մակարդակի բարձրացման նպատակով մելիորացիոն աշխատանքների ու ոռոգման համակարգերի կառուցում,

4) մարզի գյուղական համայնքներում (հատկապես փոքր գյուղերում՝ Հանքավան, Հատիս, Զովք, Սարալանջ, Սևաբերդ, Զովաշեն, Թեղենիք, Կարենիս, Ջրառատ և Ջրաբեր) ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված (ճանապարհների կառուցում ու հիմնանորոգում, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի կառուցում, գազամատակարարման ապահովում) համալիր ծրագրի իրականացում:

4. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ, ՓՄՁ ԵՎ ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾ

4.1 ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

4.1.1 Արդյունաբերության ոլորտի իրավիճակի վերլուծություն

46. ՀՀ Կոտայքի մարզը արդյունաբերական տեսանկյունից եղել է Հայաստանի ամենազարգացած մարզերից մեկը:

47. ՀՀ Կոտայքի մարզի տնտեսության ընդհանուր ծավալում գերակշռողը արդյունաբերության և գյուղատնտեսության ճյուղերն են: Արդյունաբերությունը հանդիսանում է Կոտայքի մարզի տնտեսության կարևորագույն ոլորտներից մեկը: Մարզի արդյունաբերական արտադրության ծավալի ներուժը կենտրոնացված է հիմնականում քաղաքային համայնքներում՝ Հրազդան, Զարենցավան, Աբովյան, Նոր Հաճըն, Եղվարդ, Բյուրեղավան քաղաքներում:

48. Մարզում մեծ թիվ են կազմում էներգետիկայի, մեքենաշինական, սննդի արդյունաբերության, քարամշակման, հանքարդյունահանման, ձկնաբուծության, շինանյութերի, փայտամշակման և այլ ձեռնարկությունները: Այս ձեռնարկությունների կողմից թողարկվող արտադրանքի մեծ մասն իրացվում է տեղական շուկայում, մյուս մասը արտահանվում է արտերկիր: 2013թ. տվյալներով մարզում գործում են 164 արդյունաբերական ձեռնարկություններ:

49. ՀՀ Կոտայքի մարզի տնտեսական ներուժին զգալի վնաս հասցրեց նախկինում տասնյակ հազարավոր աշխատատեղեր ապահովող խոշոր կազմակերպությունների քայքայումը՝ սեփականաշնորհման, հումքի, իրացման շուկաների նվազման կամ բացակայության և հիմնական միջոցների բարոյաֆիզիկական մաշվածության հետևանքով: Մարզի տասնյակ մեքենաշինական, թեթև և սննդի արդյունաբերական ձեռնարկություններ դադարեցրեցին իրենց գործունեությունը կամ էլ սկսեցին աշխատել փոքրածավալ հզորությամբ:

50. Ստորև ներկայացվում է ՀՀ Կոտայքի մարզի մակրոտնտեսական ցուցանիշները վերջին երեք տարիներին:

Աղյուսակ 4.1

ՀՀ Կոտայքի մարզի տնտեսության մակրոտնտեսական ցուցանիշները և մասնաբաժինը ՀՀ արտադրանքի ծավալում /ընթացիկ գներով/

/մլն. դրամ/

N	Տնտեսական ցուցանիշներ	2011թ.		2012թ.		2013թ.	
		Կոտայքի մարզ	Մասը հանրապետության արտադրության ծավալի մեջ /%/	Կոտայքի մարզ	Մասը հանրապետության արտադրության ծավալի մեջ /%/	Կոտայքի մարզ	Մասը հանրապետության արտադրության ծավալի մեջ /%/

1	Արդյունաբերական արտադրանքի ծավալը /մլն դրամ/	104496.5	10.4	144948.9	12.9	166121.7	13.4
1.1	Էլեկտրականության, գազի մատակարարում	28249.1	17.0	57851.4	27.3	68575.5	27.4
1.2	Հանքագործական արդյունաբերություն	443.2	0.3	1 116.8	0.6	4514.1	2.3
1.3	Մշակող արդյունաբերություն, որից՝	74716.1	11.6	84755.8	12.1	92070.1	11.8
1.3.1	սննդամթերք	23783.1	10.0	22290.1	8.9	24971.0	9.1
1.3.2	խմիչքներ	17129.7	20.4	26903.6	26.7	30457.5	24.2
1.3.3	Քիմիական նյութերի և քիմիական արտադրատեսակների արտադրություն	99.3	1.3	109.2	1.4	98.0	1.3
1.3.4	Դեղագործական արտադրանքների արտադրություն	802.2	22.7	838.6	21.7	1254.1	23.7
1.3.5	Ռետինե և պլաստմասե արտադրատեսակների արտադրություն	1298.3	7.0	1968.8	9.4	518.9	2.5
1.3.6	այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրություն	18169.4	38.4	16791.3	35.2	19328.2	35.7
1.3.7	Հիմնային մետաղների արտադրություն	8751.1	5.6	10826.2	6.6	10189.6	6.3
1.3.8	Պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրություն, բացի մեքենաներից և սարքավորանքից	1053.6	10.5	1629.4	13.8	1740.0	13.0
1.3.9	Էլեկտրական սարքավորումների արտադրություն	348.3	6.1	400.0	6.9	508.5	9.1
1.3.10	մեքենաների և սարքավորանքի արտադրություն, չներառված ուրիշ խմբավորումներում	113.3	4.6	361.9	7.6	658.0	16.4
1.3.11	Ոսկերչական արտադրատեսակների արտադրություն	2249.2	18.2	1901.6	12.6	1594.8	8.2
1.3.12	Կաշվի, կաշվե արտադրատեսակների արտադրություն	191.9	5.6	145.1	5.2	183.4	5.5
1.4	Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում	1088.1	5.9	1224.9	7.0	962.0	5.4
2	Պատրաստի արտադրանքի իրացումը /մլն. դրամ/	103 596.0	10.7	144 952.2	13.0	165089.0	13.6


3	Գյուղատնտեսության համախառն արտադրանքը /մլրդ. դրամ/	51100.0	6.2	52700.0	6.3	56700.0	6.2
----------	---	----------------	------------	----------------	------------	----------------	------------

Աղբյուրը՝ ՀՀ աշխատանքի հանրապետության մարզերը թվերով>> 2012թ., 2013թ.,2014թ., <<Հայաստանի սոցիալ-տնտեսական վիճակը>> 2013թ.

51. ՀՀ Կոտայքի մարզի արդյունաբերական ձեռնարկությունների ապրանքային արտադրանքի ծավալը 2013 թվականին (ընթացիկ տարվա գներով) կազմել է 166121.7 մլն. դրամ, նախորդ տարվա համեմատ աճել է 14.6%-ով: Իրացվել է 165089.0 մլն. դրամի արտադրանք, որից ԱՊՀ երկրներում 30782.8 մլն. դրամի, այլ երկրներում՝ 4324.5 մլն. դրամի արտադրանք:

52. Մարզի արդյունաբերության 2013 թվականի համախառն արտադրանքի կառուցվածքն ունի հետևյալ պատկերը.

Գծապատկեր 1.



53. 2013 թվականին հանրապետությունում թողարկված արդյունաբերական արտադրանքի 13.4%-ը բաժին է ընկել ՀՀ Կոտայքի մարզի արդյունաբերական ձեռնարկություններին՝ զբաղեցնելով երրորդ տեղը Երևանից և Սյունիքի մարզից հետո:

54. Արդյունաբերության բնագավառում առանձնակի նշանակություն ունի էլեկտրաէներգիայի արտադրությունը: Ի շնորհիվ <<ՀրազՋԷԿ>> ԲԲԸ-ի, <<Հրազդան-5>> էներգաբլոկի և հիդրոէներգետիկայի զարգացման վերջին տարիներին դինամիկ աճ է գրանցվել էներգետիկայի բնագավառում: Էլեկտրաէներգիայի արտադրությունը կազմում է մարզի արդյունաբերական արտադրանքի մոտ 36.7%-ը, իսկ հանրապետությունում արտադրված էլեկտրաէներգիայի ընդհանուր ծավալում՝ 28.5%-ը:

55. Մարզի արդյունաբերության մյուս հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որտեղ առավել զարգացած են հետևյալ ճյուղերը.

1) սննդամթերքի և ըմպելիքի արտադրություն (մսի և մսամթերքի մշակում և պահածոյացում, մրգերի և բանջարեղենի մշակում և պահածոյացում, կաթնամթերքի, ալյուրի, ըմպելիքի արտադրություն),

2) ոչ մետաղական հանքային այլ արտադրանքի արտադրություն (ապակու և դրանից պատրաստվող իրերի արտադրություն, ցեմենտի արտադրություն),

3) մետաղագործական արդյունաբերություն և մետաղե արտադրատեսակների արտադրություն (պողպատե և թուջե ձուլվածքներ),

4) թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի արտադրություն և մշակում:

56. Մարզում վերջին տարիներին էականորեն ավելացել է մշակող արդյունաբերության ծավալը: Այսպես, 2013թ.-ին 2011թ.-ի համեմատ աճը կազմել է 23.2%, հիմնականում ի հաշիվ խմիչքների (աճ՝ 77.5%), հիմնային մետաղե արտադրատեսակների (աճ՝ 16.4%), դեղագործական արտադրանքի արտադրության (աճ՝ 56.3%): 2013թ. մշակող արդյունաբերության ընդհանուր ծավալում սննդամթերքի և խմիչքների արտադրությունը կազմել է 60.2%, այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակներինը՝ 21.0%, հիմնային մետաղե արտադրատեսակների արտադրությունը՝ 11.1%:

57. Սննդի արդյունաբերությունը մարզի առաջատար ճյուղերից մեկն է և շատ կարևոր դեր է խաղում մարզում գործազրկության նվազման և զբաղվածության խնդրի լուծման հարցում: Այս ոլորտի առավել հայտնի կազմակերպություններն են.

Կաթնամթերքի վերամշակում. <<Չանախ>> ՍՊԸ, <<Թամարա>> ՍՊԸ, <<Անի և Թամարա>> ՍՊԸ, <<Զոհրաբյանի Տիգրան Մեծ>> ՓԲԸ, <<Արզնի կաթ>> ՍՊԸ,

Գինիների և կոնյակների արտադրություն. Պոռոշյանի կոնյակի գործարանը, Գինու-կոնյակի տուն <<Շահնազարյան>> ՍՊԸ,

Պահածոների արտադրություն: <<Սավա>> ՍՊԸ, <<Նիկոլա Ինթերնեյշնլ Արմենիա>> ՍՊԸ, <<Գամմա>> ՍՊԸ, <<Արտաշես>> ՍՊԸ,

Ձվի և թռչնամսի արտադրություն: <<Արզնու տոհմային ԹՏԽ>> ԲԲԸ, <<Լուսակերտի տոհմային թռչնաբուծական ֆաբրիկա>> ՍՊԸ,

Մսամթերքի արտադրություն: <<Ջրվեժի մսամթերքի կոմբինատ>> ՍՊԸ, <<Բեկոն պրոդուկտ>> ՍՊԸ, <<Ա.Շիրվանյան և ընկերներ>> ՍՊԸ, <<Լուսա մսամթերքի արտադրական կազմակերպություն>> ՍՊԸ:

58. Զարգացած է նաև ապակե տարաների արտադրությունը և այս ոլորտում մեծ ներդրում ունեն <<Սարանիստ>> ՍՊԸ-ն, <<Արմգլաս ապակե տարայի արտադրական կազմակերպություն>> ՍՊԸ-ն, <<Գլաս Ուորլդ>> ընկերությունը:

59. Մարզում զարգացած է թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի մշակումը: Չնայած որ դրանց ծավալները կրճատվել են նախորդ տարիների համեմատ, սակայն ադամանդագործության զարգացման համար առկա են զգալի նախադրյալներ, և անհրաժեշտ օժանդակության դեպքում ճյուղը կարող է դառնալ մարզի տնտեսության զարգացման հզոր ուժ:

60. Մարզում թույլ է զարգացած թեթև արդյունաբերությունը, որը ևս համապատասխան ներդրումների առկայության դեպքում կարող է առաջ ընթանալ:

61. 2011-2013թթ. մարզում գործարկվել են նոր արտադրական կարողություններ: 2011թ. վերջին շահագործման հանձնվեց <<Մուլտի Ակվամարին>> բնական աղբյուրի ջրի շշալցման գործարանը, որի համար ներդրվել է ավելի քան 2.9 մլրդ. դրամ: 2011 թվականից Եղվարդում գործում է Գինու-կոնյակի տուն <<Շահնազարյան>> համալիրը, որը հայտնի է իր թողարկած արտադրանքի մրցունակ բարձր հատկանիշներով: Ընկերությունը տարեկան արտադրում է 1 մլն. շիշ կոնյակ: Արտադրանքի հիմնական մասն արտահանվում է ԱՊՀ և Եվրոպական մի շարք երկրներ: 2013թ. վերագործարկվեց <<Ասկե Գրուպ>> գործարանը, որը մետաղի ձուլման արտադրության վերազինման շնորհիվ թողարկում է շինարարական ամրաններ: Գործարանի հզորությունը տարեկան 125 հազ. տոննա է. այն կարող է ամբողջովին ապահովել տեղական պահանջարկը, ինչպես նաև արտադրանքի մի մասը արտահանել: Ընկերությունում իրականացված ներդրումների ընդհանուր գումարը կազմել է մոտ 13.0 մլրդ. դրամ:

62. Չնայած որ արդյունաբերական արտադրանքի ծավալը վերջին տարիներին անշեղորեն աճել է, սակայն այն բավարար չափով չի նպաստել ազգաբնակչության սոցիալական վիճակի բարելավման ցանկալի արդյունքների արձանագրմանը. արդյունաբերության ճյուղերում զբաղված են մարզի աշխատունակ բնակչության 28.2%-ը: Արդյունաբերության ոլորտում զբաղվածների շուրջ 60%-ն աշխատում է մշակող արդյունաբերության, 30%-ը՝ էներգետիկայի ոլորտներում և 10%-ը՝ արդյունաբերության այլ ճյուղերում:

63. Մարզում զարգացած է նաև հանքահումքային արդյունաբերությունը: Մարզում օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվություններ են տրվել թվով 59 հանքավայրերի տեղամասերի համար, որից 25-ը՝ բազալտի, 17-ը՝ լիթոիդային պեմզայի, 3-ը՝ մարմարի, 2-ը՝ գրանիտի և 2-ը՝ երկաթի արդյունահանման: Նշված հանքավայրերը պատկանում են 46 տնտեսվարող սուբյեկտների: Թվարկվածներից շահագործվում են 32-ը, շուրջ 10-ը չեն շահագործվում պահանջարկ և հնարավորություններ չունենալու պատճառով, իսկ մնացածը գտնվում են փաստաթղթային ձևակերպումների փուլում:

64. Մարզում արդյունաբերության ոլորտում առկա են մի շարք հիմնախնդիրներ, որոնք հիմնականում պայմանավորված են հետևյալ գործոններով.

- 1) աշխատատեղերի անբավարար քանակը, գործազրկության բարձր մակարդակը /20.4%/,

- 2) կապիտալ ներդրումների դեռևս ոչ բավարար մակարդակը,
- 3) իրացման շուկայի սահմանափակությունը,
- 4) գործարարության անհավասար մրցակցային պայմանները,
- 5) հաստոցային պարկի, մեքենա-սարքավորումների ֆիզիկական ու բարոյական մաշվածության բարձր մակարդակը և արդի տեխնոլոգիաների և հոսքագծերի ներդրման հնարավորությունների բացակայությունը,
- 6) ֆինանսական ռեսուրսների անհասանելիությունը, վարկային ռեսուրսների բարձր տոկոսադրույքները,
- 7) տնտեսության ստվերայնության բարձր մակարդակը,
- 8) էներգակիրների բարձր սակագները:

4.1.2 Արդյունաբերության ոլորտի զարգացման նպատակները և ռազմավարությունը

65. Մարզում արդյունաբերության ոլորտի զարգացմանն ուղղված անհրաժեշտ միջոցառումներն են.

- 1) արդյունաբերական ներուժի ճիշտ գնահատում և միջազգային փորձի ուսումնասիրություն,
- 2) աշխատատեղերի քանակի ավելացում՝ ի հաշիվ նոր արտադրական ճյուղերի ստեղծման և գործող արտադրական հզորությունների ընդլայնման,
- 3) ոչ արդիական տեխնոլոգիաները նորերով փոխարինելու գործընթաց
- 4) աջակցություն գործող ձեռներեցության կենտրոնների կայացմանը և նորերի ստեղծմանը,
- 5) տնտեսության այլ ճյուղերում համապատասխան ոլորտի արտադրանքի և ծառայությունների ներդրում,
- 6) մարզի արդյունաբերական արտադրանքի ցուցահանդես-վաճառքների կազմակերպում՝ ներգրավելով արտերկրի արտադրողներին,
- 7) մարզի արդյունաբերական ձեռնարկություններ արտադրանքի արտահանման խթանման նպատակով արտերկրի առանձին մարզերի կամ շրջանների հետ հորիզոնական կապերի հաստատման և խորացման գործընթացի շարունակում,
- 8) գործող փոքր և միջին կազմակերպությունների զարգացմանը խոչընդոտող հիմնական պատճառներից մեկի՝ ստվերային տնտեսության դեմ արդյունավետ պայքարի դեպքում տնտեսվարող սյուբեկտների համար կստեղծվեն մրցակցային հավասար պայմաններ, ինչը կնպաստի արտադրության ծավալների զգալի աճին, ինչպես նաև դրական դեր կունենա արտադրանքի որակական հատկանիշների բարելավման և իրական գնագոյացման վրա:

66. ՀՀ Կոտայքի մարզն ունի անհրաժեշտ բոլոր նախապայմանները մարզի արդյունաբերության ոլորտի առկա հիմնախնդիրները լուծելու, սոցիալ-տնտեսական վիճակը բարելավելու համար: Նշված խնդիրների լուծմանը մեծապես կնպաստի երկարաժամկետ ներդրումների և վարկավորման ծրագրերի իրականացումը:

67. ՀՀ Կոտայքի մարզում 2015-2018 թվականներին նախատեսվում է ստեղծել նոր կազմակերպություններ մարզի հիդրոէներգետիկ պոտենցիալի օգտագործմամբ՝ փոքր ՀէԿ-եր

կառուցելով և շահագործելով, ինչպես նաև տեղական հումքի վերամշակման, սննդի արտադրության, թեթև արդյունաբերության կազմակերպություններ ստեղծելով: Այս առումով մարզի արդյունաբերության զարգացման հեռանկարը կարելի է կապել հետևյալ ճյուղերի զարգացման հետ.

- 1) մետաղամշակում,
- 2) գյուղմթերքների վերամշակում,
- 3) թեթև արդյունաբերություն,
- 4) ադամանդագործություն,
- 5) ձկնաբուծություն,
- 6) սննդի արդյունաբերություն,
- 7) վերականգնվող էներգիայի արտադրություն,
- 8) զբոսաշրջություն:

68. Մարզի արտադրության ընդհանուր ծավալում իրենց առաջատար դիրքերը զիջել են մեքենաշինությունն ու սարքաշինությունը, թեթև արդյունաբերությունը: Զգալիորեն բարձրացել է սննդի արդյունաբերության, սննդի կազմակերպման, զբոսաշրջության, այլ ծառայությունների տեսակարար կշիռը: Սննդամթերքի արտադրությունը Կոտայքի մարզի տնտեսության հեռանկարային ճյուղերից է:

69. Կոտայքի մարզն ունի բավականաչափ ռեսուրսներ մրգերի, հատապտուղների և բանջարեղենի մշակման համար: Առկա մրգերի, բանջարեղենի և հատապտուղների ծավալը կարող է բավարար լինել պահածոյագործությունը զարգացնելու համար, որը կարող է իրականացվել պահածոյագործական նոր արտադրությունների հիմնման, ինչպես նաև գոյություն ունեցող արտադրությունների ծավալների ընդլայնման միջոցով իհարկե համապատասխան ներդրումների ներգրավման պարագայում:

70. ՀՀ Կոտայքի մարզում կայուն է էներգետիկայի զարգացման ոլորտը: Մարզում են գործում <<ՀրազդէԿ>> ԲԲԸ-ն, <<Հրազդան-5>> էներգաբլոկը և թվով 17 ՀԷԿ-եր: <<Հրազդան-5>> էներգաբլոկը շահագործման հանձնվեց 2013թ-ին (ներդրումների գումարը այստեղ կազմել է 465,2 մլն. ԱՄՆ դոլար), որի դրվածքային հզորությունը կազմում է 470 ՄՎտ: 2012թ. գործարկվեցին Հով-Խաչ ՍՊԸ-ի կողմից Գառնիում կառուցված 5 փոքր ՀԷԿ-երը՝ 1.5 մլրդ դրամ գումարով:

Աղյուսակ 4.2

ՀՀ Կոտայքի մարզում արտադրված էլեկտրաէներգիան 2011-2013թթ.

/մլն.դրամ/

N/N	Մարզում արտադրված էլեկտրաէներգիայի ծավալը /գումարային արտահայտությամբ/	2011թ.	2012թ.	2013թ.
1	Ընդամենը	26899.7	50821.9	61044.6
	այդ թվում՝			
1.1	ՋէԿ-ի արտադրած էլեկտրաէներգիայի ծավալը	24000.4	47519.8	56629.2
1.2	ՀԷԿ-երի արտադրած էլեկտրաէներգիայի ծավալը	2899.3	3302.1	4415.4

Աղբյուրը՝ ՀՀ Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը>>2011թ., 2012թ., 2013թ., ՀՀ ԱՎԾ

71. 2013թ.-ին մարզում արտադրվել է 61044.6 մլն. դրամի էլեկտրաէներգիա, որը 2012 թվականի համեմատ աճել է 20.1%-ով: Իսկ 2011 թվականի համեմատ արտադրության ծավալն ավելացել է 2.3 անգամ (աղյուսակ 4.2): Էլեկտրաէներգիայի արտադրության ոլորտը երկրորդ ամենախոշոր ճյուղն է Կոտայքի մարզի արդյունաբերության մեջ: Նրա տեսակարար կշիռը մարզի արդյունաբերության համախառն արտադրանքի ծավալում 2013թ. կազմել է 36.7%, իսկ հանրապետությունում թողարկված էլեկտրաէներգիայի ընդհանուր ծավալում՝ շուրջ 28.5%: Մարզում արտադրվող էլեկտրաէներգիայի գերակշիռ մասը բաժին է ընկնում <<ՀրազՋէԿ>> ԲԲԸ-ին և <<Հրազդան-5>> էներգաբլոկին:

72. Կոտայքի մարզը հանրապետության հիդրոռեսուրսներով համեմատաբար հարուստ տարածաշրջաններից է, որն ունի հիդրոէլեկտրաէներգիայի արտադրության զարգացման մեծ պոտենցիալ: Մարզի ջրառատ Հրազդան, Մարմարիկ գետերի էներգետիկ պոտենցիալի օգտագործման շնորհիվ գործում են 3 խոշոր՝ Աթարբեկյանի, Գյումուշի, Արզնու ՀԷԿ-երը:

73. 2014 թվականի հուլիսի 1-ի դրությամբ էլեկտրաէներգիա են արտադրել 14 փոքր ՀԷԿ-եր, որոնց գումարային դրվածքային հզորությունը կազմել է 13.89 ՄՎտ, իսկ էլեկտրաէներգիայի նախագծային տարեկան արտադրանքը՝ 36.6 մլն.կվտժ /աղյուսակ 4.3/:

Աղյուսակ 4.3

2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 1-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ ՀՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ՏՐՎԱԾ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱ ԱՐՏԱԴՐՈՂ ՓՈՔՐ ՀԻԴՐՈԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՆ ԸՍՏ ՇԱՀԱԳՈՐԾՈՂ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Հ/Հ	Շահագործող ընկերություն	Փոքր ՀԷԿ-երի անունները	Համայնքը	Դրվածքային հզորությունը կՎտ	Տարեկան արտադրանքը մլն. կՎտժ
1	«Էներգիա» ՍՊԸ	Կաթնաղբյուր-Երևան ջրանցքի	Կաթնաղբյուր	200	1.0
2	«Հիդրոէներգիա» ՍՊԸ	Կոտայքի ջրանցքի	Ջրաբեր	1190	2.8
3	«Էներգացանցշին» ԲԲԸ	Նարեկ	Հրազդան	1200	0.5
4	«Նարեկէներգո» ՍՊԸ	Գառնի	Գառնի	1426	5.2
5	«Հ.Ա.Գ. եղյակ» ՍՊԸ	Գառնի-1	Գառնի	350	2.3
6	«Թեժ Վաթերֆուլ» ՍՊԸ	Թեժ ՀԷԿ	Մեղրաձոր	2064	5.1
7	«ԶԱՂԱՑԻ ՁՈՐ» ՓԲԸ	Գողթ-2	Գողթ	2316	4.3
8	«ԶԱՂԱՑԻ ՁՈՐ» ՓԲԸ	Գողթ-1	Գողթ	1946	4.4
9	«ՀՈՎ-ԽԱՉ» ՍՊԸ	Յոթաղբյուր-1	Գողթ	547.0	2.4
10	«ՀՈՎ-ԽԱՉ» ՍՊԸ	Յոթաղբյուր-2	Գողթ	573.0	2.1
11	«ՀՈՎ-ԽԱՉ» ՍՊԸ	Յոթաղբյուր-3	Գողթ	605.0	2.4
12	«ՀՈՎ-ԽԱՉ» ՍՊԸ	Յոթաղբյուր-4	Գողթ	417.0	1.7
13	«ՀՈՎ-ԽԱՉ» ՍՊԸ	Յոթաղբյուր-5	Գողթ	319.0	1.3
14	«Արջաձոր ՀԷԿ» ՍՊԸ	Արջաձոր	Մեղրաձոր	738.0	1.1
	Ընդամենը			13891.0	36.6

74. Ըստ տրամադրված լիցենզիաների՝ 2014 թվականի հուլիսի 1-ի դրությամբ կառուցման փուլում են գտնվում ևս 3 ՓՀԷԿ՝ նախագծային 3.53 ՄՎտ գումարային հզորությամբ և 14.82 մլն.կվտժ էլեկտրաէներգիայի տարեկան արտադրությամբ /աղյուսակ 4.4/: ՓՀԷԿ-երի կառուցման համար ներդրումների ընդհանուր ծավալը կկազմի 2241.7 մլն. դրամ:

Աղյուսակ 4.4

2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 1-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ ՀՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ՏՐՎԱԾ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆ ԿԱՌՈՒՑՎՈՂ ՓՈՔՐ ՀԻԴՐՈԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆՆԵՐԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՆ ԸՍՏ ՇԱՀԱԳՈՐԾՈՂ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Հ/հ	Շահագործող ընկերություն	Փոքր ՀԷԿ-երի անունները	Դրվածքային հզորությունը կՎտ	Տարեկան արտադրանքը մլն. կվտժ
1.	«ՏԻԳՄԱՐ» ՍՊԸ	Ազատ ²	1663	8.0
2.	«ԱԲԱՋՈՒՐ» ՍՊԸ	Աբաջուր ²	946	2.4
3	«Գնդասար ՓՀԷԿ» ՍՊԸ	Գնդասար	925	4.42
	Ընդամենը		3534	14.82

75. Նախատեսվող ՓՀԷԿ-երի շահագործման դեպքում մարզում էլեկտրաէներգիայի տարեկան արտադրությունը կավելանա 14.82 մլն. կվտժ-ով, որը կնպաստի արդյունաբերական արտադրանքի ծավալի աճին և նոր աշխատատեղերի ստեղծմանը:

76. Բացի այդ, համաձայն ՀՀ կառավարության 22 հունվարի 2009 թվականի նիստի N3 արձանագրային որոշման՝ հավանության է արժանացել «Փոքր հիդրոէլեկտրակայանների զարգացման սխեման», ըստ որի նախատեսվում է կառուցել ևս 3 փոքր ՀԷԿ-եր մոտ 3.61 ՄՎտ նախագծային գումարային դրվածքային հզորությամբ և 10.75 մլն. կվտժ էլեկտրաէներգիայի տարեկան արտադրությամբ /աղյուսակ 4.5/:

Աղյուսակ 4.5

h/h	ՓՀԷԿ-ի անվանումը	Հաշվարկային ելքը խոր.մ./վրկ	Դրվածքային հզորությունը կՎտ	Էլ. էներգիայի տարեկան արտադրանքը մլն. կՎտժ
1	Մեղրաձոր ՓՀԷԿ	1	994	2.78
2	Ծաղկամարգ ՓՀԷԿ Ուլաշիկ գետի վրա	0.8	2270	7.1
3	Դալար ՓՀԷԿ	0.35	348	0.87
	Ընդամենը		3612	10.75

77. 2015-2018 թվականների ընթացքում մարզի էլեկտրամատակարարման հուսալիությունը բարձրացնելու նպատակով <Հայաստանի էլեկտրական ցանցեր> ՓԲԸ-ի կողմից սեփական միջոցներով նախատեսվում է շուրջ 2400.0 մլն դրամի ներդրումներ: Ներդրումները հիմնականում ուղղված կլինեն օդային, մալուխային գծերի կառուցման/վերակառուցման, վերանորոգման, ենթակայանների նորոգման, հին տրանսֆորմատորները նորերով փոխարինելու աշխատանքներին, ինչպես նաև նոր բաժանորդների ցանցին միանալուն ուղղված աշխատանքներին:

78. <Բարձրավոլտ էլեկտական ցանցեր> ՓԲԸ-ի հաշվեկշռում գտնվող 220/110կՎ ՕԳ-երի և 110 կՎ <Չարենցավան-3> ենթակայանի սարքավորումների ընթացիկ նորոգման աշխատանքների համար ընկերության սեփական միջոցների հաշվին կիրականացվեն 2100.0 հազ. դրամի աշխատանքներ:

79. Զարգացման Միջազգային Բանկի կողմից <Էլեկտրամատակարարման հուսալիություն> ծրագրի շրջանակներում հատկացված է 39.0 մլն ԱՄՆ դոլար վարկ, որն ուղղվելու է՝ Հրազդան ԶԷԿ-ից մինչև Շինուհայր 220 կՎ ենթակայան ընկած Նորադուզ-Լիճք-Վարդենիս-Վայք- Որոտան 1 220 կՎ օդային էլեկտրահաղորդման գծերի շուրջ 230 կմ հատվածի վերակառուցմանը: Գլխավոր կապալառուի ընտրության մրցույթի արդյունքում օբյեկտը գնահատվել է 28.5 մլն դոլար: Ծրագրի նպատակն է՝ բարելավել հաղորդիչ ցանցի հուսալիության բարձրացումը, թողունակության մեծացումը և նվազեցնել էլեկտրաէներգիայի կորուստները: Կոտայքի մարզում գտնվող հատվածի վերակառուցմանը Ծրագրով նախատեսվել է իրականացնել 10.8 մլն. ԱՄՆ դոլարի ներդրումներ:

80. 2015-2018թթ. նախատեսվում է Իրան-Հայաստան 400 կՎ 3-րդ էլեկտրահաղորդման օդային գծի կառուցման աշխատանքները, որի «Հրազդան-5» կայանից սկսած 1-14 հենարանների հատվածը անցնում է Կոտայքի մարզով: Շինարարության արժեքը կազմում է մոտ 1,43 մլն. եվրո գումար:

81. Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ /KfW/ «Հայաստան-Վրաստան Էլեկտրահաղորդման գիծ/HVDC Հաստատուն հոսանքի փոխակերպիչ կայան» ծրագրի շրջանակներում իրականացվելու են «Հրազդան ԶԷԿ»-ից դեպի Այրում 400կՎ օդային գծի, (որի մի հատվածը անցնելու է Կոտայքի մարզի տարածքով) և 400/500կՎ հաստատուն հոսանքի փոխակերպիչ կայանի կառուցման աշխատանքները: Աշխատանքները պետք է սկսվեն 2017 թվականին և ավարտվեն 2021 թվականին: Աշխատանքները գնահատված են մոտ 100 մլն. եվրո: Կապահովվի մոտ 700 Մվտ հզորության փոխհոսք:

4.2 ՓՄՁ ԵՎ ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾ

4.2.1 ՓՄՁ ոլորտի իրավիճակի վերլուծություն

82.ՓՄՁ պետական քաղաքականության տնտեսական նպատակների անկյունաքարն է հանդիսանում ՀՀ մարզերի տնտեսական զարգացման անհամամասնությունների հաղթահարումը՝ օգտագործելով յուրաքանչյուր տարածաշրջանի տնտեսական զարգացման առանձնահատկություններն ու ներուժը և խթանելով տնտեսվարող սուբյեկտների միջև ներմարզային և միջմարզային համագործակցության զարգացումը:

83.ՓՄՁ պետական աջակցության ուղղությամբ իրականացվող հետևողական քաղաքականության արդյունքում վերջին տարիներին Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է ՓՄՁ ոլորտը բնութագրող ցուցանիշների դինամիկ աճ: 2012թ. ՓՄՁ սուբյեկտների շրջանառության ծավալների տեսակարար կշիռը երկրի համախառն ներքին արդյունքում կազմել է 27.1 %, իսկ 2011թ. 25.9 % : Հատկանշական է, որ 2012 թվականի ՀՆԱ-ում ՓՄՁ տեսակարար կշռի կառուցվածքում առավել մեծ մասնաբաժին են ունեցել գերփոքր կազմակերպությունները՝ 92.0 % փոքրի 6.8 %-ի և միջինի 1.2 %-ի դիմաց:

84. Մարզի զարգացման ծրագրով ՓՄՁ աջակցության միջոցառումները նախատեսված էր իրականացնել «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի (Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ) գործունեության շրջանակներում:

85. Վերջին տարիների ընթացքում ՀՀ Կոտայքի մարզի ՓՄՁ ոլորտում զգալի առաջընթաց է նկատվում: Գործող ՓՄՁ սուբյեկտների քանակով Կոտայքի մարզը առաջատարներից է, որտեղ գործում են 5200 ՓՄՁ սուբյեկտներ, որը կազմում է հանրապետությունում գրանցված ՓՄՁ սուբյեկտների ավելի քան 7%-ը:

86. Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամի Կոտայքի մասնաճյուղի կողմից ՓՄՁ պետական աջակցության 2011-2013թվականներին նախատեսված բոլոր ուղղություններով բավարարված հայտերը ըստ ծրագրային ուղղությունների հետևյալն են.

Աղյուսակ 4.5

Աջակցության ուղղությունը	Բավարարված հայտերի քանակը		
	2011թ.	2012թ.	2013թ.
Վարկային երաշխավորությունների տրամադրում	1	2	0
Սկսնակ գործարարների ձեռներեցության աջակցություն	12	50	40
Սկսնակ գործարարներին ֆինանսական	6	11	9

աջակցություն			
Տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն	600	710	780
Ուսուցողական աջակցություն	0	480	270
ՓՄՁ սուբյեկտների կողմից թողարկվող արտադրանքի (մատուցվող ծառայությունների) շուկաներ առաջնորդման աջակցություն	4	6	2
Ձեռնարկությունների եվրոպական ցանցի հաղորդակցման կենտրոնի գործունեության շրջանակներում աջակցություն	7	8	10
Տեղական տնտեսական զարգացում	0	36	10

87.ՓՄՁ-ներին ցուցաբերված աջակցությունը իրականացվել է հետևյալ մեխանիզմներով.

Աղյուսակ 4.6

ՓՄՁ աջակցման մեխանիզմները

Աջակցության ուղղություններ	Աջակցության մեխանիզմները ըստ ՓՄՁ սուբյեկտների	
	Գործող ՓՄՁ-ներ	Սկսնակ գործարարներ
Ֆինանսական աջակցություն	Երաշխավորվում է վարկի հիմնական գումարի ոչ ավելի, քան 70%-ը, երաշխավորության առավելագույն չափը մինչև 10.0 մլն դրամ: Վարկային տոկոսի մասնակի սուբսիդավորում: Սեփական կապիտալի ֆինանսավորում:	Մինչև 2.0 մլն դրամ վարկի ստացման համար տրամադրվում է վարկային երաշխիք վարկի գումարի մինչև 130% չափով:
Տեղեկատվական, խորհրդատվական և ուսուցողական ծրագրեր	Տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն, Նեղ մասնագիտական խորհրդատվական աջակցություն, Ուսուցողական դասընթացներ	Դասընթացներ և անհատական խորհրդատվություն գործարար ծրագրի մշակման համար
Իրացման աջակցություն	Գովազդային վահանակների պատրաստում Պիտակների տպագրություն Ինտերնետային կայքի պատրաստում Մասնակցություն ցուցահանդեսներին:	

Բիզնեսի միջազգայնացում	Մասնակցություն ցուցահանդեսներին Գործընկերների որոնում	
------------------------	---	--

Աղբյուրը՝ ՓՄՁ ԶԱԿ-ի Կոտայքի մարզային կենտրոն

88. Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամի Կոտայքի մասնաճյուղի կողմից ՓՄՁ պետական աջակցության 2013 թվականին նախատեսված բոլոր ուղղություններով բավարարված հայտերի բաշխվածքը ըստ ծրագրային ուղղությունների այսպիսին է .

89. 2013 թվականի ընթացքում սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցության ծրագրի շրջանակներում աջակցություն է ցուցաբերվել 40 սկսնակ գործարարի:

90. 2013 թվականի ընթացքում ՓՄՁ սուբյեկտներին վարկային երաշխավորությունների տրամադրման ծրագրի շրջանակներում ՀՀ Կոտայքի մարզում տրամադրվել է 28,8 մլն ՀՀ դրամ գումարի երաշխավորություն 9 ՓՄՁ սուբյեկտի՝ ապահովելով 28,8 մլն ՀՀ դրամի վարկային փաթեթ: Վարկային երաշխավորությունները տրամադրվել են Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի գործընկեր ՎՏԲ-Հայաստան բանկի միջոցով:

91. 780 ՓՄՁ սուբյեկտներին խորհրդատվական աջակցություն է տրամադրվել օրենքներում կատարվող փոփոխությունների, արտաքին տնտեսական գործունեության իրականացման, հոսքազտերի և սարքավորումների ձեռքբերման, նորարարությունների և նոր տեխնոլոգիաների ներդրման, գործընկերների որոնման, ֆինանսական միջոցների ներգրավման և կառավարման, լիցենզավորման, ստանդարտացման, գործարար և ներդրումային ծրագրերի մշակման, հաշվապահական հաշվառման և այլ հարցերով:

92. 270 ՓՄՁ սուբյեկտ ուսուցողական աջակցություն են ստացել, մասնակցելով «ՀՀ հարկային օրենսդրության պարզաբանումներ», «Համակարգիչ գործարարի համար», «Միկրո և փոքր կազմակերպությունների համար Ֆինանսական ուսուցման» վերապատրաստման թեմաներով դասընթացներին:

93. Ձեռնարկությունների եվրոպական ցանցի հաղորդակցման կենտրոնի գործունեության շրջանակներում աջակցություն է ստացել 10 ՓՄՁ սուբյեկտ:

94. Շուկաներ առաջմղմանն աջակցության ծրագրի շրջանակներում մարզից 2 ՓՄՁ սուբյեկտներ ստացել են գովազդային վահանակների պատրաստման, ինտերնետային կայքի պատրաստման, ցուցահանդեսին մասնակցության և այլ աջակցություն:

95. 2013 թվականի ընթացքում «Տեղական տնտեսական զարգացում» ծրագրային ուղղությունն իրականացրել է տարածաշրջանային և համայնքային տնտեսական զարգացման ծրագրեր. մարզում քարտեզագրվել են 10 համայնքներ: Քարտեզագրման արդյունքներն ամփոփվում և ներկայացվում են Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ պաշտոնական կայքում:

96. Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման բնագավառում կանանց ձեռնարկատիրական նախաձեռնողականության խրախուսման, տնտեսության տարբեր ճյուղերում կին գործարարների նվաճումները գնահատելու նպատակով Հայաստանի Հանրապետության վարչապետը հայտարարել է մրցանակաբաշխություն 6 ուղղություններով: Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ

հիմնադրամի Կոտայքի մասնաճյուղի կողմից ներկայացվել է 16 հայտ: 1 կին գործարար արժանացավ <<Լավագույն սկսնակ կին գործարար>> անվանակարգին, իսկ 1 կին գործարար էլ՝ էկոլոգիական արտադրանք հատուկ անվանակարգին:

4.2.2 Ծրագրի արդյունքները և հետագա խնդիրները

97. Ծրագրի շրջանակներում աջակցություն ստացածների տարածքային բաշխվածության մեջ առայժմ գերակշռում են քաղաքային համայնքներում գործող ՓՄՁ-ները: Անհրաժեշտ է ՓՄՁ-ների համամասնական ընգրկում ապահովել մարզի բոլոր տարածաշրջաններում: Դա միաժամանակ հնարավորություն կստեղծի ծրագրի աջակցման մեխանիզմները ավելի հասանելի դարձնել գյուղական համայնքների համար, որտեղ գործող ՓՄՁ-ների քանակը դեռևս չնչին է: Անհրաժեշտ է հետևողականորեն մեծացնել գյուղական համայնքներից շահառուների տեսակարար կշիռը ՓՄՁ աջակցության հաջորդ տարիների պլաններում:

98. Ծրագրի շահառուների շրջանակներն ընդլայնելու գործում կարևոր դեր ունեն կատարելու տեղական ինքնակառավարման մարմինները, որոնց մասնակցությունը ՓՄՁ աջակցման ծրագրերի պլանավորման և իրագործման գործընթացներում դեռևս բավարար չափով չի դրսևորվում:

4.2.3. Մասնավոր հատվածի զարգացման հիմնախնդիրները

99. ՄԶԾ ՓՄՁ աջակցման ծրագիրը զգալիորեն բարելավել է վարկային ռեսուրսների հասանելիությունը մարզի գործող և սկսնակ այն ՓՄՁ-ների համար, որոնք գրավային ռեսուրսների անբավարարության պատճառով չէին կարողանում օգտվել վարկավորման առկա հնարավորություններից:

100. Եթե 2011-2012թ. վարկային երաշխավորությունների տրամադրման ծրագրի շրջանակներում Կոտայքի մարզում տրամադրվել է 24.0 մլն. ՀՀ դրամ գումարի երաշխավորություն 17 ՓՄՁ սուբյեկտի, ապա միայն 2013 թվականի ընթացքում տրամադրվել է 28,8 մլն. ՀՀ դրամ գումարի երաշխավորություն 9 տնտեսավարող սուբյեկտի:

101. ՓՄՁ աջակցության ծրագրով իրականացված միջոցառումները դեռևս բավարար չեն մարզի մասնավոր հատվածի կայուն և մրցունակ զարգացումն ապահովելու համար:

102. Մարզի համայնքներում մասնավոր հատվածը ձևավորված է հիմնականում հետևյալ ոլորտներում.

- 1) արտադրության ոլորտում՝ տեղական գյուղմթերքների վերամշակում, տեղական հումքից շինանյութերի արտադրություն, հացամթերքների, զովացուցիչ ըմպելիքների արտադրություն և այլն,
- 2) առևտրի ոլորտում՝ մանրածախ առևտրի օբյեկտներ,
- 3) ծառայությունների ոլորտում՝ կենցաղային ծառայություններ, հանրային սննդի, զբոսաշրջության կազմակերպում
- 4) շինարարության ոլորտում՝ շինարարություն և վերանորոգման աշխատանքներ:

103. Մարզում ձեռնարկատիրության հետագա զարգացման հնարավորություններն են.

1) բնակչության ձեռներեցությունը՝ համայնքում մասնագիտական կրթություն և փորձառու անձանց սեփական գործ սկսելու ցանկությունը,

2) տեղական գյուղմթերքների հումքային բազայի հիման վրա վերամշակման և իրացման արդյունավետ կազմակերպումը,

3) զբոսաշրջության զարգացումը՝ հաշվի առնելով առանձին համայնքների բարենպաստ աշխարհագրական դիրքը, բնակլիմայական պայմանները և համապատասխան ենթակառուցվածքների առկայությունը,

4) համայնքում ներդրումների համար նպաստավոր պայմանների ապահովումը և տեղացի արտագնա ձեռներեցների՝ ներդրումներ կատարելու պատրաստակամությունը:

104. Համայնքներում փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման համար անհրաժեշտ է ապահովել համայնքների ղեկավարների ակտիվ մասնակցությունը համայնքի մասնավոր հատվածի զարգացման ծրագրերի մշակման գործում: Նման ծրագրերի մշակման և իրականացման համար անհրաժեշտ է նաև դոնոր կազմակերպությունների, ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամի, ինչպես նաև օտարերկրյա և տեղացի մասնավոր ներդրողների աջակցությունը:

105. Սակայն նախորդ տարիների արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ առկա են մասնավոր ներդրումների ներհոսքը սահմանափակող գործոններ, որոնք են.

- 1) համայնքներում կարևորելով մասնավոր ներդրումների ներգրավման անհրաժեշտությունը՝ այնուամենայնիվ հստակ չեն ներդրումների խրախուսման մեթոդները,
- 2) գործարար նախաձեռնությունների խրախուսման և իրականացման համար անհրաժեշտ մասնագետների և որակյալ կադրերի պակասը:

4.2.4. Մասնավոր հատվածի զարգացման 2015-2018թթ. առաջնահերթությունները

106. Մասնավոր հատվածի զարգացման հիմնախնդիրների վերլուծությունը ցույց է տալիս, որ մարզի տնտեսության հետագա զարգացման համար կարևոր է անցում կատարել առանձին ոլորտների և տարածաշրջանների մակարդակով մասնավոր հատվածի զարգացման հետևյալ ծրագրային միջոցառումների իրականացմանը՝ շարունակելով առանձին ՓՄՁ-ներին ցուցաբերվող աջակցությունը.

1) ՓՄՁ աջակցման և մասնավոր հատվածի զարգացման տարածաշրջանային արդյունավետ ծրագրերի մշակում: Ծրագրերի մշակման սկզբում պետք է հստակեցվեն գործարարության զարգացման այն ռեսուրսները, որոնք տարածաշրջանի համայնքները պատրաստ են տրամադրել մասնավոր ներդրումները խրախուսելու համար:

2) Գերակա ոլորտներում մասնավոր հատվածի զարգացման մարզային հայեցակարգերի ընդունում: Մասնավոր ներդրումների ներհոսքին նպաստող մեկ այլ կարևոր գործոն է մարզի համար գերակա ոլորտների զարգացման հայեցակարգերի ընդունումը: Հայտնի է, որ մարզի բոլոր

տարածաշրջանների համար գերակա ոլորտներ են գյուղմթերքների վերամշակումը և իրացումը, ինչպես նաև զբոսաշրջությունը և հարակից ծառայությունները: Սակայն, որպեսզի ներդրումները արդարացված լինեն և նվազի նրանց ռիսկայնությունը, անհրաժեշտ է հստակեցնել այդ ապրանքների և ծառայությունների պահանջարկի ծավալները և իրացման շուկաները:

3) Մասնավոր ներդրումների խթանման միջոցառումների կազմակերպում: Տարածաշրջաններում մասնավոր հատվածի զարգացման ծրագրերի, ինչպես նաև մարզում գերակա ոլորտների զարգացման հայեցակարգերի հենքի վրա կձևավորվեն մասնավոր ներդրումների ներգրավման առաջարկներ, ինչը էապես կբարելավի գործարար միջավայրը և հատկապես մասնավոր ներդրումների մրցակցային պայմանները: Հետազոտությունները վկայում են, որ ներդրումներ կատարելու ցանկություն և մտադրություններ ունեն ինչպես տեղացի արտագնա, այնպես էլ այլ արտաքին ներդրողներ, սակայն այդ գործընթացները հաճախ դանդաղում և չեն իրագործվում տեղերում պատշաճ շահագրգռվածության և համագործակցության բացակայության հետևանքով: Այս առումով մասնավոր հատվածի զարգացման ծրագրերի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ է կազմել տարածաշրջանային և մարզային ներդրումային առաջարկների փաթեթներ և պարբերաբար կազմակերպել իրազեկման միջոցառումներ տեղացի արտագնա և այլ արտաքին ներդրողների համար:

107. Այստեղ որոշիչ է մարզպետարանի, մարզային խորհրդի, ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամի մարզային մասնաճյուղի դերը ինչպես տարածաշրջանային ծրագրերի մշակման, այնպես էլ տարեկան աշխատանքային պլանների շրջանակներում մասնավոր ներդրողներին խրախուսելու գործում:

108. 2015-2018թթ. արդյունաբերության և մասնավոր հատվածի զարգացման համար պահանջվող ֆինանսական միջոցները ներկայացված են հավելված 4.1-ում:

4.3.ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

4.3.1 Զբոսաշրջության ոլորտի իրավիճակի վերլուծություն

109. Զբոսաշրջությունը Հայաստանի տնտեսության դինամիկ զարգացող և հեռանկարային ճյուղերից է, որն իր առաջխաղացմամբ ոչ միայն մեծ դեր կարող է խաղալ տնտեսության զարգացման համար, այլև նպաստել մի շարք սոցիալ-տնտեսական խնդիրների լուծմանը: Հայաստանը միջազգային զբոսաշրջային շուկայում նոր երկիր է: Այս բնագավառում մեր հանրապետությունն ունի զգալի ներուժ, քանզի զբոսաշրջիկների կողմից որպես զբոսաշրջային ուղղություն ընտրելու հիմնական պատճառներն են երկրի բնությունը, պատմամշակութային արժեքները, ինչպես նաև ավանդույթներն ու հայկական սփյուռքի առկայությունը: Հանրապետություն այցելած զբոսաշրջիկների կողմից ընդհանուր առմամբ հնչել են դրական գնահատականներ: Հայաստանն աշխարհի այն երկրներից է, որտեղ կան զբոսաշրջության զարգացման համար բարենպաստ պայմաններ, որոնց արդյունավետ և նպատակային

օգտագործման զբոսաշրջությունը կարող է դառնալ հանրապետության ազգային տնտեսության կարևորագույն բնագավառներից մեկը:

110. Զբոսաշրջությունը և հանգստի կազմակերպումը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության տնտեսության գերակա ճյուղերից մեկը և սկսած 1998թ. գտնվում է առանձնահատուկ ուշադրության ներքո, ինչի հետևանքով հանրապետությունում վերջին տարիներին նկատվում է հանգստի և զբոսաշրջային ոլորտի ակտիվություն: Այդ ակտիվությունն ուղղակի արդյունքն է ոլորտի ծրագրային բարեփոխումների, որոնց շնորհիվ զբոսաշրջային այցելությունները դեպի Հայաստանի Հանրապետություն դինամիկորեն աճում են:

111. Վերջին տարիներին զբոսաշրջության ոլորտի մարքեթինգային քաղաքականության շրջանակներում ծրագրային միջոցառումները հիմնականում ուղղված են եղել համաշխարհային շուկայում Հայաստանի՝ որպես զբոսաշրջության համար բարենպաստ և գրավիչ երկրի, նկարագրի ձևավորման շարունակական կատարելագործմանը:

112. Հայաստանում մոտ 20 հազար մարդ աշխատում է զբոսաշրջության ոլորտում (ընդհանուր աշխատուժի 1.7%-ը): Ներկայումս զբոսաշրջությունն ապահովում է Հայաստանի ՀՆԱ-ի մոտ 4.7%-ը, ըստ 2008 թվականի փետրվարի 13-ին ՀՀ կառավարության հավանությանն արժանացած <<Զբոսաշրջության զարգացման հայեցակարգի>>՝ մինչև 2030 թվականը նախատեսվում է այն հասցնել մինչև 12 %-ի: Ակնալվում է, որ մինչև 2020 թվականը Հայաստան կայցելեն 1,5 մլն. զբոսաշրջիկ, իսկ մինչև 2030 թվականը՝ մինչև 3 մլն. զբոսաշրջիկ: Արդյունքում զբոսաշրջության ոլորտի եկամուտները զգալիորեն կավելանան:

113. Հանրապետությունում զբոսաշրջության զարգացման համար կարևորվում է առանձին մարզերի ներգրավվածությունը, ինչպես նաև նրանց ենթակառուցվածքների զարգացվածության մակարդակը, զբոսաշրջային ռեսուրսների հասանելիությունը, զբոսաշրջային ռեսուրսների ճիշտ գնահատումն ու դրանց ճիշտ օգտագործումը:

114. Կոտայքի մարզի զբոսաշրջության ոլորտն իր հարակից ենթակառուցվածքներով և նպաստավոր բնակլիմայական պայմաններով, ինչպես նաև պատմամշակութային և բնական հուշարձանների հարուստ բազմազանությամբ, պահպանված ժողովրդական ավանդույթների և սովորույթների շնորհիվ կարող է դառնալ ոչ միայն հանրապետության, այլ տարածաշրջանի տուրիստական կենտրոններից մեկը, քանզի վերը նշված նպաստավոր պայմանները կարող են դառնալ տուրիզմի տարբեր տեսակների զարգացման ամուր հենքը՝ մասնավորապես, ագրոտուրիզմի, գյուղական տուրիզմի, լեռնադահուկային, ինչպես նաև այլ տուրիստական կենտրոնների:

115. Կոտայքն իր պատմամշակութային արժեքներով համարվում է ամենահարուստ մարզը հանրապետությունում, որը չունի պետական սահման: Այն հարուստ է իր բնակլիմայական պայմաններով: Սաղարթախիտ անտառները զբաղեցնում են մարզի տարածքի շուրջ 1/3 մասը: Առկա են նաև քաղցրահամ ջրերի բազմաթիվ աղբյուրներ:

116. Հյուրանոցային տնտեսության օբյեկտների քանակով Կոտայքի մարզը զիջում է միայն մայրաքաղաք Երևանին: Բարձրակարգ հյուրանոցային ծառայությունների մատուցումը, ինչպես նաև հանրային սննդի կազմակերպումը հանդիսանում են զբոսաշրջության զարգացման հիմնական

նախադրյալները: Հյուրանոցային օբյեկտների հիմնականում տեղակայված են Ծաղկաձոր, Հանքավան, Արզնի համայնքներում, ինչպես նաև Աղվերան հանգստյան գոտում:

117. Մարզում կայացած զբոսաշրջության կենտրոններն են՝ Ծաղկաձորը, Աղավնաձոր-Հանքավան, Աղվերան հանգստյան գոտիները, ինչպես նաև Գառնի-Գեղարդ պատմամշակութային վայրերը: Վերը նշված գոտիները հագեցած են հյուրանոցային և հանգստյան տներով, դրանով իսկ ստեղծված են զբոսաշրջության համար անհրաժեշտ տուրիստական ենթակառուցվածքներ:

118. Մարզի տարածքում են գտնվում հազարից ավելի պատմամշակութային օբյեկտներ՝ եկեղեցական համալիրներ, եկեղեցիներ, մատուռներ, տուն-թանգարաններ և այլն, սակայն դրանց մեծ մասը դեռևս գտնվում են անմխիթար վիճակում: Դեռևս չլուծված խնդիր է համարվում դրանց շրջակայքում սանհանգույցների տեղակայման, հուշանվերների վաճառքի կազմակերպման ու համակարգման հարցերը:

119. Մարզն ունի բավարար ավտոճանապարհային ցանց, այն լիովին ընդգրկում է թե մարզի բոլոր համայնքները, թե պատմամշակութային օջախները: Ընդ որում հանրապետական նշանակության ավտոճանապարհների վիճակը և սպասարկումը հիմնականում բավարարում են միջազգային չափանիշներին, իսկ մարզային ու համայնքային նշանակության ավտոճանապարհների վիճակը հետզհետե բարելավվում է:

120. Մարզի ողջ տարածքում գործում են բազմաթիվ ռեստորաններ, սրճարաններ և խորտկարաններ: Դրանցից շատերն իրենց կահավորման և սպասարկման մակարդակով մոտ են միջազգային չափանիշներին: Այդ օբյեկտների հիմնական մասը կառուցվել և շահագործման են հանձնվել վերջին մի քանի տարիների ընթացքում:

121. Ծաղկաձորն իր բնակլիմայական պայմաններով խորհրդային ժամանակներից ի վեր համարվել է առողջարանային, տարբեր մարզաձևերի (հիմնականում ձմեռային) հանգստի ու ժամանցի լավագույն կենտրոն: Այստեղ պարբերաբար մարզվել են ինչպես նախկին խորհրդային Միության, այնպես էլ այլ երկրների ազգային հավաքականները: Սպորտային համալիրի, ինչպես նաև նորակառույց ճուպանուղիների առկայությունը հնարավորություն են ստեղծել այն դարձնելու միջազգային սպորտի, հանգստի, առողջարանային և զբոսաշրջության կենտրոն:

122. Ունենալով զգալի ներուժ և տուրիզմի տարատեսակների զարգացման հնարավորություններ՝ մարզում միաժամանակ առկա են զբոսաշրջության զարգացմանը խոչընդոտող մի շարք գործոններ, որոնցից կարելի է առանձնացնել.

- 1) զբոսաշրջային ենթակառուցվածքների անհամաչափ տեղակաբաշխումը,
- 2) մարզի զբոսաշրջության զարգացման հայեցակարգի բացակայությունը,
- 3) մարզի, ինչպես նաև առանձին ճարտարապետական կառույցների մասին գովազդային-տեղեկատվական գրքույկների բացակայությունը, մարզային գիդերի ինստիտուտի բացակայությունը,
- 4) առանձին պատմամշակութային հուշարձանների անմխիթար վիճակը,
- 5) մարզային ենթակայության, ինչպես նաև համայնքային ճանապարհների ոչ բավարար վիճակը,
- 6) միջազգային շուկայում զբոսաշրջային ծառայությունների մատուցման ոչ մրցունակ լինելը,

- 7) միջազգային հանրությանը Հայաստանը որպես զբոսաշրջության համար բարենպաստ, գրավիչ և ապահով երկիր համակողմանիորեն չներկայացնելու հանգամանքը,
- 8) զբոսաշրջության բնագավառում ներդրումային ծրագրերի ոչ բավարար մակարդակը:

4.3.2 Ջբոսաշրջության ոլորտի զարգացման ռազմավարությունը

123. Մարզում զբոսաշրջության զարգացման ռազմավարությունը կարելի է դասակարգել ըստ տարբեր բնութագրիչների, մասնավորապես՝ ըստ առանձին համայնքների տնտեսությունների:

124. Այս տեսանկյունից կարևոր խնդիր է համարվում Ծաղկաձոր, Եղվարդ, Արզական, Բջնի, Գառնի, Հանքավան, Մարմարիկ և Մեղրաձոր համայնքների տնտեսության զարգացման հեռանկարները:

125. Կոտայքի մարզում զբոսաշրջության զարգացման համար անհրաժեշտ է առաջնորդվել հետևյալ ռազմավարությամբ.

- 1) զբոսաշրջության զարգացման համար առաջնահերթ պայման է ենթակառուցվածքների համաչափ զարգացումը՝ հյուրանոցային համալիրների, հանգստյան տների վերանորոգումը, վերակառուցումը, ինչպես նաև դեպի պատմամշակութային հուշարձաններ տանող ավտոճանապարհների վերանորոգումը,
- 2) այլընտրանքային հանգստի կենտրոն կարող է դառնալ Հանքավանի ձորը՝ ամբողջացնելով Ծաղկաձորի հետ համատեղ միջազգային նշանակության հանգստի, առողջարանային և զբոսաշրջության կենտրոն ստեղծելու հեռանկարը, քանզի վերջին տարիներին այնտեղ կառուցված Մարմարիկի ջրամբարը լրացուցիչ նպաստավոր պայմաններ է ստեղծել լողափնյա հանգստի համար:
- 3) անհրաժեշտ է իրականացնել ծրագիր, որը կհամատեղի Աղվերան, Արզական, Արալեռ տարածքների հնարավորությունները,
- 4) մարզի տարածքում էկոտուրիզմի զարգացման խթանում,
- 5) մոտ ապագայում Եղվարդի ջրամբարի կառուցմանը զուգահեռ, այդ կառույցը նաև տուրիստական կենտրոնի վերածելու նպատակով անհրաժեշտ է մշակել և կյանքի կոչել հատուկ ծրագիր, մասնավորապես՝ ջրամբարի տարածքում կառուցել հանրային սպասարկման, հանգստի և զվարճանքի կենտրոններ: Ի տարբերություն Սևանի երկու ամսվա տևողությամբ հանգստի, այս ջրային մակերեսների հնարավորությունից կօգտվեն առնվազն չորս ամիս, և Երևանին ավելի մոտ գտնվելու հանգամանքը ավելի մեծ թվով հանգստացողների ուշադրությունը կգրավի,
- 6) Կոտայքի մարզում զբոսաշրջության զարգացման համալիր ծրագրի մշակում, որն իր մեջ կներառի առկա ներուժի ամբողջական ուսումնասիրությունը, իրավիճակի գնահատականը և զարգացման ուղղությունները:
- 7) անհրաժեշտ է ստեղծել Կոտայքի մարզի տուրիստական ինտերնետային կայք,
- 8) շատ կարևոր է ստեղծել գյուղական տուրիզմի զարգացման միասնական հայեցակարգ:

126. Զբոսաշրջության զարգացման ապահովման համար 2015-2018թթ. ձեռնարկվելիք քայլերն են.

- 1) մարզի զբոսաշրջային տնտեսության գույքագրում,
- 2) բազմաբնույթ գովազդային նյութերի պատրաստում,
- 3) մարզում զբոսաշրջության կենտրոնների ստեղծում,
- 4) հանգստի գոտիների մոտակա տարածքներում տեղակայված առանձնատների և անավարտ շինությունների վերաբերյալ տեղեկատվական բազայի ստեղծում և դրանց մասին ներդրողներին տեղեկատվության ներկայացում,
- 5) զբոսաշրջության ոլորտի զարգացման պատասխանատուների, ինչպես նաև աշխատակիցների վերապատրաստման և միջազգային փորձի փոխանակման նպատակով դասընթացների կազմակերպում,
- 6) զբոսաշրջային ծառայություններ մատուցող կազմակերպությունների և ՓՄՁ զարգացմանն աջակցող կազմակերպությունների հետ համագործակցության ապահովում:

5.ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

5.1 Գյուղատնտեսության ոլորտի իրավիճակի վերլուծություն

127. Կոտայքի մարզի գյուղատնտեսական հողատեսքերն ընդգրկում են մարզի ընդհանուր տարածքի 76.8%-ը (154639.9 հա): Մարզը սահմանամերձ չէ և ըստ բնակլիմայական պայմանների բաժանվում է լեռնային և բարձր լեռնային գոտիների: Մարզում ըստ բարձունքային գոտիականության հանդիպում են Հանրապետության տարածքին բնորոշ կլիմայի գրեթե բոլոր տեսակները: Արևափայլքի տարեկան տևողությունը տատանվում է 1920 ժամից մինչև 2400 ժամի սահմաններում: Տարվա ամպամած օրերի միջին թիվը կազմում է 75: Օդի միջին ջերմաստիճանը հունվարին -7.9°C-ից մինչև - 19.8°C է, հուլիս-օգոստոսին՝ 13.0-25.4°C: Օդի նվազագույն ջերմաստիճանը դիտվել է Հրազդանում (-31°C), առավելագույնը՝ Եղվարդում (32°C): Տեղումների տարեկան քանակը տատանվում է 310 մմ - մինչև 726 մմ: Տեղումների առավելագույն մասը դիտվում է ապրիլին, նվազագույնը՝ օգոստոսին: Աշնանը դիտվում է առատ տեղումների երկրորդ շրջանը:

128. Մարզի 37.8 հազ. հա վարելահողերից 2013թ. ընտանեկան (գյուղացիական) տնտեսությունների կողմից օգտագործվել է 17.1հազ. հա, որից 12.1հազ. հա՝ հացահատիկային մշակաբույսերի տակ: Համայնքներում փաստացի չի օգտագործվել 20.7 հազ. հա վարելահող: Զօգտագործվող վարելահողերը հիմնականում գտնվում են բարձրադիր գոտիներում և բնակավայրից զգալի հեռավորության վրա, քարքարոտ են ու դժվարամշակ:

129. Գյուղատնտեսական նշանակության հողերի, մասնավորապես վարելահողերի նպատակային օգտագործման մակարդակի բարձրացման գործում անհրաժեշտ է կարևորել պետական մոտեցումը. չօգտագործվող վարելահողերը, որոնք հիմնականում գտնվում են բնակավայրերից հեռու՝ բարձրադիր գոտում և ունեն մեծ թեքություններ, թփակալումների, ճանապարհների վատ լինելու, տեխնիկայի բացակայության, մելորացիայի ենթակա լինելու, ինչպես նաև հողատերերի բացակայության և ֆինանսական սղության պատճառով հողատարածքները օգտագործվում են որպես խոտհարքներ:

130. Ըստ հողային հաշվեկշռի՝ մարզում գյուղատնտեսական հողատեսքերի կառուցվածքը բնութագրվում է աղյուսակ 5.1-ում ներկայացված տվյալներով:

Աղյուսակ 5.1

Կոտայքի մարզի գյուղատնտեսական հողատեսքերի կազմը բնորոշող ցուցանիշներն ըստ 2013թ. հաշվեկշռի տվյալների

(հա)

	Գյուղատնտեսական հողատեսքերը ընդամենը	այդ թվում՝				
		վարելահողեր	բազմամյա տնկարկներ	խոտհարքներ	արոտավայրեր	այլ հողատեսքեր
Տարածքը /հա/	154639.9	37818.7	2292.7	11254.8	78995.9	23840.8

131. Մարզի գյուղատնտեսական հողատեսքերի մեջ մեծ կշիռ ունեն արտավայրերը /51.0%/ և վարելահողերը /24.4%/: Մարզի գյուղատնտեսության համախառն արտադրանքը 2013թ. կազմել է 56.7 մլրդ դրամ, որը հանրապետության գյուղատնտեսության ամբողջ համախառն արտադրանքի 6.2%-ն է:

132. Մարզի գյուղատնտեսական նշանակության հողերի օգտագործման մակարդակը կազմում է 80-85%, ընդ որում խոտհարքեր՝ 90% (առանձին համայնքներում այն կազմում է մինչև 100%), արտավայրեր՝ 100%, վարելահողեր՝ 50-55%:

133. **Մարզի գյուղատնտեսության մասնագիտացումը** - Մարզն ունի անասնապահության /կաթ, միս/ և բուսաբուծության /հացահատիկ, կարտոֆիլ/ արտադրության ուղղվածություն: Վերջին տարիներին փաստացի ձևավորված մասնագիտացման հետ մեկտեղ մարզի բնակլիմայական պայմանները բարենպաստ են կորիզավոր հնդավոր պտղատեսակների արտադրության համար: Առաջիկա ծրագրային միջոցառումները իրականացնելիս պետք է հաշվի առնել նշված նախընտրելի մասնագիտացումը:

134. **Մարզի գյուղատնտեսության արտադրության կազմակերպումը** - Կոտայքի մարզում գյուղատնտեսական արտադրությունը հիմնականում կազմակերպվում է գյուղացիական և ֆերմերային տնտեսությունների միջոցով: Մարզում գործում են 32222 ընտանեկան (գյուղացիական) տնտեսություններ, գյուղատնտեսական մթերքներ /կաթ, միս, հացահատիկ, պտուղ/ վերամշակող 30 կազմակերպություններ:

Աղյուսակ 5.2

Կոտայքի մարզի ընտանեկան (գյուղացիական) տնտեսությունների միջին ապահովվածությունը՝ ըստ գյուղատնտեսական հողատեսքերի (2014թ. հունվարի 1-ի դրությամբ)

Մարզը	Մեկ ընտանեկան (գյուղացիական) տնտեսությանը բաժին ընկնող գյուղատնտեսական հողատեսքը	այդ թվում՝		
		վարելահող	բազմամյա տնկարկ	խոտհարք
Կոտայք	2.23	1.17	0.71	0.35

/հա /

Աղյուսակ 5.3

Մեկ ընտանեկան (գյուղացիական) տնտեսությանը միջին հաշվով բաժին ընկնող անասնազվաքանակը (2014թ. հունվարի 1-ի դրությամբ)

Մարզը	Մեկ ընտանեկան (գյուղացիական) տնտեսությանը միջին հաշվով բաժին ընկնող անասնազվաքանակը				
	Խոշոր եղջերավոր անասուններ	որից՝ կովեր	Ոչխարներ և այծեր	Խոզեր	Պայմանական անասնազվաքանակ
Կոտայք	1.8	0.8	1.3	0.5	2.06

/գլուխ/

135. Ներկայացված տվյալները վկայում են մարզում ընտանեկան (գյուղացիական) տնտեսությունների մասնատվածության մասին. մարզի գյուղատնտեսության առաջնահերթ հիմնախնդիր է հողատեսքերի փոքր չափերը: Ինչի հետևանքով ցածր է արտադրության արդյունավետությունը, հնարավոր չէ կիրառել անհրաժեշտ ցանքաշրջանառություն և արտադրության նոր տեխնոլոգիաներ, դժվարություններ են ծագում գյուղատնտեսական արտադրության սպասարկումների, արտադրանքի իրացման և այլ բնագավառներում: Ստեղծված իրավիճակը պահանջում է տնտեսությունների միավորման, դրանց համատեղ գործունեության կազմակերպման մեխանիզմների (կոոպերացիաների ստեղծում և ֆերմերային տնտեսությունների հզորացում) մշակում և ներդնում:

5.2 Բուսաբուծություն

136. **Սերմնաբուծություն-** Ինչպես հանրապետության, այնպես էլ Կոտայքի մարզի բուսաբուծության ճյուղի արդյունավետ վարման հիմքը և հիմնական գործոններից մեկը սերմնաբուծության և տնկարանային տնտեսության զարգացումն է բարձրորակ սերմերի ու տնկանյութի արտադրության, պահպանման և օգտագործման համապատասխան համակարգի ձևավորման հիման վրա:

137. Ներկայումս սերմնաբուծական և տնկարանային տնտեսությունների համակարգը անկատար է և կատարելագործման անհրաժեշտություն ունի:

138. ՀՀ գյուղատնտեսության նախարարության, ՀՀ Կոտայքի մարզպետարանի, միջազգային կազմակերպությունների և տնտեսավարող սուբյեկտների կողմից վերջին տարիներին սերմի և տնկանյութի արտադրության բարելավման ուղղությամբ ձեռնարկվել են մի շարք միջոցառումներ: Սակայն դրանք դեռևս չեն ապահովել հիմնախնդրի ամբողջական լուծումը:

139. Հանրապետության պարենային անվտանգության ապահովման, գյուղատնտեսության և առաջին հերթին բուսաբուծության զարգացման համար նպաստավոր պայմաններ ստեղծելու գործում վճռորոշ դեր ունի բարձր վերարտադրության սերմերի և որակյալ տնկանյութի արտադրության կազմակերպումը: Նշված հիմնախնդիրների լուծումը պահանջում է սերմնաբուծության և տնկարանային տնտեսության զարգացմանն ուղղված ինչպես միջնաժամկետ, այնպես էլ երկարաժամկետ միջոցառումների իրականացում, ինչը հնարավորություն կընձեռի խթանել սերմնաբուծության և տնկարանային տնտեսության զարգացումը և պայմաններ ստեղծել մարզում բարձրորակ սերմերի արտադրության ու օգտագործման համար:

140. Մարզում հացահատիկի և բանջարանոցային կուլտուրաների երաշխավորված և կայուն բերք ապահովելու նպատակով մարզպետարանի կողմից անհրաժեշտ ուշադրություն է դարձվել ցանվող սերմանյութի սերմաթարմացման, սերմափորձարկման և սերմնաբուծության զարգացման ոլորտի վրա, ինչպես նաև տնկարանային տնտեսության աշխատանքների կազմակերպմանը:

141. Մարզում 2013թ. նախորդ տարվա համեմատ ավելացել են հացահատիկային մշակաբույսերի ցանքատարածությունները և համախառն բերքի ծավալը, ինչպես նաև ավելացել է

բանջարանոցային մշակաբույսերի և պտղի միջին բերքատվությունը, ավել է կուտակվել 9.2 հազ. տոննա խոտ և 2.6 հազ. տոննա ծղոտ /աղյուսակ 5.4/:

Աղյուսակ 5.4

ՀՀ Կոտայքի մարզի հիմնական մշակաբույսերի և բազմամյա տնկարկների տարածությունը, բերքատվությունը և համախառն բերքը 2011-2013թթ.

Ընդամենը մարզում	Հացահատիկ և հատիկալնդեղեն			Կարտոֆիլ			Բանջարեղեն			Պտուղ		Խաղող		Խոտ /հազ. տ/	Ծղոտ //ազ. տ/
	Տարածությունը /հա/	Համախառն բերք /հազ.տ/	Բերքատվությունը /ց/հա/	Տարածությունը /հա/	Համախառն բերք /հազ.տ/	Բերքատվությունը /ց/հա/	Տարածությունը /հա/	Համախառն բերք /հազ.տ/	Բերքատվությունը /ց/հա/	Տարածությունը /հա/	Համախառն բերքը /հազ. տ/	Տարածությունը /հա/	Համախառն բերքը /հազ. տ/		
2011թ.	9379	21.5	22.9	703	15.9	225.5	1236	22.0	178.1	4406	13.7	290	0.5	53.9	7.7
2012թ.	11029	19.2	17.4	843	17.5	206.9	1354	22.6	167.2	4690	18.6	403	0.5	45.6	6.6
2013թ.	12117	27.8	23.0	818	16.3	199.5	1324	22.4	168.4	4688	19.3	336	0.6	54.8	9.2

142. ՀՀ կառավարության կողմից 2011թ. մարզին հատկացվել է 238տ որակյալ առաջին վերարտադրության աշնանացան ցորենի սերմացու, որի շնորհիվ մարզում կատարվել է 793 հա աշնանացան ցորենի ցանք: Բացի այդ 7 և ավելի հա հողատարածք ունեցող գյուղացիական տնտեսություններին տրամադրվել է 18.3 տոննա աշնանացան ցորենի էլիտա սերմացու, որով կատարվել է 61 հա ցանք: Մարզ է ներկրվել 51տ. ազոտական պարարտանյութ, 505 կգ. թունանյութ /ցինկի ֆոսֆիդ/, 4040 հա ցանքատարածությունների վրա կատարվել են մկնանման կրծողների դեմ պայքարի միջոցառումներ: 2011թ. ՀՀ կառավարության կողմից Կոտայքի մարզի գյուղացիական և ֆերմերային տնտեսություններին հատկացվել է 35 տ. գարնանացան գարու առաջին վերարտադրության, 66տ գարնանացան գարու էլիտա սերմացուներ և 150 կգ եգիպտացորենի սերմացու: Մասնավոր ֆերմերի կողմից մարզ է ներկրվել 15տ առաջին վերարտադրության կարտոֆիլի տնկանյութ: Մկնանման կրծողների դեմ պայքար իրականացնելու համար 2012թ. մարզ է ներկրվել 412.8 կգ ցինկի ֆոսֆիդ տեսակի թունանյութ, 3440 հա տարածության վրա կատարվել են կրծողների դեմ պայքարի միջոցառումներ:

143. ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 22-ի N 1802-Ն և ՀՀ կառավարության 2012 թվականի փետրվարի 2-ի N75-Ն որոշումներով հաստատված <Հայաստանի Հանրապետության հողօգտագործողներին մատչելի գներով ազոտական պարարտանյութ և դիզելային վառելանյութ ձեռք բերման նպատակով պետական աջակցության> ծրագրով 2012թ. գարնանը մարզ է ներկրվել 1632 տ ազոտական պարարտանյութ, որից գարնանը՝ 1500 տոննա, աշնանը՝ 132 տոննա և 317647 լիտր դիզելային վառելանյութ:

144. 2012թ. ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով մարզի համայնքներին հատկացվել է 29 տ աշնանացան ցորենի առաջին վերարտադրության սերմացու:

145. Նույն ծրագրի՝ <Հայաստանի Հանրապետության հողօգտագործողներին մատչելի գներով ազոտական պարարտանյութ և դիզելային վառելանյութ ձեռք բերման նպատակով պետական աջակցության>> շրջանակներում 2013թ. մարզ է ներկրվել 1780.5 տ ազոտական պարարտանյութ և 350400 լիտր դիզելային վառելանյութ, իսկ կառավարության համապատասխան որոշումներով մարզի համայնքներին հատկացվել է 44.0 տ. գարնանացան գարու և 2.7 տ. կորնզանի սերմացու:

146. 2014թ. մարզին հատկացվել է 1548 տ ազոտական պարարտանյութ, 38.5 տ ֆոսֆորական և 25.5տ կալիումական պարարտանյութ, 312000 լիտր դիզելային վառելանյութ, 77.65 տ գարնանացան գարու և 1984 կգ առվույտի սերմացուներ:

147. Վերջին տարիներին մարզում էական առաջընթաց է գրանցվել ջերմոցային տնտեսությունների ընդլայնման և զարգացման ուղղությամբ: Մարզի ջերմոցային տնտեսությունները հիմնականում զբաղվում են բանջարանոցային մշակաբույսերի և ծաղիկների արտադրությամբ: Այս բնագավառի հայտնի ընկերություններից են <<Էկոտոմատո>>, <<Բիո գրուպ>>, <<Մավաէքսիմ>>, <<Մավաս գրուպ>>, <<Ալտերնատիվ էներգիա>>, <<ՏԱՊ>> ընկերությունները: <<Էկոտոմատո>>-ն տարածաշրջանում հայտնի է հողանդական վարդերի արտադրությամբ, որոնք իրենց տեսակով համապատասխանում են համաշխարհային ճանաչում ունեցող հողանդական վարդերի որակական հատկանիշներին: Իսկ <<Բիո գրուպ>> ընկերությունը ճանաչված է նոր տեսակի լոլիկների, հատկապես սև լոլիկի արտադրությամբ: 2011-2013թթ. մարզի ջերմոցային տնտեսությունների տարածքն ավելացել է ավելի քան 8 հա-ով՝ հասնելով 26.5 հա-ի:

5.3 Անասնաբուծություն

148. Անասնապահությունը մարզում համարվում է առաջատար ճյուղերից մեկը, որն ավելի զարգացած է բարձրադիր համայնքներում: մարզում արտադրվում է հանրապետության անասնապահական մթերքների 7.6 %-ը: Ճյուղի զարգացումը կարևորագույն նշանակություն ունի հատկապես լեռնային գոտու համայնքների համար, ուստի պետական ծրագրերի իրականացումը համարվում է ուղղակի անհրաժեշտություն:

Աղյուսակ 5.5

ՀՀ Կոտայքի մարզում գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակը և տեսակարար կշիռը ՀՀ-ում 2012-2014թթ հունվարի 1-ի դրությամբ (հազ. գլուխ)

	Խոշոր եղջերավորներ			այդ թվում՝ կովեր			Խոզեր			Ոչխարներ և այծեր		
	2012	2013	2014	2012	2013	2014	2012	2013	2014	2012	2013	2014
Կոտայք	54.2	59.8	60.1	26.0	27.1	28.2	13.2	20.3	15.1	41.0	42.5	43.0
Մարզի տեսակարար կշիռը (%)	9.0	9.0	9.1	9.2	9.0	9.1	13.5	14.0	10.9	6.9	6.2	6.0

149. 2014թ. խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը 2013թ. համեմատությամբ ավելացել է 466 գլխով, մանրինը՝ 500 գլխով:

Աղյուսակ 5.6

Անասնապահական հիմնական մթերքների արտադրության ծավալները Կոտայքի մարզում և Հայաստանի Հանրապետությունում 2011-2013թթ.

	/հազ.տոննա/								
	Իրացվել է միս կենդանի քաշով (հազ. տոննա)			կաթ (հազ. տոննա)			ծու(մլն. հատ)		
	2011	2012	2013	2011	2012	2013	2011	2012	2013
Կոտայք	12.6	12.9	14.7	51.8	53.0	57.9	125.7	132.1	117.3
Մարզի տեսակարար կշիռը (%)	10.3	9.9	10.0	8.6	8.7	8.8	19.8	20.0	19.0

150. Ըստ աղյուսակ 5.5-ի և աղյուսակ 5.6-ի տվյալների՝ մարզում 2011-2013թթ. ընթացքում գրանցվել է գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակի և անասնապահական մթերքների արտադրության որոշակի աճ:

151. Մարզի անասնաբուծության ճյուղի հիմնական ցուցանիշների փոփոխության գնահատման արդյունքներից պարզվում է, որ դեռևս ցածր է գյուղատնտեսական կենդանիների մթերատվությունը: Արտադրության ծավալների ավելացումը հիմնականում իրականացվում է էքստենսիվ եղանակով, ուստի առաջնահերթ հիմնախնդիրը գյուղատնտեսական կենդանիների մթերատվության բարձրացմանն ուղղված համալիր միջոցառումների իրականացումն է:

152. Մարզի անասնաբուծության հիմնական ուղղությունը կաթնամթերքի և մսամթերքի արտադրությունն է: Մարզում գործում են անասնաբուծական մթերքների վերամշակման ավելի քան 13 մասնագիտացված ընկերություններ (<<Թամարա>> ՍՊԸ, <<Թամարա ֆուդ>> ՍՊԸ, <<Չանախ>> ՍՊԸ, <<Բեկոն պրոդուկտ>> ՍՊԸ, <<Նորմա կաթ>> ՍՊԸ), որոնց արտադրատեսակների պահանջարկը հանրապետության շուկայում զգալիորեն բարձր է: Սակայն կաթի իրացումից ընտանեկան (գյուղացիական) տնտեսությունների ստացված եկամուտը դեռևս ցածր է (կաթի 1 լիտրը իրացվում է 120-150 դրամով):

153. Մարզում գործում են 2 խոշոր տոհմային տնտեսություններ՝ Արզնի համայնքում <<Արզնի ԹՏԽ>> ՍՊԸ-ն, Ադինջ համայնքում<<Մուլտի ագրո>> ՍՊԸ-ն: Նախատեսվում է առաջիկա տարիներին տոհմային անասունների ձեռք բերման միջոցով տոհմային կովերի գլխաքանակը հասցնել մինչև 200 գլխի: Այդ տնտեսությունների բազայի վրա նախատեսված է մարզի ընտանեկան (գյուղացիական) տնտեսություններին ապահովել բարձր մթերատու կենդանիներով:

154. Մարզի անասնաբուծության ճյուղի հիմնական ցուցանիշների փոփոխության գնահատման արդյունքներից պարզվում է, որ դեռևս ցածր է գյուղատնտեսական կենդանիների մթերատվությունը: Արտադրության ծավալների ավելացումը հիմնականում իրականացվում է էքստենսիվ եղանակով, ուստի առաջնահերթ հիմնախնդիրը գյուղատնտեսական կենդանիների մթերատվության բարձրացմանն ուղղված համալիր միջոցառումների իրականացումն է:

155. Մարզում լայն թափ են ստացել նաև թռչնաբուծությունն ու մեղվաբուծությունը: 2014թ. հունվարի 1-ի դրությամբ մարզում առկա է 620.6 հազ. թև թռչուն: 2013թ. արտադրվել է 117.3 մլն. հատ ձու, որը կազմել է հանրապետության ձվի արտադրության 19.1 %-ը (<<-ում՝ 615.2 մլն. հատ ձու):

156. Մեղվաբուծություն - Մարզում մեղվաբուծության զարգացման համար առկա են բնակլիմայական բարենպաստ պայմաններ: Մարզի տարածքը, ունենալով տարբեր գոտիներ՝ ցածրադիրից մինչև բարձրադիր, ալպիական և մարգագետինային արոտավայրեր, բարենպաստ է էկոլոգիապես մաքուր մեղր արտադրելու համար:

157. Մեղվաընտանիքների շարժի դինամիկայից նկատվում է, որ մեղվաբուծությունը զարգացման լայն հեռանկարներ ունի: Եթե 2013թ հունվարի 1-ի դրությամբ մարզում առկա էր 22714 մեղվաընտանիք, ապա 2014թ. հունվարի 1-ի դրությամբ այն հասել է 26046 մեղվաընտանիքի կամ 2013թ համեմատ աճը կազմել է 14.6%:

158. Տոհմաբուծություն - Անասնագլխաքանակի մասնատվածությունը, կերի կայուն բազայի բացակայությունը, կերային մշակաբույսերի ցանքատարածությունների նվազումը ոչ միայն հանգեցրեցին անասնագլխաքանակի և անասնապահական մթերքների և հումքի արտադրության կրճատմանը, այլև լուրջ խոչընդոտներ ստեղծեցին լայնածավալ տոհմասելեկցիոն համալիր միջոցառումների իրականացման համար: Վերջինից անմասն չմնաց նաև Կոտայքի մարզը:

159. Լուրջ խնդիրներ կան նաև գյուղատնտեսական կենդանիների արհեստական սերմնավորման աշխատանքներում: 2011թ. ընթացքում կատարվել է 1900 գլուխ խոշոր եղջերավոր անասունների արհեստական սերմնավորում, 2012թ.՝ 2500 գլուխ խոշոր եղջերավոր անասունների արհեստական սերմնավորում: Իսկ 2013թ. 25700 գլուխ կովերից արհեստական եղանակով սերմնավորվել է 3450-ը, որը կազմել է կովերի ընդհանուր գլխաքանակի 13.4 %-ը:

160. Անասնաբուծությունը զարգացնելու, բարձր մթերատու և տոհմային հատկանիշներով օժտված կենդանիներ բուծելու, նախիրներն ու հոտերը որակյալ կազմով համալրելու համար անհրաժեշտ է մարզում վերականգնել գյուղատնտեսական կենդանիների արհեստական սերմնավորման կայանների գործունեությունը:

161. Ստեղծված իրավիճակի գնահատումից հետևում է, որ առաջնային խնդիր է համարվում արհեստական սերմնավորմամբ կովերի գլխաքանակի ավելացումը՝ այն հասցնելով կովերի առկա գլխաքանակի 40-50%-ի: Ձեռնարկվելիք միջոցառումների իրականացումը կնպաստի նաև կենդանիների հիվանդությունների կանխմանը և մթերատվության բարձրացմանը: Կարևորվում է նաև տոհմային տնտեսությունների ձևավորումը, որոնք տոհմային կենդանիներ կմատակարարեն մարզի անասնապահությամբ զբաղվող գյուղացիական տնտեսություններին:

162. **Անասնաբուծություն** - Ելնելով հանրապետության առանձին տարածաշրջաններում տիրող կենդանիների վարակիչ հիվանդությունների համաճարակային իրավիճակից և ղեկավարվելով <<Անասնաբուծության մասին>> ՀՀ օրենքով՝ հանրապետությունում կենդանիների վարակիչ հիվանդությունները կանխելու նպատակով իրականացվում են հակահամաճարակային միջոցառումներ:

163. Համապատասխան անասնաբուժական ծառայությունների կողմից ժամանակին կատարվել են գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների դեմ պայքարի, կարանտինային և հակահամաճարակային միջոցառումներ: Պարբերաբար հրավիրվել են փնջային խորհրդակցություններ, որտեղ քննարկվել են մարզում անասնաբուժական և տոհմային աշխատանքների արդյունքները և կազմակերպման վիճակը, անասնապահական մթերքների արտադրության և մթերման, սերմնավորման խնդիրները, որոնց իրագործման ուղղությամբ կատարվել են համապատասխան միջոցառումներ:

164. Նախկինում հանրապետությունում պայքարի միջոցառումներ էին իրականացվում կենդանիների 55 անվանում վարակիչ հիվանդության դեմ: Սակայն վերջին տարիներին գյուղատնտեսական կենդանիների վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի միջոցառումների անվանացանկի կրճատման հետևանքով (8 անվանում) հանրապետությունում զգալիորեն վատթարացել է հակահամաճարակային իրավիճակը:

165. 2011-2013թթ. պետական պատվերի շրջանակներում կատարվել է բրուցելոզ և տուբերկուլոզ հիվանդությունների դեմ տարեկան երկու անգամ ախտորոշիչ հետազոտություն և սիբիրախտ, դաբաղ, խշխշան պալար, պաստերելոզ ու ժանտախտ հիվանդությունների դեմ՝ բուժարոճիլակտիկ պատվաստումներ:

166. Կոտայքի մարզում գործում է ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության և անասնաբուժական պետական տեսչության մարզային կենտրոն, որն իր լիազորությունների շրջանակներում իրականացնում է վերահսկողություն սննդամթերքի անվտանգության և անասնաբուժության բնագավառում՝ ՀՀ սննդամթերքի անվտանգության մասին>> և ՀՀ անասնաբուժության մասին>> ՀՀ օրենքների ու իրավական ակտերով սահմանված պահանջներին համապատասխան: Մարզի ընտանեկան (գյուղացիական) տնտեսությունների անասնաբուժական ծառայություններ են մատուցում 50 անասնաբույժներ, որոնք սահմանված կարգով և ժամկետներում իրականացնում են անասնաբուժական միջոցառումներ:

167. Մարզում նշված աշխատանքների վերահսկողության պատասխանատու է հանդիսանում սննդամթերքի անվտանգության և անասնաբուժական պետական տեսչության մարզային կենտրոնը: ՀՀ անրապետական անասնաբուժական հակահամաճարակային և ախտորոշիչ կենտրոն>> ՊՈԱԿ-ի մարզային մասնագետներն իրականացնում են ախտորոշիչ աշխատանքներ:

168. 2013թ. ընթացքում կատարվել են դիագնոստիկ հետազոտություններ տուբերկուլոզ և բրուցելոզ հիվանդությունների հայտնաբերման, պրոֆիլակտիկ միջոցառումներ՝ սիբիրախտ, պաստերիոզ, էմկար, խոզերի ժանտախտ, թռչունների ժանտախտ, մեղուների վարիատոզ հիվանդությունների դեմ: Պետական պատվերի շրջանակներում 90-98%-ով կատարվել են գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների դեմ պատվաստումներ, ինչպես նաև ախտորոշիչ բոլոր հետազոտությունները և մնացած անասնաբուժական և անասնաբուժասանիտարական միջոցառումները:

169. Ստեղծված իրավիճակում Կոտայքի մարզում առաջնահերթ խնդիր է անասնաբուժական պարտադիր միջոցառումների մեջ ներառվող հիվանդությունների ցանկի ընդլայնումը, սննդամթերքի անվտանգության և անասնաբուժական պետական տեսչության մարզային կենտրոնի բազայի ամրապնդումը: Մարզի համայնքներում զբաղված անասնաբույժների աշխատանքի արդյունավետության բարձրացումը ենթադրում է իրականացնել ներդրումներ, որոնք կուղղվեն անասնաբուժական ծառայությունների անհրաժեշտ բազայի ստեղծմանը: Աղյուսակ 5.7-ում ներկայացված է տեղեկատվություն մարզում 2013թ. կատարված հակահամաճարակային և պրոֆիլակտիկ միջոցառումների մասին:

Աղյուսակ 5.7

2013թ. մարզում իրականացված հակահամաճարակային և պրոֆիլակտիկ

միջոցառումները

N	Միջոցառումների անվանումը	Հրազդանի տարածաշրջան	Նաիրիի տարածաշրջան	Արմավիրի տարածաշրջան	Ընդամենը
1	Բրուցելյոզ Խ.Ե.Կ	6652	10113	13985	30750
2	Տուբերկուլնիզացիա Խ.Ե.Կ	5820	12858	11808	30486

3	Սիբիրախտ Խ.Ե.Կ	16031	25582	35175	76788
4	Պաստերելոզ Խ.Ե.Կ	1944	-	1992	3936
5	Դաբաղ Խ.Ե.Կ	11521	17329	31713	60563
6	Էմկար Խ.Ե.Կ	9994	15241	23833	49068
7	Բրուցելյոզ Մ.Ե.Կ	7846	7808	-	15454
8	Սիբիրախտ Մ.Ե.Կ	14660	11128	19399	45187
9	Դաբաղ Մ.Ե.Կ	-	9076	-	9076
10	Ժանտախտ խոզերի	3053	12434	8684	24171
11	Սիբիրախտ խոզերի	1218	2326	7477	11021
12	Բրուցելյոզ խոզերի	230	558	-	788
11	Ժանտախտ թռչունների	30458	4584	55025	120067

170. **Գյուղատնտեսական մթերքների իրացումը և ապրանքայնության մակարդակը-** Գյուղատնտեսության կայունության, գյուղացիական տնտեսությունների եկամուտների ապահովման և գյուղատնտեսության վերարտադրության համար կարևորվում է արտադրանքի իրացման խնդրի լուծումը, որը բնութագրվում է արտադրության ապրանքայնության մակարդակով:

171. Չնայած վերջին տարիներին մարզում որոշակի դրական տեղաշարժեր են արձանագրվել գյուղատնտեսական մթերքների իրացման, հատկապես պտղատեսակների արտահանման ուղղությամբ, սակայն իրացման հիմնախնդիրները մարզում դեռևս առկա են: Այդ մասին է վկայում այն փաստը, որ վերջին տարիներին մարզում դժվար լուծելի խնդիր է դարձել կարտոֆիլի իրացումը:

172. Մարզի գյուղատնտեսության համար կարևոր հիմնախնդիր է ապրանքայնության մակարդակի բարձրացումը, որի ուղղությամբ անհրաժեշտ է իրականացնել համապատասխան միջոցառումներ, որը կհանգեցնի գյուղացիական տնտեսությունների կայունության հաստատմանը և գյուղական բնակավայրերում աղքատության կրճատմանը:

173. Գյուղատնտեսական մթերքների մրցունակությունը ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շուկաներում մեծապես պայմանավորված է միավոր արտադրանքի վրա կատարվող ծախսերի մակարդակով:

174. Բարձրորակ տնկանյութի և սերմանյութի օգտագործման, ագրոտեխնիկայի պահանջների կատարման, գյուղատնտեսական կենդանիների տոհմային հատկանիշների բարելավման միջոցով անհրաժեշտ է բարձրացնել մշակաբույսերի բերքատվությունը և կենդանիների մթերատվությունը՝ արդյունքում բարձրացնելով արտադրության արդյունավետությունը:

175. Վերը նշվածից կարելի է հետևություն անել, որ մարզում առաջնային հիմնախնդիր է գյուղատնտեսական մթերքների արտադրության ինքնարժեքի իջեցման և արտադրության արդյունավետության բարձրացման ուղղությամբ միջոցառումների իրականացումը:

176. **Գյուղատնտեսական տեխնիկայով ապահովվածությունը** - Մարզում գյուղատնտեսական աշխատանքները արդյունավետ կազմակերպելու համար կարևորվում է գյուղատնտեսության արտադրության ոլորտի՝ նորագույն տեխնիկայով համալրումը: Ներկայիս շահագործվող տեխնիկական օգտագործվում է քսան տարուց ավելի և բարոյապես ու ֆիզիկապես մաշվածության հետևանքով ցանկալի արդյունք չի ապահովում, ինչը իր հերթին հանգեցնում է վառելանյութի և քայուղերի գերաժախսի, բերքի գերնորմատիվային կորուստների, թանկացնում նորոգման և տեխնիկական սպասարկման աշխատանքների արժեքը: Տևական ժամանակահատվածում տեխնիկայի պարկը չհամալրելու, տեխնիկական խնամքներով չապահովելու հետևանքով աստիճանաբար նվազել է գյուղատնտեսական տեխնիկայի օգտակար գործողության գործակիցը:

177. 2013թ. գյուղատնտեսական աշխատանքներին և բերքահավաքին մասնակցել է միջին հաշվով մարզի առկա տեխնիկայի 65-70%-ը:

Աղյուսակ 5.8

Գյուղատնտեսական տեխնիկայի առկայությունը և տեխնիկական վիճակը Կոտայքի մարզում և Հայաստանի Հանրապետությունում 01.01.2014թ. դրությամբ

Տեխնիկայի տեսակը	Կոտայքում		ՀՀ-ում	
	Առկա քանակը (միավոր)	Սարքինության մակարդակը (%)	Առկա քանակը (միավոր)	Սարքինության մակարդակը (%)
Տրակտորներ	745	79.3	14683	79.2
Բեռնատար ավտոմեքենաներ	1475	79.6	15294	75.9
Հացահատիկահավաք կոմբայններ	87	70.1	1362	73.8
Տրակտորային կցասայլեր	367	91.8	6075	87.0
Տրակտորային խոտհնձիչներ	117	80.3	1971	85.9
Կերահավաք կոմբայններ	27	66.7	347	70.9
Հատիկազտիչ մեքենաներ	45	97.8	432	84.3
Տրակտորային շարքացաններ	103	99.0	1866	86.5
Տրակտորային գութաններ	253	89.3	3809	89.9
Կուլտիվատորներ	107	87.9	2210	85.9
Հավաքիչ-մամլիչներ	131	90.1	1524	86.2

178. Տեխնիկայի ապահովվածության վիճակը գնահատելու համար դիտարկենք մարզի գյուղացիական տնտեսությունների՝ գյուղատնտեսական տեխնիկայով ապահովվածությունը:

Աղյուսակ 5.9

Գյուղատնտեսական տեխնիկայի ապահովվածությունը 100 գյուղացիական տնտեսության հաշվով 2014թ. հունվարի 1-ի դրությամբ

Տեխնիկայի տեսակը	Կոտայք
	100 գյուղացիական տնտեսության հաշվով ապահովվածությունը
Տրակտորներ	2.3
Բեռնատար ավտոմեքենաներ	4.6
Հացահատիկահավաք կոմբայններ	0.3
Տրակտորային կցասայլեր	1.1
Տրակտորային խոտհնձիչներ	0.4
Կերահավաք կոմբայններ	0.1
Հատիկազտիչ մեքենաներ	1.3
Տրակտորային շարքացաններ	0.3
Տրակտորային գութաններ	0.8
Կուլտիվատորներ	0.3
Հավաքիչ-մամլիչներ	0.4

179. Ներկայացված տվյալներից պարզվում է, որ գյուղատնտեսական տեխնիկայի և մեքենաների, մի շարք այլ տեխնիկական միջոցների ապահովվածության առումով մարզը գտնվում է միջին մակարդակի վրա: Տեխնիկայի օգտագործման արդյունավետության բարձրացման ուղղությամբ այստեղ կարևորվում է միջհամայնքային գյուղատնտեսական տեխնիկայի սպասարկման ծառայությունների ստեղծումը:

180. **Ոռոգման համակարգերը** - Մարզում գյուղատնտեսական մշակաբույսերից երաշխավորված և բարձր բերք ստանալու կարևորագույն պայմանը ոռոգման համակարգերի անխափան աշխատանքների ապահովումն է:

181. Մարզի 37818.7 հա վարելահողերից ոռոգելի են 18760 հա-ը, սակայն ոռոգվում են 11500 հա-ը, որը խիստ բացասաբար է անդրադառնում գյուղատնտեսական արտադրության ծավալների ավելացման և հողի մշակության արդյունավետության բարձրացման վրա:

182. 2013թ. գյուղացիական և ֆերմերային տնտեսություններին մատակարարվել է 32.8 մլն խ.մ. ջուր, ոռոգման ջրի վարձավճարների գանձումը կազմել է 84.4 % նախորդ տարվա 80.1 %-ի դիմաց:

183. Այս բնագավառում նախատեսվող կարևոր միջոցառումներն են.

1. ոռոգման գոյություն ունեցող համակարգերի և ոռոգման կարիքների գույքագրումը,

2. ջրօգտագործողների գործող համակարգի վերջնական ձևավորումը, համակարգում էներգակիրների ծախսերի կրճատումը և ինքնահոս ջրամատակարարումների ցանցի ընդլայնումը,
3. փոքր և միջին կարգավորման ջրամբարների կառուցումը, համայնքներում ոռոգման ջրի վերաբերյալ առկա խնդիրների ուսումնասիրումը և դրանց լուծման միջոցառումների ժամանակացույցի կազմումը:

184. 2011-2013թթ. Կոտայքի մարզի թվով 12 համայնքներում հրատապ ծրագրերով հիմնանորոգվել և կառուցվել են ոռոգման ջրագծեր /24700 գմ/, որոնց համար պետական բյուջեից հատկացվել է 500.0 մլն. դրամ: Արդյունքում ոռոգելի հողատարածքներն ավելացել են 1500 հա-ով: Ինչպես նաև ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին 2011-2013թթ. ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով <<Ոռոգման համակարգերի հիմնանորոգում>> ծրագրերի շրջանակներում ՀՀ ԳՆ ջրային տնտեսության պետական կոմիտեի համակարգմամբ իրականացվել են 5545.0 մ ոռոգման ջրագծերի հիմնանորոգման և կառուցման աշխատանքներ՝ 53.1 մլն. դրամ գումարի չափով:

185. 2011թ. <<Հազարամյակի մարտահրավերներ>> հիմնադրամի միջոցներով մարզի 7 համայնքներում իրականացվել են երրորդ կարգի ջրանցքների վերանորոգման աշխատանքներ շուրջ 613.4 մլն. դրամի չափով, իսկ համայնքների կողմից ներդրվել է 105.1 մլն. դրամ գումար:

5.4 Գյուղատնտեսության զարգացման ծրագրի նպատակները և ռազմավարությունը

186. **Մարզի գյուղատնտեսության ոլորտի զարգացման հիմնական նպատակը**- Կոտայքի մարզում գյուղատնտեսության գործունեության համար անհրաժեշտ ենթակառուցվածքների ձևավորման ու կատարելագործման միջոցով ավելացնել բուսաբուծական և անասնաբուծական մթերքների ծավալները, բարձրացնել արտադրության արդյունավետությունը, լուծել իրացման հիմնախնդիրները, որի արդյունքում կավելանան գյուղացիական տնտեսությունների իրական եկամուտները, որն էլ իր հերթին կնպաստի աղքատության նվազեցմանը:

187. Վերոնշյալ նպատակներին հասնելու համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալ միջոցառումը՝ իրացման շուկայի մատչելիության և արտադրողի պաշտպանվածության ապահովում:

188. Այսօր գյուղացիական տնտեսություններն իրենց արտադրանքն իրացնում են տարերայնորեն, պատահական վայրերում: Այս առումով կարևորվում է ժամանակակից պահանջներին համապատասխան մեծածախ շուկայի ձևավորումը, որը կօգնի գյուղմթերք արտադրողներին բերքի կազմակերպված իրացման և արտահանման գործում:

189. Չունենալով երկարատև պահպանման հնարավորություններ՝ գյուղացիական տնտեսություններն իրենց մթերքներն իրացնում են կարճ ժամանակահատվածում շուկայական գներից ցածր գներով, որի հետևանքով չի ապահովվում շահութաբերության բարձր մակարդակը:

190. **Գյուղատնտեսության ոլորտում ֆինանսական միջոցների ներդրման ծավալների ավելացում**-. Ֆինանսական միջոցների մատչելիությունը կարևորագույն դեր ունի գյուղացիական տնտեսությունների տնտեսական բազայի ամրապնդման և գյուղարտադրության զարգացման համար: Դրա հետ կապված սկզբունքային նշանակություն ունի գյուղատնտեսության ոլորտի վարկավորման տոկոսադրույքների իջեցումը և գրավիչ պայմանների մատչելիության ապահովումը, որը կմեծացնի վարկերի մատչելիությունը և կարևոր խթան կհանդիսանա գյուղատնտեսական արտադրության համար:

191. Կոտայքի մարզում գյուղատնտեսության զարգացման ոլորտներից մեկը կարող է դառնալ ծխախոտի հումքի արտադրությունը: Նախկինում մարզի տարածաշրջաններում այն որոշակիորեն զարգացած էր: Այսպես, միայն Աբովյանի շրջանում 1982 թվականի տվյալներով ծխախոտի ցանքատարածությունները կազմում էին 150 հա, որից ստացվել էր 1860 տոննա ծխախոտի հումք, միջին բերքատվությունը կազմում էր 12.4 ցենտներ: Ներկայումս հայրենական ծխախոտ վերամշակող և արտադրող կազմակերպությունների առկայության պայմաններում այն հնարավոր տարբերակ է և արտադրանքի իրացումն իրագործելի կլինի:

192.Խորհրդատվական ծառայությունների ընդլայնում- Խորհրդատվական ծառայությունների բնագավառում Կոտայքի մարզի զարգացման ծրագրի հիմնական նպատակն է այդ ծառայությունների մատչելիության բարձրացումը, նրանց առավել նպատակային օգտագործումը: Ծրագրի ռազմավարությունը այս ուղղությամբ ենթադրում է հետևյալ կարևոր միջոցառումների իրականացումը:

1) Մարզային ուսուցողական-խորհրդատվական ծառայության կողմից կազմակերպել ուսուցողական-խորհրդատվական դասընթացներ գյուղմթերքների արտադրության և վերամշակման առաջավոր տեխնոլոգիաների վերաբերյալ,

2) Անցկացնել սեմինար-դասընթացներ տնտեսավարման արդյունավետ ձևերի, մասնավորապես կոոպերացիայի տարբեր ձևերի ներդրման ու զարգացման ուղղությամբ, ինչպես նաև մշակել տեղեկատվական թերթիկներ, բուկլետներ գյուղատնտեսական արտադրությանը վերաբերող մասնագիտական մոտեցումների վերաբերյալ:

193. Վերամշակող կազմակերպությունների գործունեության արդյունավետության բարձրացում և ընդլայնում- Մարզի բոլոր տարածաշրջաններում անհրաժեշտ է ստեղծել կամ վերագործարկել կաթի մթերման և վերամշակման, միս և մսամթերք վերամշակող կազմակերպություններ, կազմակերպել պտղի, բանջարեղենի չորացման փոքր արտադրամասեր, ծխախոտի ֆերմենտացիոն և բուսայուղերի արտադրության փոքր արտադրություններ, բրդի ընդունման և լվացման ծառայություններ, կաշվի, մորթեղենի վերամշակման, դեղաբույսերի արտադրության և փաթեթավորման արտադրություններ և այլն: Այս նպատակին կարելի է հասնել՝ առաջնահերթությունը տալով փոքր ու միջին ձեռնարկությունների ստեղծմանը:

194. Անհրաժեշտ է նաև բանջարաբուստանային կուլտուրաների և պտղաբուծության զարգացման հետ մեկտեղ պայմաններ ստեղծել գյուղատնտեսական արտադրանքի վերամշակման, պահպանության և իրացման համար: Այս առումով կարևորվում է մարզում սառնարանային տնտեսության ստեղծումը և ագրովերամշակող կազմակերպությունների ու գյուղատնտեսական հումք արտադրողների միջև հումքի գնման պայմանագրային փոխհարաբերությունների ձևավորման գործընթացի աջակցությունը:

195. Գյուղատնտեսական հումքը վերամշակող կարողությունների ձևավորումը և գոյություն ունեցող արտադրությունների ծավալների ընդլայնումը հնարավոր է դրամաշնորհների, նպատակային վարկերի միջոցով:

196. Ծրագրի հաջող իրագործման դեպքում ակնկալվող արդյունքներն են.

1) մարզի հողային և մարդկային ռեսուրսների նպատակային օգտագործման ապահովում, ինտենսիվ տեխնալոգիաների կիրառում, ոռոգելի ցանքատարածությունների ընդարձակում, անմշակ հողերը ցանքաշրջանառության մեջ ներառում,

2) բուսաբուծական, անասնապահական մթերքների արտադրության ծավալների ավելացում (15-20%) և արդյունավետության բարձրացում, մթերքների ապրանքայնության մակարդակի

բարձրացում, ինչպես նաև դրանց վերամշակումից ստացված արտադրատեսակների արտահանման ծավալների էական ավելացում (շուրջ 20%),

3) մասնագիտացված տնկարանային և սերմնաբուծական տնտեսությունների (տարբեր պտղատեսակների, կարտոֆիլի և հացահատիկային մշակաբույսերի) ձևավորում, որոնք հիմնականում կբավարարեն գյուղացիական տնտեսությունների պահանջարկը բարձրորակ տնկանյութի և սերմացունների նկատմամբ,

4) բույսերի պաշտպանության (հատկապես պտղատու այգիներում) պայքարի կենտրոնացված միջոցառումների իրականացում,

5) մարզում արհեստական սերմնավորման աշխատանքների ընդլայնման միջոցով կենդանիների տոհմային հատկանիշների պահպանում և կատարելագործում, տոհմաբուծական ծառայությունների ձևավորում,

6) կերային բազայի ընդլայնում, բազմամյա արժեքավոր կերային մշակաբույսերի ծավալների ավելացում (մինչև 30%), խոտհարքների և արոտների արդյունավետ օգտագործում (մինչև 100%),

7) մարզի գյուղատնտեսության մասնագիտացմանը համապատասխան փոքր վերամշակող արտադրական հնարավորությունների (պտղի, կաթի, մսի, բրդի) ձևավորում,

8) գյուղատնտեսական տեխնիկայով արտադրության ապահովվածության մակարդակի բարձրացում, տեխնիկայի համատեղ օգտագործման (կոոպերացման սկզբունքով) ծառայությունների ձևավորում,

9) տեղեկատվական և խորհրդատվական համակարգի կատարելագործում և մատչելիության մակարդակի բարձրացում,

10) խոշոր ապրանքային ֆերմերային տնտեսությունների և կոոպերատիվների ձևավորում,

11) մարզում ապահովագրական համակարգի ձևավորման համար նախադրյալների ստեղծում:

197. Կոտայքի մարզում ՀՀ գյուղատնտեսության նախարարության համակարգմամբ ՀՀ պետական բյուջեի միջոցներով գյուղատնտեսության ոլորտում 2015-2018 թվականներին նախատեսվում է իրականացնել հետևյալ ծրագրերը.

1) <<Հայաստանի Հանրապետության հողերի ագրոքիմիական հետազոտության և բերրիության բարձրացման միջոցառումների>>,

2) <<Հայաստանի Հանրապետության հողօգտագործողներին գյուղատնտեսական աշխատանքների համար մատչելի գներով դիզելային վառելանյութի ձեռքբերման նպատակով պետական աջակցության>>,

3) <<Հայաստանի Հանրապետության հողօգտագործողներին գյուղատնտեսական աշխատանքների համար մատչելի գներով ազոտական, ֆոսֆորական և կալիումական պարարտանյութերի ձեռքբերման նպատակով պետական աջակցության>>,

4) <<Բույսերի պաշտպանության միջոցառումների>>,

5) Գյուղատնտեսական կենդանիների պատվաստումների>>,

6) <<ՀՀ Կոտայքի գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոն>> ՓԲԸ-ի (ԳԱՄԿ) կողմից Գյուղական խորհրդատվական ծառայությունների մատուցումը,

7)Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման:

198. ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայությունը 2015-2018թթ. ՀՀ Կոտայքի մարզում նախատեսում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

1)բույսերի վնասակար օրգանիզմների հայտնաբերման նպատակով բուսասանիտարական մոնիթորինգ, նմուշառում, նմուշների լաբորատոր փորձաքննություն և բուսասանիտարական իրավիճակի պարզում,

2) բույսերի պաշտպանության միջոցների որակի մոնիթորինգ, նմուշառում և լաբորատոր փորձաքննություն,

3)գյուղատնտեսական գործունեություն իրականացնող իրավաբանական և ֆիզիկական անձանց բուսասանիտարական հաշվառում և տվյալների էլեկտրոնային բազայի համալրում,

4) գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների ախտորոշում:

199. Վերոնշյալ աշխատանքներն իրականացվելու են յուրաքանչյուր տարի <<Պետական բյուջեի մասին>> ՀՀ օրենքով նախատեսվող ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության ապարատի պահպանման ծախսերի և «Գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների լաբորատոր ախտորոշման և կենդանական ծագում ունեցող հումքի և նյութի, բույսերի կարանտինի, գյուղմշակաբույսերի և բույսերի պաշտպանության միջոցների լաբորատոր փորձաքննությունների իրականացում» ծախսային ծրագրի շրջանակներում:

200. 2015-2018թթ. գյուղատնտեսության ոլորտի զարգացման համար պահանջվող ֆինանսական միջոցները ներկայացված են հավելված 5.1-ում:

6.ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

6.1 Ոլորտի իրավիճակի վերլուծություն

201. Հայաստանի Հանրապետությունում բնապահպանության ոլորտի քաղաքականությունն ու օրենսդրությունը հիմնականում ձևավորվել և կատարելագործվել են վերջին 20 տարիների ընթացքում: Հայաստանն ակտիվորեն մասնակցում է միջազգային համագործակցության գործընթացներին, ստորագրել ու վավերացրել է բնապահպանական մի շարք միջազգային ու եվրոպական կոնվենցիաներ և դրանցից բխող արձանագրություններ:

202. Հայաստանը նպատակ ունի կանխարգելել կամ սահմանափակել մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա վնասակար ներգործությունը, վերացնել մթնոլորտի գերնորմատիվային աղտոտվածությունը, մեղմացնել կլիմայի գլոբալ փոփոխության բացասական հետևանքները, պահպանել կենսաբազմազանությունը, ապահովել վերականգնվող բնական ռեսուրսների վերարտադրության անհրաժեշտ ծավալները և չվերականգնվող բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործումը:

203. Շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների պահպանության և կառավարման խնդիրները մեծ չափով առկա են նաև Կոտայքի մարզում: Դրանք են՝ անտառային ռեսուրսների կայուն կառավարումը, կենցաղային և շինարարական աղբի հեռացման, աղբավայրերի կանոնակարգված ձևով շահագործման խնդիրները, ջրային ռեսուրսների առավել արդյունավետ, նպատակաուղղված օգտագործումը և կեղտաջրերի մաքրման աշխատանքների կազմակերպումը, հանքարդյունաբերության ոլորտում օրինականության ապահովումը, հողերի բերրի շերտի պահպանումը և դեգրադացիայի կանխումը, անապատացմանը նպաստող անտրոպոգեն գործոնների նվազեցումը, լեռնատափաստանային, մերձալպյան և ալպյան լանդշաֆտների պահպանումը և արդյունավետ օգտագործումը:

204. Հատկանշականն այն է, որ վերջին տարիներին վերանայվեցին բնապահպանական ոլորտին վերաբերող մի շարք օրենքներ, ինչի անհրաժեշտությունը պայմանավորված էր երկրի սոցիալ-տնտեսական զարգացման հետ, ընդունվեցին նոր օրենքներ:

205. **Անտառներ, կենսաբազմազանություն, բնության հատուկ պահպանվող տարածքներ-** Բնապահպանական առումով մարզի ընդգծված կողմերից է բնական լանդշաֆտների, լեռների ու անտառների առկայությունը: Սակայն 1991-2001թթ. տնտեսական շրջափակման և էներգետիկ ճգնաժամի հետևանքով մարզի անտառները ինտենսիվ շահագործման հետևանքով կրեցին զգալի տարածքային և որակական կորուստներ: Չհամակարգված անտառահատումների հետևանքով հազարավոր հեկտարների վրա խաթարվեցին անտառի ինքնակարգավորման և ինքնավերականգնման ունակությունը, ինչպես նաև բնապահպանական հատկությունները: Ըստ փորձագետների ուսումնասիրության տվյալների էներգետիկ ճգնաժամի տարիներին հանրապետության անտառներում յուրաքանչյուր տարի հատվել է մոտ 700000 խմ – 1000000 խմ անտառանյութ, որի 70%-ը բաժին է ընկել ապօրինի հատումներին:

206. Հայաստանի Հանրապետությունում անտառածածկ տարածքները զբաղեցնում են 334.1 հազ. հա կամ հանրապետության տարածքի մակերեսի մոտ 11,2%-ը, որը հանրապետության մեկ շնչի հաշվով կազմում է ընդամենը 0.1 հա: Կոտայքի մարզի անտառային հողերի /տարածքը– 22761 հա/ կառավարումը իրականացվում է մեկ անտառտնտեսության՝ <<Հրազդանի անտառտնտեսություն>> մասնաճյուղի կողմից, որը պատկանում է ՀՀ գյուղատնտեսության նախարարության <<Հայանտառ>> ՊՈԱԿ-ին /ՀՀ կառավարության 15.01.2004թ. N 7 որոշման համաձայն/:

207. Մարզում գործում է նաև ՀՀ բնապահպանության նախարարության <<Արգելոցապարկային համալիր>> ՊՈԱԿ-ը /համաձայն ՀՀ կառավարության 18.07.2002թ. N 1046-Ն որոշման/, որի տարածքը կազմում է՝ 423.80 հա: Կազմակերպության գործունեությունն ուղղված է պետական արգելավայրերի տարածքների բնական էկոհամակարգերի, լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության, բնության ժառանգության գիտական ուսումնասիրության, պահպանության, պաշտպանության, վերականգնման, վերարտադրության, հաշվառման, դիտանցի, բնական պաշարների կայուն օգտագործման ապահովմանը:

208. Մարզի ընդհանուր անտառային ֆոնդը կազմում է 23184.8 հա, որը Կոտայքի տարածքի համեմատ համարժեք է հանրապետության միջին ցուցանիշին: Մարզի անտառները լեռնային են, ունեն ընդգծված հողապաշտպան, ջրապաշտպան և կլիմայակարգավորիչ նշանակություն, ինչպես նաև աչքի են ընկնում բուսական տեսակների բազմազանությամբ: Մարզի անտառկազմող հիմնական ծառատեսակներն են՝ կաղնին, բոխին, լորենին, սոճին, հացենին, կեչին, թեղին:

209. 1991-2001թթ. մարզի անտառների շուրջ 35%-ը ինտենսիվ կերպով ոչնչացվել է: Վառելափայտի և շինափայտի ստացման նպատակով կատարված ապօրինի ծառահատումները զգալիորեն նոսրացրել են անտառապատ լեռնալանջերի բազմաթիվ հեկտարներ:

210. Կոտայքի մարզի անտառածածկ տարածքները գտնվում են հիմնականում մարզի կենտրոնական և հյուսիսային հատվածներում: Ստորև ներկայացվում է <<Հրազդան անտառտնտեսություն>> մասնաճյուղի անտառների և անտառային հողերի տարածքները ըստ անտառապետությունների /աղյուսակ 6.1/:

Աղյուսակ 6.1

Անտառտնտեսության անվանումը	N	Անտառապետության անվանումը	Ընդհանուր տարածքը /հա/	այդ թվում՝ անտառածածկ /հա/
Հրազդանի անտառտնտեսություն	1	Արզականի	9647	6727
	2	Ծաղկաձորի	4792	3307
	3	Մեղրաձորի	6762	4639
	4	Բուժականի	1832	1345
	5	Արզնիի	1560	395
Ընդամենը			24593	16413

211. Մարզի անտառտնտեսության գործունեությունը լուրջ բարեփոխումների խնդիր ունի: Պետական բյուջեից տրվող սահմանափակ միջոցները հնարավորություն չեն տալիս բավարար մակարդակով տնտեսվարելու նպատակով առավելագույն կերպով օգտագործել անտառը՝ միևնույն ժամանակ չավելացնելով անտառվերականգնման ծախսերը:

212. Կոտայքի անտառները չունեն ինքնապահպանման-ինքնաճախսաճածկման ներուժ, բավարար ռեսուրսներ ու հնարավորություններ և այս առումով միայն պետական աջակցության և ներդրումների շնորհիվ հնարավոր է անտառները երկար ժամանակաշրջանի համար պահպանել, վերականգնել և փոխանցել գալիք սերունդներին: Կոտայքի մարզում <<Հայանտառ>> ՊՈԱԿ-ի կողմից 2011-2014թթ. ընթացքում անտառտնկման աշխատանքներ չեն իրականացվել ֆինանսական միջոցների բացակայության պատճառով:

213. Անտառի հիվանդությունների և վնասատուների դեմ կատարվել են պայքարի միջոցառումներ՝ 2012թ.-2500 հա-ի վրա, 2013թ.-960 հա-ի վրա, 2014թ. -2700 հա-ի վրա: 2011-2014թթ. ընթացքում կատարվել է անտառի լրացում 165 հա-ի վրա, իսկ Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության ծրագրի շրջանակներում 2012-2013թթ. կատարվել է բնաշվային վերաճի օժանդակման աշխատանքներ 250 հա-ի վրա:

214. <<Հրազդանի անտառտնտեսություն>> մասնաճյուղը, որն ունի 17 հա տնկարանային տարածք, FAO- ի ծրագրի շրջանակներում հանրապետությունում առաջին անգամ իրականացնում է տնկարանային տնտեսության հիմնում /որից՝ 540 քմ. ջերմոցային տնտեսություն/, որտեղ սկզբնական շրջանում կաճեցվեն սոճենու, կաղնու, հաճարենու սերմնաբուսակներ, որոնք հետագայում կտեղափոխվեն անտառային տարածքների անտառվերականգնման աշխատանքներ իրականացնելու նպատակով:

215. Կոտայքի անտառներում բացի փայտանյութից կան նաև մեծ քանակությամբ պտղատու ծառեր ու թփուտներ, որոնց պտուղները կարելի է օգտագործել պահածոների, հյութերի, դեղաբույսերի արտադրություն կազմակերպելու համար: Կոտայքի անտառները նաև առողջարար և գեղատեսիլ են: Անտառների, որոշակի չափով նաև բուժիչ հանքային ջրերի, պատմամշակութային հուշարձանների, ռելիեֆի այս ձևավորված ամբողջությունը վկայում է մարզում առողջարաններ հիմնելու, ինչպես նաև զբոսաշրջությունը զարգացնելու մեծ ներուժի մասին:

216. Անտառի պահպանության հարցերում համայնքների, հասարակության և պետության փոխհամաձայնեցված, ներդաշնակ գործունեությունը կարող է ապահովվել միայն տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակության լայն խավերի, հասարակական կազմակերպությունների ներգրավման միջոցով:

217. Կոտայքի մարզում համայնքների վարչական սահմաններում գտնվող անտառների կայուն կառավարումն իրականացվում է անտառտնտեսության կողմից: Մեկ անգամ չէ, որ քննարկվել են անտառների կայուն կառավարումը տեղական ինքնակառավարման մարմիններին հանձնելու խնդիրները: Խնդիրը կարևոր նշանակություն ունի և դեռ ենթակա է քննարկումների: Այստեղ մոտեցումը հետևյալն է՝ եթե համայնքային անտառկառավարումը կարող է նպաստել անտառի պահպանմանը, ինքնավերականգնմանը և ապահովել օպտիմալություն, ապա անտառների մի մասը

համապատասխան համայնքների կառավարմանը հանձնելը կարող է շատ ավելի արդյունավետ լինել:

218. Կոտայքի անտառներին լուրջ վնաս հասցրեցին 1990-ական թվականներին կատարված անտառահատումները, որոնք պայմանավորված էին տնտեսական ու էներգետիկ ճգնաժամով, կենտրոնացված ջերմամատակարարման բացակայությամբ: Էներգետիկ իրավիճակի բարելավման շնորհիվ անտառահատումները զգալիորեն նվազեցին, որն էլ իր հերթին զգալիորեն կրճատեց բնակչության կողմից վառելափայտի պահանջարկը: Գործընթացը հնարավորություն տվեց բարձրացնել անտառի ինքնավերականգնման հնարավորությունը:

219. Վերջին տարիներին իրականացված հետևողական աշխատանքների շնորհիվ կտրուկ նվազել են ապօրինի անտառխախտման դեպքերը: Արձանագրված անտառխախտման ակտերի թիվը 2011-2013թթ. կազմել է 9, որից՝ 2011թ.- 3, 2012թ.- 6, 2013թ.-0:

220. Անտառի պահպանմանը էականորեն կնպաստեն նաև մարզում բնապահպանական հիմնահարցերին բնակչության իրազեկման ապահովումը, էկոդաստիարակությունը և այլն:

221. Մարզի աշխարհագրական դիրքը և ռելիեֆը նպաստել են կենսաբազմազանության մեծ տեսականու, էնդեմիզմի բարձր մակարդակի և հարուստ ագրոկենսաբազմազանության ձևավորմանը: Մարզը Հայաստանի այն տարածքներից է, որն ունենալով հարուստ և ինքնատիպ կենսաբազմազանություն՝ միաժամանակ ենթարկվում է մարդածին և տեխնածին վտանգող մի շարք գործոնների ազդեցությանը: Այդ ազդեցության հետևանքով տեղի են ունենում բնական միջավայրի, էկոհամակարգերի և դրանց համակեցությունների տեսակային կազմի փոփոխություն, ընդհուպ առանձին տեսակների ոչնչացում, կենսառեսուրսների գերօգտագործում, աղտոտում:

222. Մարզում բնության հատուկ պահպանվող տարածքները (ԲՀՊՏ-ը, այդ թվում՝ արգելավայրեր, բնության հուշարձաններ) կազմում են Կոտայքի մարզի տարածքի շուրջ 10%-ը: Լանդշաֆտային և կենսաբանական հարուստ բազմազանության և բնական էկոհամակարգերի վրա անտրոպոգեն ու տեխնոգեն ակտիվ ճնշում ունեցող մարզի համար պահպանվող տարածքների պահպանությունը դեռևս անբավարար է:

223. Կոտայքի մարզում առկա են «Արզականի և Մեղրածորի», «Բանկսի սոճու» և «Հանքավանի» արգելավայրերը (հավելված 6.1): Կոտայքի մարզի բնության հուշարձանների ցանկը հաստատվել է ՀՀ կառավարության 2008թ. օգոստոսի 14-ի N967 որոշմամբ, որը վերախմբագրվել է ՀՀ կառավարության 2009թ. հունվարի 8-ի N53 որոշմամբ: Ըստ նոր խմբագրված տարբերակի՝ մարզում կա ՀՀ բնության 33 հուշարձան, որից՝ 20-ը՝ երկրաբանական, 5-ը՝ ջրաերկրաբանական, 4-ը՝ ջրագրական, 1-ը՝ բնապատմական, 3-ը՝ կենսաբանական (հավելված 6.2):

224. Կենսաբազմազանության առումով մարզը աչքի է ընկնում բազմաթիվ լեռներով և լեռնաշղթաներով /Փամբակի, Ծաղկունյաց, Գեղամա/, որը ներկայացվում է ստորև.

Աղյուսակ 6.2

Կոտայքի մարզի լեռները և լեռնագագաթները

Լեռան անվանումը	տարածաշրջանը	բարձր.ծովի մակ. մ
Աժդահակ	Աբովյան	3597
Թեժ	Հրազդան	3101
Թեղենիս	Հրազդան	2846
Արայի	Նաիրի	2575
Հատիս	Աբովյան	2528
Մենակսար	Հրազդան	2399
Գութանասար	Հրազդան	2299

225.Ջրային ավազան- Մարզի ջրային ավազանը բավականին հարուստ է: Մարզի տարածքով են հոսում Հրազդան, Մարմարիկ, Մեղրաձոր, Ծաղկաձոր, Դալար, Արջաձոր, ինչպես նաև Գետառ և Ազատ գետերը: Այստեղ են գտնվում նաև Ակնա լիճը, Սևաբերդի, Մարմարիկի և Ախպարայի ջրամբարները: Ստորև ներկայացվում են գետերի, լճերի և ջրամբարների համառոտ բնութագրերը.

Աղյուսակ 6.3

Գետեր

Անվանումը	Ջրհավաք մակերեսը /քառ.կմ/	Երկարությունը /կմ/
Հրազդան	2560	141
Մարմարիկ	427	42
Մեղրաձոր	104	15
Դալար	90	14
Արջաձոր	21	11

Աղյուսակ 6.4

Լճեր և ջրամբարներ

Անվանումը	Ծավալը (մլն.մ ³)	Հայելու մակերեսը (հա)	Բարձր.ծովի մակ. /մ./
Ախպարայի ջրամբար	2.5	55	1695
Մարմարիկի ջրամբար	24	180	1903
Սևաբերդի ջրամբար	6	37	2000
Սագերի լիճ /Ղազի Գյուլ/	0.25	6.5	2202
Ակնա լիճ	5	50	3030
Բազմալիճք լիճ /Բիշար/	0.24	2.9	3066
«Լուսնալիճ» լիճ /Զեյնալ/	0.11	1.25	2989

226. Մարզը հարուստ է իր քաղցրահամ ջրերի աղբյուրներով /Գառնիի, Կաթնաղբյուրի, Սուլակի, Ալափարսի, Նուռնուսի, Արզականի, Գյումուշի, Մաքրավանի/, որոնք խմելու ջրով ապահովում են ոչ միայն մարզի բնակավայրերը, այլ նաև Երևան քաղաքը:

227. Ըստ գույքագրման տվյալների՝ մարզում առկա են 440 բնաղբյուրներ և 200-ից ավելի խորքային հորեր: Առավել մեծ հզորության աղբյուրները շահագործվում են ջրամատակարար ընկերությունների, իսկ մնացածը՝ համայնքների և մի շարք տնտեսվարողների կողմից: Սակայն անմխիթար վիճակում են գտնվում հատկապես լեռնային և անտառային գոտու բնակավայրերի խմելու ջրի ակունքները, որոնք ցանկացած ժամանակ կարող են աղտոտվել տարբեր տեսակի վնասակար նյութերով:

228. Հրազդան քաղաքում կոյուղատարների մաշվածության պատճառով առաջանում են բազմաթիվ վթարներ, որի արդյունքում կեղտաջրերը լցվում են առուները և Հրազդան գետը՝ տեղափոխվելով Ախպարայի ջրամբար:

229.<<Հազարամյակների մարտահրավերներ>> հիմնադրամի փորձագետների ուսումնասիրությունները ցույց են տվել, որ Հրազդանի տարածաշրջանում կոյուղաջրերի մաքրման ժամանակակից կայանի կառուցման համար անհրաժեշտ կլինի շուրջ 10.0 մլն ԱՄՆ դոլար գումար, որի հետ մեկտեղ կարող են վերականգնվել նաև նախկին մաքրման կայանի կենսաբանական մաքրման տանկերները:

230. Մարզում ջրօգտագործման թույլտվություններ են տրվել 164 տնտեսվարող սուբյեկտների, որոնցից միայն 48-ը՝ քաղցրահամ ջրերի աղբյուրների համար: Սակայն զգալի թվով համայնքներ, հանգստյան տներ և այլ տնտեսվարողներ մինչև օրս չունեն ջրօգտագործման թույլտվություններ:

231. Զրերի էկոլոգիական պահպանության առաջնահերթ խնդիրներից է մնում կեղտաջրերի մաքրման և հեռացման աշխատանքների կազմակերպումը: Մարզում մաքրման կայանների բացակայության և կոյուղատարների վթարների հետևանքով կեղտաջրերը լցվում են Դալար, Ծաղկաձոր, Մարմարիկ, Հրազդան գետեր՝ հասնելով նաև Ախպարայի ջրամբար:

232. Վերջին տարիներին փորձ է արվում լուծել հանգստյան տներից դուրս եկող կեղտաջրերի մաքրման հարցը: Համապատասխան մասնագետների կողմից տնտեսվարողներին ներկայացվել են ժամանակակից լոկալ մաքրման կայանների նախագծեր և առաջարկվել է հնարավորինս կարճ ժամանակահատվածում լուծումներ գտնել:

233. Այնուամենայնիվ լուծելով լոկալ մաքրման կայանների տեղադրման հարցը՝ խիստ անհրաժեշտություն կա Հրազդանի տարածաշրջանում կառուցելու նոր հզոր մաքրման կայան՝ դրա հետ մեկտեղ վերականգնելով Հանքավանի և Ծաղկաձորի կոյուղու կոլեկտորները, որը հնարավորություն կտա տարածաշրջանում վերջնականապես լուծել ջրային ավազանները կեղտաջրերից զերծ պահելու հարցը:

234. **Ընդերք, բնական ռեսուրսներ**- Մարզը հարուստ է օգտակար հանածոների՝ ոսկու, ալյումինի, պղինձ- մոլիբդենի, երկաթի, պերլիտի, մարմարի, գրանիտի, լիտիդային պեմզայի, նեֆելինային սիենիտների, անդեզիտաբազալտների, հրաբխային խարամների, քարաղի, զանազան շինարարական նյութերի հանքավայրերով: Ինչպես նաև առկա են հանքային ջրերի 3 խոշոր հանքավայրեր /Հանքավան, Բջնի, Արզնի/:

235. Մարզում օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվություններ են տրվել թվով 59 հանքավայրերի տեղամասերի շահագործման համար, որից 25-ը՝ բազալտի, 17-ը՝ լիթոիդային պեմզայի, 3-ը՝ մարմարի, 2-ը՝ գրանիտի և 2-ը՝ երկաթի: Նշված տեղամասերը պատկանում են 46 տնտեսվարող սուբյեկտների: Դրանցից շահագործվում են 32-ը, 10-ը չեն շահագործվում պահանջարկ և հնարավորություններ չունենալու պատճառով, իսկ մնացածը գտնվում են փաստաթղթային ձևակերպումների փուլում:

236. Հանքային ջրերի հանքավայրերից լիցենզիաներ են տրամադրվել Արզնիի և Բջնիի համար՝ շալցումներ իրականացնելու նպատակով, իսկ Հանքավան և Արզնի հանքային ջրերը օգտագործվում են նաև բուժական նպատակներով:

237. Անտառներով համեմատաբար հարուստ Կոտայքը գտնվում է որոշակի հակասական վիճակում՝ մի կողմից առկա են հարուստ և գեղատեսիլ անտառներ, իսկ մյուս կողմից՝ հանքային պաշարներով՝ մետաղներով, քարերով հարուստ ընդերք, որի հետագա արդյունահանումը իր սոցիալ-տնտեսական դրական հետևանքների հետ մեկտեղ մարզում կարող է առաջացնել բնապահպանական բազում խնդիրներ:

238. Գործող հանքարդյունաբերությանը զուգահեռ իրականացվում է նաև օգտակար հանածոների պաշարների հետազոտություն և գնահատում, որը կարող է մարզի տարածքում փոխել հանքարդյունաբերության աշխարհագրությունը: Հանքարդյունաբերության տեղաշարժը կլուծի բազմաթիվ ռազմավարական խնդիրներ, բայց էկոլոգիական տեսանկյունից լուրջ մտահոգությունների պատճառ կարող է հանդիսանալ, քանի որ հանքավայրերի ավելացմանը զուգահեռ կմեծանա շրջակա միջավայրի աղտոտվածությունը, բնական լանդշաֆտների քայքայումը և չվերականգնումը, կվտանգվի անտառների հետագա գոյությունը:

239. Երկրաբանահետախուզական աշխատանքներ են կատարվում բազմամետաղային, ոսկու, պղինձ-մոլիբդենի պաշարների ճշտգրտման և վերագնահատման ուղղությամբ:

240. Վերջին տարիներին մետաղական օգտակար հանածոների շահագործման նպատակով օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության թույլտվություն են ստացել թվով 4 կազմակերպություններ, որոնց վերաբերյալ տեղեկությունները ներկայացված են աղյուսակ 6.5-ում.

Աղյուսակ 6.5

ՀՀ	Կազմակերպության անվանումը	Օբյեկտի անվանումը	Ուսումնասիրության լիցենզիայի համարը, տրման ամսաթիվը
1	<<Ֆորչն Ռիզորսիս>> ՍՊԸ	Հրազդանի երկաթի հանքավայր	ԵՀԹ-29/008 20.04.2012թ.
2	<<Սփայս Սթիլ>> ՓԲԸ	Աբովյանի երկաթի հանքավայր	ԵՀԹ-29/009 20.04.2012թ.
3	<<Րեյր Էրթս>>ՍՊԸ	Թեժ սարի ոսկի-բազմամետաղային հանքավայր	ԵՀԹ-29/011 16.05.2012թ.
4	<<Գոլդարտ>> ՍՊԸ	Մարմարիկի ոսկի-բազմամետաղային հանքավայր	ԵՀԹ-29/027 21.05.2012թ.

241. Քիչ չեն նաև ընդերքօգտագործման պատճառով բնությանը և շրջակա միջավայրին հասցված վնասները՝ կապված հանքանյութով գերբեռնված, առանց թրջելու և ծածկոցի տրանսպորտային միջոցներով տեղափոխման հետ: Երևույթը շատ ավելի ակնառու է Երևան-Սևան մայրուղու հատվածում: Տարիներ շարունակ այս հարցը բարձրացվել է պատասխանատուների առջև, սակայն ձեռնարկված միջոցառումները դեռևս ցանկալի արդյունք չեն տվել:

242. Արդեն 8-րդ տարին է, ինչ հանքօգտագործման իրավունք ունեցողների կողմից սահմանված չափով հատկացումներ են կատարվում շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին, սակայն մինչև օրս որևէ տեղամասում չեն իրականացվել ռեկուլտիվացիոն աշխատանքներ:

243.**Թափոնների կառավարում**-Մարզում բնապահպանական առումով լուրջ խնդիր է մնում թափոնների տարերայնորեն տեղադրման, անկանոն աղբահանության և աղբավայրերի ոչ կանոնակարգված ձևով օգտագործման, հատկապես միջպետական և հանրապետական ճանապարհամերձ տարածքներում սանիտարական մաքրման հարցերը: «Թափոնների մասին»,

<<Աղբահանության և սանիտարական մաքրման մասին>> և ՏԻՄ ՀՀ օրենքներով աղբահանությունը և աղբահեռացումը դիտվում է որպես տարածքային և տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված իրավասություններ: Սակայն համայնքների կողմից այդ ուղղությամբ իրականացված աշխատանքները դեռևս հեռու են բավարար լինելուց: Վերջին տարիներին մարզպետարանում անցկացված քննարկումների ժամանակ մանրամասնորեն ներկայացվել է համայնքներում տիրող իրավիճակը և առաջարկություններ արվել թերությունների վերացման ուղղությամբ, ինչպես նաև հարց է բարձրացվել միջհամայնքային օրինական աղբավայրեր ստեղծելու մասին:

244. Մարզպետի կարգադրությամբ ստեղծված աշխատանքային խումբը ամենօրյա հսկողություն է իրականացնում համայնքներում աղբահեռացման աշխատանքների կատարման նկատմամբ և հիմնական շեշտը դրվում է միջպետական և հանրապետական նշանակության ճանապարհամերձ տարածքների մաքրության ապահովման վրա:

245. Մարզում կան պաշտոնական 4 խոշոր աղբավայրեր, որոնք շահագործվում են Հրազդան, Աբովյան, Եղվարդ, Չարենցավան համայնքների կողմից, որոնց ընդհանուր մակերեսը կազմում է շուրջ 35 հա: Միաժամանակ տվյալ աղբավայրերից օգտվում են մի շարք հարակից համայնքներ: Չարտոնագրված աղբավայրերից օգտվում են դեռևս Բյուրեղավան քաղաքը և մի շարք գյուղական՝ Մեղրածոր, Մարմարիկ, Աղավնածոր, Զրառատ, Լեռնանիստ, Քաղսի, Սուլակ, Ֆանտան, Կապուտան, Ակունք, Զառ, Գեղաշեն, Կամարիս, Արամուս, Նոր Գեղի, Քանաքեռավան, Զովունի, Պոռոշյան, Արագյուղ, Բուժական համայնքները, որոնք աղբահանություն իրականացնում են իրենց կողմից կամայականորեն ընտրված տարածքներում՝ ընդհանուր առմամբ շուրջ 12 հա:

246. 2015-2016թթ. վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի վարկային և Եվրոմիության դրամաշնորհային միջոցներով Կոտայքի մարզում կկառուցվի կենտրոնացված աղբավայր: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է նաև ձեռք բերել թափոնների հավաքման բեռնատարներ, թափոնների համար կոնտեյներներ, աղբավայրի աշխատանքների համար մասնագիտացված սարքավորումներ: Ծրագրի նպատակն է նպաստել Կոտայքի մարզում և Սևան քաղաքում կոշտ կենցաղային թափոնների կառավարման բարելավմանը:

247. **Օդային ավազան**- Օդային ավազանը աղտոտվում է հիմնականում աղյուսաբերական կազմակերպությունների, ասֆալտի գործարանների, ավտոտրանսպորտի արտանետումներից: ՀՀ բնապահպանության նախարարի 2014թ. հունվարի 8-ի թիվ 2-Ա հրամանով հաստատված <<Մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործություն ունեցող կազմակերպությունների ցանկում>> ընդգրկված է ՀՀ Կոտայքի մարզում գործող 161 կազմակերպություն, որոնց տրվել է անշարժ աղբյուրներից աղտոտող նյութեր մթնոլորտ արտանետելու չափաքանակներ/թույլտվություններ: Մթնոլորտային օդի աղտոտվածության մոնիթորինգի արդյունքներով Հանրապետության առավել աղտոտված բնակավայրերի ցանկում Կոտայքի մարզի քաղաքներից առանձնանում է Հրազդանը՝ նկատի ունենալով Հրազդանի ԶԷԿ-ի և ցեմենտի գործարանի առկայությունը: Վերջին տարիներին <<Միկա ցեմենտ>> ՓԲԸ-ի կողմից իրականացվում են մթնոլորտի աղտոտման նվազեցմանն ուղղված կազմակերպչական-տեխնիկական միջոցառումներ: Սակայն այդ ուղղությամբ կատարված ներդրումները առայժմ բավարար չեն թույլատրելի սահմանային նորմերը չգերազանցելու համար:

Կատարված ուսումնասիրություններից պարզվել է, որ Հրազդան քաղաքի մեկ ստացիոնար դիտակայանից վերցված ցեմենտի փոշու պարունակության որոշման համար միջին ամսեկան կոնցենտրացիան վերջին երեք տարիներին գերազանցել է 2-4 անգամ, որը հավաստի լինել չի կարող մեկ դիտակայանի առկայության պայմաններում:

248. Մարզի ասֆալտի գործարանների կողմից արտանետումները սահմանային թույլատրելի նորմաններում ապահովելու նպատակով մշտապես հսկողություն է իրականացվում, որպեսզի չահագործվեն ֆիլտրող սարքավորումները՝ միաժամանակ պահանջներ ներկայացնելով դրանց վերազինման ուղղությամբ:

249. Ստացիոնար աղբյուրներից արտանետումների կրճատման համար հեռանկարային լուծումը բնապահպանական տեսանկյունից նախընտրելի տեխնոլոգիաների ներդրման համար պետության կողմից նպաստավոր միջավայրի քաղաքականության մշակումն է: Մարդկանց առողջության և կյանքի որակի ապահովման համար կարևորվում է նաև քաղաքներում կանաչ տարածքների, ռեկրեացիոն գոտիների պահպանման և համաչափ զարգացման խնդիրը, որը առավել կարևորվում է ամառվա ամիսներին ջերմային սթրեսներին հարմարվելու համար:

250. Մթնոլորտի պահպանության բնագավառում օրենսդրական բազան պահանջում է կատարելագործում՝ հատկապես իրավական ակտերի ընդունման գործում /նորմատիվային և մեթոդական ակտեր և հրահանգներ/: Անհրաժեշտ է բարելավել մթնոլորտի աղտոտվածության դիտանցի համակարգը՝ ընդլայնելով չափվող նյութերի ցանկը և միաժամանակ արդյունքների հուսալիությունը բարձրացնելու համար ավելացնել նաև դիտակետերի թիվը՝ ընդգրկելով նաև առավել մեծ վնասակար արտանետումներ ունեցող կազմակերպությունների շրջակայքում հատուկ դիտարկումների կազմակերպումը:

251. **Հողային ռեսուրսներ-** Մարզի բնակլիմայական պայմանները և Երևան քաղաքին մոտ գտնվելը էապես նպաստում է հողի բերրի շերտի անօրինական տեղափոխումներին: Երևույթը հատկապես առկա է Հրազդան, Ֆանտան, Ջրաբեր, Կապուտան, Կոտայք, Նուռնուս համայնքներում: Չնայած մարզպետարանի և բնապահպանական տարածքային բաժնի կողմից իրականացված համատեղ միջացառումներին և մի շարք անձանց նկատմամբ կիրառված պատժամիջոցներին՝ դեռևս խնդիրը մնում է չկարգավորված և այն չի իրականացվում ՀՀ կառավարության 2011թ. սեպտեմբերի 8-ին ընդունված թիվ 1693 որոշմամբ հաստատված «Հողի բերրի շերտի օգտագործման կարգի» պահանջներին համապատասխան:

252. Հողի բերրի շերտի վերարտադրության և պահպանության գործում կարևոր դեր են խաղում մարզի անտառածածկ տարածքները, որոնք վերջին քսան տարիների ընթացքում ենթարկվել են անթոքոպոզեն և բնական խաթարման: Անտառների ինտենսիվ հատումների հետևանքով ակտիվացել են սելավասողանքային և էռոզիոն երևույթները:

253. Գյուղատնտեսական նշանակության հողատեսքերին մեծ վնաս են պատճառում նաև անկանոն և տարերային ձևով ի հայտ եկող աղբավայրերը, որոնք բացի կենցաղային և շինարարական աղբից պարունակում են ազդեցատ պարունակող թափոններ, մեքենաների կմախքներ, մարտկոցներ, նավթամթերքների արգասիքներ, թունաքիմիկատներ և այլն:

254. Վերը նշված հանգամանքը ոչ միայն վտանգավոր է դարձնում տվյալ հողատարածքի օգտագործումը, այլև աղբավայրի թունավոր նյութերը, տարալուծվելով մակերեսային և ստորերկրյա ջրերում, սպառնալիք են առաջացնում մոտակա ջրային ռեսուրսներից օգտվող ազգաբնակչության և կենդանական աշխարհի համար:

255. Լուրջ սպառնալիք է հանդիսանում աղբավայրերից և ազգաբնակչության կողմից դեպի շրջակա միջավայր թափանցող պոլիէթիլենային և պլաստմասե թափոնները, որոնք հողում չեն տարրալուծվում և տարիների ընթացքում առաջացնում են մեկուսացնող շերտ՝ դրանով իսկ փոխելով հողի բնականոն ռեժիմը:

6.2 Բնապահպանության ոլորտի խնդիրները և ռազմավարությունը

256. Կոտայքի մարզում բնապահպանության ոլորտում անհրաժեշտ է իրականացնել.

- 1) տնտեսական աճին զուգընթաց լավագույն, բնապահպանական տեսակետից անվտանգ և ռեսուրսախնայող տեխնոլոգիաների ներդրման խթանում՝ ապահովելով վնասակար արտանետումներ ունեցող արտադրական հին տեխնոլոգիաների դուրսմղումը,
- 2) զբոսաշրջության և էկոտուրիզմի զարգացում, որը կնպաստի մարզի էկոհամակարգերի պահպանությանը,
- 3) տնտեսագիտորեն հիմնավորված բնօգտագործման վճարների համակարգի կիրառում, որը կապահովի նոր հանքավայրերի խնայողաբար շահագործումը,
- 4) լքված և չշահագործվող հանքավայրերի էկոլոգիական իրավիճակի բարելավմանը նպատակաուղղված ռեկուլտիվացիայի իրականացում, որն անհրաժեշտ է ջրային ռեսուրսների և հողերի հետագա աղտոտումը կանխարգելելու և բնական էկոհամակարգերը վերականգնելու համար,
- 5) բնապահպանական վճարների դրույքաչափերի ավելացում՝ շրջակա միջավայրն աղտոտող կազմակերպությունների մոտ աղտոտման ծավալների նվազեցման գծով վարքագծի փոփոխման խթանների ստեղծման համար,
- 6) Բնապահպանական հիմնախնդիրների լուծման մեջ համայնքների մասնակցության ակտիվացում, դրանց լուծման ուղիների վերաբերյալ տեղական ինքնակառավարման մարմինների իրազեկության աստիճանի բարձրացում:

Անհրաժեշտ է իրականացնել միջոցառումներ, որոնք կնպաստեն ԲՀՊՏ կառավարման գործընթացներում համայնքների մասնակցության ակտիվացմանը, քանի որ այդ տարածքների համար սահմանված ռեժիմը համեմատաբար մեծ հնարավորություններ է ստեղծում տնտեսական մեխանիզմների կիրառման համար: Մասնավորապես, կարևորելով զբոսաշրջության ոլորտի զարգացումը ընդհանուր տնտեսական զարգացման մեջ՝ անհրաժեշտ է աջակցել համայնքների նախաձեռնություններին՝ էկոտուրիզմի զարգացման և համապատասխան ենթակառուցվածքների ստեղծման ուղղությամբ:

- 7) էկոլոգիական կրթության մեջ մարզի կրթական հիմնարկների, հանրակրթական դպրոցների, մարզի բնապահպանական կառավարման համակարգի ներառում,
- 8) այլընտրանքային էներգիայի աղբյուրների կիրառում, այդ թվում՝ քամու, արևային էներգիայի զարգացման խթանում, թռչնաաղբից կենսազագի ստացման ծավալների ավելացում,
- 9) Մարզի գազամատակարարման ցանցի ընդլայնում: Դեռևս տնային տնտեսությունների կողմից որպես ջեռուցման հիմնական միջոց է դիտվում վառելափայտը, որը, որպես կանոն, հատվում է անտառամերձ բնակավայրերի բնակիչների կողմից և դրանով իսկ զգալի վնաս է հասցվում այդ տարածաշրջանների շրջակա միջավայրին: Անտառամերձ գյուղերի գազիֆիկացումը այս առումով պետք է առաջնահերթ համարվի:
- 10) բնական լանդշաֆտների պահպանության նպատակով անհրաժեշտ հսկողության սահմանում,
- 11) Արտավայրերի և խոտհարքերի ռացիոնալ կառավարում: Ներկայումս մանր գյուղացիական տնտեսությունները, ֆինանսական միջոցների և կազմակերպված կոոպերացիայի բացակայության պատճառով, հիմնականում չեն կարողանում անասնահոտերը տեղափոխել հեռավոր ամառային արտավայրեր և ստիպված են օգտագործել միայն գյուղամերձ կերահանդակները: Արդյունքում վերջիններս գերծանրաբեռնվում են՝ առաջացնելով հողի էռոզիոն երևույթներ:
- 12) Բնապահպանական որոշումների կայացման գործում հասարակության մասնակցության ընդլայնում: Այդ առումով կարևորվում է Հրազդան և Եղվարդ քաղաքներում գործող <<Օրիուս>> կենտրոնների աշխատանքների ակտիվացումը և ՀԿ-ների հետ սերտ համագործակցության ապահովումը:
- 13) Համայնքային անտառկառավարման համակարգի կիրառում մարզի անտառամերձ համայնքներում: Հանրապետությունում նախապատրաստվում են փորձնական ծրագրեր, որոնց հետագա գնահատումը հիմք կհանդիսանա համայնքային անտառկառավարման եղանակների և ծավալների սահմանման համար: Այս գործընթացը պետք է ընթանա տեղական ինքնակառավարման մարմինների, մասնավոր հատվածի և հասարակական կազմակերպությունների համագործակցության նորարարական մեխանիզմների կիրառման ճանապարհով,
- 14) մարզի տարածաշրջաններում որսահանդակների ստեղծում, որը հնարավորություն կտա որսը կազմակերպել միայն սահմանված վայրերում և կնպաստի որսի կենդանիների ավելացմանը և կենսաբազմազանության պահպանմանը,
- 15) բնության հատուկ պահպանվող նոր տարածքների ստեղծում,
- 16) Կենցաղային կոշտ թափոնների կենտրոնացված աղբավայրերի կառավարման պլանների մշակում և վերամշակման համար բիզնես ծրագրերի կազմում: Մարզի քաղաքներում արտադրական լցակույտերի և կենցաղային թափոնների կառավարման՝ հավաքման, տեսակավորման և կազմակերպված վնասագերծման խնդիրը կարևորվում է ինչպես անմիջական վնասի կանխարգելման, այնպես էլ հողային ռեսուրսների և ջրային ավազանների աղտոտման հետևանքների վերացման համար հետագայում պահանջվող խոշոր ներդրումների անհրաժեշտությամբ: Գործնականում արդյունաբերական թափոնները և շինարարական աղբը

կոշտ կենցաղային թափոնների հետ հիմնականում տեղափոխվում են քաղաքային և գյուղական աղբավայրեր: Արդյունքում աճում է կոշտ աղբի կուտակիչների և աղբավայրերի առկա վիճակի բացասական ազդեցությունը բնակչության առողջության և շրջակա բնական միջավայրի, հատկապես՝ հողի նկատմամբ: Աղբահավաքման եղանակները և կիրառվող ենթակառուցվածքների մակարդակը բավարար չեն, որի հետևանքով տեղի են ունենում աղբի մեծ կուտակումներ. աղբը հաճախ չի հեռացվում՝ ստեղծելով սանիտարա-հիգիենիկ անբարենպաստ պայմաններ: Թափոնների հեռացման համակարգի բարելավման համար անհրաժեշտ է մշակել նշված համակարգի արդիականացման ռազմավարական ծրագիր, որը ենթադրում է աշխատանքների իրականացում մի քանի ուղղություններով՝ խոշոր բնակավայրերի հատակագծերում նախատեսված աղբավայրերի կառավարման պլանների մշակում, առաջնահերթ նվազագույն ներդրումներ պահանջող բարելավման և ցանկապատման աշխատանքների իրականացում, միջհամայնքային աղբավայրերի նախագծում և դրանց շահագործման համար տեխնիկական միջոցների տրամադրում, աղբամշակման գործարանի կառուցում:

- 17) օդային և ջրային ավազանի աղտոտվածության քիմիական վերլուծության շրջիկ լաբորատորիայի ձեռքբերում, որը հնարավորություն կտա կատարել մի շարք բնապահպանական վերլուծություններ,
- 18) Մարզի բնապահպանական հիմնախնդիրներից է կեղտաջրերի հեռացման և մաքրման աշխատանքների կազմակերպումը և այդ առումով անհրաժեշտություն է Հրազդանի տարածաշրջանում մեկ հզոր կենսաբանական մաքրման կայանի կառուցումը, Հանքավան – Հրազդան կոյուղատար կոլեկտորի վերանորոգումը, Ծաղկաձոր քաղաքի կոյուղատարի կառուցման ավարտումը և այն գլխավոր կոլեկտորի հետ միացումը:
- 19) Մարզի համայնքներում սահմանված կարգով համապատասխան տարածքներում աղբավայրերի ստեղծում և օրինական շահագործում: Մարզի վարչական տարածքի սահմաններում չհսկվող և չարտոնագրված աղբավայրերի վերացմանը ուղղված միջոցառումների կազմակերպում:
- 20) Կանխել հողերի դեգրադացիայի պրոցեսը, այդ նպատակով իրականացնել հակաէռոզիոն, հակասողանքային, մելիորատիվ և խախտված հողերի վերականգնման միջոցառումներ: Աջակցել և խրախուսել սեփականաշնորհված գյուղատնտեսական հողերի խոշորացման նախաձեռնություններին:
- 21) Մարզից հողի բերրի շերտի տեղափոխման գործում առկա անօրինականությունների վերացման ուղղությամբ միջոցառումների իրականացում:
- 22) Վերահսկել ընդերքի արդյունահանման փաստաթղթային օրինականությունը և պայմանագրային կետերի կատարումը, ինչպես նաև ընդերքօգտագործող կազմակերպությունների կողմից մթնոլորտային օդի պահպանությանն ուղղված միջոցառումների իրականացումը:
- 23) Մարզի առողջապահական և հանգստի գոտիներում գետերը և վտակները անաղարտ պահելու միջոցառումների իրականացում: Այդ նպատակով անհրաժեշտ է իրականացնել

հանգստյան գոտիներում գտնվող հանգստյան տներից դուրս եկող կեղտաջրերի մաքրման աշխատանքներ՝ կառուցելով ժամանակակից լուրջ մաքրման կենսաբանական կայաններ:

24) Մարզի որսահանդակներում վայրի կենդանիների ապօրինի որսի իրականացման բացառում և այդ ուղղությամբ հետևողական պայքարի կազմակերպում:

25) Սերտ համագործակցության ապահովում բնապահպանական պետական տեսչության տարածքային բաժնի հետ՝ աշխատանքների կատարումը համադրելով համատեղ մշակված տարեկան աշխատանքային ծրագրի շրջանակներում, որի արդյունքում իրականացված միջոցառումները կնպաստեն մարզում առկա բնապահպանական հիմնախնդիրների լուծմանը և թերությունների ժամանակին վերացմանը:

26) Ոռոգման նոր մեթոդների՝ ստորգետնյա ոռոգման ցանցի անցկացման, կաթիլային և անձրևացման եղանակների ներդրման մեխանիզմների մշակում:

27) Ոռոգման համակարգերի վերականգնման, հոսակորուստների նվազեցման մեխանիզմների մշակում:

28) Աղտոտված, դեգրադացված հողերի վերականգնում և մոնիտորինգի ծրագրի իրականացում, ինչը հիմք կհանդիսանա մարզում դեգրադացիայի ենթարկված հողատարածքների ուսումնասիրության, կենսաբանական վերակուլտիվացման ուղղությունների մշակման և մոնիտորինգային ցանցի ստեղծման համար:

257. Բնապահպանության ոլորտում 2015-2018թթ. պահանջվող ֆինանսավորման չափերը ներկայացված են հավելված 6.3-ում:

7. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

7.1. Կրթության ոլորտի իրավիճակի վերլուծություն

258. Որպես հասարակության ամենազգայուն և ամենից շատ շահառուներ ունեցող ենթահամակարգ՝ կրթական ոլորտն իր մեջ ներառում է տվյալ հասարակությանը բնորոշ գրեթե բոլոր հիմնախնդիրները: Այդ իսկ պատճառով էլ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության մեջ կարևորագույն տեղ է հատկացվում կրթական բարեփոխումներին:

259. Ժողովրդավարական և իրավական պետության կառուցումը, հասարակական և տնտեսական զարգացման համաշխարհային միտումներին ինտեգրվելը անխուսափելիորեն պահանջում էին կրթական բարեփոխումներ, որոնց մեր նորանկախ հանրապետությունը ձեռնամուխ եղավ քայլ առ քայլ: Այդ նպատակով վերջին տարիներին մեկնարկել են բազմաթիվ նախաձեռնություններ, որոնք ներառում են կրթության ոլորտը պայմանավորող գրեթե բոլոր գործոնները՝ մարդկային ներուժ, ծրագրամեթոդական ապահովում, նորմատիվ-իրավական դաշտ, ինստիտուցիոնալ համակարգ:

260. Կոտայքի մարզի կրթության զարգացման տեսլականն անհրաժեշտ է դիտարկել երկրի ընդհանուր զարգացման, ազգային և պետական անվտանգության ապահովման հետևյալ հիմնական թիրախների հաղթահարման համատեքստում.

- 1) կայուն տնտեսական աճի ապահովում,
- 2) քաղաքացիական հասարակության զարգացում,
- 3) բարեկեցության ապահովում և աղքատության հաղթահարում:

261. **Նախադպրոցական կրթություն:** ՀՀ կրթության համակարգում նախադպրոցական կրթության ու դաստիարակության դերը հստակեցնելու և արդի պահանջներին համահունչ դարձնելու նպատակով վերջին տարիներին իրականացվում են մի շարք ծրագրեր և միջոցառումներ: 2005թ. ընդունվել է <<Նախադպրոցական կրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքը, որին համապատասխանեցվում և կատարելագործվում է իրավական դաշտը: Արդեն մշակվել և կիրառության մեջ են դրվել նախադպրոցական կրթության և երեխաների խնամքի չափորոշիչներն ու ծրագրերը: Պատշաճ ուշադրություն է ցուցաբերվում նաև մանկավարժական կադրերի պատրաստմանն ու վերապատրաստմանը: Հաստատվել է նախադպրոցական կրթության բարեփոխումների 2008-2015 թվականների ռազմավարական ծրագիրը, որով սահմանվել են նախադպրոցական կրթության զարգացման ռազմավարական ուղղությունները:

262. Նախադպրոցական կրթությունը կրթական համակարգի սկզբնական և բաղկացուցիչ մասն է, որի նպատակն է երեխայի ֆիզիկական և հոգեկան առողջության պահպանումն ու ամրապնդումը, նախադպրոցական տարիքի երեխաների ներդաշնակ զարգացումն ու դաստիարակությունը, դպրոցական ուսուցման նախապատրաստումը:

263. Նախադպրոցական կրթության ծրագրերի իրականացման գործում գլխավոր դերը պետությունը վերապահում է նախադպրոցական ուսումնական հաստատություններին, որոնք 1996թ. անցել են համայնքային ենթակայության ներքո:

264. Իրենց իրավասությունների և հնարավորությունների սահմաններում տեղական ինքնակառավարման մարմիններն որոշակի աշխատանք են կատարում նախադպրոցական կրթության ոլորտի պետական քաղաքականությունը համայնքներում իրականացնելու ուղղությամբ: Սակայն անկախության առաջին տարիներին հանրապետությունում առկա սոցիալ-տնտեսական ծանր իրավիճակի /էներգետիկ ճգնաժամ, գործազրկություն, արտագաղթ, ֆինանսական ռեսուրսների սղություն և այլն/ պատճառով նախադպրոցական ուսումնական հաստատությունների, հետևաբար նաև այդտեղ հաճախող երեխաների թիվը նվազել էր: Ինչպես ցույց են տալիս 2011-2014թթ. վիճակագրական տվյալները, նախադպրոցական հաստատություններ հաճախող երեխաների թիվը ոչ միայն կայունացել է, այլև զգալիորեն աճել է:

265. 2011-2014 թվականներին մարզի մի շարք գյուղական համայնքներում նախկինում իրենց գործունեությունը կասեցրած նախադպրոցական հիմնարկները վերաբացվել են: 2014 թվականի սկզբի տվյալներով մարզում գործում է 55 նախադպրոցական հաստատություն: Խմբերի թիվը կազմում է 240, նրանցում ընդգրկված երեխաներին՝ 6321: Սակայն մարզի մինչև 6 տարեկան երեխաների շուրջ 30%-ն է միայն ստանում նախադպրոցական կրթություն: Նախադպրոցական ուսումնական հաստատություններ չեն գործում մարզի 60 գյուղական համայնքներից 35-ում: Ընդ որում դրանցից 25-ում առհասարակ շենքեր ու համապատասխան շինություններ չկան:

266. Փաստորեն, նախադպրոցական կրթությունը, կամա թե ակամա վերջին տարիներին քաղաքային կյանքը բնութագրող չափորոշիչ է վերածվել, և գյուղի երեխաները գրկվել են այդ կրթությունը ստանալու հնարավորությունից: Նախադպրոցական կրթության անմատչելիությունը գյուղական բնակավայրերում հիմնականում պայմանավորված է նախադպրոցական հաստատության բացակայությամբ, ինչպես նաև համայնքի բյուջեի սղությամբ: Սոցիալական և ֆինանսական գործոնները նախադպրոցական համակարգում չընդգրկվածության պատճառ են հանդիսանում նաև քաղաքային բնակչության առանձին շերտերի համար: Այդ ամենի հետևանքով հանակրթական դպրոցի առաջին դասարան հաճախող երեխաները սկզբից ևեթ հայտնվում են մեկնարկային անհավասար պայմաններում:

267. Այս խնդիրը մասամբ լուծվել է գյուղական համայնքների դպրոցներում նախակրթարաններ հիմնելու միջոցով: 2014-2015թթ. ուսումնական տարում մարզի 15 համայնքներում կգործեն նախակրթարանների 20 խմբեր, որտեղ կսովորի 495 երեխա: 2015-2018 թվականներին նախատեսվում է նախադպրոցական կրթություն ստացող երեխաների թիվը հասցնել 100 %-ի:

268. Նախադպրոցական հաստատությունների առջև ծառացած են մի շարք խնդիրներ, որոնք հրատապ լուծման կարիք ունեն: Մասնավորապես.

1) **Կապիտալ վերանորոգում** - Նախադպրոցական հաստատությունների մեծ մասի շենքային պայմանները գտնվում են ոչ բարվոք վիճակում, որոնք ենթակա են կապիտալ վերանորոգման:

2) **Ջեռուցման ապահովում** - Կենտրոնական ջեռուցման համակարգը վաղուց չի գործում, և մանկապարտեզները հիմնականում ջեռուցվում են էլեկտրական սարքերի կամ վառելափայտի միջոցով, ինչը մեծ տարածքի պայմաններում այդքան էլ արդյունավետ չէ: Անբավարար ջեռուցման պատճառով նախադպրոցական հաստատություններից շատերը ձմռան ամիսներին ժամանակավորապես դադարեցնում են իրենց գործունեությունը: Անհրաժեշտ է համապատասխան միջոցներ նախատեսել մանկապարտեզների լոկալ ջեռուցման խնդրի լուծման համար:

3) **Սնունդ** - Թեպետ բոլոր նախադպրոցական հաստատություններում երեխաների համար կազմակերպվում է սննդի մատուցում, այնուամենայնիվ, սննդի տեսականին մնում է միատարր: Անհրաժեշտ է մանկական սննդակարգում հիմնականում ընդգրկել կալորիականությամբ և սննդարարությամբ հագեցած սնունդ:

4) **Գույք** - Մանկապարտեզների օգտագործվող գույքը թե՛ բարոյապես և թե՛ ֆիզիկապես

մաշված է: Գրեթե բոլոր նախադպրոցական հաստատություններն ունեն փափուկ և կոշտ գույքի, ուսուցողական-դիդակտիկ պարագաների, խաղալիքների, խմբասենյակների և դահլիճների պատշաճ կահավորման կարիք:

5) **Մասնագիտական կադրեր** - Եթե հանրակրթության բնագավառում վերջին տարիներին իրականացվում են մանկավարժների վերապատրաստման միջոցառումներ, ապա նախադպրոցական ոլորտում կադրերի վերապատրաստման մակարդակը բավարար չէ: Թեպետ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության Կրթության ազգային ինստիտուտի մարզային մասնաճյուղի միջոցով իրականացվում են վերապատրաստման մի շարք միջոցառումներ, այնուամենայնիվ դրանք սահմանափակ բնույթ են կրում: Բացի այդ, կարևոր է նաև համապատասխան կրթությամբ մասնագետ կադրերի ապահովման խնդիրը: Եթե գյուղական որոշ համայնքներում այդ խնդրի լուծման համար առանձին դժվարություններ կան՝ կապված տեղաբնակ մասնագետ կադրերի հետ, ապա քաղաքային համայնքներում կադրերի խնդիր չկա, և ցանկության դեպքում ոչ մասնագետ մանկավարժները կարող են փոխարինվել համապատասխան կրթությամբ կադրերով: Լուրջ մտահոգության տեղիք է տալիս նաև այն փաստը, որ մարզի 55 նախադպրոցական հաստատություններում աշխատող դաստիարակ-մանկավարժներից ոչ բոլորը ունեն համապատասխան որակավորում: Մինչև 2018 թվականը նախատեսվում է ավարտել այդ խնդրի լուծումը:

269. **Հանրակրթություն, այդ թվում՝ հատուկ կրթություն: Ընդհանուր նկարագիրը:** Միջնակարգ կրթությունը հանդիսանում է կրթության հիմնական օղակը: Այդ իսկ պատճառով էլ պետական կրթական քաղաքականության մեջ այն դիտվում է իբրև գերակա ուղղություն: Հանրակրթության ոլորտ են ուղղվում կրթության զարգացման համար նախատեսված ծախսերի զգալի մասը: Բարեփոխումների գերակշիռ մասը ևս իրականացվում է այդ ոլորտում:

270. Հանրակրթության ոլորտի բարեփոխումների ներկա փուլի հիմնական խնդիրը կրթության որակի և մատչելիության ապահովումն է: Այս նպատակով վերջին տարիներին ձեռնարկված առանցքային քայլերից մեկն էլ անցումն էր 12-ամյա հանրակրթական համակարգին, որի իրականացումը սկսվել է 2006 թվականին և ավարտվել 2012թ-ին: Այս գործընթացի շրջանակներում մարզի 6 քաղաքային և 1 գյուղական համայնքներում ձևավորվել և գործում են 11 ավագ դպրոցներ: Ծրագրի ընդունումը կարևորվում է այն հիմնավորմամբ, որ ավագ դպրոցը դիտվում է որպես 'նախամասնագիտական' կրթություն ապահովող հիմնական օղակ:

271. Ստեղծելով սովորողների համար նախընտրելի հոսքային ուղղություն և ճկուն կրթական ծրագրի միջոցով արձագանքելով աշակերտների կրթական պահանջմունքներին և նախասիրություններին՝ ավագ դպրոցը նպատակ ունի մոտ ապագայում ոչ միայն նպաստել հանրակրթության որակի բարձրացմանը, այլև իրականացնել իր բուն առաքելությունը՝ սովորողների հակումներին, ընդունակություններին, կարողություններին և նախասիրություններին համապատասխան նախնական, միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթություն ստանալու հնարավորության և ինքնուրույն կյանք վարելու պատրաստվածության ապահովում:

272. Բարելավվել է նաև հանրակրթությանը հատկացվող պետական ֆինանսական միջոցների օգտագործման արդյունավետությունը՝ ի հաշիվ դպրոցների ուսումնաօժանդակ անձնակազմի օպտիմալացման և ուսուցիչների շաբաթական միջին ծանրաբեռնվածության բարձրացման:

273. 2013թ. Կոտայքի մարզի հանրակրթության ոլորտի բյուջետային ծախսերը 2011թ. համեմատ աճել են գրեթե 2.9 %-ով:

Աղյուսակ 7.1

Կոտայքի մարզում 2011-2013թթ. կրթության ոլորտին ՀՀ պետական բյուջեից հատկացումների դինամիկան

/հազ. դրամ/

Հ/Հ	Կրթության ոլորտ	2011թ.	2012թ.	%	2013թ.	%	2014թ.	%
1	Հանրակրթություն	4520612.6	4517777.5	99.9	4652535.0	102.9	5171226.0	111.1
2	Հատուկ կրթություն	89343.4	93992.6	105.2	91611.8	97.5	104949.8	114.6
3	Արտադպրոցական դաստիարակություն	30715.5	30715.5	100.0	33220.9	108.2	47965.5	144.4
	Ընդամենը	4640671.5	4642485.6	100.0	4777367.7	102.9	5324141.3	111.4

Աղբյուր՝ ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության տվյալներ

274. Հանրակրթության որակի ապահովման գործում զգալի դեր են կատարում տարեցտարի աճող ֆինանսական հատկացումները: Կոտայքի մարզում 2012 թվականին մեկ աշակերտին բաժին ընկնող տարեկան ծախսերի միջին գումարը կազմել է 165600 դրամ, իսկ 2013 թվականին՝ 171400 դրամ: Համեմատության համար նշենք, որ 2008թ. մեկ սովորողին բաժին ընկնող գումարի չափը կազմել է 126910 դրամ: Աճել է նաև մանկավարժների միջին աշխատավարձը. 2013 թ-ին այն կազմել է 114200 դրամ:

275. 2014 թվականի դրությամբ Կոտայքի մարզում գործում են 105 հանրակրթական ուսումնական հաստատություններ, այդ թվում՝ 1 հատուկ, 2 կրթահամալիր և 1 ոչ պետական դպրոց: Հանրակրթական ուսումնական հաստատություններից 91-ը, այդ թվում՝ նաև 1 հատուկը, գործել են մարզպետարանի, իսկ 11 ավագ դպրոցները և Աբովյանի կրթահամալիրը՝ ՀՀ ԿԳ նախարարության ենթակայության ներքո: Միակ ոչ պետական հանրակրթական ուսումնական հաստատությունը Նաիրիի ոչ պետական միջնակարգ դպրոցն է: Հանրակրթական ծրագիր է իրականացնում նաև <<Փոքր Միեր>> կրթահամալիրը, որը ռազմական թեքումով գիշերօթիկ հաստատություն է:

276. Աշխատանքներ են տարվում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսուցումը հանրակրթական դպրոցում կազմակերպելու ուղղությամբ: Քննարկվում են ներառական կրթության զարգացման հեռանկարները: 2014-2015 ուստարում նախատեսվում է մարզի հինգ դպրոցներում /Հրազդանի թիվ 11, Չարենցավանի թիվ 6, Աբովյանի թիվ 7, Կոտայքի և Աբովյանի կրթահամալիր/ իրականացնել ներառական կրթություն: Դպրոցների ուսուցիչները այս նպատակով անցել են վերապատրաստման համապատասխան դասընթացներ:

277. Վերջին տարիների ընթացքում նկատվում է առաջին դասարան ընդունվողների թվի ավելացում: Այսպես, եթե 2010-2011 և 2011-2012 ուսումնական տարում մարզի հանրակրթական ուսումնական հաստատությունների առաջին դասարան են հաճախել շուրջ 3300-ական երեխաներ, ապա 2012-2013 ուսումնական տարում այդ թիվը կազմել է 3375, իսկ 2013-2014 ուսումնական տարում՝ 3620: Սա պայմանավորված է ոչ միայն ծնելիության աճով, այլ նաև ուրիշ գործոններով /նախորդ տարիներին դպրոց չհաճախած երեխաների, այլ մարզերից կամ արտերկրից տեղափոխվածների ընդունելության և այլ պատճառներով/:

278. Ինչ վերաբերում է մարզպետարանի ենթակայության դպրոցներում ուսուցիչ-աշակերտ թվաքանակի հարաբերակցությանը, ապա այն 2008-2009թթ. համեմատ գրեթե չի փոխվել՝ 10.5-ի փոխարեն 2012-2013 ուսումնական տարում կազմելով 10.4 /աղյուսակ 7.2/:

279. Կայունացման միտումը շարունակվել է նաև մարզի բոլոր դպրոցներում /աղյուսակ 7.3/:

Աղյուսակ 7.2

Ուսուցիչ-աշակերտ թվաքանակի հարաբերակցությունը ՀՀ մարզերում

Մարզը	2011-2012 ուս.տարի			2012-2013 ուս.տարի		
	Աշակերտներ	Ուսուցիչներ	Հարաբերակցություն	Աշակերտներ	Ուսուցիչներ	Հարաբերակցություն
Երևան	113024	9980	11.3	106112	9416	11.3
Արագածոտն	19330	3025	6.4	18500	2920	6.3
Արարատ	34604	3354	10.3	32852	3292	10.0
Արմավիր	36399	3819	9.5	34945	3775	9.3
Գեղարքունիք	33135	3789	8.7	31417	3699	8.5

Լոռի	33131	3827	8.6	31629	3774	8.4
Կոտայք	34930	3310	10.5	33804	3252	10.4
Շիրակ	33840	3958	8.5	31428	3872	8.1
Սյունիք	17733	2487	7.1	16985	2420	7.0
Տավուշ	17182	2085	8.2	16680	2071	8.0
Վայոց Ձոր	7388	1081	6.8	6876	1075	6.4
Ընդամենը	380696	40715	9.3	361228	39566	9.1

Աղբյուրը՝ ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության տվյալներ

280. Այս ցուցանիշի անկումը հիմնականում պայմանավորված է գյուղական համայնքների դպրոցներում աշակերտների թվի նվազմամբ, չնայած նրան, որ մարզային ենթակայության դպրոցներում աշակերտների ընդհանուր թիվը ավելացել է: Համեմատության համար նշենք, որ միայն մարզպետարանի ենթակայության հանրակրթական դպրոցներում 2010-2011 ուստարում սովորել է 33139 աշակերտ, 2011-2012 ուստարում՝ 34930, իսկ 2012-2013 ուստարում այդ թիվը կազմել է 33804: Փաստորեն, վերջին երեք տարիների ընթացքում սովորողների թիվն աճել է 665-ով:

Աղյուսակ 7.3

Աշակերտ-ուսուցիչ հարաբերակցությունը ըստ մարզերի

Մարզը	2011-2012 ուս.տարի			2012-2013 ուս.տարի		
	Աշակերտներ	Ուսուցիչներ	Հարաբերակցություն	Աշակերտներ	Ուսուցիչներ	Հարաբերակցություն
Երևան	117629	10832	10.9	112183	10450	10.7
Արագածոտն	19330	3025	6.4	18500	2920	6.3
Արարատ	34604	3354	10.3	32852	3292	10.0
Արմավիր	36732	3881	9.5	35295	3837	9.2
Գեղարքունիք	33135	3789	8.7	31417	3699	8.5

Լողի	33236	3845	8.6	31733	3796	8.4
Կոտայք	35084	3327	10.5	33956	3270	10.4
Շիրակ	34353	4042	8.5	32202	3991	8.1
Սյունիք	17733	2487	7.1	16985	2420	7.0
Տավուշ	7421	1090	6.8	6906	1084	6.4
Վայոց Ձոր	17182	2085	8.2	16680	2071	8.0
Ընդամենը	386439	41757	9.2	368708	40830	9.0

Աղբյուրը՝ ՀՀ ԿԳՆ վիճակագրական տեղեկագիր, Հանրակրթությունը Հայաստանում 2012-2013 ուսումնական տարի:

281. Մյուս կողմից, ինչպես այդ, այնպես էլ հանրակրթության մյուս քանակական ցուցանիշները /դասարանների միջին խտություն, ուսուցիչների շաբաթական միջին ուսումնական բեռնվածություն/, աստիճանաբար նվազել են, քանի որ մարզի 23 դպրոցներ /Գառնի բանավանի, Գեղարդի, Հատիսի, Գեղադիրի, Նուռնուսի, Ողջաբերդի, Վերին Պտղնիի, Սևաբերդի, Կաթնաղբյուրի, Զովաշենի, Զրաբերի, Հացավանի, Փյունիկի, Զրառատի, Արտավազի, Կարենիսի, Մարմարիկի, Սարալանջի, Թեղենիքի, Գետամեջի, Քարաշամբի, Հրազդանի թիվ 7, Աբովյանի թիվ 1 հատուկ/ հաճախում են 100-ից պակաս աշակերտներ: Դասարանի միջին խտությունը այդ դպրոցներում ցածր է 7-ից, իսկ ուսուցիչ-աշակերտ հարաբերակցությունը՝ 4-ից /ավելի քան երեք անգամ պակաս պահանջվող ցուցանիշներից/: Քանակական միջին ցուցանիշները ցածր են նաև մարզում գործող այլ ենթակայության պետական և ոչ պետական հանրակրթական հաստատություններում: Իհարկե այդ տվյալները ազդում են մարզի ընդհանուր ցուցանիշների վրա: Այսպես, 2014-2015թթ. ուսումնական տարում միայն Զովաշենի դպրոց կհաճախի 3 աշակերտ:

282. Իր ընդգրկվածությամբ հանրակրթական ոլորտն ունի ամենամեծ շահառուների խումբը և, ըստ էության, կրթական այս մակարդակում ծառայությունները գրեթե հավասարաչափ մատչելի են բնակչության բոլոր խմբերի համար: Այսպես, կրթական տարիքի երեխաների ընդգրկվածությունը հանրակրթական հաստատություններում Կոտայքի մարզում 2013թ. սեպտեմբերի դրությամբ գրեթե ամբողջովին ապահովվել է. տարրական դպրոցում սովորում են թվով 13595 աշակերտներ, հիմնական դպրոցում՝ 12900, իսկ ավագ դպրոցում՝ 5890: Հիվանդության կամ այլ պատճառներով հանրակրթությունից դուրս են մնացել 16 դպրոցահասակ երեխաներ:

283. **Ուսումնական գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ պայմանների նկարագրությունը:** Թեև մարզի շուրջ երկու տասնյակ դպրոցներ ապահովված են ժամանակակից ուսումնական լաբորատորիաներով, սակայն կրթական հաստատությունների մեծ մասում գրեթե բացակայում են ժամանակակից լաբորատոր սարքավորումներն ու նյութերը: <<Փյունիկ>>

բարեգործական հիմնադրամի միջներով արդիականացվել են մարզի 19 դպրոցների քիմիայի, կենսաբանության և ֆիզիկայի լաբորատորիաները:

284. Լոկալ ջեռուցմամբ ապահովված են բոլոր քաղաքային դպրոցները: Ջեռուցման այս եղանակից են օգտվում նաև գյուղական համայնքների մի շարք հանրակրթական հաստատություններ: Ներկայումս լոկալ ջեռուցմամբ ապահովված են մարզի 72 դպրոցներ: 2015-2018 թվականներին նախատեսվում է բոլոր դպրոցները ապահովել լոկալ ջեռուցման համակարգով:

285. Կրթակարգի պահանջներին համապատասխան համակարգիչներով և ինտերնետ կապով ապահովված են մարզի բոլոր դպրոցները:

286. Մարզի դպրոցական գրադարանային ֆոնդում առկա գեղարվեստական և մեթոդամանկավարժական գրականության գրեթե կեսը հնամաշ է, իսկ 20%-ը օգտագործման պիտանի չէ՝ կապված հանրակրթական ծրագրերի փոփոխման հետ:

287. Ակնհայտ է, որ կրթական գործընթացի որակը կախված է ոչ միայն համապատասխան նյութատեխնիկական բազայի առկայությունից, այլև ուսուցչական անձնակազմի գիտելիքների մակարդակից: Այսօր մարզի համար արդիական խնդիր է ուսուցիչների գիտելիքների և հմտությունների համապատասխանեցումը ժամանակակից պահանջմունքներին: Այս առումով կարևորվում է նրանց մասնագիտական և մանկավարժական վերապատրաստումը, ինչը վերջին տարիներին նկատելիորեն ակտիվացել է: Պարտադիր ատեստավորման նպատակով տարեկան վերապատրաստվում են ուսուցիչների շուրջ 20%-ը:

288. Մարզի հանրակրթական դպրոցների տնօրենների, ուսումնական և դաստիարակության գծով փոխտնօրենների և ուսուցիչների մասնագիտական, մեթոդական զարգացման աջակցության նպատակով կազմակերպվել են վերապատրաստման դասընթացներ, թեմատիկ սեմինարներ և խորհրդատվություններ:

289. Բովանդակային բարեփոխումների տարբեր փուլերի խնդիրներին համապատասխան փոխվել է նաև վերապատրաստումների և սեմինարների հիմնական նպատակը: Սկզբում դրանք ուղղված էին դասարանական մթնոլորտում դրական փոփոխությունների խթանմանը՝ նպատակ ունենալով անցում կատարելու ուսուցչակենտրոն մեթոդներից դեպի աշակերտակենտրոն մեթոդների կիրառմանը: Բարեփոխումների ներդրման ու իրականացման ընթացքում վերապատրաստումները նպատակ ունեին ուսուցիչներին ծանոթացնել 12-ամյա ուսուցման կրթակարգին, պետական և առարկայական չափորոշիչներին, ուսումնական առարկաների ծրագրերում տեղի ունեցած փոփոխություններին, ինչպես նաև դասավանդման ժամանակակից մեթոդներին: Դասընթացներն անց են կացվել փոխներգործուն մեթոդներով, որոնք հնարավորություն են ընձեռել ուսուցիչներին ձեռք բերելու պետական և առարկայական չափորոշիչները գործարկելու հմտություններ, ծրագրային նյութի դասավանդման ճկունություն, կիրառելու ուսուցանվող նյութի բովանդակությանը և նպատակներին համահունչ մեթոդներ և լուծելու վերապատրաստման ծրագրով նախատեսված այլ խնդիրներ:

290. Արդիական է նաև դպրոցի կառավարման խնդիրը: Չնայած դպրոցի կառավարման

ապակենտրոնացման քաղաքականությանը, շատ դպրոցներում կոլեգիալ կառավարման մարմինները ձևական բնույթ են կրում: Խորհուրդների անդամները մեծամասամբ տեղյակ չեն այդ կառույցի կանոնադրական և գործառնական խնդիրներին: Այլ խոսքով՝ դպրոցը դեռ չի կայացել որպես ինքնուրույն և ինքնակառավարվող կրթական օղակ: Այսպես, դպրոցի կառավարման գործում աշակերտների, ծնողների մասնակցությունը դեռևս ցածր է կամ ձևական բնույթ է կրում: Համայնքները, տեղական իշխանությունները անհրաժեշտ աջակցություն չեն ցուցաբերում դպրոցներին:

291. Դասագրքերի շրջանառու հիմնադրամի կողմից յուրաքանչյուր տարի մարզ է տեղափոխվում աշակերտների թվին և դասագրքերի օգտագործման՝ նախատեսված տարիներին համապատասխան ուսումնական գրականություն: Դասագրքերի վարձավճարների գանձման աշխատանքները կազմակերպվում են սահմանված կարգով: Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաները և տարրական դասարանների աշակերտները ապահովված են անվճար դասագրքերով:

292. Մարզում կազմակերպվում են մարզամշակութային, գեղարվեստական զանազան միջոցառումներ և առարկայական օլիմպիադաներ, ինչպես նաև ֆիզկուլտուրայի և շախմատի օլիմպիադաներ, սակայն հեռավոր համայնքների աշակերտները դժվարանում են մասնակցել այդ կարևոր ստուգատեսներին: ՀՀ շախմատի ֆեդերացիայի միջոցով մարզի բոլոր դպրոցներին հատկացվել են շախմատի խաղատախտակ և խաղաքարեր՝ կապված շախմատի պարտադիր ուսուցման հետ:

293. **Մասնագիտական կրթություն** (նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական, բարձրագույն մասնագիտական կրթություն): Ներկայումս Կոտայքի մարզում գործում են տարբեր գերատեսչությունների ենթակայության ներքո գտնվող հետևյալ միջին մասնագիտական ուսումնական հաստատությունները.

- 1) Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջ,
- 2) Հրազդանի պետական բժշկական քոլեջ,
- 3) Չարենցավանի պետական քոլեջ,
- 4) Աբովյանի պետական ճարտարագիտական քոլեջ,
- 5) Աբովյանի պետական էներգետիկական քոլեջ,
- 6) Նոր Գեղիի ակադեմիկոս Ա. Աղաջանյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ:

294. Նախնական մասնագիտական /արհեստագործական/ կրթության ոլորտում գործունեության հիմնական նպատակներն են եղել որակյալ մասնագետների պատրաստումն ու նրանց մրցունակության բարձրացումն աշխատաշուկայում, կրթական ծրագրերի համապատասխանեցումը երկրի սոցիալ-տնտեսական զարգացման պահանջներին, կրթության բովանդակության միջազգային չափանիշներին, համադրելիության և ուսումնական գործընթացի թափանցիկության, ինչպես նաև մատչելիության ու հավասարության ապահովումը:

295. Մարզում նախնական մասնագիտական կրթություն իրականացնում են Աբովյանի, Բյուրեղավանի, Հրազդանի, Նաիրիի արհեստագործական ուսումնարանները, ինչպես նաև

Աբովյանի թիվ 2 հատուկ ուսումնարանը, Չարենցավանի պետական քոլեջը: Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագիր է իրականացնում նաև Աբովյանի կրթահամալիրը:

296. Վերջին տարիներին իրավիճակն այս բնագավառում ավելի էր վատթարացել մի շարք պատճառներով: Մի կողմից անընդհատ և սրընթաց նվազում էր մասնագիտական-տեխնիկական կրթության պետական պատվերը, և կրթական հաստատությունները պետք է միջոցներ փնտրեին ինքնաֆինանսավորմամբ զարգանալու մասին: Մյուս կողմից այդ հաստատությունները ունեին անբավարար պայմաններ՝ ուսումնանյութական բազայի հագեցվածության, մանկավարժական անձնակազմի, պրակտիկաների կազմակերպման առումով: Այսօր այդ կրթական հաստատություններն գրեթե մրցունակ չեն կրթական ծառայությունների շուկայում և շրջանավարտները նույնպես մրցունակ չեն:

297. Ոլորտում առկա հիմնախնդիրները լուծելու նպատակով նախորդ երկու տարիներին մշակվել են ռազմավարական ծրագրեր: Կատարելագործվել է օրենսդրական դաշտը, կիրառության մեջ են մտել կրթական նոր չափորոշիչներ, նախնական և միջին մասնագիտական հաստատություններում ներդրվել է կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի համակարգը:

298. Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտում բարեփոխումներն իրականացվում են ՀՀ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության զարգացման հայեցակարգի և ԵՀՔ ԵՄ-Հայաստան գործողությունների ծրագրի շրջանակներում: 2011թ. Եվրոպական Միության կողմից Հայաստանի մասնագիտական կրթության և ուսուցման ոլորտում բարեփոխումների շրջանակներում <<Հրազդանի պետական քոլեջը>> վերակազմակերպվեց <<Կոտայքի տարածաշրջանի քոլեջի>>, որը հանդիսանում է մարզի մասնագիտական կրթության զարգացման (ՄԿՈԻ) կենտրոն՝ արդի կրթական չափորոշիչների պահանջներին համապատասխանող մասնագետների պատրաստման համար: Այստեղ 2015-2018թթ. կիրականացվեն մանկավարժական և դասախոսական կադրերի վերապատրաստման, վերաորակավորման դասընթացներ և կշարունակվեն նախկինում սկսած բոլոր ներդրումները:

299. Կոտայքի մարզում գործում է մեկ բարձրագույն ուսումնական հաստատություն՝ Հրազդանի հումանիտար ինստիտուտը, որը ինչպես նաև այդ հաստատությունում գործող <<Մանկավարժություն և մեթոդիկա>>, <<Ֆինանսներ և վարկ>>, <<Իրավագիտություն>> մասնագիտությունները, պետության կողմից հավատարմագրված են: Ինստիտուտը հիմնադրվել է 1996թ.: Բուիը համագործակցում է ԱՄՆ-ի Ֆլորիդա նահանգի Գյուդատնտեսության ու մեխանիկայի և Մոսկվայի ինդուստրիալ համալսարանների հետ: Համալրված է բարձր որակավորում և աշխատանքային մեծ փորձ ունեցող համապատասխան մասնագետներով, որոնց 64 տոկոսը ունեն գիտությունների դոկտորի կամ թեկնածուի գիտական աստիճաններ: Բուին ունի հարուստ գրադարան-ընթերցասրահ՝ հագեցված շուրջ 15 հազ. կտոր ինչպես մասնագիտական, այնպես էլ գեղարվեստական ու մեթոդական գրականությամբ: Արդի պահանջներին համահունչ է նաև

վերջերս ԱՄՆ-ից նվեր ստացած էլեկտրոնային գրադարանը /ավելի քան 20 հազ. անուն ձեռնարկներ և գրքեր/:

7.2 Կրթության ոլորտի զարգացման ռազմավարությունը

300. Ապահովելով կրթության համակարգի արդեն իսկ արձանագրված ձեռքբերումների աստիճանական զարգացումն ու ընդլայնումը՝ կրթության զարգացումներն առավել նպատակային և արդյունավետ դարձնելու համար, ոլորտի հետագա զարգացումներն անհրաժեշտ է իրականացնել ստորև ներկայացվող գերակա ուղղություններով.

1) Բարելավել նախադպրոցական կրթական ծառայությունների մատուցման նյութատեխնիկական և ուսումնանյութական հիմքերը, նախադպրոցական հաստատությունների շենքային պայմանները և այդ նպատակով համապատասխան գումար նախատեսել Հայաստանի Հանրապետության 2015-2018թթ. բյուջետային ծախսերում: Նման աշխատանքների կատարման արդյունքում կավելանան նախադպրոցական հաստատությունների թիվը, մոտ 35%-ով կաճի 3-5 տարեկան երեխաների հաճախումները այդ հաստատություններ:

2) Մեծացնել և ապահովել կրթության մատչելիությունը հատկապես սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների համար նախադպրոցական կրթական ծառայություններում: Առկա հիմնախնդիրը լուծելու համար անհրաժեշտ է նախադպրոցական կրթության հանդեպ ցուցաբերել պետական հոգածություն, իսկ ֆինանսական սուղ հնարավորություններ ունեցող համայնքներին հատկացնել անհրաժեշտ փոխհատուցումներ:

3) Ապահովել նախադպրոցական կրթության կադրերի արդյունավետ մասնակցությունը վերապատրաստման, կատարելագործման և ատեստավորման ծրագրերին:

4) Բարելավել հանրակրթական հաստատություններում համակարգչային գրագիտության դասավանդման որակը:

5) Ընդլայնել ուսումնական գործընթացում տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների՝ որպես ուսուցման և դասավանդման միջոցի կիրառումը:

6) Ակտիվացնել մարզի լավագույն ուսուցիչների խրախուսման աշխատանքները և տարածել նրանց կողմից կիրառվող ուսանելի մանկավարժական փորձը:

7) Նախնական և միջին մասնագիտական կրթության պետական քաղաքականության պատշաճ իրականացման ապահովում:

8) Աջակցել սովորողների՝ երաշխավորված նվազագույն իննամյա կրթությունից անվճար տասներկուամյա (ներառյալ մասնագիտական) կրթությանն անցման գործընթացի իրականացմանը:

9) Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների, ինչպես նաև ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների համար ապահովել որակյալ հիմնական կրթություն ստանալու հնարավորությունը:

10) Բարելավել հանրակրթական դպրոցների շենքային պայմանները՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար դրանք դարձնելով առավել հարմարեցված ու հասանելի:

301. Մարզպետարանի կողմից կատարված կարիքի գնահատման արդյունքների համաձայն այսօր մարզի դպրոցների համար պահանջվում է.

- 1) 7652 աշակերտական սեղան-նստարան,
- 2) 1650 ուսուցչական սեղան, աթոռ,
- 3) 500 գրատախտակ,
- 4) 2240 գրապահարան,
- 5) 50 էլեկտրոնային գրատախտակ,
- 6) 60 անդրադարձնող լապտեր /պրոյեկտոր/:

302. Հանրակրթական դպրոցների շինարարություն և հիմնանորոգում- Մարզի դպրոցական շենքերի և շինությունների հիմնանորոգման և պահպանության խնդիրները, հատկապես հեռավոր համայնքներում, գտնվում են ՀՀ կառավարության և մարզպետարանի ուշադրության կենտրոնում, և յուրաքանչյուր տարի այդ ուղղությամբ ներդրումների ծավալն աճում է:

303. Վերջին երեք տարիներին մարզի հանրակրթական հաստատություններում պետական բյուջեի միջոցներով իրականացվել են զգալի շինվերանորոգման աշխատանքներ: 2012թվականին շահագործման հանձվեց Քասախի թիվ 2 միջնակարգ դպրոցի նոր շենքը՝ 452037.0 հազ. դրամ նախահաշվային արժեքով: Ավելի վաղ 100 աշակերտի համար դպրոցական նոր շենքեր են կառուցվել Հացավան և Գեղարդ համայնքներում: Նուռնուսի, Ջրաբերի, Կաթնաղբյուրի, Սևաբերդի և Զովաշենի դպրոցները տեղակայված են ոչ տիպային հարմարեցված շենքերում, այդ համայնքներում ևս անհրաժեշտ է առաջիկայում կառուցել նոր շենքեր: Հրատապ անհրաժեշտություն է առաջացել Պռոշյան համայնքի դպրոցի նոր մասնաշենքի կառուցման հարցը: Ողջաբերդի դպրոցը կրթական գործունեություն է ծավալում փայտաշեն տնակներում: Այդ հաստատության համար քարաշեն նոր դպրոցի շենքի կառուցումը հասկանալի պատճառով /սողանքային գոտի/ նպատակահարմար չէ:

304. 2014 թվականին շահագործման կհանձնվի Նոր Գեղի Բանավանի դպրոցի նոր շենքը, որի նախահաշվային արժեքը կազմում է 413մլն.676 հազ. դրամ: <<Լինսի>> հիմնադրամի միջոցներով 660.0մլն. դրամ ընդհանուր արժողությամբ հիմնովին վերանորոգվել է Հրազդանի թիվ 12 դպրոցը: Բարեգործական ներդրումների հաշվին ամբողջությամբ հիմնանորոգվել է Չարենցավանի թիվ 3 դպրոցը:

305. Պետական բյուջեի միջոցների հաշվին մարզպետարանի նախաձեռնությամբ 2009-2013թթ. ամբողջությամբ ավարտվեցին հիմնանորոգման աշխատանքները Չարենցավանի N 1 և

Բյուրեղավանի N 1 ավագ, Չարենցավանի N/N 2. 5. 6, Հրազդանի N 4 հիմնական, Գողթ, Արզական, Մեղրաձոր, Մրգաշեն և Ջրվեժ գյուղերի միջնակարգ դպրոցներում:

306. 2011-2013 թվականներին ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից համայնքներում առաջնահերթ խնդիրների (կրթական, մշակութային, մարզական, օբյեկտների հիմնանորոգման, համայնքներում խմելու և ոռոգման ջրագծերի կառուցման, ճանապարհների վերանորոգման) լուծման նպատակով հրատապ I, II, III, IV և V ծրագրերով հատկացվել են գումարներ:

307. Վերջին տարիների ընթացքում տարբեր ծրագրերի շրջանակներում, անհատ բարերարների աջակցությամբ կամ սեփական միջոցների հաշվին մասնակի վերանորոգման և բարեկարգման աշխատանքներ են կատարվել մարզի շուրջ վեց տասնյակ հանրակրթական հաստատություններում: Հիմնականում իրականացվել են տանիքների թիթեղապատման, սանհանգույցների վերանորոգման, լոկալ ջեռուցման իրականացման, լուսամուտների տեղադրման և այլ աշխատանքներ:

308. Հաստատությունների շենքային պայմանները բարելավելու նպատակով մի շարք դպրոցներ համագործակցում են միջազգային բարեգործական կազմակերպությունների հետ: Այդ համագործակցությունը մարզի հանրակրթական հաստատություններին խիստ անհրաժեշտ է, քանի որ ՀՀ պետական բյուջեով նախատեսվող միջոցները դեռևս բավարար չեն դպրոցների վերանորոգման աշխատանքները անհրաժեշտ ծավալով իրականացնելու համար:

309. ՀՀ Կոտայքի մարզի կրթության ոլորտի 2015-2018թթ. ֆինանսավորումը ներկայացված է հավելված 7.1-ում:

8. ՄՇԱԿՈՒՅԹ, ՍՊՈՐՏ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

310. Մշակույթի ոլորտում Կոտայքի մարզում իրականացվող համապետական ծրագրերը պայմանավորված են ՀՀ Կառավարության 2012-2017թթ. գործունեության միջոցառումների ծրագրով, որի «3.2.5. Մշակույթ» բաժնի 5-րդ՝ «<Մշակույթի համաչափ զարգացում>> մասում մարզերում մշակույթի զարգացման ապահովումը դիտարկվում է գործունեության հիմնական ուղղություն:

311. Մարզերում մշակույթի զարգացման խնդիրները ներառված են նաև մի շարք այլ ծրագրերում, մասնավորապես՝ ՀՀ Կառավարության «Հայաստանի Հանրապետության մարզերում մշակույթի զարգացման ծրագիրը հաստատելու մասին>>, «<Ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության, դրա կենսունակության պաշտպանության հայեցակարգից բխող միջոցառումների մասին>> ծրագրերում:

312. Մարզում մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բնագավառների հիմնախնդիրները կապված են հիմնականում մշակույթի տների, գրադարանների, թանգարանների, թատրոնների, երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցների, մանկապատանեկան մարզադպրոցների, պատմամշակութային հուշարձանների և ոչ նյութական մշակութային արժեքների ու արվեստի տարբեր ճյուղերի պահպանման և զարգացման հետ:

313. Տարածքային համաչափ զարգացման նպատակն է՝ իրականացնել միասնական մշակութային քաղաքականություն, համամասնորեն զարգացնել ազգային մշակույթն ու օգտագործել ստեղծագործական ներուժը, ինչպես նաև ազգաբնակչության համար ապահովել մշակութային գործունեություն իրականացնելու և մշակութային ծառայություններից օգտվելու մատչելիություն:

314. Կոտայքի մարզում վերոնշյալ ծրագրերից բխող գործողությունների հիմնական խնդիրներն են.

- 1) մշակութային կազմակերպությունների համաչափ տեղաբաշխման բարելավում, մշակութային կազմակերպությունների բնականոն գործունեության ապահովում՝ նյութատեխնիկական պայմանների բարելավման, շենքերի հիմնանորոգման, ծրագրերի կազմման և իրականացման միջոցով,
- 2) մշակութային կյանքին բնակչության մասնակցության պայմանների, մշակութային գործունեություն իրականացնելու և մշակութային ծառայություններից օգտվելու մատչելիության ապահովում, արդյունքում՝ մշակույթի ոլորտի շահառուների թվի ավելացում,
- 3) միջմարզային մշակութային համագործակցության զարգացում և միասնական մշակութային դաշտի ձևավորում,

4) մշակույթի ոլորտի կադրերի պատրաստման, վերապատրաստման և վերաորակավորման ծրագրերի իրականացում, մարզում մշակութային միջավայրի զարգացման միջոցով մշակույթի ոլորտի մասնագետների՝ մարզից դեպի մայրաքաղաք և արտերկիր տեղի ունեցող արտահոսքի նվազեցում,

5) մշակութային զբոսաշրջության զարգացում՝ պատմամշակութային հուշարձանների օգտագործման, զբոսաշրջային նոր երթուղիների և ազգային արհեստագործական կենտրոնների ստեղծման միջոցով:

315. Մարզում գործում են 1 դրամատիկական և 1 տիկնիկային թատրոններ, 6 թանգարան, 66 գրադարան, 23 արվեստի, գեղարվեստի և երաժշտական դպրոցներ, 52 մշակույթի կենտրոն, մշակույթի տուն և ակումբ, 15 մանկապատանեկան մարզադպրոց, 7 մարզադաշտ և այլ մշակութային ու մարզական կառույցներ:

8.1 Մշակույթ

316. **Գրադարաններ**- Մարզում առկա 66 գրադարաններից 1-ը մարզայինն է, 14-ը՝ քաղաքային և 51-ը՝ գյուղական համայնքների: Մարզի գրադարանային համակարգի գրքային ֆոնդը կազմում է 925670 միավոր գիրք: Մարզի գրադարանների խնդիրները հիմնականում կապված են տարածքների վերանորոգման, գույքի ձեռքբերման, գրքային ֆոնդերի համալրման, նոր տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման հետ:

317. Գրադարանների մեծ մասի շենքային պայմանները անբավարար են, ինչը վտանգում է գրքային ֆոնդի պահպանությունը: Գրապահոցներում բացակայում են հավաքածուների պահպանությունն ապահովող տեխնիկական սարքավորումները:

318. Պետական բյուջեի հատկացումների շրջանակներում, համայնքային գրադարանների հավաքածուները ժամանակակից գրականությամբ համալրելու, տեսականին նորացնելու նպատակով 2013թ. մարզային գրադարանի միջոցով համայնքային գրադարաններին տրամադրվել է 2840 միավոր գրականություն:

319. Անհրաժեշտ է կենտրոնացված կարգով գրադարանների համար պետական բյուջեից հատկացնել ֆինանսական միջոցներ համակարգիչների և ժամանակակից սարքավորումների ձեռքբերման համար:

320. Ծաղկաճորի քաղաքային գրադարանը 2013 թվականին ստացել է հանրայինի կարգավիճակ և «Նյութատեխնիկական բազայի զարգացման» ծրագրով վերազինվել է համակարգիչներով, բազմաֆունկցիոնալ տպիչով, պատճենահանման սարքով, համապատասխան կահույքով (գրապահարաններ, սեղաններ, աթոռներ, գրադարակներ, համակարգչային և

սպասարկման սեղաններ, ցուցափեղկեր), ինչպես նաև համալրվել է նոր գրականությամբ և ապահովվել ինտերնետային կապով:

321. <<Գրադարանների շենքերի հիմնանորոգում>> ծրագրի շրջանակներում 2011-2012թթ. իրականացվել է մարզային գրադարանի շենքի վերանորոգման և ջեռուցման համակարգի գործարկման աշխատանքներ: 2012-2013 թթ. Հայկական գրատպության 500-ամյակի շրջանակներում <<Հանրային գրադարանների նյութատեխնիկական բազայի զարգացման>> ծրագրով Կոտայքի մարզային գրադարանը վերազինվել է մասնագիտացված կահույքով և անհրաժեշտ տեխնիկայով:

322. 2015-2018թթ. առաջնային է համարվում մարզի խոշոր բնակավայրերի՝ Հրազդանի, Աբովյանի, Եղվարդի, Նոր Հաճընի, Բյուրեղավանի համայնքային գրադարանների վերանորոգումը, նոր գույքով համալրումը:

323. Մարզում գրադարանային ծառայությունների բարելավումը ենթադրում է գրադարաններում ժամանակակից տեղեկատվական միջոցների ներդրում, ինտերնետային ցանցին միացում:

324. Գրադարանային ծառայությունների բարելավման ուղղություններից է նաև միասնական գրադարանային ցանցի ստեղծումը, որի կենտրոնը կդառնա Կոտայքի մարզային գրադարանը: Միասնական գրադարանային ցանցում, ըստ առաջնայության, կընդգրկվեն քաղաքային, այնուհետ՝ գյուղական գրադարանները, որոնք նույնպես կապահովվեն էլեկտրոնային եղանակով սպասարկմամբ:

325. Գրադարանային ծառայությունների որակի բարձրացման և տեղեկատվության մատչելիության ապահովման նպատակով գրադարաններում կիրականացվի մարզի բնակչությանը նաև էլեկտրոնային եղանակով տեղեկատվության տրամադրումը:

326. Անհրաժեշտ է իրականացնել աշխատանքներ գրադարանային նոր ծառայությունների մատուցման ասպարեզում, ինչը հնարավորություն կտա ապահովել տեղեկույթի հասանելիությունը և մատչելիությունը հատուկ կարիքներ ունեցող անձանց համար, այդ միջոցով նրանց ինտեգրել հասարակական կյանքին:

327.**Թանգարաններ**-Կոտայքի մարզում գործում են 6 թանգարան, 1 պատկերասրահ, այդ թվում՝ ՀՀ մշակույթի նախարարության ենթակայության Հրազդան քաղաքի երկրագիտական թանգարանը, Աբովյան քաղաքի <<Հայ և ռուս ժողովուրդների բարեկամության>> թանգարանը, Ծաղկաձորի Օրբելի եղբայրների տուն-թանգարանը, <<Գառնի>> պատմամշակութային արգելոց թանգարանը, Հրազդանի պատկերասրահը (Հայաստանի ազգային պատկերասրահի մասնաճյուղ):

328. Համայնքային ենթակայությամբ գործում է Նոր Հաճընի <<Կիլիկիայի հայերի պատմության>> թանգարանը:

329. Մարզի թանգարանների խնդիրները հիմնականում կապված են շենքերի վերանորոգման, անվտանգության համակարգերի ներդրման, նոր գույքի և սարքավորումների ձեռքբերման, ֆոնդերի համալրման, նոր ցուցադրությունների կազմակերպման հետ:

330. 2015-2018թթ. առաջնային են համարվում.

1) Հրազդանի պատկերասրահի շենքի վերանորոգումը, տանիքի վերանորոգումը, ջեռուցման, ջրագծի, անվտանգության համակարգերի տեղադրումը,

2) Հրազդանի պատմաերկրագիտական թանգարանի շենքի տանիքի հիմնանորոգումը, հակահրդեհային և ձայնային ահազանգի համակարգերի տեղադրումը, էլեկտրական և անվտանգության համակարգերի նորոգման, օդափոխման և ջեռուցման համակարգերի ներդնումը,

3) Աբովյանի <<Հայ և ռուս ժողովուրդների բարեկամության>> թանգարանի շենքի վերանորոգումը, օդափոխության և ջեռուցման համակարգերի տեղադրումը:

331. Վերանորոգումից և նյութատեխնիկական բազայի համալրումից հետո հիմնական խնդիրներից է նաև թանգարանային հավաքածուների համալրումը և նոր ցուցադրությունների կազմակերպումը:

332. Թանգարանների աշխատանքներն ավելի արդյունավետ դարձնելու համար նախատեսվում է թանգարաններին կից ստեղծել ազգագրական և արհեստագործական կենտրոններ, թանգարաններ տանող ճանապարհների բարեկարգում, համապատասխան տեղեկատվական ցուցանակների տեղադրում:

333.Պատմամշակութային հուշարձանների պահպանում- Կոտայքի մարզում հաշվառված և ՀՀ Կառավարության 2003 թ. դեկտեմբերի 24-ի N 1793 որոշմամբ հաստատված պետական ցուցակում ընդգրկված է 3208 պատմամշակութային հուշարձան՝ 811 պահպանական միավորով, այդ թվում՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային մշակութային ժառանգության ցանկերում ընդգրկված միջնադարյան Հայաստանի նշանավոր համալիր Գեղարդավանքը, Գառնիի հեթանոսական տաճարը, Կեչառիսի, Թեղենյաց, Նեղուցի Մայրավանքի վանական համալիրները:

334. Մարզում հաշվառված է 2640 ՀՀ պետական սեփականություն համարվող և օտարման ոչ ենթական պատմության և մշակույթի անշարժ հուշարձան:

2006-2014թթ. Կոտայքի մարզում վերականգնման աշխատանքներ են իրականացվել և շարունակվում են իրականացվել թվով 8 հուշարձաններում՝ Բջնի համայնքի «Բջնի ամրոց», Բուժական համայնքի «Թեղենյաց վանք», Գողթ համայնքի «Գեղարդավանք», Կամարիս համայնքի Սբ Հովհաննես եկեղեցի, Սուլակ համայնքի «Մայրավանք», Մեղրաձոր համայնքի «Թեժառույթի վանք», Պտղնի համայնքի «Պտղնավանք», ինչպես նաև Գառնիի Ազատ գետի 11-18 դդ. կամուրջը՝ համատեղ Հայաստանում ԱՄՆ դեսպանատան «ԱՄՆ դեսպանի մշակութային արժեքների պահպանության հիմնադրամի» և մասնավոր հովանավորների ֆինանսական աջակցությամբ:

335. Հուշարձանների տեխնիկական մոնիտորինգի շրջանակներում Մայրավանքի, Մեղրաձորի, Սբ Հովհաննեսի (17-րդ դ.), Զորավանի Զորավորի (7-րդ դ.), Կաթ- աղբյուրի Սբ Աստվածածնի (19-րդ դ.), Եղվարդի (5-րդ դար) եկեղեցիների, Սոլակի, Կարմիր բերդի, Զովունու, «Դովրի» ամրոցների, Զորավանի, Թեժառույքի, Քարաշամբի, Արզականի (12-13-րդ դդ.), Հրազդանի Մաքրավանքի (10-16-րդ դդ.), Արտավազդավանքի (6-7 դդ.), Կարենիսի (6-7-րդ դդ.) վանական համալիրներում, Աղավաձորի Սբ Գևորգ 7-րդ դ. եկեղեցում (ամրոցի տարածքում), Նեղուցի վանքում (10-16-րդ դդ.), Պտղնու տաճարում (6-7դդ. ք.գ.գ.), իրականացվել է հուշարձանների տեխնիկական մոնիտորինգ:

Մարզում իրականացվել են նաև 18 հնագիտական պեղումներ:

336. Մարզում կան նաև մեծարժեք քարեդարյան բացօթյա կայաններ, նախամարդու քարանձավներ, բրոնզեդարյան դամբարանադաշտեր, կիկլոպյան ամրոցներ և միջնադարյան հնագիտական հուշարձաններ, որոնց պեղման արդյունքներով բացահայտվում են տարածքի պատմության և մշակույթի, տնտեսության և կենցաղին վերաբերող արժեքավոր տեղեկություններ:

337. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տնօրինման են հանձնվել ընդհանուր քանակով մարզի 25 վանքեր ու եկեղեցիներ:

338. Մարզում վերջին 20 տարիների ընթացքում վերականգնվել և ամրակայվել են Գառնի պատմահնագիտական արգելոց-թանգարանի տարածքի հուշարձանները, Գեղարդավանքը, Կեչառիսի վանքը, Կապուտանի Կապտավանքը, Եղվարդի եռահարկ Սբ. Աստվածածին եկեղեցին, Ալափարսի և Բջնո Սբ. Աստվածածին եկեղեցիները, Թեղենյաց վանական համալիրը:

339.Ոչ նյութական մշակութային ժառանգություն- Մարզերում ոչ նյութական մշակութային ժառանգության խնդիրները ներառված են Հայաստանի Հանրապետության կառավարության 2013-2017թվականների գործունեության միջոցառումների ծրագրի <<4.4.4. Մշակույթ>> բաժնում, ինչպես նաև ՀՀ Կառավարության 2007թ. մայիսի 3-ի <<Ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության>> հայեցակարգում:

340. Նախատեսվում է մարզի ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանման նպատակով ստեղծել ոչ նյութական մշակութային ժառանգության կրողների վերաբերյալ տեղեկատվական շտեմարանի, կազմակերպել մարզի հանրակրթական դպրոցներում, տարբեր հասարակական կազմակերպություններում ազգագրական երգի ու պարի վարպետության դասընթացներ:

341. Այդ միջոցառումների հիմնական ուղղություններն են.

- 1) ավանդական ժողովրդական արհեստագործական ծրագրերի մշակումը և իրականացումը,
- 2) ազգագրական երգի ու պարի համույթներին աջակցելը,
- 3) ազգային, ավանդական տոների, ծեսերի և ծիսակատարությունների վերականգնումը և իրականացումը,

4) ազգային լեզվի և բարբառների պահպանմանն ու զարգացմանն ուղղված միջոցառումների իրականացումը,

5) ազգագրական և արհեստագործական կենտրոնների ստեղծումը:

342. Վերոնշյալ խնդիրների իրականացման ուղղությամբ հիմնական քայլեր են համարվում վերանորոգված և համապատասխան նյութատեխնիկական միջոցներով համալրված մշակույթի տներում արհեստագործական կենտրոնների հիմնումը, ազգագրական երգի ու պարի համույթներին պետական աջակցությամբ տարազի հագուստներով և երաժշտական գործիքներով ապահովումը, նոր ազգագրական համույթների ստեղծումը:

343.Արվեստ (թատերարվեստ, երաժշտարվեստ, պարարվեստ, կերպարվեստ)- Այս բնագավառի հիմնական խնդիրներն են թատերարվեստի, երաժշտարվեստի, պարարվեստի, կերպարվեստի պահպանումը, զարգացումը և տարածումը, թատերահամերգային կազմակերպությունների գործունեության ապահովումը, ժողովրդական ստեղծագործությանը աջակցության ցուցաբերումը, հասարակության ստեղծագործական ներուժի օգտագործման, վերարտադրման և զարգացման համար պայմանների ստեղծումն ու խթանումը, տարածքային մշակութային համագործակցությունը և մշակութային կյանքի զարգացումը:

344. Առաջնային են մշակույթի տների, կենտրոնների շենքերի վերանորոգումը, բեմերի կահավորումը, լուսաձայնային տեխնիկայի, ջեռուցման և օդափոխման համակարգերի ներդրումը (որի բացակայության հետևանքով տարվա որոշ ամիսներին մշակութային կազմակերպությունները չեն գործում), ինչը հնարավորություն կտա ապահովելու թատերական, համերգային միջոցառումների և հյուրախաղերի իրականացումը:

345. Վերոնշյալ խնդիրների իրականացման ուղղությամբ նախատեսվում է թատերարվեստի ոլորտում մարզում գործող 3 թատրոնների հիմնախնդիրների լուծում, մասնավորապես.

1) Կոտայքի մարզային մշակույթի կենտրոնի շենքի վերանորոգում /որտեղ գործում է Հրազդանի դրամատիկական թատրոնը/, ջեռուցման համակարգի կառուցում, նոր բեմական հագուստի, վարագույրների, փորձասենյակների և գույքի ձեռքբերում: Առաջնային խնդիր է համարվում նաև դահլիճի կահավորումը, ինչպես նաև պետական աջակցությամբ հյուրախաղային գործունեության ընդլայնումը:

2) Աբովյանի մշակույթի պալատի դրամատիկ թատրոնի կարգավիճակի և տիկնիկային թատրոնի տարածքի վերանորոգման, ջեռուցման խնդիրը, օդափոխման համակարգի տեղադրումը, թատրոնի դեկորացիաների և ռեկվիզիտների պահպանման համար օժանդակ և պահեստային սենյակների կազմավորման խնդիրը:

346. 2015-2018 թթ. երաժշտարվեստի և պարարվեստի բնագավառում երաժշտական և պարային համույթների բնականոն գործունեության ապահովման հիմնական խնդիրներն են՝ վերականգնված մշակութային տների և կենտրոնների դահլիճների կահավորումը, ջեռուցման

համակարգերի գործարկումը, լուսաձայնային տեխնիկայով հագեցումը, երաժշտական գործիքների ձեռքբերումը:

347. Մարզում արվեստի զարգացման նպատակով նախատեսվում է պետական աջակցության ցուցաբերում երաժշտական և պարային համույթներին, թատերական խմբերին, կիրառական արվեստի վարպետներին՝ դրամաշնորհային ծրագրերի իրականացման միջոցով:

348. Թատրոնների, մշակութային կենտրոնների և տների բնականոն գործունեության ապահովման նպատակով <<Կրթական, մշակութային օբյեկտների հիմնանորոգում, կառուցում և արդիականացում>> համալիր ծրագրի շրջանակներում ՀՀ մշակույթի նախարարություն է ներկայացվել 2015-2017թթ. ընթացքում վերանորոգման ենթակա մշակույթի տների, ակումբների, երաժշտական և արվեստի դպրոցների ցանկը և նախատեսվող ծախսերի նախահաշիվը:

349. **Գեղարվեստական կրթություն**-Կոտայքի մարզում գործում է 23 մասնագիտական գեղարվեստական կրթական հաստատություն, այդ թվում՝ 8 երաժշտական, 13 արվեստի, 2 գեղարվեստի դպրոց (3514 աշակերտ, 427 մանկավարժ): ՀՀ Կոտայքի մարզի երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներում դասավանդվում են հետևյալ առարկանները՝ դաշնամուր, ազգային, լարային, փողային նվագարաններ, երգեցողություն, ակորդեոն, կիթառ, հարվածային գործիքներ, կերպարվեստ, դեկորատիվ-կիրառական արվեստ, պարարվեստ, դիզայն, թատերարվեստ:

350. Մարզում գործում է 3 հենակետային դպրոց՝ ք. Աբովյանի 2. Սահակյանցի անվան երաժշտական, ք. Հրազդանի Ե. Քոչարի անվան արվեստի և ք. Աբովյանի գեղարվեստի դպրոցները: Դպրոցների մանկավարժական կոլեկտիվի ներուժը համապատասխանում է հենակետային դպրոցների պահանջներին:

351. ՀՀ մշակույթի նախարարության կողմից 2012-2014 թվականներին իրականացվել են մի շարք կրթական ծրագրեր, որոնց մասնակցել են մարզի գեղարվեստական կրթությունն իրականացնող ուսումնական հաստատությունները: 2012-2014 թթ. ուսումնամեթոդական օժանդակություն, վարպետության դասեր է ստացել 1509 աշակերտ և 350 մանկավարժ, վերապատրաստման դասալսումներին մասնակցել է 210 մանկավարժ:

352. «ՀՀ շնորհալի երեխաների տեղեկատվական բանկում» ընդգրկված երեխաներից 2011-2013 թվականներին ՀՀ Կոտայքի մարզից համատեղ համերգ-ստուգատեսներին յուրաքանչյուր տարի մասնակցել է շուրջ երկու տասնյակ շնորհալի երեխա:

353. «Երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցների համար ուսումնական նոր ծրագրերի, դասագրքերի, մեթոդական ձեռնարկների մշակում և հրատարակում» ծրագրով մարզում գործող բոլոր ուսումնական հաստատություններին 2011-2013 թվականներին համապատասխանաբար անվճար բաշխվել է 220, 286, 135, իսկ 2014 թթ. առաջին կիսամյակում՝ 101 գիրք և 10 ձայնասկավառակ:

354. Մարզի դպրոցներում առկա է 79 գործիքի պահանջարկ (ռոյալ, դաշնամուր, ջութակ, ալտ, թավջութակ, շեփոր, ֆլեյտա, կլարնետ, ակորդեոն, քանոն, սանթուր, քամանչա, թառ, ուդ, զուռնա,

պարկապզուկ, պկու, սրինգ): «Հանրապետության երաժշտական և արվեստի դպրոցների համար երաժշտական գործիքների շրջանառու հիմնադրամի» ծրագրի միջոցով 2013 թվականին Աբովյանի 2. Սահակյանցի անվան և գ. Քանաքեռավանի արվեստի դպրոցներին տրամադրվել է պարկապզուկ, ուդ, թառ (գործընթացը շարունակական է):

355. Գեղարվեստական կրթական համակարգում հիմնական խնդիրները կապված են դպրոցների շենքերի վերանորոգման, ջեռուցման համակարգերի ներդրման, նոր գույքի և երաժշտական գործիքների ձեռքբերման, դահլիճների կահավորման, նոր ուսումնամեթոդական գրականության ձեռքբերման հետ:

356. Մշակութային կյանքի կազմակերպում և մշակութային միջոցառումներ- Մարզային մշակութային միջոցառումների կազմակերպման համար վերջին տարիներին պետական բյուջեից մարզպետարանին տարեկան հատկացվել է 2 404.0 հազար դրամ:

357. Մշակութային կյանքի զարգացմանն է նպատակաուղղված ՀՀ մարզերում հանրապետական փառատոների և միջոցառումների կազմակերպումն ու անցկացումը: Մշակութային միջոցառումների կազմակերպման ուղղությամբ պետական աջակցությամբ իրականացվում են մի շարք ծրագրեր, որոնց նպատակն է աշխուժացնել մարզային մշակութային կյանքը, խթանել փորձի փոխանակումները մայրաքաղաքի և մարզերի մշակութային կազմակերպությունների միջև, բնակչությանը ծանոթացնել արվեստի ասպարեզի նոր ձեռքբերումներին:

358. <<Պետական աջակցություն մարզային մշակութային միջոցառումներին>> ծրագրով իրականացվում է <<Մշակութային մարզ>> ենթածրագիրը, որի շրջանակներում կազմակերպվում են Երևանի թատերական և համերգային կոլեկտիվների հյուրախաղերը մարզերում, որոնց կազմակերպումը պայմանավորված է մարզում մշակութային կյանքի և զբոսաշրջության համաչափ զարգացմամբ:

359. Մշակույթի տներ և ակումբներ- Կոտայքի մարզում գործում են 52 մշակույթի կենտրոններ, մշակույթի տներ և ակումբներ:

360. Խոշոր մշակույթի կենտրոններն են մարզկենտրոնում գործող <<Կոտայքի մշակույթի կենտրոնը>>, ինչպես նաև Աբովյանի, Չարենցավանի, Եղվարդի, Նոր Հաճընի, Գառնիի, Զովունիի, Մեղրաձորի, Քասախի համայնքային մշակույթի կենտրոնները:

361. Վերջին տարիներին լրիվ հիմնանորոգվել և մասնակի նորոգվել են մարզի 18 մշակութային օբյեկտները, որոնք կազմում են մշակույթի տների 29 %-ը:

362. Մարզի, հատկապես գյուղական համայնքների մշակույթի տները ոչ բարվոք վիճակում են. ունեն հիմնանորոգման, գույքի համալրման, բնականոն գործունեության ապահովման համար բազմաթիվ խնդիրներ: Մշակույթի տների գործունեության նպատակը մշակութային գործունեության իրականացումն է՝ մշակութային արժեքների ստեղծումը, տարածումը, մշակութային

ծառայությունների մատուցումը: Սակայն մշակույթի տները ամբողջությամբ չեն կարողանում իրականացնել նշված գործառույթները՝ չունենալով համապատասխան պայմաններ և հաստիքներ:

363. Մարզի 2015-2018թթ. ռազմավարության իրականացման համար պահանջվող ֆինանսական միջոցների ծավալները ներկայացված են հավելված 8.1-ում:

8.2 Սպորտ

364. Սպորտի բնագավառում մարզպետարանի կողմից իրականացվող քաղաքականությունը բխում է <<Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին>>, <<Մանկապատանեկան սպորտի մասին>> ՀՀ օրենքների և <<Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացման>> 2013-2017թթ. ՀՀ կառավարության ծրագրի դրույթներից:

365. Կոտայքի մարզում գործում են մարզպետարանի, համայնքային և գերատեսչական ենթակայության 15 մարզադպրոցներ, որոնցից 2-ը՝ մարզային ենթակայության, 2-ը՝ <<Սևան գյուղական մարզական ընկերության>>, 7-ը՝ համայնքային և 4-ը՝ հանրապետական ենթակայության: Պարապմունքներն անցկացվում են 23 մարզաձևերից, որոնցից 16-ը՝ օլիմպիական: Մարզում լայն տարածում ունեն սամբո, ձյուդո, ազատ ոճի ըմբշամարտ, բազկամարտ, բռնցքամարտ, շախմատ, ատլետիկա, ֆուտբոլ, մականախաղ, դահուկային սպորտի մարզաձևերը:

366. Մանկապատանեկան մարզադպրոցներում մարզվում են 5400 պատանիներ ու աղջիկներ: Շուրջ 5000 դպրոցականներ էլ պարապում են մարզական ակումբներում և հանրակրթական դպրոցների արտադասարանական մարզական խմբակներում:

367. Մարզական հերթափոխի ձևավորման համար կատարվում են համապատասխան աշխատանքներ. կազմակերպվում են զանազան մրցումներ ու ստուգատեսներ: Այդ հաստատություններում ընդգրկված սաները հաջողությամբ մասնակցում են հանրապետական ու միջազգային առաջնություններին: Մարզի ներկայացուցիչները բարձր նվաճումների են հասել միջազգային ասպարեզում, նրանց թվում են.

Հռիփսիմե Խուրշուդյանը – ծանրամարտի Աշխարհի առաջնության և օլիմպիական խաղերի բրոնզե մեդալակիր, Էլեն Գրիգորյանը – ծանրամարտի Եվրոպայի առաջնության արծաթե մեդալակիր, Սամվել Գրիգորյանը – ծանրամարտի Աշխարհի ուսանողական խաղերի արծաթե մեդալակիր, Վաչիկ Վարդանյանը – սամբոյի Աշխարհի և Եվրոպայի չեմպիոն, Կորյուն Սողոմոնյանը – բռնցքամարտի Եվրոպայի երիտասարդական առաջնության հաղթող, Արսեն Հարությունյանը, Աբրահամ Սարկսյանը – Ձմեռային օլիմպիական խաղերի լեռնադահուկային մարզաձևի մասնակիցներ:

368. Տեղական ինքնակառավարման մարմինները, համագործակցելով մարզպետարանի հետ, լուրջ ուշադրություն են դարձնում նախադպրոցական, դպրոցական, արտադպրոցական և այլ

ուսումնական հաստատություններում ֆիզիկական կուլտուրայի ուսուցման գործընթացին: Սակայն այս ոլորտում զգալի են անելիքները: Կարևոր է նաև համայնքների ազգաբնակչության հետ ֆիզկուլտուրային-առողջարարական և մարզական զանգվածային միջոցառումների կազմակերպումը, ինչպես նաև մանկապատանեկան մարզադպրոցների ցանցի ընդլայնումը և ավանդական մարզաձևերի զարգացումը:

369. Ոլորտի զարգացման գերակա ուղղություններ են՝ մարզում ֆիզիկական դաստիարակության որակի բարձրացումը, առողջ ապրելակերպի քարոզչությունը, մատաղ սերնդի ռազմահայրենասիրական դաստիարակությունը:

370. Վերջին տարիներին վերանորոգվել են Գառնիի մենապայքարային մարզաձևերի օլիմպիական, Հրազդանի մականախաղի և շախմատի օլիմպիական, Աբովյանի և Հրազդանի համայնքային մանկապատանեկան մարզադպրոցները, <<Սևան>> մարզական ընկերության Քասախի ծանրամարտի մարզադպրոցը: 2014 թվականի ընթացքում կավարտվի Եղվարդի մանկապատանեկան մարզադպրոցի նոր շենքի կառուցումը: Ընթացքի մեջ են Չարենցավանի համայնքային մանկապատանեկան մարզադպրոցի նոր շենքի կառուցման շինարարական աշխատանքները:

371. Մարզում գործող մարզադպրոցների, մարզակառույցների և խաղահրապարակների 60 տոկոսը դեռևս կարիք ունեն վերանորոգման, իսկ 80 տոկոսը՝ համապատասխան մարզագույքով համալրման:

372. Մարզում սպորտի զարգացման համար անհրաժեշտ է 2015-2018 թվականներին շարունակել մարզակառույցների հիմնանորոգման և նոր մարզահամալիրների կառուցման աշխատանքները, ինչպես նաև պայմաններ ստեղծել մանկապատանեկան և մասսայական մարզաձևերի զարգացման համար:

373. Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացման համար կարևորվում է.

- 1) մարզիչ-մանկավարժների պատրաստումը և վերապատրաստումը,
- 2) մարզադպրոցներին և հանրակրթական դպրոցներին անհրաժեշտ մարզագույքով ապահովումը,
- 3) մարզական մասսայական միջոցառումների անցկացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացումը,
- 4) մարզադպրոցներում աշխատող մարզիչ-մանկավարժների և ղեկավար կազմի սոցիալական վիճակի բարելավումը:

8.3. Երիտասարդության հարցեր

374. Մարզի ազգաբնակչության 25.8 %-ը կազմում է երիտասարդությունը, որն ունի իրեն բնորոշ արժեքային համակարգ և բազմաթիվ հիմնախնդիրներ:

375. Պետության քաղաքականությունն այս ոլորտում սոցիալ-տնտեսական, իրավաքաղաքական, հոգևոր-մշակութային, կենսագործունեության պայմանների ու երաշխիքների ապահովումն է՝ երիտասարդների կայացման, առողջ ապրելակերպի ապահովման, նրանց ստեղծագործ ներուժը հասարակության շահերին առավել լիարժեք ծառայեցնելու համար:

376. Երիտասարդության շրջանում առկա սոցիալ-տնտեսական, կրթական, մարզամշակութային, առողջապահական և այլ խնդիրների լուծման նպատակով մարզպետարանը և տեղական ինքնակառավարման մարմինները որոշակի աշխատանքներ են իրականացնում՝ համագործակցելով ՀՀ սպորտի և երիտասարդության նախարարության և այլ գերատեսչությունների, ինչպես նաև մի շարք հասարակական կազմակերպությունների հետ:

377. Միջին մասնագիտական և բարձրագույն կրթություն ստանալու համար մարզի երիտասարդության հնարավորությունները համեմատաբար բարենպաստ են, քանի որ մարզը մայրաքաղաքին մոտ է գտնվում: Սակայն նույնիսկ բարձրագույն կրթությունն այսօր կենսապահովման համար անհրաժեշտ եկամտի աղբյուր հանդիսացող աշխատանքի ձեռքբերման լիարժեք նախադրյալ չէ:

378. Սոցիալական առումով խոցելի է հատկապես գյուղական երիտասարդության զբաղվածության վիճակը: Նրանք հիմնականում զբաղված են գյուղատնտեսական արտադրության մեջ: Ոչ մշտական զբաղվածության և միապաղաղ առօրյայի հետևանքով երիտասարդներից շատերը դիմում են արտագնա աշխատանքի: Զբաղվածության առումով լուրջ խնդիրներ ունի նաև քաղաքաբնակ երիտասարդությունը, քանի որ նախկին արդյունաբերական հզոր կենտրոններ հանդիսացող Հրազդան, Աբովյան, Զարենցավան քաղաքների գործարանների մեծ մասը դադարեցրել են իրենց գործունեությունը, իսկ գործող առանձին կազմակերպությունները կամ արտադրամասերը սահմանափակ քանակությամբ աշխատատեղեր են ապահովում:

379. Երիտասարդության կենսագործունեությունն ապահովող հիմնական գործոններից մեկն էլ ժամանցի կազմակերպումն է, որի պատշաճ և արդյունավետ իրականացման համար վերջին տարիներին դրական քայլեր են կատարվել, սակայն դրանք դեռևս հեռու են բավարար լինելուց:

380. Այս բնագավառում կարևոր դերակատարություն ունի Կոտայքի մարզային <<Երիտասարդական կենտրոնը>>: Այն նպատակ է հետապնդում Հայաստանի Հանրապետությունում երիտասարդության հարցերով պետական քաղաքականության մշակմանն ու իրականացմանը մասնակից դարձնել մարզի առավել մեծ թվով երիտասարդների և ոլորտում գործող շատ կազմակերպությունների: Կոտայքի Երիտասարդական կենտրոնում իրականացվում են տարաբնույթ միջոցառումներ և հանդիպումներ:

381. Կենտրոնը աշխատանքներ է իրականացնում մարզային երիտասարդական համալիրների, ինչպես նաև երիտասարդներին հուզող խնդիրների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման, համակարգման և հրապարակման ուղղությամբ:

382. Երիտասարդության հարցերով պետական քաղաքականությունը մարզում առավել արդյունավետ և համակողմանի իրականացնելու նպատակով ՀՀ Կոտայքի մարզպետի որոշմամբ 2014 թվականին ստեղծվել է ՀՀ Կոտայքի մարզպետին առընթեր երիտասարդական խորհուրդ, հաստատվել են խորհրդի անհատական կազմը և կանոնադրությունը: Խորհրդի հիմնական նպատակը մարզում երիտասարդական քաղաքականության համակարգված ու նպատակային իրականացմանն աջակցելն է, հանրային կյանքի տարբեր բնագավառներում երիտասարդների մասնակցությունը խթանելն ու երիտասարդական կազմակերպությունների գործունեությանը նպաստելը:

383. Մարզում մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բնագավառներում զարգացման հիմնական գերակայություններն են.

- 1) մարզի մշակույթի ու սպորտի ոլորտների զարգացում՝ պետական աջակցության ընդլայնմամբ,
- 2) ոլորտի կադրերի վերապատրաստում և վերաորակավորում,
- 3) նյութական և ոչ նյութական մշակութային արժեքների հավաքածուների համալրում, պահպանություն ու ներկայացում հասարակությանը,
- 4) մշակութային ու մարզական շենքերի ու շինությունների հիմնանորոգում,
- 5) պատմական հուշարձանների պահպանություն, ամրակայում, նորոգում, վերականգնում և բարեկարգում,
- 6) միջմարզային մշակութային համագործակցության զարգացում և միասնական մշակութային դաշտի ձևավորում,
- 7) մշակութային կյանքին բնակչության մասնակցության հնարավորությունների, մշակութային գործունեություն իրականացնելու և մշակութային ծառայություններից օգտվելու մատչելիության ապահովում, արդյունքում՝ մշակույթի ոլորտի շահառուների թվի ավելացում,
- 8) մարզի մշակութային արժեքների հավաքածուների և արխիվային ֆոնդերի պահպանման պայմանների բարելավում,
- 9) մշակութային կազմակերպությունների միջև էլեկտրոնային ներքին ցանցի ստեղծում,
- 10) ոլորտի կառույցներում ժամանակակից տեխնիկական սարքավորումների հագեցվածության ապահովում,

- 11) աջակցություն մարզային երիտասարդական կենտրոնի գործունեությանը և համայնքային երիտասարդական կենտրոնների ստեղծման աշխատանքներին,
- 12) երիտասարդությանը սոցիալական, իրավաբանական, կազմակերպչական ծառայությունների մատուցում,
- 13) մշակույթի, սպորտի և երիտասարդության ոլորտում աշխատողների սոցիալական վիճակի բարելավում /աշխատավարձի դրույքաչափերի բարձրացում/:

384. Մարզի սպորտի ոլորտի 2015-2018թթ. ռազմավարության իրականացման համար պահանջվող ֆինանսական միջոցների ծավալները ներկայացված են հավելված 8.2-ում:

9. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

9.1 Առողջապահության ոլորտի իրավիճակի վերլուծություն

385. Կարևորելով առողջապահության ոլորտի դերը Կոտայքի մարզի սոցիալ-տնտեսական զարգացման ասպարեզում՝ առաջնայինը առողջապահական ծառայությունների մատչելիության և որակի համաչափ բարձրացման խնդիրն է: Ոլորտում գերակա է համարվում առաջնային բուժօգնությունը, իսկ ծրագրային մակարդակով՝ հատուկ կարևորվում են մոր և մանկան առողջության պահպանումը, մանկական հիվանդանոցային և շտապ օգնության ծառայությունների արդիականացումը, ինչպես նաև վարակիչ և կառավարելի ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման խնդիրները: Դրված նպատակների ապահովման հարցում առողջապահության ոլորտում անհրաժեշտ են լրացուցիչ պետական ծախսերի ներգրավում և համակարգի արդյունավետ կառավարմանն ուղղված բարեփոխումներ:

386. Մարզում առաջնային բուժօգնության ոլորտում որակյալ բժշկական ծառայությունների գործընթացի համաչափությունն ապահովելու ուղղությամբ վերջին տարիներին ձեռնարկվել են մի շարք միջոցառումներ: Ամբուլատոր-պոլիկլինիկական օղակում 2000-2013 թվականների ընթացքում Համաշխարհային բանկի վարկային ծրագրերով կատարվել է շուրջ 960.0 մլն. դրամի ներդրում, որի արդյունքում կառուցվել (հիմնանորոգվել) և արդի բժշկական սարքավորումներով ու կահավորանքով են հագեցվել մարզի 23 առողջության առաջնային պահպանման կենտրոնները, ընտանեկան բժշկության մասնագիտացման ծրագրով մասնագիտացել են 140 բժիշկ և 161 բուժքույր: ԱԱԴ համակարգում աշխատող բոլոր բժիշկներն ունեն ընտանեկան բժշկի որակավորում:

387. Մարզային առողջապահությանը բնորոշ են առանձնահատկություններ, որոնք պայմանավորված են գյուղերում ապրող բնակիչների դեմոգրաֆիկ ցուցանիշներով: Գյուղական բնակավայրերում բնակչությունը համարվում է <<ծերացած>>, քանի որ 60-ից բարձր տարիքի

անձանց տեսակարար կշիռը 12%-ից ավելի է: Բնակչության ծերացման պայմաններում մեծանում են բնակչության՝ խրոնիկական հիվանդություններով հիվանդացության և մահացության ցուցանիշները, փոխվում է այդ ցուցանիշների սեռատարիքային կառուցվածքը: Ավելանում է նաև բժշկա-սոցիալական օգնության կարիք ունեցողների թիվը, փոփոխվում է աշխատունակ և կենսաթոշակային տարիքի բնակչության բնականոն հարաբերակցությունը, որը նպաստում է պետական սոցիալական բեռի մեծացմանը և հանգեցնում է սոցիալ- տնտեսական անցանկալի հետևանքների: Հետևաբար Կոտայքի մարզի գյուղական բնակավայրերում բնակչությանը պետական պատվերի շրջանակներում մատուցվող որակյալ արտահիվանդանոցային բուժօգնության համաչափության ապահովումը հանդիսանում է գերակա խնդիր:

388. Նախորդ տարիներին որպես ծրագրային խնդիր առաջնահերթություն է տրվել նաև մոր և մանկան բժշկական ծառայության բարելավմանը: Նախորդ 4 տարիների ընթացքում գրանցվել է մայրական մահացության 1 դեպք (2012թ.- 0.04 %), իսկ մանկական մահացության ցուցանիշը զգալիորեն նվազել է. 2011թ. գրանցվել է 51 դեպք, իսկ 2012թ.` 43 դեպք: 0-4 տարեկանների մոտ մանկական մահացությունը 1000 կենդանի ծնվածի հաշվով ևս նվազել է. 2011թ. կազմել է 16.4% (2012թ.- 12.4%): Մանկական հաշմանդամության ցուցանիշը նախորդ 3 տարիներին հետևյալն է՝ 2011թ.-644, 2012թ.- 637, 2013թ.- 635, որից՝ 67 առաջնակի:

389. Ընդհանուր (ամբուլատոր-պոլիկլինիկական) հիվանդացության ցուցանիշները 100000 բնակչի հաշվով 0-18 տարեկանների շրջանում կազմել է՝ 2011թ. – 995 ‰, 2012թ. - 1445‰ , 2013թ. - 1448‰ , 18 տարեկանից բարձր տարիքային խմբերում՝ 2011թ. - 777‰ , 2012թ.- 1253‰ , 2013թ. - 958‰:

390. Ընդհանուր (ամբուլատոր-պոլիկլինիկական) մահացության ցուցանիշները 100000 բնակչի հաշվով 0-18 տարեկանների շրջանում կազմել է՝ 2012թ -15‰ , 2013թ.- մինչև 7‰ , 18 տարեկանից բարձր տարիքային խմբերում՝ 2012թ - 5.0‰ , 2013թ.- 5.0‰: Բնակչության ընդգրկումը ստացիոնար բուժմամբ կազմել է՝ 2011թ -3.9%, 2012 թ.-3.3 % , 2013թ.- 3.73%: Հիվանդանոցային մահացության ցուցանիշը 2012թ. կազմել է 129 (1.2%) , 2013թ.` 92 (0.8%):

391. <<2007-2015 թվականների տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային ծրագրի>> շրջանակներում հակատուբերկուլոզային ծառայությունը կազմակերպվել և իրականացվել է մարզի 4 բժշկական կենտրոնների տուբերկուլոզի դեմ պայքարի կաբինետներում: Նախորդ տարիների ընթացքում մարզում հակատուբերկուլոզային բուժում ստացող հիվանդների վերաբերյալ վիճակագրական տվյալները հետևյալն են՝ 2012թ.-128 հիվանդ, 2013թ.-151 հիվանդ, որոնցից առաջնակի հիվանդներ՝ 117 (2012թ.-93), ռեցիդիվներ՝ 39 (2012թ.-9), ԴԿ տուբերկուլոզով հիվանդներ՝ 24 (2012թ.-34), տվյալ հիվանդությունից մահացածներ՝ 5 (2012թ.-5): Տուբերկուլոզով հիվանդացության ցուցանիշը կազմել է 53 հիվանդ 100000 բնակչի հաշվով (2012թ.` 45 հիվանդ 100000 բնակչի հաշվարկով):

392. ՀՀ-ում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին հակազդման Ազգային ծրագրի պահանջների համաձայն Կոտայքի մարզի 8 առողջապահական ընկերություններում գործել են ՄԻԱՎ-ի նկատմամբ

կամավոր խորհրդատվության և հետազոտության կետեր (ԿԽՀ), որտեղ իրականացվում են այցելուների կամավոր նախաթեստային և հետթեստային խորհրդատվություններ, ՄԻԱՎ-թեստավորում: 2013թ. 9 ամիսների ընթացքում Կոտայքի մարզի ԿԽՀ կետերում ՄԻԱՎ-ի նկատմամբ թեստավորվել է շուրջ 5600 անձ (2012թ.-5098 անձ); 2013 թվականի ընթացքում մարզում արձանագրվել է ՄԻԱՎ վարակի 14 դեպք (2012թ.-15դեպք): Ընդհանուր արձանագրված դեպքերի մեջ Կոտայքի մարզում արձանագրված դեպքերը 97-ն են (ըստ տարածվածության՝ ՀՀ-ում 7-րդ ցուցանիշ): ՀՀ-ում ՄԻԱՎ վարակի արձանագրված ընդհանուր դեպքերի մեջ (100000 բնակչի հաշվով) 38-ը գրանցվել է Կոտայքի մարզում (ՀՀ-ում՝ 10-րդ ցուցանիշ): 2013 թվականի ընթացքում արձանագրվել է ՁԻԱՀ-ի 9 դեպք (2012թ.-9): Մարզում արձանագրված ՁԻԱՀ-ի ընդհանուր դեպքերի քանակը 57 է, որը կազմում է ՀՀ-ում արձանագրված ՁԻԱՀ-ի ընդհանուր դեպքերի 7%-ը:

393. Ամբուլատոր-պոլիկլինիկական ծառայությունում առաջնակի գրանցված վարակիչ մակաբուժական հիվանդացության ելակետային պատկերը հետևյալն է՝ 2013 թվականի ընթացքում մարզում ամբուլատոր առաջնակի գրանցված վարակիչ մակաբուժական հիվանդությունների թիվը կազմել է 2667 (2012թ.- 3555), հիվանդանոցից դուրս գրված վարակիչ և մակաբուժական հիվանդությունների թիվը՝ 515 (2012թ.-562), այդ թվում՝ աղիքային վարակներ՝ 449 (2012թ.- 506), վիրուսային հեպատիտ՝ 17 (2012թ.-15), այլ վարակիչ հիվանդություններ՝ 49 (2012թ.-40): Հիվանդանոցային համակարգում նույն ժամանակահատվածում հոսպիտալացվել, այդ թվում այլ բուժհաստատություններ են տեղափոխվել վիրուսային հեպատիտով՝ 25 (2012թ.-15), աղիքային վարակիչ հիվանդություններով՝ 547 (2012թ.- 495), սիբիրյան խոցով՝ 1 և բրուցելյոզով՝ 43 հիվանդներ: Բոտուլիզմի դեպքեր չեն արձանագրվել:

394. Էկզոգեն աղբյուրներից թունավորման դեպքերի ելակետային պատկերը հետևյալն է՝ 2013թ. այն կազմել է 230 (2012թ.-228, 2011թ.-200), թունավորված անձանց թիվը՝ 273, այդ թվում՝ սննդային - 60/65, ալկոհոլային -38/38, դեղորայքային -63/63. քիմիական նյութերից-33/34, շմոլ գազից -16/41, այլ աղբյուրներից թունավորումները - 20/26:

395. Հիվանդանոցային ծառայության ելակետային իրավիճակը. մահճակալային ֆոնդը 250 է, որից թերապևտիկ պրոֆիլի՝ 75, վիրաբուժական՝ 58, ինֆեկցիոն՝ 22, մանկաբարձագինեկոլոգիական՝ 95: Հիվանդանոցային բուժօգնություն ստացածների թիվը 2013թ. կազմել է 10959 (2012թ.-10559), որոնցից 8904-ը՝ (կամ 81%, 2012թ.-7548) պետական պատվերի շրջանակներում և 2055-ը՝ (կամ 19%, 2012թ.-1943) վճարովի հիմունքներով: Իսկ վիրահատությունների թիվը կազմել է 2197 (2012թ.-1731):

396. **Ֆինանսական հոսքերը.** 2013 թվականին մարզի առողջապահական ընկերություններում իրականացվել է 2 մլրդ. 340 մլն. 440 հազ. դրամի (2012թ. փաստացի ծավալները - 2 մլրդ. 372 մլն. դրամ) բժշկական օգնություն և սպասարկում, որից հիվանդանոցային բուժօգնություն՝ 823 մլն. 897 հազ. դրամ (2012թ. - 835 մլն 242 հազ. դրամ), արտահիվանդանոցային բուժօգնություն՝ 1 մլրդ. 515 մլն. 872 հազար դրամ (2012թ. - 1 536.680 հազ. դրամ): Անցած ժամանակահատվածում

պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում առողջապահական համակարգի ֆինանսավորումն իրականացվել է 100% -ով:

397. Մարզի առողջապահական ընկերություններում 2013 թվականին վճարովի բժշկական ծառայություններից, տարածքների վարձակալումից և օրենքով չարգելված այլ եղանակներով ստացված եկամուտները կազմել են մոտ 320 մլն. դրամ (2012թ.- 291 մլն. դրամ, 2011թ.-265 մլն. դրամ, 2010թ -228 մլն. դրամ): Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում մարզի առողջապահական ընկերությունների 2013 թվականի փաստացի և 2014 թվականին նախատեսվող ֆինանսավորման համեմատական ըստ հիմնական ծառայությունների տեսակների ներկայացված է աղյուսակ 9.1-ում.

Աղյուսակ 9.1

հազ. դրամ

Ծառայության տեսակը	2013թ.	2014թ.	Տարբերությունը /+, -/
արտահիվանդանոցային ծառայություններ	1515872.0	1531049.0	15177.0
հիվանդանոցային ծառայություններ	823897.0	977154.0	153257.0
Ընդամենը	2339769.0	2508203.0	168434.0

9.2 Առողջապահության ոլորտի զարգացման հիմնական ուղղությունները

398. Ոլորտում իրականացվող քաղաքականությունն ուղղված է լինելու հանրային առողջապահական ծառայությունների մակարդակի բարձրացմանը, հիվանդությունների կանխարգելմանը, առողջ կենսակերպի համար անհրաժեշտ պայմանների ստեղծմանը: Ոլորտում իրականացվող ծրագրերը նպատակ են ունենալու ապահովել առողջապահական ծառայությունների որակը, մատչելիությունը, հասանելիությունը: Առողջության առաջնային պահպանման, մոր և մանկան առողջության, վերարտադրողական առողջության պահպանման ծառայությունները լինելու են ոլորտի առաջնահերթությունները:

399. Վերը թվարկված ուղղություններով հանրային առողջապահական ծառայությունների որակի բարելավման նպատակով անհրաժեշտ է.

1) Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից իրականացվող հանրային առողջապահության միասնական պետական քաղաքականության մշակում և իրականացում, օրենսդրական դաշտի բարելավում,

2) իրականացնել վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելմանն ուղղված միջոցառումներ, բարելավել հանրային առողջապահության ոլորտում արտակարգ իրավիճակներին արձագանքելու գործընթացը,

3) զարգացնել լաբորատոր համակարգը,

4) առողջության առաջնային պահպանման համակարգում հիմնական շեշտը դնել առողջ ապրելակերպի քարոզչության և առողջության պահպանման վրա,

5) համակարգում ներգրավված աշխատողների առողջության պահպանման նպատակով ապահովել աշխատանքային անվտանգ պայմաններ՝ հիմնական կանոնների ու նորմերի կիրառմամբ:

400.Բժշկական օգնության և սպասարկման որակի բարելավում- Խնդրի լուծման համար նախատեսվող միջոցառումներն են.

1) բժշկական ծառայությունների որակի կառավարման նպատակով հիվանդությունների ճշգրիտ և վաղ ախտորոշումը, որակյալ բուժումը, ինչպես նաև վերականգնողական շրջանի պատշաճ վարումը ապահովելու նպատակով ՀՀ առողջապահության նախարարության հետ համատեղ ներդնել ապացուցողական բժշկության վրա հիմնված բժշկական օգնության տրամադրման չափորոշիչներ,

2) հիմնանորոգել և սարքավորումներով հագեցնել Հրազդանի մարզային արյան բանկը,

3) ամբողջությամբ հիմնանորոգել և արդիականացնել մարզի հիվանդանոցային համակարգը՝ Նաիրիի, Չարենցավանի բժշկական կենտրոնները, Աբովյանի ծննդատունը, Գառնիի առողջության կենտրոնը,

4) շարունակել գյուղական բնակավայրերի առողջության առաջնային պահպանման օղակի՝ մասնավորապես Քաղսիի, Կապուտանի, Արագյուղի, Զառի, Նոր Երզնկայի առողջության առաջնային կենտրոնների արդիականացման գործընթացը,

5) քաղաքային պոլիկլինիկաների՝ նորագույն սարքավորումներով վերազինման գործընթացը համարել ոլորտի գերակա խնդիրներից մեկը,

6) արդիականացնել ախտաբանաանատոմիական ծառայությունները,

7) իրականացնել առողջապահության ոլորտում միասնական էլեկտրոնային համակարգի ներդրման աշխատանքներ,

8) ավարտել շտապ բժշկական օգնության ծառայության արդիականացման գործընթացը՝ ամբողջությամբ թարմացնել ավտոպարկը, ծառայությունը հագեցնել անհրաժեշտ ժամանակակից սարքավորումներով, ապահովել անձնակազմի շարունակական վերապատրաստումը:

401.Բժշկական օգնության մատչելիության ապահովում- Անհրաժեշտ միջոցառումներն են.

1) ՀՀ առողջապահության նախարարության հետ համատեղ ընդլայնել առողջապահության ոլորտի ֆինանսավորման հնարավորությունները (առաջարկություններ ներկայացնել ֆինանսավորման նոր մեխանիզմների մշակման, պետական պատվերի տրամադրման ընթացակարգերի վերանայման, ինչպես նաև բժշկական ապահովագրության համակարգի կիրառման շրջանակները բնակչության որոշակի խմբերի համար ընդլայնելու ուղղությամբ),

2) ոլորտում կարևորել բնակչության անապահով և սոցիալապես առավել խոցելի խմբերի համար բժշկական ծառայությունների մատչելիության բարձրացման խնդիրը,

3) առողջության առաջնային պահպանման բժշկի գործառույթները առավելագույնս ուղղել հիվանդությունների վաղ հայտնաբերմանն ու կանխարգելմանը՝ սկրինինգային ծրագրերի իրականացման, իմունականխարգելման գործընթացի բարելավման և այլ կանխարգելիչ ծրագրերի իրականացման միջոցով:

402. Մոր և մանկան առողջության պահպանման ծառայությունների բարելավում-խնդրի լուծման համար անհրաժեշտ միջոցառումներն են.

1) Ուժեղացնել մոր և մանկան առողջության առաջնային պահպանման համակարգում կանխարգելիչ ծրագրերի իրականացումը՝ մասնավորապես նորածնային սկրինինգային, իմունականխարգելման, հղիության վաղ հայտնաբերման, հաշվառման և վարման, անտենատալ շրջանում պտղի արատների հայտնաբերման ասպարեզում,

2) երեխաների սնուցման վիճակի բարելավմանն ուղղված համալիր միջոցառումների իրականացում,

3) մոր և մանկան առողջության պահպանման ոլորտում տրամադրվող բուժօգնության որակի, մատչելիության ու հասանելիության բարելավում, անպտղության կանխարգելմանը և այդ խնդրի հաղթահարմանն ուղղված ծրագրերի իրականացում:

403.Առողջապահական կադրային ներուժի ապահովում-Նախատեսվող միջոցառումներն են.

1) Բուժաշխատողների մասնագիտական գիտելիքների և հմտությունների շարունակական բարելավմանն ուղղված, այդ թվում՝ արտերկրի առաջատար կլինիկաներում մասնագետների վերապատրաստումների կազմակերպման և շարունակական մասնագիտական զարգացման համակարգի ներդրման միջոցով հետևողական աշխատանքների իրականացում,

2) մարզային առողջապահական կազմակերպությունները որակյալ կադրերով ապահովելու և բժշկի աշխատանքը մարզում հնարավորինս խրախուսելու համար տեղական ինքնակառավարման մարմինների օժանդակությամբ արտոնյալ կենցաղային պայմանների ստեղծում,

3) ՀՀ առողջապահության նախարարության և այլ գերատեսչությունների հետ համատեղ աշխատանքներ իրականացնել բուժաշխատողների պաշտպանվածության մակարդակի բարձրացման ուղղությամբ (սոցիալական և իրավական պաշտպանվածության երաշխիքների ապահովում),

4) առողջապահության ոլորտի աշխատուժի որակավորման, հսկողության, շարունակական մասնագիտական զարգացման ապահովման նպատակով ապահովել մասնագիտական հասարակական կազմակերպությունների մասնակցությունը:

404. Դեղերի և բժշկական նշանակության ապրանքների անվտանգության, արդյունավետության և որակի ապահովում-Անհրաժեշտ միջոցառումներն են.

1) Ապահովել անվտանգ, արդյունավետ, որակյալ և մատչելի դեղերի առկայությունը ոլորտում՝ գնումների գործընթացի ապահովման, դեղերի շրջանառության բոլոր փուլերի կանոնակարգման, պետական վերահսկողության բարելավման և այլ համալիր միջոցառումների միջոցով,

2) ՀՀ առողջապահության նախարարության հետ համատեղ բարելավել սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկված անձանց, ինչպես նաև ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի N 1717-Ն որոշմամբ հաստատված հիվանդությունների ցանկում ընդգրկված հիվանդություններով տառապող անձանց դեղապահովումը:

405. Մարզի առողջապահության ոլորտի 2015-2018թթ. ռազմավարության իրականացման համար պահանջվող ֆինանսավորումը ներկայացված է հավելված 9.1-ում:

10. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

10.1 Սոցիալական պաշտպանության ոլորտի իրավիճակի վերլուծություն

406. Կոտայքի մարզում գործում են մարզպետարանի աշխատակազմի 4 սոցիալական ծառայությունների տարածքային գործակալություններ, Սոցիալական ապահովության պետական ծառայության (ՍԱՊԾ) տարածքային 4 բաժիններ, <<<< Բժշկասոցիալական փորձաքննության>> գործակալության Կոտայքի մարզային 1 հանձնաժողով (ԲՄՓՀ), Զբաղվածության պետական գործակալության տարածքային 4 կենտրոններ (այսուհետ՝ զբաղվածության տարածքային կենտրոն), Բյուրեղավանի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ 1 հաստատություն, ՍՕՍ մանկական գյուղ <<Կոտայք>> ոչ պետական մանկատունը Կոտայք համայնքում, <<Սաթենիկ>> բարեգործական հասարակական կազմակերպության տուն-ինտերնատը Աբովյան քաղաքում և <<Առաքելություն Հայաստան>> հասարակական բարեգործական կազմակերպության 2 ճաշարաններ:

407. Պետական քաղաքականության նպատակը հասարակության անդամների բարեկեցության բարձրացումն է արդյունավետ կենսապայմանների շարունակական բարելավման, մարդու իրավունքների և ազատությունների՝ տնտեսական, սոցիալական, իրավական պաշտպանության միջոցով: Հասարակական կյանքում սոցիալական բնագավառը էական դեր ունի մարդկանց կենսագործունեության պայմանների ապահովման, կենսական պահանջմունքների գնահատման և բավարարման գործում: Սոցիալական ապահովության բնագավառի զարգացումը Հայաստանի համար կարևորվում է նաև աղքատության հաղթահարման տեսանկյունից:

408. Առաջիկա տարիներին կշարունակվեն սոցիալական ապահովության բնագավառի հետագա կատարելագործման և դրամական փոխատվությունների բարձրացման միջոցառումները: Այս առումով Կոտայքի մարզի համար սոցիալական պաշտպանության բնագավառում կարևորվում են հետևյալ միջոցառումները.

- 1) հաշմանդամություն ունեցող անձանց (հատկապես հաշմանդամություն ունեցող երեխաներին) վերականգնողական և տեխնիկական այլ միջոցներով ապահովումը, ինչպես նաև նրանց հասարակությանը ինտեգրելու ծրագրերի իրականացում,
- 2) ծերերի համար ցերեկային խնամքի կենտրոնների և տնային պայմաններում խնամքի ծառայության հիմնում և կատարելագործում,
- 3) սոցիալական աշխատանքի ծառայությունների հիմքի վրա ընտանեկան կենտրոնների հիմնում,
- 4) գործազուրկների և հաշմանդամություն ունեցող անձանց մասնագիտական ուսուցում ու նրանց ժամանակավոր զբաղվածության ապահովում,
- 5) սոցիալական և այլ իրավունքների վերաբերյալ խորհրդատվական ծառայությունների զարգացում:

409. Սոցիալական պաշտպանության ոլորտում մարզի զարգացման գերակա նպատակն է համարվում սոցիալական ծառայությունների մատչելիության և որակի բարձրացումը, որի համար անհրաժեշտ են.

1) Սոցիալական աջակցության ծրագրերի վերաբերյալ բնակչության իրազեկվածության մակարդակի բարձրացում, որի համար նախատեսվում է մարզում սոցիալական ծառայություններ մատուցող կազմակերպությունների (պետական, հասարակական, միջազգային) և նրանց կողմից իրականացվող ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության հրատարակում և տարածում բնակչության լայն շերտերի շրջանակներում:

2) Սոցիալական ծառայություններ մատուցող կադրերի շարունակական վերապատրաստում: Կարևորվում է պետական և ոչ պետական սոցիալական ծառայությունների մասնագետների կարիքների գնահատման հմտությունների ուսուցանումը, դոնորներ, հովանավորներ որոնելու հմտությունների զարգացումը, խնամողների վերապատրաստումը՝ հաշմանդամներին, ծերերին խնամելու, այդ թվում՝ տան պայմաններում խնամք կազմակերպելու համար:

3) Սոցիալական աշխատանքի ծառայությունների հիմքի վրա ընտանեկան կենտրոնների հիմնում (որոնք կզբաղվեն կյանքի դժվարին պայմաններում հայտնված անապահով, բազմազավակ, միայնակ մոր կարգավիճակով ընտանիքների, որբ և մուրացիկ երեխաների խնդիրներով, նաև ծնողական հմտությունների ուսուցմամբ): Սա ենթադրում է երեխաների իրավունքների և շահերի պաշտպանություն, բազմամասնագիտական (սոցիալ-հոգեբանական և բժշկական վերականգնողական աշխատանքների իրականացում) աջակցության ցուցաբերում:

4) Սոցիալական ծառայություններ մատուցող տարածքային մարմինների (ՄԾՄՏՄ) նյութատեխնիկական պայմանների բարելավում և արդիականացում. ՄԾՄՏՄ-ների գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով անհրաժեշտ է բարելավել նաև այդ կենտրոնների նյութատեխնիկական բազան:

5) Սոցիալական ծառայությունների համակարգի կառավարման բարելավում. այստեղ կարևորվում են՝ ՀԿ-ների, ՏԻՄ-երի և ՄԾՄՏՄ-ների միջև տեղեկատվության փոխանակման, մարզում իրականացվող սոցիալական ծրագրերի համակարգման մեխանիզմների մշակումը և ներդնումը, ինչպես նաև պետական և ոչ պետական կառույցների համատեղ ջանքերով խոցելի խմբերի կարիքների գնահատման միջոցառումների կանոնավոր իրականացումը, սոցիալապես խոցելի բնակչության տվյալների շտեմարանի ստեղծումը:

410. Սոցիալական պաշտպանությունը, ըստ միջազգայնորեն ընդունված սահմանման, պետական և ոչ պետական մարմինների այն գործողությունների ամբողջությունն է, որն ուղղված է տնային տնտեսությունների ու անհատների՝ որոշակի ռիսկերին դիմագրավելու կամ կարիքները հոգալու հնարավորությունների ընդլայնմանը: Ըստ մեթոդաբանության դասակարգվում են հետևյալ սոցիալական ռիսկի խմբերը.

1) վատառողջություն (ընդգրկում է ժամանակավոր անաշխատունակության՝ հիվանդության հետ կապված դրամական օժանդակությունը, բացի հաշմանդամությունից),

2) հաշմանդամություն (ընդգրկում է դրամական ու ոչ դրամական, ոչ առողջապահական օժանդակությունը՝ կապված հաշմանդամների տնտեսական և սոցիալական կյանքում ներգրավվելու դժվարությունների հաղթահարման հետ),

3) ծերություն (ընդգրկում է դրամական ու ոչ դրամական, ոչ առողջապահական օժանդակությունը՝ կապված ծերության հետ),

4) վերապրում/հարազատին կորցրածներ (ընդգրկում է դրամական ու ոչ դրամական օժանդակությունը՝ կապված ընտանիքի անդամի մահվան հետ),

5) գործազրկություն (ընդգրկում է դրամական ու ոչ դրամական օժանդակությունը՝ կապված գործազրկության հետ),

6) բնակարանային ապահովություն (ընդգրկում է պետական հոգածության տարբեր մեխանիզմներ՝ ուղղված տնային տնտեսությունների կամ անհատների կողմից բնակարանային խնդիրների լուծման օժանդակությանը),

7) սոցիալական մեկուսացվածության այլ տեսակներ (ընդգրկում է դրամական ու ոչ դրամական օժանդակությունը՝ կապված սոցիալական մեկուսացվածության վերը չնշված դեպքերի ու տեսակների հետ):

411. Հիշյալ բոլոր խմբերի համար սոցիալական ապահովության պետական համակարգի գործառույթները հստակորեն սահմանված են ստորև.

1)պետական սոցիալական աջակցության ծրագրերը, ներառյալ՝ ընտանեկան նպաստները, երեխայի ծնվելու հետ կապված միանվագ նպաստները, երեխային խնամելու նպաստները, ինչպես նաև այլ դրամական և ոչ դրամական սոցիալական ծառայությունները,

2)սոցիալական ապահովության ծրագրեր հաշմանդամների, վետերանների և երեխաների համար, մասնավորապես՝ հաշմանդամների վերականգնման ծրագրեր՝ ելնելով հաշմանդամների վերականգնողական անհատական ծրագրերի տվյալներից, հաշմանդամների, վետերանների և երեխաների տնային պայմաններում և համապատասխան հիմնարկներում սպասարկելու սոցիալական ծրագրեր,

3) պետական սոցիալական ապահովագրության ծրագրեր, որոնք բաղկացած են տարիքային և հաշմանդամության կենսաթոշակներից, ինչպես նաև ժամանակավոր անաշխատունակության և հղիության հետ կապված նպաստներից,

4) զբաղվածության կարգավորման պետական ծրագրեր՝ գործազուրկների և աշխատանքից ազատման ռիսկ ունեցող՝ աշխատանք փնտրող անձանց մասնագիտական ուսուցման կազմակերպում, ինչպես նաև՝ զբաղվածության կարգավորման պետական այլ ծրագրեր,

5) բնակչության առանձին նպատակային խմբերի համար արտոնությունների համակարգ:

412. Սոցիալական աջակցության ծրագրերի վերաբերյալ բնակչության իրազեկության բարձրացումը նախատեսում է մարզում սոցիալական ծառայություններ մատուցող կազմակերպությունների (պետական, հասարակական, միջազգային) և նրանց կողմից իրականացվող ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության հրատարակում և տարածում բնակչության լայն շերտերի շրջանում:

413. Սոցիալական ծառայություններ մատուցող կադրերի շարունակական վերապատրաստումը մասնավորապես կարևորում է սոցիալական ծառայությունների մասնագետների կարիքների գնահատման հմտությունների ուսուցանումը, դոնորներ, հովանավորներ որոնելու հմտությունների զարգացումը, հաշմանդամներին, ծերերին խնամելու, այդ թվում տնային պայմաններում խնամք կազմակերպելու համար խնամողների վերապատրաստումը:

414. Մարզի ՍԾՄՏՄ-ների աշխատանքների բարելավմանն են միտված հետևյալ միջոցառումները.

1) ՍԾՄՏՄ-ների նյութատեխնիկական պայմանների բարելավումը.

2) սոցիալական սպասարկման համակարգի կառավարման բարելավումը, որտեղ կարևորվում է՝ ՍԾՄՏՄ-ների, ՏԻՄ-երի և ՀԿ-ների միջև տեղեկատվության փոխանակման, մարզի մակարդակով իրականացվող սոցիալական ծրագրերի համակարգման մեխանիզմների մշակումը և ներդրումը,

3) պետական և ոչ պետական կառույցների համատեղ ջանքերով խոցելի խմբերի կարիքների գնահատման միջոցառումների կանոնավոր իրականացումը.

4) մասնագետ կադրերի վերապատրաստումը,

5) կամավորական շարժման (կենտրոնի) զարգացումը:

10.2 Սոցիալական ապահովություն

415. Սոցիալական ապահովության ոլորտի հիմնական նպատակն է՝ նպաստել բնակչության աղքատության նվազեցմանն ու հաղթահարմանը, ծրագրերի հասցեականության մեծացման և նպատակային միջոցառումների իրականացման միջոցով մեծացնել ֆինանսական միջոցների օգտագործման արդյունավետությունը:

416. Սոցիալական աջակցության ծրագրերը <<Պետական նպաստների մասին>> ՀՀ օրենքով սահմանված նպաստներն են, որոնք մարզերում իրականացվում են <<<< պետական բյուջեի մասին>> ՀՀ օրենքով այդ ծրագրերի համար նախատեսված ֆինանսական միջոցների շրջանակներում:

417. 2014թ. հունվարի 1-իցուժի մեջ է մտել«Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքը, որով սահմանվում են պետական նպաստների հետևյալ տեսակները.

- 1) ընտանեկան նպաստ.
- 2) սոցիալական նպաստ.
- 3) հրատապ օգնություն.
- 4) երեխայի ծննդյան միանվագ նպաստ.
- 5) մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստ.
- 6) ժամանակավոր անաշխատունակության նպաստ.
- 7) ծերության նպաստ.
- 8) հաշմանդամության նպաստ.
- 9) կերակրողին կորցնելու դեպքում նպաստ.
- 10) թաղման նպաստ:

418. Հայաստանի Հանրապետության սոցիալական պաշտպանության բնագավառի հիմնական գերակայություններն են.

- 1) բնակչության աշխատանքի իրավունքի պաշտպանությունը,
- 2) բնակչության զբաղվածության ապահովման համար պայմանների ստեղծումը,
- 3) պետական կենսաթոշակային ապահովությունը,
- 4) սոցիալական աջակցության տրամադրումը,
- 5) ընտանիքի, կանանց և երեխաների պաշտպանությունը,
- 6) հաշմանդամների և տարեցների սոցիալական պաշտպանությունը:

419. Այս առումով կարևորվում են հետևյալ միջոցառումները.

- 1) բնագավառի օրենսդրության կատարելագործման ու դրա իրականացման ապահովումը,
- 2) սոցիալական մոնիտորինգի համակարգի կատարելագործումը,
- 3) ընտանեկան նպաստի համակարգի հասցեականության մեծացումը և նպաստի միջին չափի բարձրացումը,
- 4) մանկատան շրջանավարտներին ցուցաբերվող պետական աջակցությունը,
- 5) ընտանիքի և երեխաների իրավունքների պաշտպանությանն ուղղված միջոցառումները,
- 6) կենսաթոշակների աստիճանական բարձրացումը,
- 7) զբաղվածության աջակցության ակտիվ ծրագրերի ներդրումը:

420. Տարաբնույթ է բնագավառի գործունեությունը, որում կենտրոնացվածը թերևս պետության կողմից երաշխավորված ընտանեկան նպաստն է:

421.«Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքի համաձայն ընտանիքների անապահովության գնահատման ժամանակ օգտագործվում են ցուցանիշներ ու չափորոշիչներ, որոնց կշիռը որոշվում է տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված ամենամյա հետազոտությունների տվյալների հիման վրա: Յուրաքանչյուր տարի այդ հետազոտությունների արդյունքների օգտագործմամբ ամբողջ հանրապետության համար վերանայվում է ընտանիքների անապահովության գնահատման կարգը, ինչպես նաև սահմանվում են նպաստի բազային չափը, երեխաների համար տրվող հավելման և միանվագ դրամական օգնության չափերը:

422. Վերջին տարիներին պետական աջակցություն են ստանում նաև ընտանիքում ծնված երրորդ, ինչպես նաև հաջորդ յուրաքանչյուր երեխայի համար, որը տարեցտարի ավելանում է. 2011թ.՝ 430.0 հազ. դրամ, 2014թ. երրորդ և չորրորդ երեխայի ծննդյան դեպքում՝ 1000.0 հազ. դրամ, իսկ հինգերորդ և հաջորդ յուրաքանչյուր երեխայի համար՝ 1500.0 հազ. դրամ:

423. Բնագավառը պարբերաբար պետք է գտնվի մոնիտորինգի և գնահատման փուլերում, որպեսզի կատարված աշխատանքները նկատելի և ազդեցիկ լինեն:

424. Համաձայն ՀՀ կառավարության 23.04.2014թ. <<Նախկին ԽՍՀՄ խնայքանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցման տրամադրման կարգը հաստատելու մասին>> թիվ 460-Ն որոշման շարունակվում են նաև նախկին ԽՍՀՄ խնայքանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում ներդրված ավանդների դիմաց փոխհատուցման վճարման աշխատանքները: Փոխհատուցում է տրամադրվելու մինչև 1929 թվականի դեկտեմբերի 31-ը ծնված անձանց, որոնց թիվը կազմում է շուրջ 450 մարդ:

425. Կենսաթոշակային ապահովություն- Կենսաթոշակային ապահովության բնագավառում կշարունակվեն ծրագրերը ուղղված կենսաթոշակառուների շրջանում աղքատության նվազեցմանը, կենսաթոշակների շարունակական աճին, ինչպես նաև բազմաստիճան կենսաթոշակային համակարգի լիարժեք գործարկմանը, որը պետության, գործատուների և աշխատող քաղաքացիների մասնակցությամբ աստիճանաբար ապահովելու է աղքատության գծից բարձր կենսաթոշակ՝ կենսաթոշակի իրավունք ձեռք բերած յուրաքանչյուր անձի համար և աշխատանքային կորցրած եկամուտների նկատմամբ համապատասխան փոխհատուցում ապահովող կենսաթոշակ՝ աշխատող անձանց համար: Կիրականացվեն նաև կենսաթոշակառուներին մատուցվող ծառայությունների արդյունավետության բարձրացման շարունակական աշխատանքներ, այդ թվում՝ «Էլեկտրոնային կենսաթոշակ» համակարգի միջոցով՝ նպաստելով կենսաթոշակառուի և ծառայություններ մատուցող օղակների միջև շփումների նվազեցմանը:

426. Կենսաթոշակների բացարձակ ավելացումները, որոնք հիմնականում համընկել են ՀՀ կառավարության ռազմավարությանը, զգալիորեն հետ են մնացել հանրապետությունում միջին աշխատավարձի աճի տեմպերից, որոնք իրենց հերթին զգալիորեն գերազանցել են կանխատեսումները:

427. Միջազգային փորձը ցույց է տալիս, որ կենսաթոշակային համակարգի պարամետրիկ բարեփոխումները և կուտակային համակարգի ներդրումը կարող են ժամանակավորապես մեղմել, սակայն չեն տալիս իրավիճակի արմատական լուծումներ:

428. ՀՀ կառավարության գործունեությունը միտված է լինելու՝

1) նվազագույնի հասցնել, ապա՝ բացառել աղքատությունը և աղքատության ռիսկը կենսաթոշակառուների շրջանում,

2) շարունակաբար նվազեցնել աշխատող բնակչության և կենսաթոշակառուների (ներառյալ՝ հաշմանդամների) կենսամակարդակների միջև առկա մեծ տարբերությունը՝ թույլ չտալով վերջինիս հետագա խորացումը:

429.Տարեցներ -Համաձայն միջազգայնորեն ընդունված սահմանման սոցիալական պաշտպանության առարկա է ծերությունը, որը ընդգրկում է դրամական ու ոչ դրամական առողջապահական օժանդակությունը՝ կապված ծերության հետ: Տարեցների հիմնախնդիրը ևս դիտարկելով կենսաթոշակառուների թվակազմում կարելի է փաստել, որ առկա է ծերացման միտումը: Այս հանգամանքը նաև իր ազդեցությունը ունեցավ կենսաթոշակային տարիքի բարձրացմամբ, որոշ տեսակներով կենսաթոշակի անցման դժվարացմամբ, երիտասարդ ընտանիքների արտագաղթով, ծնելիության կտրուկ անկմամբ, որը և հանգեցրեց տարեց բնակչության չափաբաժնի ավելացմանը:

430. Պետական քաղաքականությամբ մեծ ուշադրություն է դարձված նաև տարեցներին: Ներկայումս ուշադրության կենտրոնում են նաև կարիքավոր տարեց քաղաքացիները. ոչ մի դժվարություն չկա կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված, խնամքից զուրկ տարեցներին տուն ինտերնատներում տեղավորվելու հարցում: Գործընթացն իրականացվում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ համագործակցված:

431. Խնամքի կարիք ունեցող տարեցների և հաշմանդամների շուրջօրյա խնամքը և սոցիալական սպասարկումը իրականացվում է ստացիոնար և տնային պայմաններում: Հանրապետությունում ստացիոնար սպասարկում իրականացնում են համակարգի տարեցների տուն-ինտերնատները, որտեղ սպասարկվում են ավելի քան 1050 տարեցներ, որոնց խնամքը լրիվ իրականացվում է պետության կողմից: Մեծ ուշադրություն է դարձվելու տնային պայմաններում միայնակ տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկմանը:

432. Հանրապետությունում տնային պայմաններում ներկայումս սպասարկվում են ավելի քան 6000 միայնակ ծեր և հաշմանդամ: Այս բնագավառում անհրաժեշտ է ընդլայնել տնային սոցիալական սպասարկման ձևը, որն ավելի ընդունելի կլինի քաղաքացիների համար, քանի որ նրանք չեն կտրվի իրենց միջավայրից, միաժամանակ հենց տանը սպասարկելով ավելի քիչ պետական միջոցներ կապահանջվեն:

433. Ներկայիս սոցիալ-տնտեսական պայմաններում տարեցների լիարժեք սոցիալական պաշտպանության անհրաժեշտությունը պայմանավորված է հետևյալ հանգամանքներով:

1) Քանի որ ծերությունը կյանքի յուրահատուկ կենսաբանական փուլերից է, ապա տարեցների խոցելիությունը օբյեկտիվ է: Նրանք համարվում են բժշկական և սոցիալական ծառայությունների ամենախոշոր սպառողները, սակայն կենսաթոշակների ցածր մակարդակի պատճառով տարեցներն այսօր բնակչության ամենաանպաշտպան խմբերից են:

2) Տարեցներն ավելի զգայուն են հասարակական փոփոխությունների նկատմամբ և դրա համար կրում են սոցիալական, քաղաքական և տնտեսական համակարգերի արմատական փոփոխությունների ամբողջ բեռը:

434. Հաշմանդամություն ունեցող անձինք- Հաշմանդամության բնագավառում իրականացրած քաղաքականությունն ու պետական նպատակային ծրագրերն ուղղված են հաշմանդամություն ունեցող անձանց համար հավասար պայմանների և հնարավորությունների ապահովելուն և նրանց հասարակություն ներառելուն: Պետական նպատակային ծրագրերի շրջանակներում հաշմանդամներին անվճար տրամադրվում են պրոթեզաօրթոպեդիկ պարագաներ, սայլակներ,

լսողական և ձայնաստեղծ սարքեր, աչքի պրոթեզավորում և այլ վերականգնողական պարագաներ:

435. Ստորև ներկայացվում է Կոտայքի մարզի հաշմանդամություն ունեցող անձանց թվաքանակը 2014թ. ըստ տարածաշրջանների.

Աղյուսակ 10.1

Տարածաշրջանները	հաշմանդամություն ունեցող անձանց թիվը	բնակչության թիվը	%
Հրազդանի տ/շրջան	3005	67131	4.5
Աբովյանի տ/շրջան	4880	91187	5.4
Եղվարդիի տ/շրջան	2060	61012	3.4
Չարենցավանի տ/շրջան	1230	35970	3.4
Կոտայքի մարզ	11175	255300	4.4

436. ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվում են հետևյալ ծրագրերը, որոնք նախատեսված են հանրապետության բոլոր մարզերում բնակվող հաշմանդամություն ունեցող անձանց համար, թեպետ, այդ ծառայությունները կենտրոնացված են Երևանում.

1) պրոթեզաօրթոպեդիկ օգնության, վերականգնողական պարագաների, սայլակների և լսողական սարքերի տրամադրում,

2) աչքի պրոթեզավորում,

3) ձայնաստեղծ սարքերի տրամադրում,

4) Դպրոցն ավարտած, ուշ տարիքում տեսողությունը կորցրած հաշմանդամություն ունեցող անձանց համար հատուկ տառատեսակներով գրքերի տպագրության, տետրերի պատրաստման և «խոսող գրքերի» ձայնագրության ծառայությունների ձեռքբերում,

5) հոգեկան առողջության վերականգնում <<Սթրես>> կենտրոնում,

6) բժշկասոցիալական վերականգնում և հիվանդանոցային բուժում <<Արթմեդ>> բժշկական կենտրոնում:

437. Միայնակ տարեցներին և հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություններ են տրամադրվում <<Առաքելություն Հայաստան>> բարեգործական հասարակական կազմակերպության կողմից:

438. Հաշմանդամություն ունեցող անձանց պրոթեզավորումը և վերականգնողական պարագաներով ապահովումը նպաստում է նրանց հասարակությանը ինտեգրմանը: Վերականգնման արդյունքում նրանք հնարավորություն են ստանում աշխատելու՝ մասամբ հոգալու իրենց, ինչպես նաև՝ ընտանիքի սոցիալական խնդիրները, որն այսօր մեր երկրի սոցիալական

քաղաքականության ռազմավարության պահանջներից է: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ համագործակցված աշխատանք է իրականացվել մարզի հաշմանդամություն ունեցող անձանց անվճար պրոթեզաօրթոպեդիկ պարագաներով (վերին և ստորին վերջույթների պրոթեզներ, օրթեզներ, պրոթեզի և օրթոպեդիկ կոշիկներ, հենակներ, ձեռնափայտեր, բուժական սեղմիրաններ և աղեկապեր, սուպինատորներ և այլն) ապահովելու ուղղությամբ: Նման պարագաների կարիքավորների հերթագրումը կատարվում է մարզի սոցիալական ծառայությունների տարածքային գործակալությունների կողմից՝ մարզի թվով երեք բժշկա-սոցիալական փորձաքննության հանձնաժողովների (ԲՍՓՀ) կողմից լրացված վերականգնողական անհատական ծրագրերի հիման վրա: Նրանց միջոցով կազմակերպվում է նաև պետական բյուջեի միջոցներով գնված վերականգնողական պարագաների (սայլակներ, քայլակներ, լսողական սարքեր, աչքի և կրծքագեղձի պրոթեզներ) տրամադրում:

439. Նպատակահարմար է, որ հաշմանդամություն ունեցող անձանց գույքի (հենասայլակների) վերանորոգման ծառայություն ստեղծվի նաև Հրազդանում: Հաշմանդամություն ունեցող անձանց օգնություն է ցուցաբերվել նաև <<Ինտերկապ>> բարեգործական հասարակական կազմակերպության շնորհիվ: Մարզի հաշմանդամություն ունեցող անձանց աջակցություն է ցույց տրվում եվրոպական տարբեր երկրներից ներկրված բուժական և հաշմանդամներին առաջնահերթ անհրաժեշտ պարագաներով (հենակ, սայլակ, բուժապարագաներ, հանդերձանք և այլն):

440. Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովին աջակից է Կոտայքի մարզային հանձնաժողովը, որը գործնական առաջարկություններ է մշակել: Մասնավորապես, ներկայացվել են 2014թ. հաշմանդամների խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի նախագծեր, որոնք պետք է իրականացվեն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համապատասխան վարչության հետ համատեղ:

441. Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության պետական ռազմավարական նպատակը նրանց առավելագույնս և համակողմանի ինտեգրումն է հասարակության լիարժեք կյանքին, նրանց մասնակցության ապահովումը հասարակական կյանքի բոլոր ոլորտներին: Ի տարբերություն մայրաքաղաքում եղած հնարավորությունների, մարզերում դեռևս լուրջ բարեփոխումների անհրաժեշտություն կա: Հիմնախնդիր է մնում այնպիսի տարրական հարցերի կարգավորումը, ինչպիսին տեղաշարժման խնդիրներ ունեցող և սայլակ օգտագործող անձանց համար մատչելի միջավայրի ստեղծումն է դեպի պետական ու տեղական ինքնակառավարման հիմնարկներ, հասարակական, մշակութային, մարզական կառույցներ, ընտրատեղամասեր և այլն:

442. **Աշխատանքի և զբաղվածության ոլորտ-** Գործազրկությունը աղքատության ամենակարևոր պատճառներից է: Ինչպես ցույց են տալիս հետազոտությունները, երեք գործազուրկներից մոտավորապես երկուսը ենթակա են աղքատացման ռիսկի: Սակայն նույնիսկ զարգացած երկրների համար միայն զբաղվածության ապահովումը դեռ բոլոր հիմնախնդիրների լուծումը չէ: Զբաղվածության և աղքատության մակարդակների համեմատությունը վկայում է, որ աղքատությունը կարող է տարածված լինել նույնիսկ զբաղվածության բարձր մակարդակի դեպքում: Այս առումով կարևորվում է նաև ակտիվ սոցիալական այն միջոցառումների իրականացումը, որոնք

ուղղված են աշխատուժի վերարտադրմանը, նրա որակավորման բարձրացմանը և աշխատաշուկայի ժամանակակից պահանջներին համապատասխանող պայմանների ստեղծմանը:

443. Օրենսդրական փոփոխությունների հետևանքով շարունակվեցին աշխատաշուկայի կառուցվածքի որակական և քանակական փոփոխությունները, փոփոխվեց նաև գործազրկության կառուցվածքը. հաշվառման մեջ մնացին հիմնականում ակտիվ աշխատանք փնտրողները, շարունակվեց աճել գործազուրկ երիտասարդների թվաքանակը:

444. Զբաղվածության ոլորտի գերակայություններ են.

- 1) աշխատուժի մրցունակության շարունակական բարձրացում,
- 2) աշխատուժի առաջարկի և պահանջարկի անհամամասնությունների մեղմում,
- 3) երիտասարդների (այդ թվում՝ գյուղական երիտասարդության) զբաղվածության ապահովման աջակցություն,
- 4) աշխատաշուկայում անմրցունակ խմբերի, մասնավորապես՝ հաշմանդամների զբաղվածության ապահովման ուղղված ծրագրերի ծավալների մեծացում,
- 5) սոցիալական գործընկերության համագործակցության ընդլայնում:

445. Զբաղվածության տարածքային կենտրոնի հիմնական խնդիրը զբաղվածության կարգավորման պետական ծրագրերի իրականացումն է, որոնք ուղղված են բնակչության կայուն զբաղվածության ապահովման համար պայմանների ստեղծմանը:

446. Հանրապետության բոլոր մարզերում (այդ թվում՝ Կոտայքի մարզում) զբաղվածության տարածքային կենտրոնների միջոցով իրականացվում են հետևյալ ծրագրերը.

- 1) գործազուրկների և աշխատանքից ազատման ռիսկ ունեցող՝ աշխատանք փնտրող անձանց մասնագիտական ուսուցման կազմակերպում,
- 2) աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին աշխատավարձի մասնակի և հաշմանդամություն ունեցող անձին ուղեկցողի համար աշխատավարձի փոխհատուցման տրամադրում,
- 3) ձեռք բերած մասնագիտությամբ մասնագիտական աշխատանքային փորձ ձեռք բերելու համար գործազուրկներին աջակցության տրամադրում,
- 4) աշխատանքի տոնավաճառի կազմակերպում,
- 5) աշխատաշուկայի հետազոտման աշխատանքների կազմակերպում,
- 6) գործազուրկին այլ վայրում աշխատանքի տեղավորման աջակցության տրամադրում,
- 7) աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին միանվագ փոխհատուցման տրամադրում,
- 8) մասնագիտական կողմնորոշման համակարգի մեթոդաբանության ապահովում և կադրերի վերապատրաստում, հանրային իրազեկում,
- 9) աշխատաշուկայում անմրցունակ անձանց փոքր ձեռնարկատիրական գործունեության աջակցության տրամադրում,
- 10) սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցության տրամադրում,

- 11) աշխատանքի տեղավորման ոչ պետական կազմակերպության կողմից մատուցվող ծառայություններից օգտվելու համար աջակցության տրամադրում,
- 12) աշխատաշուկայում անմրցունակ անձանց հարմար աշխատանքի տեղավորման նպատակով գործատուներին այցելության ծախսերի փոխհատուցում:

447. Մարզի տարածքում գրանցված գործազուրկների ճնշող մեծամասնությունը քաղաքաբնակներ և միջին տարիք (30-50 տարեկան) ունեցողներն են: Գործազրկությունը սերտորեն կապված է աղքատության հետ: Թվային տվյալներով այսօր շատ աղքատ է յուրաքանչյուր հինգերորդը: Աղքատ է զբաղված բնակչության գրեթե չորսից մեկը, որը հետևանք է ցածր վարձատրության (հատկապես մշակույթի և արվեստի բնագավառներում):

448. Կոտայքի մարզում 01.01.2014թ. պաշտոնապես գրանցված գործազուրկների թիվը կազմում է 6242 մարդ. աշխատանք փնտրողների թիվը՝ 6384 մարդ, զբաղվածների թիվը՝ 83096 մարդ:

449. Կոտայքի մարզի գործազուրկների և աշխատանք փնտրող քաղաքացիների թվական տվյալները՝ ըստ տարածաշրջանների.

Աղյուսակ 10.2

01.01.2014թ. դրությամբ

	Հրազդան	Աբովյան	Եղվարդ	Չարենցավան	Կոտայքի մարզ
Աշխատանք փնտրողների քանակը	1474	2108	619	2183	6384
Գործազուրկների քանակը	1413	2079	601	2149	6242

450. Ակնհայտ է, որ գործազրկությունը լրջագույն խնդիր է այսօր, հատկապես կանանց շրջանում, որն իր բացասական ազդեցությունն է ունենում բնակչության կենսագործունեության վրա: Ակնառու տնտեսական հետևանքներից (անհատի, ընտանիքի եկամտի կորուստ) բացի, այն այսօր ունի մի շարք սոցիալական հետևանքներ, մանավանդ եթե խոսքը գնում է երկարատև գործազրկության մասին: Այսպես.

1) մեկից ավելի տարով աշխատանքային գործունեության դադարեցումը հանգեցնում է մասնագիտական հմտությունների կորստի,

2) եկամուտների, գոյության միջոցների բացակայությունը հասարակության մեջ սոցիալական դիրքի նվազման, ցածր ինքնագնահատականի ձևավորման, մեկուսացման և բարոյազրկման պատճառ է դառնում,

3) աշխատանք փնտրելու անհաջող փորձերը սթրեսների, վարքագծի շեղումների տարբեր ձևերի դրսևորման (հարբեցողություն և այլն) պատճառ են դառնում:

451. Վերջին տարիներին նկատելի է գործազուրկների թվաքանակի նվազում: Այսպես,

մարզում գրանցված գործազուրկների թիվը 2011թ. կազմել է 6149 մարդ, 2012թ. 5596 մարդ, 2013թ. 5440 մարդ:

452. Գործազուրկների թվի մեջ գերակշռում են 40-55 տարեկանները: Այս տարիքի մարդիկ հիմնականում երկարատև գործազուրկներ են (1-ից ավելի տարի մնացել են գործազուրկի կարգավիճակում), որի պատճառով կորցրել են իրենց մասնագիտական հմտությունները և ունակությունները, որոնք զբաղվածության տարածքային կենտրոններ են դիմում ընդգրկվելու այնպիսի աշխատանքներում, որտեղ մասնագիտական ունակություններ չեն պահանջվում: Մասնավորապես դիմում են ժամանակավոր աշխատանքներում ընդգրկվելու համար: Այս հանգամանքը չի ազդում երիտասարդների վրա, քանի որ ավելի ակտիվ են կողմնորոշվում աշխատաշուկայում և ավելի հեշտությամբ տեղավորվում հարմար աշխատանքի:

453. Մասնագիտական ուսուցման, վերամասնագիտացման, որակավորման բարձրացման դասընթացներն անցել են հետևյալ մասնագիտությունների գծով՝ <<Վարսահարդար>>, <<Մատնահարդար>>, <<Դիմահարդար>>, <<Խոհարարություն>>, <<Հրուշակագործություն>>, <<Սեղանի ձևավորում>>, <<Ծաղկի դիզայներ>>, <<Համակարգչային դիզայն>>, <<Համակարգչային գործավարություն, ղեկավարի օգնական ռեֆերենտ>>, <<Տեքստերի համակարգչային ձևավորում և տպագրություն>> և այլն:

454. **Փախստականների հիմնահարցեր**-Որպես առանձնահատկություն ունեցող սոցիալապես անապահով առանձին խումբ փախստականները սոցիալական օժանդակության խնդիր ունեն: Կոտայքի մարզը մեծաթիվ փախստականներ է ընդունել, որոնցից մեծ մասը կրկնակի արտագաղթի են ենթարկվել: Այսպես, նախորդ դարի 90-ական թվականներին փաստված ավելի քան 12 հազար փախստականներ բռնագաղթվել են Ադրբեջանի հանրապետությունից: Հատկանշական է, որ տարվա ընթացքում փախստականների թիվը փոփոխվում է նաև կապված նրանց սեզոնային արտագնա աշխատանքի մեկնելու փաստի հետ: Փախստականաբնակ են մարզի բոլոր տարածաշրջանները:

455. 01.01.2014թ. դրությամբ մարզում փաստացի բնակվում է 10081 փախստական, որոնցից՝

- 1) աշխատունակ է 4673մարդ (46.2 %),
- 2) նախկին քաղաքաբնակներ են 8596 մարդ (85 %),
- 3) ստացել է ՀՀ քաղաքացիություն 8710 մարդ,
- 4) բնակարանի կարիքավոր են փախստականի 327 ընտանիքներ:

456. Ժողովրդագրական առումով փախստականները բնութագրվում են որպես՝

1) Բնական վերարտադրության խաթարումներով ու ինտենսիվ <<ծերացող համակցություն>>: Փախստականների 60-69 տարեկանների տեսակարար կշիռը մոտ 1.5-3.5 անգամ ավելի մեծ է, քան 0-4 տարեկան երեխաներինն ու 25-29 տարեկան երիտասարդներինը: Փախստականների մոտ տեղաբնակների համեմատ 3-4 անգամ շատ են միայնակ ընտանիքները, հատկապես միայնակ ծերերը, 1.5 անգամ պակաս են երիտասարդ տղամարդիկ, 2-3 անգամ պակաս են 5-14 տարեկան երեխաները:

2) 2006-2009թթ. ընթացքում մարզի 318 փախստական ընտանիքներ բնակարանի գնման վկայագրերով ձեռք են բերել բնակարաններ: Ժամանակավոր կացարաններում բնակվում են դեռևս

327 փախստական ընտանիքների:

3) Զբաղվածության ցածր մակարդակը: Փախստականների մեջ տեղաբնակների համեմատ 1.7 անգամ քիչ են գործատուները, 2 անգամ քիչ են արտադրության մեջ զբաղվածները, 3 անգամ պակաս են մշտական աշխատանք ունեցողները:

457. Փախստականների համար ամենահրատապ լուծում պահանջող հարցը բնակարանային հիմնահարցն է, քանի որ այսօր հարյուրավոր փախստական ընտանիքներ բնակվում են անբարեկարգ ժամանակավոր կացարաններում, հանրակացարաններում:

458.Զոհված (մահացած) կամ զինծառայության հետ կապված հաշմանդամություն ունեցող անձանց ընտանիքների բնակարանային ապահովության հիմնահարցեր-2003-2014թթ. աջակցություն են ստացել զոհված (մահացած) կամ զինծառայության հետ կապված հաշմանդամություն ունեցող անձանց (ազատամարտիկների) 227 ընտանիքներ: 01.01.2014թ. դրությամբ Կոտայքի մարզում հաշվառված են բնակարանի 237 կարիքավոր ընտանիքներ (անօթևան, բնակարանի բարելավում), այդ թվում`

1) զոհված զինծառայողի 92 ընտանիքներ (որից` 8 անօթևան),

2) զինծառայության հետ կապված հաշմանդամություն ունեցող անձանց 145 ընտանիքներ (որից` 44 անօթևան):

459. ՀՀ կառավարության 09.06.2005թ. թիվ 947-Ն որոշման պահանջներով ամեն տարի հավաքվում են մարզի զոհված (մահացած) կամ զինծառայության հետ կապված հաշմանդամություն ունեցող անձանց (ազատամարտիկների) բնակարանային հիմնախնդիր ունեցող ընտանիքների փաստաթղթերը: ՀՀ պաշտպանության նախարարության հատուկ հանձնախմբի հետ համատեղ ուսումնասիրվում է հիշյալ բնակարանի կարիքավոր ընտանիքների փաստաթղթերը, կատարվում են տնայցեր:

10.3 Սոցիալական պաշտպանության ոլորտի զարգացման նպատակները

և ռազմավարությունը

460. Սոցիալական պաշտպանության ոլորտում մարզի զարգացման գերակա նպատակն է համարվում սոցիալական ծառայությունների մատչելիության և որակի բարձրացումը, մասնավորապես.

1) սոցիալական աջակցության ծրագրերի վերաբերյալ բնակչության իրազեկվածության մակարդակի բարձրացում,

2) սոցիալական ծառայություններ մատուցող կադրերի շարունակական վերապատրաստումներ,

3) սոցիալական աշխատանքի ծառայությունների հիմքի վրա ընտանեկան կենտրոնների հիմնում (որոնք կզբաղվեն կյանքի դժվարին պայմաններում հայտնված անապահով, բազմազավակ, միայնակ մոր կարգավիճակով ընտանիքների, որբ և մուրացիկ երեխաների խնդիրներով, նաև ծնողական հմտությունների ուսուցմամբ),

4) սոցիալական ծառայություններ մատուցող տարածքային մարմինների նյութատեխնիկական պայմանների բարելավում և արդիականացում,

5) սոցիալական ծառայությունների համակարգի կառավարման բարելավումը:

461. Նշված գերակա խնդիրները իրականացնելու նպատակով մշակվել են հետևյալ 8 ծրագրերը.

1) Կոտայքի մարզի յուրաքանչյուր համայնքի բնակչության սոցիալական վիճակի հիմնավոր ուսումնասիրություն և ըստ դրա սոցիալական տարաբնույթ ծառայությունների գործունեության կազմակերպում և համակարգում,

2) սոցիալական ծառայություններ մատուցող տարածքային մարմինների շենքային պայմանների բարելավում և սոցիալական տարբեր ծառայությունների գործունեության կազմակերպում և համակարգում,

3) Հրազդան քաղաքում տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ծառայություններ մատուցող շուրջօրյա խնամքի կենտրոնի կառուցում և գործունեության կազմակերպում և համակարգում

4) Հրազդանում հաշմանդամություն ունեցող անձանց վերականգնողական և պրոթեզաօրթոպեդիկ պարագաների վերանորոգման ծառայության կազմակերպում և համակարգում,

5) Աբովյանի թիվ 1 հատուկ օժանդակ դպրոցի զարգացում,

6) գործազրկության մակարդակի նվազեցում,

7) փախստականների ընտանիքների բնակարանային ապահովում,

8) զոհված (մահացած) կամ զինծառայության հետ կապված հաշմանդամություն ունեցող անձանց (ազատամարտիկների) ընտանիքների բնակարանային ապահովում:

10.4 Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանություն

462. ՀՀ-ում երեխաների իրավունքների պաշտպանության ազգային ծրագրի մշակումը պայմանավորված է երեխաների իրավունքների պաշտպանության քաղաքականության մեջ նոր մոտեցումների ներդրման և երեխաների պաշտպանության համակարգի հզորացման անհրաժեշտությամբ: 2011-2013թթ. ընթացքում լուրջ տեղաշարժեր են կատարվել և՛ մարզային, և՛ համայնքային մակարդակներում երեխաների իրավունքների պաշտպանության իրականացման առումով:

463. Կոտայքի մարզում 2011-2013թթ. ընթացքում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների հաշվառման, նրանց կարիքների գնահատման, նրանց անհատական վերականգնողական ծրագրերի մշակման, <<Մանուկ>> տեղեկատվական համակարգի փոխանցման և հաշվառումից հանման արդյունքում ստացվել է հետևյալ ամփոփ պատկերը:

464. Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների հաշվառման <<Մանուկ>> տեղեկատվական համակարգ մուտքագրվել է 2011թ. ընթացքում 161 երեխայի տվյալներ, 2012թ.՝ 169 և 2013թ.՝ 115 երեխայի տվյալներ:

465. 2013թ. դեկտեմբերի 30-ի դրությամբ հաշվառման մեջ են գտնվել առանց ծնողական խնամքի մնացած /ԱԾԽՄ/ 70 երեխաներ և ԱԾԽՄ երեխաների թվին պատկանող 35 անձինք:

466. Մարզի մուրացիկ, թափառաշրջիկ, իրավախախտ և հանցագործություն կատարած անչափահասների շտեմարանում ոստիկանության անչափահասների գործերով բաժանմունքներից ստացված տվյալների հիման վրա 2011-2013թթ. հաշվառվել են 101-ը, հաշվառումից հանվել՝ 106-ը, 2013թ. դեկտեմբերի 30-ի դրությամբ հաշվառման մեջ են գտնվել 30 իրավախախտ անչափահասներ:

467. Արդյունավետ աշխատանք է տարվել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հայտնաբերման, կրթության իրավունքի վերականգնման և հատուկ կարիքի գնահատման առումով: Մարզում հաշվառված 607 հաշմանդամ ունեցող երեխաներից 2011թ. վկայագրվել են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներից 79, 2012թ.՝ 111 և 2013թ.՝ 98 երեխաներ:

468. Համագործակցելով երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատությունների մասնագետների հետ՝ մարզում իրականացվել են կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների սոցիալական կարիքների գնահատման, երեխաների սոցիալ-հոգեբանական անհատական վերականգնողական ծրագրերի կազմման և իրականացման աշխատանքներ:

469. 2011թ. ընթացքում <<Բյուրեղավանի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն>> ՊՈԱԿ են տեղավորվել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված սոցիալապես անապահով ընտանիքների 16 երեխաներ և հաստատությունից դուրս են գրվել 19 երեխաներ, համապատասխանաբար 2012թ. ընթացքում տեղավորվել են 16 և դուրս են գրվել 26 երեխաներ, 2013թ. տեղավորվել են 14 և դուրս են գրվել 14 երեխաներ: Աբովյան քաղաքում կա 1 խնամատար ընտանիք, որտեղ խնամվում են ԱԾԽՄ 2 երեխաներ:

10.5 Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության հիմնախնդիրները և 2015-2018թթ. զարգացման ռազմավարությունը

470. Հաշվի առնելով ՀՀ կառավարության <<Երեխաների իրավունքների պաշտպանության 2004-2015թթ. ազգային ծրագրի միջոցառումների>> ժամանակացույցը, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների՝ այդ թվում ԱԾԽՄ /առանց ծնողական խնամքի մնացած/, հատուկ կարիքներ ունեցող /հաշմանդամություն ունեցող երեխա/ երեխաների սոցիալական պաշտպանվածության բարելավման, հասարակության մեջ նրանց ինտեգրման նպատակով անհրաժեշտ է.

- 1) խնամատար ընտանիքի ինստիտուտի ներդրման շարունակականության ապահովում,
- 2) համայնքներում երեխաների ցերեկային կենտրոնների ստեղծում,
- 3) հատուկ կարիքներով երեխաների համար վերականգնողական կենտրոնի ստեղծում և վերականգնողական կենտրոնում <<Վաղ միջամտության>> ծառայությունների ստեղծում:

471. Խնամատար ընտանիքի ինստիտուտի ներդրումը կնպաստի ԱԾԽՄ երեխաների կյանքի որակի լավացմանը, ընտանիքում խնամվելու և դաստիարակվելու հնարավորությունների ստեղծմանը, նաև պետական քաղաքականությանը համապատասխան՝ կնպաստի հաստատություններ երեխաների մուտքի նվազեցմանը և հաստատությունների բեռնաթափմանը:

472. Երեխաների պաշտպանության ոլորտում մարզի համայնքների կարողությունները թույլ են և ենթակա են հզորացման: Համայնքային ցերեկային կենտրոնի ստեղծումը, որի միջոցով կիրականացվի կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների և նրանց ընտանիքների սոցիալական ծառայությունների տրամադրում, ծառայությունների ծավալների մեծացում, մատչելիության բարելավում՝ զգալիորեն կնպաստի մարզի համայնքների կարողությունների բարձրացմանը:

473. Համայնքներում առկա ռեսուրսները արդյունավետորեն չեն կիրառվում, որը խոչընդոտում է առկա խնդիրների լուծմանը: Հիմնախնդրի լուծման համար անհրաժեշտ է ընդլայնել համայնքում խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի և մարզային բաժնի դերակատարության մասին տեղեկատվությունը, իրականացնել առկա ռեսուրսների քարտեզագրում, ստեղծել դրանց օգտագործման մեխանիզմները, ապահովել համայնքներում առկա ռեսուրս ներկայացնող կառույցների /ՍԾՏԳ, ՉՏԳ, առողջապահական կենտրոն, մանկապարտեզ, դպրոց, ոստիկանություն/ մասնակցությունը երեխաների իրավունքների պաշտպանության հարցում:

474. Հատուկ կարիքներով /հաշմանդամություն ունեցող/ երեխաների վերականգնողական կենտրոնների ստեղծումը կնպաստի հատուկ կարիքներով երեխաների վերականգնողական բուժօգնության իրականացմանը, բնականոն զարգացմանը և հասարակության մեջ նրանց ինտեգրման բարելավմանը, որը մարզում կարևորագույն հիմնախնդիրներից է:

475. Զարգացման խանգարումների վաղ հայտնաբերումն ու վաղ միջամտություն իրականացնելն ուղղված է ոչ միայն երեխային, նաև ընտանիքին և համայնքին: Վաղ հայտնաբերումը և վաղ միջամտությունը թույլ է տալիս կանխել մտավոր և ֆիզիկական հաշմանդամությունը:

476. Ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի բնագավառում պետական քաղաքականությունն իրականացվում է «Երեխաների իրավունքների մասին», «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին», «Սոցիալական աջակցության մասին», «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին», «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին», ՀՀ օրենքների, ՀՀ Ընտանեկան օրենսգրքի, ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 18-ի «Որդեգրման կարգը և Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչություններում կամ հյուպատոսական հիմնարկներում օտարերկրյա քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց և Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների կողմից որդեգրված՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող երեխայի հաշվառման կարգը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 28-ի N1919-Ն որոշման մեջ լրացում կատարելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին»

N 269-Ն, 2003թ. օգոստոսի 8-ի «Մոր և մանկան առողջության պահպանման 2003-2015թթ. ռազմավարությունը հաստատելու մասին» N 1000-Ն, 2012թ. դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության երեխայի իրավունքների պաշտպանության 2013-2016թթ. ռազմավարական ծրագիրը և երեխայի իրավունքների պաշտպանության 2013-2016թթ. ռազմավարական ծրագրի միջոցառումների ժամանակացույցը հաստատելու» և 2003 թվականի դեկտեմբերի 18-ի «N 1745-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1694-Ն որոշումների և այլ իրավական ակտերի համաձայն:

477. ՀՀ կառավարության 2014թ. ապրիլի 3-ի «Հայաստանի Հանրապետության ընտանիքի տարի հայտարարելու և ընտանիքի տարվա հետ կապված միջոցառումների ցանկը հաստատելու մասին» N 356-Ա որոշմամբ հայտարարված է ընտանիքի տարի: Կառավարությունն իրականացնում է երեխաների պաշտպանության ոլորտի բարեփոխումներ, որոնց հիմնական նպատակն է երեխային հասարակությունից չմեկուսացնելը և ընտանիքում ապրելու պաշտպանությունն ու սոցիալականացումը, իսկ երեխաների սոցիալականացման լավագույն միջավայրը ընտանիքն է և երեխայի իրավունքների պաշտպանության եռաստիճան համակարգը կարևորվում է և միտված է իր գործողություններով մանկատների և նմանատիպ հաստատությունների բեռնաթափման, երեխաներին ընտանիք վերադարձնելու և այլընտրանքային հաստատություններում ներգրավման:

478. Հաշվի առնելով երկրի սոցիալ տնտեսական իրավիճակը՝ վերջին տարիներին տարբեր ոլորտներում իրականացված բարեփոխումները և նոր ստանձնած միջազգային պարտավորությունները, ինչպես նաև երեխաների իրավունքների պաշտպանությանը վերաբերող առաջադեմ մոտեցումները՝ այսօր անհրաժեշտ է վերանայել 2013-2016թթ. ազգային ծրագիրը և մշակել առաջիկա տարիների ընթացքում երեխաների իրավունքների պաշտպանության քաղաքականության հիմնական ուղղությունները:

479. Երեխաների իրավունքների պաշտպանության ազգային ծրագրի մշակումն ուղղված կլինի նաև առողջապահության, սոցիալական ապահովության, կրթության, հանգստի, ժամանցի և մշակութային կյանքի, իրավախախտումների և արդարադատության բնագավառներում երեխաների հանդեպ իրականացվող քաղաքականության համապատասխանեցմանը միջազգային չափանիշներին և երեխաների իրավունքների պաշտպանության համակարգի գործունեության հզորացմանը, իսկ խնդրի լուծմանն ուղղվող քայլերի իրականացման արդյունքում ակնկալվում է մշակել առաջիկա տարիների ընթացքում երեխաների իրավունքների պաշտպանության քաղաքականության հիմնական ուղղությունները և ընդլայնել երեխաների պաշտպանության ազգային հանձնաժողովի լիազորությունները:

480. Ընտանիքի, կանանց և երեխաների պաշտպանությանն ուղղված քաղաքականության հիմնական ուղղություններն են.

- 1) Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների՝ այդ թվում առանց ծնողական խնամքի մնացած (ԱԾԽՄ), հատուկ կարիք ունեցող (հաշմանդամություն ունեցող) երեխաների սոցիալական պաշտպանվածության բարելավման, հասարակությանը նրանց ինտեգրման նպատակով անհրաժեշտ քայլերն են.

ա. խնամատար ընտանիքի ինստիտուտի ներդրման շարունակական ապահովում

բ. համայնքներում երեխաների ցերեկային կենտրոնների ստեղծում

գ. հատուկ կարիքներով երեխաների համար վերականգնողական կենտրոնի ստեղծում և վերականգնողական կենտրոնում «Վաղ միջամտության» ծառայությունների ստեղծում

դ. ԱԾԽՄ երեխաների կենտրոնացված հաշվառման, սոցիալական դժվարությունների առաջացման կանխարգելման, հասարակություն ինտեգրման աշխատանքների շարունակականության ապահովում, մանկատների, խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատությունների փոխարեն հարկավոր է համայնքներում ստեղծել խնամք իրականացնելու այլընտրանքային տարբերակներ, որտեղ կիրականացվի ընտանիքի մոդելին համարժեք կամ նմանատիպ կենսակերպ ապահովող ծառայություններ:

ե. բռնության (անտեսման) ենթարկված երեխաների վերականգնողական ծառայություններին մասնակցություն և երեխայի հանդեպ բռնության երևույթի կանխարգելման և վերացմանն ուղղված պետական մարմինների և հասարակական կազմակերպությունների համագործակցության ապահովում, համապիտանի միջոցառումների իրականացում:

2) Հանրակրթական հաստատություններում ներառական կրթության պետական քաղաքականության իրականացմանը նպաստելու նպատակով՝ վկայագրված կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին ուսումնական հաստատություններ ընդգրկման հարցերում աջակցություն:

3) Հանրակրթությունից դուրս մնացած, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, երեխաների հայտնաբերման, հաշվառման և կրթութական իրավունքի պաշտպանության՝ նրանց հանրակրթական /հատուկ հանակրթական/ ուսումնական հաստատություններ ներգրավող միջոցառումների իրականացման շարունակում:

4) Մարզում ընտանիքի, կանանց և երեխաների պաշտպանությանն ուղղված պետական քաղաքականության իրականացման և ընտանիքի, կանանց և երեխաների սոցիալական պաշտպանությանն ուղղված պետական նպատակային ծրագրերի շրջանակներում մարզային ծրագրերի մշակման, դրանց կատարման ապահովումը:

5) Ընտանիքում ապրելու և դաստիարակվելու երեխայի իրավունքի ապահովումը, այս առումով կյանքի դժվարին իրավիճակում հայտնված /ԿԴԻՀ/ երեխաների իրավունքների պաշտպանության բնագավառում ԿԴԻՀ երեխաների հետ տարվող աշխատանքների հետ կապված պատասխանատվություն կրող բոլոր կառույցների՝ ոստիկանության, դատախազության, կրթական համակարգի, առողջապահական համակարգի, խնամքի հաստատությունների, դատաիրավական համակարգի, հասարակական կազմակերպությունների համակարգված փոխհամագործակցության իրականացում:

6) Մարզում ՀՀ ոստիկանության անչափահասների գործերով բաժանմունքների /ԱԳԲ/, տեղական ինքնակառավարման մարմինների /ՏԻՄ/ ու խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների /ԽՀՀ/ պատասխանատվությունների հետ համատեղ, անչափահասների հիմնախնդիրների արագ արձագանքման և վաղ հայտնաբերման նպատակով, հանրակրթական դպրոցներում կանխարգելիչ միջոցառումների կազմակերպման ապահովում:

7) Մարզում գենդերային ծրագրերի մշակում և դրանց կատարման ապահովում:

481. ՀՀ ազգային ժողովը 2013թ. մայիսի 20-ին ընդունել է <<Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնավորությունների ապահովման մասին>> ՀՀ օրենքը, որը սահմանում է քաղաքական, սոցիալական, տնտեսական, մշակութային և հասարակական կյանքի այլ ոլորտներում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնավորությունների ապահովման երաշխիքները և կարգավորում դրա առնչությամբ ծագած հարաբերությունները: Առաջիկայում ևս մարզում այս առումով տարվող քաղաքականության ներդրման նպատակով ստեղծված մշտական հանձնաժողովը պետք է աջակցի կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնավորությունների ապահովման պետական քաղաքականությանն ուղղված ռազմավարական ծրագրերի իրականացմանը:

482. Մարզում իրականացվում են նաև կանանց հիմնախնդիրներին վերաբերող նպատակային ծրագրեր, մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թ. մայիսի 20-ի նիստում հավանության է արժանացել «Գենդերային քաղաքականության 2011-2015 թվականների ռազմավարական ծրագիրը հաստատելու մասին» N19 արձանագրային որոշումը, իսկ 2011թ. հունիսի 17-ի նիստում՝ «Ընդդեմ գենդերային բռնության ազգային ծրագիրը, 2011-2015թթ. ռազմավարական ծրագիրը հաստատելու մասին» N23 արձանագրային որոշումը, որոնց շրջանակներում յուրաքանչյուր տարի հաստատվող տարեկան ծրագրերում ներառվում են նաև մարզի ծրագրերը: Վերջիններս նպաստում են մարզում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների ու հնարավորությունների ապահովմանը, օժանդակում կանանց սոցիալտնտեսական հարցերի կարգավորմանը, ընտանեկան բռնության կանխարգելմանը:

483. Սոցիալական պաշտպանության ոլորտի 2015-2018թթ. պահանջվող ֆինանսավորման ծավալները ներկայացված են հավելված 10.1-ում:

11. ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

484. Կոտայքի մարզի քաղաքաշինության ոլորտի 2015-2018թթ. զարգացման համար նախատեսված են հետևյալ խնդիրները.

- 1) Հանրակրթական օբյեկտների վերակառուցում և հիմնանորոգում,
- 2) Մշակույթի շենքերի հիմնանորոգում,
- 3) Առողջապահական շենքերի և շինությունների հիմնանորոգում,
- 4) Մարզի առանձին բնակավայրերի III և IV աստիճանի վնասվածության բնակելի շենքերի բնակիչների բնակարանային խնդիրների լուծում,
- 5) Վթարային բազմաբնակարան շենքերի ամրացման, հարթ և թեք տանիքների վերանորոգման խնդիրներ,
- 6) Մարզի գյուղական համայնքների տարածական պլանավորման փաստաթղթերի /զլխավոր հատակագծերի/ մշակման խնդիրներ:

11.1 Քաղաքաշինության ոլորտի իրավիճակի վերլուծություն

485. Կոտայքի մարզի քաղաքաշինության ոլորտում, որպես աղքատության նվազեցման կարևորագույն գործոն, զարգացման գերակա նպատակը հանդիսանում է բնակչության կենսագործունեության բարենպաստ միջավայրի ձևավորումը ու բնակչության կյանքի որակի հետևողական բարելավումը: Զարգացման գերակա ուղղություն է նաև մարզում առկա առողջապահական, հանգստի, սպորտային կենտրոնների զարգացումը, ագլոմերացիոն խմբավորումների կայացումը ինչպես մարզի, այնպես էլ հանրապետական և միջազգային տուրիզմի առաջընթացի ապահովմամբ:

Աղյուսակ 11.1

2011-2013թթ. Կոտայքի մարզում ՀՀ պետական բյուջեից և կառավարության պահուստային ֆոնդից ներդրված դրամական միջոցները

h/h	Պատվիրատու	2011թ. /մլն. դրամ/	2012թ. /մլն. դրամ/	2013թ. /մլն. դրամ/
1	ՀՀ Կոտայքի մարզպետարան	308.0 (պետ. բյուջե) 2636.0 (պահուստային ֆոնդ)	184.5(պետ.բյուջե) 1318.0 (պահուստ. ֆոնդ)	504.6(պետբյուջե) 1318.0 (պահուստ. ֆոնդ)
	Ընդամենը	2944.0	1502.5	1822.6
2	ՀՀ քաղաքաշինության նախարարություն	874.6(պետ. բյուջե)	1025.0(պետ. բյուջե)	358.0(պետ.բյուջե)
	Ընդհանուր	3818.6	2527.5	2180.6

486. 1988 թվականի երկրաշարժից հետո վերանայվեց Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքի սեյսմիկ իրադրությունը, որի արդյունքում երկրաշարժի սեյսմիկ ազդեցության գնահատականը բարձրացվեց 1-2 բալով: Այդ առումով մարզում ոլորտի զարգացման կարևորագույն ուղղությունն է համարվում շինությունների սեյսմակայունության և հուսալիության ապահովումը, սողանքային գոտիների ուսումնասիրումը և անհրաժեշտ միջոցառումների կազմակերպումը:

487. 1996-2009 թվականներին Ողջաբերդ գյուղի սողանքային գոտում գտնվող վնասվածության 4-րդ աստիճան ունեցող բնակելի տների 137 սեփականատեր պետական բյուջեից

աջակցություն են ստացել, ևս 146 ընտանիքներ կարիք ունեն նույնախի աջակցության: Ողջաբերող գյուղի տարածքը <<Հայսեյսմշին և ԿՊ ԳՀԻ>> ՓԲԸ-ի կողմից ուսումնասիրության է ենթարկվել 2002 թվականին և կազմվել է գյուղի բոլոր շինությունների ֆիզիկական վիճակի գնահատման նկարագիրը:

488. Վերջին տարիներին 2-րդ և 3-րդ աստիճանի վնասվածության գնահատված շենքերի ներկայիս վիճակը մեծ փոփոխությունների է ենթարկվել: Անհրաժեշտ է իրականացնել նոր ուսումնասիրություն, որը հիմք կհանդիսանա խնդրի վերջնական լուծման համար:

489. Մարզի քաղաքաշինության ոլորտի օրինաչափ զարգացման համար շատ կարևոր է նաև բնակավայրերի գլխավոր հատակագծերի առկայությունը: Կոտայքի մարզն ունի 67 համայնք, որից 7-ը՝ քաղաքային: Մարզի 6 քաղաքների (Հրազդան, Չարենցավան, Աբովյան, Եղվարդ, Նոր Հաճն և Ծաղկաձոր) համար կազմվել են նոր գլխավոր հատակագծեր, իսկ Բյուրեղավան քաղաքի գլխավոր հատակագծի մշակման աշխատանքներն ընթացքի մեջ են: 60 գյուղական բնակավայրերից գլխավոր հատակագծեր ունեն Արզական, Արտավազ, Հանքավան, Արզնի, Կապուտան, Ձորաղբյուր, Ջրվեժ և Գառնի համայնքները, իսկ Աղավնաձոր, Մեղրաձոր, Գողթ, Ձորավան, Նոր Գեղի և Քանաքեռավան համայնքների գլխավոր հատակագծերի մշակումը ընթացքի մեջ է:

490. Արզական, Արտավազ, Հանքավան և Արզնի համայնքների գլխավոր հատակագծերի կազմման աշխատանքներն իրականացվել են ՀՀ Կոտայքի մարզպետարանի նախաձեռնությամբ ՀՀ պետբյուջեի միջոցներով: Իսկ Հրազդան, Չարենցավան, Աբովյան, Եղվարդ, և Գառնի համայնքների գլխավոր հատակագծերի կազմման աշխատանքներն ՀՀ քաղաքաշինության նախարարության նախաձեռնությամբ պետական բյուջեի հատկացումների հաշվին: Ջրվեժ և Ծաղկաձոր համայնքների գլխավոր հատակագծերի նախագծումը իրականացվել է համապատասխան համայնքների բյուջեների միջոցներով:

491. Մինչև 500 բնակիչ ունեցող բնակավայրերի պարզեցված տարածական պլանավորման փաստաթղթերի /գլխավոր հատակագիծ/ և գոտիավորման նախագծերը կմշակվեն 5 համայնքների համար: Խնդրի լուծման համար կպահանջվի 18930.0 հազ.դրամ ֆինանսական ներդրում:

492. 500-1000 բնակիչ ունեցող բնակավայրերի պարզեցված տարածական պլանավորման փաստաթղթերի /գլխավոր հատակագիծ/ և գոտիավորման նախագծերը կմշակվեն 14 համայնքների համար: Խնդրի լուծման համար անհրաժեշտ է 76 519.0 հազ.դրամ ֆինանսական ներդրում:

493. 1000-2000 բնակիչ ունեցող բնակավայրերի պարզեցված տարածական պլանավորման փաստաթղթերի /գլխավոր հատակագիծ/ և գոտիավորման նախագծերը կմշակվեն 10 համայնքների համար: Խնդրի լուծման համար անհրաժեշտ է 76 008.0 հազ.դրամ ֆինանսական ներդրում:

494. 2000-5000 բնակիչ ունեցող բնակավայրերի պարզեցված տարածական պլանավորման փաստաթղթերի /գլխավոր հատակագիծ/ և գոտիավորման նախագծերը կմշակվեն 13 համայնքների համար: Խնդրի լուծման համար անհրաժեշտ է 135 330.0 հազ.դրամ ֆինանսական ներդրում:

495. 5000 և ավելի բնակիչ ունեցող բնակավայրերի տարածական պլանավորման փաստաթղթեր /գլխավոր հատակագիծ և գոտիավորման նախագծեր/ կմշակվեն 4 համայնքների համար, որոնց նախագծերի կազմման համար անհրաժեշտ կլինի 54 693.0 հազ. դրամի ներդրում:

496. Ընդհանուր առմամբ 46 համայնքների գլխավոր հատակագծերի կազմման համար անհրաժեշտ կլինի 361480.0 հազ.դրամ ներդրում (աղյուսակ 11.2):

Աղյուսակ 11.2

**Կոտայքի մարզի գյուղական համայնքների /բնակավայրերի/ տարածական
պլանավորման փաստաթղթերի / գլխավոր հատակագծերի և գոտիավորման
նախագծերի/ մշակման համար անհրաժեշտ ֆինանսական ծախսերի հաշվարկ.**

Հ/Հ	Համայնքները	քանակը	միավորի միջինացված արժեքը /հազ.դրամ/	ընդհանուրը /հազ. դրամ/
1	մինչև 500 բնակիչ ունեցող բնակավայրերի պարզեցված տարածական պլանավորման փաստաթղթերի /գլխավոր հատակագծերի և գոտիավորման նախագծերի / մշակում	5	3 786.0	18 930.0
2	մինչև 500-1000 բնակիչ ունեցող բնակավայրերի պարզեցված տարածական պլանավորման փաստաթղթերի /գլխավոր հատակագծերի և գոտիավորման նախագծերի / մշակում	14	5 465.0	76 519.0
3	մինչև 1000-2000 բնակիչ ունեցող բնակավայրերի պարզեցված տարածական պլանավորման փաստաթղթերի /գլխավոր հատակագծերի և գոտիավորման նախագծերի / մշակում	10	7 600.0	76 008.0
4	մինչև 2000-5000 բնակիչ ունեցող բնակավայրերի պարզեցված տարածական պլանավորման փաստաթղթերի /գլխավոր հատակագծերի և գոտիավորման նախագծերի / մշակում	13	10 410.0	135 330.0
5	5000 և ավելի բնակիչ ունեցող բնակավայրերի պարզեցված տարածական պլանավորման փաստաթղթերի /գլխավոր հատակագծերի և գոտիավորման նախագծերի / մշակում	4	13 673.25	54 693.0
	Ընդամենը	46		361 480.0

497. Ոլորտի հիմնախնդիրներն են.

- 1) մարզի բնակավայրերի գլխավոր հատակագծերի նախագծում և բնակավայրերի տարածքների գոտիավորման և օգտագործման սխեմաների մշակում,
- 2) 3-րդ աստիճանի վնասվածություն ունեցող, վերականգման ենթակա, ինչպես նաև քանդման ենթակա վթարային 4-րդ աստիճանի վնասվածություն ունեցող բազմաբնակարան շենքերում բնակվողների անվտանգության և բնակարանային խնդիրների լուծում,
- 3) վտանգավոր արտածին երկրաբանական պրոցեսների առկայության և դրանց հետևանքով առաջացած բնակարանային խնդիրների լուծում,
- 4) մինչ սեյսմակայուն շինարարական նոր նորմերի ընդունումը (1995 թվական) նախագծված և կառուցված բազմաբնակարան բնակելի շենքերի հուսալիության ցածր աստիճանը,
- 5) բնակելի ֆոնդի կառավարման, շահագործման և պահպանման հետ կապված հարցեր,
- 6) կենցաղային կոշտ թափոնների կուտակման, հեռացման և աղբավայրերի կառուցման հարցեր:

11.2 Քաղաքաշինության ոլորտի զարգացման ռազմավարությունը

498. Ոլորտի զարգացման հիմնական նպատակներն են.

- 1) շինարարական ոլորտի աստիճանական զարգացումը և այդ աշխատանքների համապատասխանեցումը միջազգային չափանիշներին,
- 2) ուժեղացնել պայքարը ապօրինի շինարարությունների դեմ,
- 3) բնակավայրերի գլխավոր հատակագծերի նախագծումը և բնակավայրերի տարածքների գոտիավորման նախագծերի ու հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաների մշակումն իրականացնել համաֆինանսավորման սկզբունքով՝ պետության մասնակցությամբ,
- 4) իրականացնել մինչև սեյսմակայուն շինարարության նոր նորմերի ընդունումը նախագծված և կառուցված բազմաբնակարան բնակելի շենքերի անձնագրավորում,
- 5) ոչ աղետի հետևանքով ժամանակավոր կացարաններում բնակվող ընտանիքների բնակարանային խնդիրների կարգավորում,
- 6) բնակավայրերում կենցաղային կոշտ թափոնների կուտակման, հեռացման և աղբավայրերի կառուցման հարցերի կարգավորում,
- 7) բնակելի ֆոնդի կառավարման, շահագործման և պահպանման հետ կապված հարցերի կարգավորում:

499. Բազմաբնակարան բնակելի շենքերի պահպանությանն ուղղված միջոցառումներ-
Հանրապետությունում մինչև սեյսմակայուն շինարարության նոր նորմերի ընդունումը նախագծված և կառուցված բազմաբնակարան բնակելի շենքերը սեյսմակայունության առումով հուսալի չեն և չեն կարող ապահովել բնակչության անվտանգությունը: Դեռևս ամբողջությամբ լուծված չեն բազմաբնակարան բնակելի շենքերի կառավարման, շահագործման և պահպանման

հետ կապված հարցերը: Հաշվի առնելով մարզում առկա 3-րդ և 4-րդ աստիճանի վնասվածություն ունեցող շենքերի ամրացման կամ վերաբնակեցման համար պահանջվող ներդրումների զգալի ծավալները և հանրապետության ներկայիս տնտեսական հնարավորությունները՝ ենթադրվում է, որ վերականգնման-ուժեղացման միջոցառումները պետք է իրականացվեն փուլ առ փուլ՝ ելնելով շենքերի առաջնահերթությունից:

500. Առաջնահերթությունը որոշելու համար կարևորվում է շենքերի տեխնիկական տվյալների բազայի առկայությունը, ինչը կարող է ապահովվել անձնագրավորման գործընթացի արդյունքում: Քանի որ վերջին 4-5 տարիների ընթացքում նշված ցուցանիշները ենթարկվել են փոփոխության, ուստի անհրաժեշտ է կատարել նոր ուսումնասիրություններ:

501. Առաջին հերթին ուժեղացման ենթակա են շինություններ Հրազդան, Չարենցավան, Աբովյան, Եղվարդ, Նոր Գեղի համայնքներում՝ ընդհանուր թվով 15 շենքեր (3 հարկանի -3 շենք, 4 հարկանի -5 շենք, 5 հարկանի -5 շենք, 9 հարկանի -1 շենք, 13 հարկանի -1 շենք):

502. Վտանգավոր արտաքին երկրաբանական պրոցեսների, քարաթափումների երևույթի և դրանից բխող շրջակա շինություններին սպասվող վտանգների ուսումնասիրությունից պարզվել է, որ Բջնի, Արզական, Քաղսի համայնքներում առկա են վտանգավոր գոտում գտնվող 27 բնակելի և 1 արդյունաբերական շինություններ:

503. Մասնագիտական ճշգրիտ ուսումնասիրությամբ հնարավոր կլինի լուծել վտանգավորություն պարունակող տարածքների բնակիչների տարահանման աշխատանքները:

504. 2004-2005 թվականներին <<Հայսեյսմշին և ԿՊ ԳՀԻ>> մասնագետների կողմից ուսումնասիրվել է մարզի 67 համայնքներում առկա մշակութային տների սեյսմիկ անվտանգության վիճակը:

505. Քաղաքաշինության ոլորտի զարգացման 2015-2018թթ. պահանջվող ֆինանսավորման ծավալները ներկայացված են հավելվածներ 11.1, 11.2, 11.3, 11.4 -ում:

12. ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

506. Մարզային և համայնքային ենթակառուցվածքների զարգացումը Կոտայքի մարզի զարգացման ծրագրի կարևոր գերակայություններից է: Մարզում ենթակառուցվածքների զարգացման հիմնական խնդիրները կապված են խմելու ջրի մատակարարման (ներառյալ ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման և որակի բարելավման), կոյուղիների (ներառյալ մաքրման կայանների վերակառուցման և կառուցման), անմխիթար վիճակում գտնվող ճանապարհների (հատկապես գյուղական բնակավայրերի), ինչպես նաև գազամատակարարման խնդիրների հետ: Այս խնդիրները հատկապես գերակա են մեծ թվով բնակչություն ունեցող համայնքների համար:

12.1 Ճանապարհաշինություն, տրանսպորտային ենթակառուցվածքներ

507. Հանրապետության տրանսպորտային համակարգի կարևոր բաղկացուցիչ մաս են հանդիսանում ավտոմոբիլային ճանապարհները, որոնք մեծ նշանակություն ունեն երկրի (մարզի) տնտեսական և սոցիալական զարգացման գործում:

508. Այդ դերի լիակատար իրականացման համար պահանջվում է արդյունավետ գործող, անվտանգ երթևեկություն ապահովող և էկոլոգիապես անվնաս ավտոճանապարհային ցանց:

509. Ավտոմոբիլային փոխադրումները հանրապետությունում կազմում են ընդհանուր փոխադրումների 95% -ը, ինչով և կողմնորոշվում է ավտոմոբիլային ճանապարհների գերակա դերը երկրի (մարզի) տնտեսությունում:

510. Կոտայքի մարզի ընդհանուր օգտագործման ճանապարհային ցանցի երկարությունը կազմում է 579.48 կմ որից՝

1) միջպետական նշանակության ավտոճանապարհներ	56.18 կմ,
2) հանրապետական նշանակության ավտոճանապարհներ	267.2 կմ
3) մարզային /տեղական/ նշանակության ավտոճանապարհներ	256.1 կմ

511. Մարզում գործող 12 փոխադրող կազմակերպությունների միջոցով իրականացվում են 38 ներմարզային երթուղիների սպասարկման աշխատանքներ: Մարզի 3 քաղաքային համայնքներում ներհամայնքային ուղևորափոխադրումներ են կատարվում 6 երթուղիներով: Մարզի համայնքներից դեպի մայրաքաղաք գործում է 8 ավտոբուսային և 8 միկրոավտոբուսային, իսկ դեպի այլ մարզեր՝ 1 ավտոբուսային միջմարզային կանոնավոր երթուղիներ: Գործում է Հրազդան-Երևան մարդատար էլեկտրագնացքը:

512. **Բնագավառի հիմնախնդիրները**-Կոտայքի մարզը իր աշխարհագրական դիրքով գտնվում է հանրապետության կենտրոնական մասում, սահմանակից է հանրապետության 6 մարզերի և Երևան քաղաքի հետ, ինչի հետևանքով մարզի ավտոճանապարհներին զգալի է նաև տարանցիկ երթուղիների թիվը և պահանջվում է ապահովել ավտոճանապարհների առավել բարվոք վիճակ:

513. Ավտոճանապարհային ցանցի զարգացման ծրագիրը նպատակաուղղված է լինելու հետևյալ խնդիրների լուծմանը.

1) անհրաժեշտ միջոցառումներ իրականացնել կրճատելու անբարեկարգ ճանապարհների հետևանքով առաջացող կորուստները՝ դրանով իսկ նպաստելով հանրային համախառն արտադրանքի ավելացմանը,

2) ճանապարհներից օգտվողների՝ շահագործման ծախսերի նվազեցման միջոցով բարձրացնել տնտեսության շահութաբերությունը,

3) բեռների տեղափոխման և ուղևորների փոխադրումների ժամանակի կրճատման միջոցով բարձրացնել տնտեսության տարբեր ճյուղերի արդյունավետությունը,

4) նպաստել ավտոփոխադրումների պահանջարկի լիակատար բավարարման, ապրանքների ու ծառայությունների սակագների իջեցման, ազգաբնակչության տեղաշարժի ցուցանիշների բարելավմանը,

5) ճանապարհաշինության բնագավառում նոր աշխատատեղերի ստեղծում,

6) անհրաժեշտ միջոցների ներդրմամբ հասնել ճանապարհատրանսպորտային պատահարների կրճատմանը և ճանապարհների բարեկարգման շնորհիվ նվազեցնել շրջակա միջավայրի վրա տրանսպորտային միջոցների վնասակար ազդեցությունը:

514. Անհամեմատելի մեծ է ավտոճանապարհների դերը հատկապես հեռավոր (ծայրամասային) գյուղական բնակավայրերի համար կրթական, սոցիալական, մշակույթային և այլ ենթակառուցվածքների մատչելիության հարցերում: Գյուղական աղքատությունը գրեթե միշտ զուգակցվում է ճանապարհային ցանցի վատ վիճակով: Աղքատ գյուղական համայնքների մեծ մասը տեղակայված են լեռնային և բարձր լեռնային գոտիներում, հիմնականում տարածաշրջանային կենտրոններից ու մայրաքաղաքից ունեն առավել մեծ հեռավորություն, և համեմատաբար անբավարար է կապը միջպետական և հանրապետական ավտոճանապարհների հետ:

515. Հատկապես լեռնային տեղանքներով անցնող ավտոճանապարհների պաստառների տակ տեղադրված ջրթող խողովակների (տարբեր տրամաչափերի) գերակշիռ մասը տարիների ընթացքում խցանվել է և չի ծառայում իր նպատակին: Ստեղծված իրավիճակը հանգեցնում է հողային պաստառների, ճանապարհային ծածկերի և այլ էլեմենտների ինտենսիվ քայքայմանը: Դրանց մաքրման աշխատանքների ծավալները չեն տեղավորվում գործող մեթոդական ցուցումներով նախատեսվող ընթացիկ պահպանության և շահագործման (Գարուն-Ամառ-Աշուն ժամանակաշրջան) բաժնում նշված չափերում: Հարցը կարգավորելու նպատակով առաջիկայում կպահանջվեն տեխնիկական լուծումներ և ֆինանսական լուրջ ներդրումներ:

516. Մարզում ինչպես միջպետական և հանրապետական, այնպես էլ մարզային նշանակության ավտոճանապարհների պահպանության և շահագործման աշխատանքները իրականացվում են մարզի 4 ճանապարհաշինական ընկերությունների միջոցով, որոնց ունեցած հնարավորությունները դեռևս բավարար չեն հատկապես ձմեռային պահպանության աշխատանքները միաժամանակյա կազմակերպելու հաշվով և երբեմն ձյունամաքման գործընթացը տեղի է ունենում ձգձգումներով, հետևանքում առաջանում են անհարկի դժվարություններ տրանսպորտային միջոցների երթևեկության համար:

517. 2011-2013թթ. Կոտայքի մարզում առաջնահերթ հիմնախնդիրների լուծման համար կատարվել են հետևյալ ավտոճանապարհների հիմնանորոգման աշխատանքներ (աղյուսակ 12.1).

Աղյուսակ 12.1

մլն. դրամ

Օբյեկտի անվանումը	Ծրագրերի արժեքը ըստ տարիների			
	2011 թ.	2012 թ.	2013 թ.	Ընդամենը
գ.Ալափարսի կենտրոնական փողոցի հիմնանորոգում	104.0			104.00
գ.Մեղրաձորի ներհամայնքային ճանապարհների վերանորոգում	46.30	48.06	18.13	112.49
Չարենցավան համայնքի փողոցների ասֆալտապատում	38.53	172.31		210.84
ք.Հրազդանի փողոցների ասֆալտապատում	43.42	252.02	139.80	435.24
Արտավազ համայնքի ներհամայնքային ճանապարհների վերանորոգում		28.14	27.45	55.59
Նոր Գեղի-Արգել-Քարաշամբ ճանապարհի վերանորոգում		67.11		67.11
Արագյուղ-Քարաշամբ ճանապարհի վերանորոգում		51.70		51.70
Աբովյան համայնքի ճանապարհների ասֆալտապատում		76.57		76.57
Նոր Երզնկա համայնքի ներհամայնքային ճանապարհների վերանորոգում			46.16	46.16
Գետամեջ համայնքի ներհամայնքային ճանապարհների վերանորոգում			38.48	38.48
Եղվարդ համայնքի Աբովյան փողոցի ասֆալտապատում			33.39	33.39
Ընդամենը	232.25	695.91	303.41	1231.57

518. 2014թ.-ին մարզում նախատեսված է իրականացնել հետևյալ ավտոճանապարհների հիմնանորոգման աշխատանքները.

- 1) Հ-110 Հ-4-Քանաքեռավան-Հ-5 (Մրգաշեն-Նոր Արտամետ հատված) - 138.0 մլն.դրամ
- 2) Հ-5 Հ-6-Նոր Գեղի-Արգել-Արզական-Հրազդան (Նոր Գեղի-Քարաշամբ հատված) - 51.6 մլն. դրամ
- 3) Չարենցավանի ներհամայնքային ճանապարհների հիմնանորոգում - 64.6 մլն. դրամ
- 4) Հրազդանի ներհամայնքային ճանապարհների հիմնանորոգում - 23.0 մլն. դրամ
- 5) Եղվարդի ներհամայնքային ճանապարհների հիմնանորոգում - 23.0 մլն. դրամ
- 6) Աբեվյանի ներհամայնքային ճանապարհների հիմնանորոգում - 55.0 մլն. դրամ
- 7) Թեղենիքի ներհամայնքային ճանապարհների հիմնանորոգում - 20.0 մլն. դրամ
- 8) Գողթի ներհամայնքային ճանապարհների հիմնանորոգում - 30.0 մլն. դրամ:

519. **Ճանապարհաշինության ոլորտի 2015-2018թթ. զարգացման ռազմավարությունը-** 2015-2018թթ. Կոտայքի մարզի ճանապարհային ցանցի վիճակի բարելավման նպատակով նախատեսվում է իրականացնել 140.9 կմ ավտոճանապարհների և առանձին հատվածների վերակառուցման ու հիմնանորոգման աշխատանքներ:

520. Ծրագրում ավտոճանապարհները ընդգրկելու առաջնահերթության ընտրությունը կատարվել է՝ ելնելով մի շարք հիմնական սկզբունքներից.

- 1) անմխիթար վիճակում գտնվող դժվարանցանելի ճանապարհահատվածներ,
- 2) նախկինում սկսած և անավարտ մնացած ճանապարհներ,
- 3) ճանապարհային տարրերի հետագա քայքայումը կանխելու նպատակով նորոգվող ճանապարհներ,
- 4) գործող շիննորմերին և ստանդարտներին համապատասխանեցնելու նպատակով բարեկարգվող հատվածներ:

521. Համապատասխան ֆինանսավորման դեպքում ըստ առաջնահերթությունների կիրականացվեն նախանշված աշխատանքները:

522. Ճանապարհաշինության ոլորտում նախատեսվում է 2015-2018 թթ. Կոտայքի մարզում ընդհանուր օգտագործման պետական ճանապարհներին իրականացնել 16592.3 մլն. դրամի աշխատանքներ՝ (հավելված N 12.1):

523. 2015-2018թթ. մարզային ենթակայության ավտոճանապարհների պահպանության և շահագործման համար անհրաժեշտ գումարների չափերը որոշվել են՝ հաշվի առնելով առավել կարևոր հատվածները, որոնք կազմում են 328.3 մլն. դրամ:

524. Ծրագրում ընդգրկվել են նաև 1 կամուրջի նորոգման աշխատանքները՝ 40.0 մլն. դրամի չափով և մարզային ավտոճանապարհների կահավորման աշխատանքները՝ 300.0 մլն. դրամ ընդհանուր գումարով:

12.2 ԶՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ

525. Կոտայքի մարզի բնական կարևոր հարստություններից են խմելու ջրի մեծ պաշարները, որոնք գերազանցում է մարզի բնակչության անհրաժեշտ պահանջարկը: Բնակչության կողմից խմելու ջրի տնօրինվող ռեսուրսները կազմում են 1929 լիտր/վրկ. որը ամբողջ խմելու ջրի պաշարի շուրջ 30 տոկոսն է: Մարզի խմելու ջրի աղբյուրներից Երևան քաղաքին է տրվում ավելի քան 4000 լիտր/վրկ. ջուր:

526. Կոտայքի մարզի 7 քաղաքային եվ 60 գյուղական համայնքների ջրամատակարարումը իրականացվում են <<Հայջրմուղկոյուղի>> ՓԲԸ-ի կողմից 22՝ <<Երևան-ջուր>> ՓԲԸ-ի կողմից 19՝ և սեփական ուժերով՝ 26 համայնքներում:

527. Մարզի խմելու ջրի արտաքին ցանցի երկարությունը կազմում է 566.9 կմ, որից քաղաքային՝ 107 կմ: Ներքին ցանցի երկարությունը 1280 կմ է, որից քաղաքայինը՝ 708 կմ:

528. Զրամատակարարման համակարգում առկա են 50 բաց աղբյուրներ, 16 խորքային հորեր, 13 պոմպակայաններ, 60 օրվա կարգավորման ջրամբարներ՝ 174.9 հազար խորանարդ մետր ընդհանուր ծավալով, 1 խմելու ջրի մաքրման կայան եվ 1 կոյուղու մաքրման կայան/ չգործող/:

529. Մարզի ջրամատակարարումը հիմնականում իրականացվում է մեխանիկական եղանակով, սակայն վերջին տարիներին իրականացվող քայլերի շնորհիվ ավելանում է ինքնահոս համակարգի տեսակարար կշիռը: Ընդհանուր առմամբ ջրամատակարարման միջին տևողությունը մարզում կազմում է շուրջ 14 ժամ և այն բաշխված է հետևյալ կերպ. 1- 4 ժամ ջրամատակարարում ունեն մարզի ընդհանուր բաժանորդների 2.4 տոկոսը. 6-12 ժամ՝ 25,2 տոկոսը. 14-24 ժամ՝ 72,4 տոկոսը:

530. Զրաչափման համակարգի առումով պատկերն այսպիսին է՝ ամենաբարձրը <<Երևան ջուր>> ՓԲԸ-ի սպասարկման գոտու բնակավայրերում է՝ 98.0 %, <<Հայջրմուղկոյուղի>> ՓԲԸ-ի սպասարկման գոտու բնակավայրերում՝ 90.5 %, իսկ համայնքների կողմից սպասարկվող բնակավայրերում՝ 5 %:

531. Խմելու ջրի մատակարարման ոլորտում վերջին տարիներին կատարված ներդրումների հիմնական աղբյուրներ են հանդիսացել ՀՀ պետական բյուջեի, <<Երևան ջուր>>

և <<Հայքմուդկոյուդի>> ՓԲԸ-ի, Համաշխարհային բանկի, Ասիական զարգացման բանկի ու Վերակառուցման և զարգացման Եվրոպական բանկի կողմից հատկացվելիք միջոցները:

532. Մարզի ջրամատակարարման վիճակը բարելավելու նպատակով 2011-2014 թվականներին պետական և համայնքային բյուջեների, ինչպես նաև մի շարք միջազգային կառույցների կողմից տրամադրված 7.250.8 մլն. դրամ միջոցներով մարզի ջրամատակարարման ոլորտում կառուցվել և վերակառուցվել են 353 կմ խմելու ջրագիծ, 12.5 կմ կոյուղագծեր, 1 Օրվա կարգավորիչ ջրամբար (ՕԿՋ)՝ 150 խոր.մետր տարողությամբ և ամբողջությամբ վերակառուցվել է 2 պոմպակայան: Այդ թվում՝ ՀՀ պետական բյուջեից հատկացվել է 1.178.3 մլն դրամ, Ասիական զարգացման բանկի կողմից՝ 2.481.3 մլն դրամ, Եվրոպական զարգացման բանկի կողմից՝ 730.0 մլն դրամ, Վերակառուցման և Զարգացման Եվրոպական բանկի կողմից՝ 34.4 մլն դրամ, Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի կողմից՝ 42.0 մլն դրամ, USAID-ի կողմից՝ 17.5 մլն դրամ, համայնքային բյուջեներից՝ 362.5 մլն. դրամ, <<Հայքմուդկոյուդի>> ՓԲԸ-ի կողմից՝ 82.8 մլն.դրամ, <<Երևան ջուր>> ՓԲԸ-ի կողմից՝ 50.0 մլն. դրամ:

533. Կատարված ներդրումների արդյունքում ջրամատակարարման միջին տևողությունը օրական կազմում է 13-14 ժամ, իսկ վարձավճարների գանձման ցուցանիշը՝ 90-95%:

534. Ոլորտի հիմնախնդիրներն են.

1) համակարգի մաշվածությունը, որի պատճառով ջրի կորուստները մարզի տարածքում գերազանցում են 80 %-ը,

2)կենտրոնացված ջրամատակարարման համակարգից չօգտվող համայնքներում ջրամատակարարման ծառայությունների տեխնիկական հագեցվածության անբավարար վիճակը և մասնագետ աշխատողների պակասը,

3)մարզի բնակավայրերին մատակարարվող խմելու ջրի որակի ապահովումը, հատկապես համայնքային ենթակայության ջրամատակարարման համակարգերում խմելու ջրի վարակազերծման միջոցառումների ցածր մակարդակը,

4) բազմաբնակարան շենքերում խմելու ջրի մատակարարման եվ ջրահեռացման համակարգերի մաշվածության և հուսալիության ցածր մակարդակը,

5)գլխամասային կառույցների, ՕԿՋ-ների, պոմպակայանների սանիտարական գոտիների ապահովումը և պահպանումը,

6)ջրահեռացման համակարգերի և կեղտաջրերի մաքրման կայանների բացակայությունը:

535. Մարզի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգի արդյունավետությունն ու հուսալիությունը բարձրացնելու նպատակով առաջարկվում է.

1)մարզի համայնքների ջրամատակարարման եվ ջրահեռացման ներտնտեսային ցանցերի վերականգնում,

2) բազմաբնակարան բնակելի շենքերի ջրամատակարարման եվ ջրահեռացման ներքին ցանցերի վերականգնում,

3) սեփական ուժերով սպասարկում իրականացնող համայնքներում մասնագիտացված կառույցների ստեղծում կամ սպասարկումը մասնագիտացված

կազմակերպություններին հանձնում,

- 4) ջրամատակարարման համակարգերի և կոյուղու մաքրման կայանների կառուցում /ընդհանուր և լոկալ/,
- 5) ջրամատակարարումը <<Աղբյուրից – ծորակ>> սկզբունքով մեկ կազմակերպության կողմից իրականացում,
- 6) ջրամատակարար կազմակերպությունների տեխնիկական բազայի հզորացում,
- 7) գլխամասային կառույցների անվտանգության եվ սանիտարական գոտիների ապահովում,
- 8) խմելու ջրի անխափան վարակազերծում.

536. Ջրամատակարարման ոլորտում ներկայացված առաջնահերթությունների հիմնական նպատակն է բնակչությանը մատչելի, հասանելի և որակյալ ծառայությունների մատուցման մակարդակի բարձրացումը:

537. 2015-2018թթ. համար Կոտայքի մարզում ջրամատակարարման և ջրահեռացման բնագավառում պահանջվող ներդրումների ծավալը գնահատվում է շուրջ 1792.0 մլն. դրամ, որը բավարար չէ մարզի ջրամատակարարման համակարգերի հիմնական վերանորոգման, ջրամատակարարման տնօրության ավելացման, կորուստների կրճատման, ինստիտուցիոնալ բարեփոխումների իրականացման և հաշվառման համակարգի կատարելագործման համար (հավելված 12.2):

12.3 ԳԵՐԵԶՄԱՆԱՏՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄ

538. Մարզում առկա է 160 գերեզմանատուն, որից բաց է 91-ը, մասնակի փակ՝ 42-ը: Ենթակա է փակման 27 գերեզմանատուն:

539. Մարզի 60 համայնքներում բնակչության հատուկ սպասարկման կազմակերպումը իրականացվում է համայնքների ղեկավարների կողմից, իսկ 7 համայնքներում՝ Հրազդան, Չարենցավան, Բյուրեղավան, Եղվարդ, Նոր Հաճըն և Արզական, ստեղծվել են բնակչության հատուկ սպասարկման կազմակերպություններ:

540. <<Հուղարկավորությունների կազմակերպման, գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի և Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման պահանջներին համապատասխան Հայաստանի Հանրապետության կառավարություն առաջարկություններ է ներկայացվել հուղարկավորությունների կազմակերպման հետ կապված օրենսդրական դաշտի կատարելագործման վերաբերյալ:

541. Մարզի համայնքներին առաջարկվել է սահմանված կարգով կատարել բաց գերեզմանատների համար տրամադրվող հողերի օգտագործման սխեմաների /հատակագծերի/ մշակում և հաստատում, սակայն ֆինանսական միջոցների բացակայության պատճառով նշված աշխատանքները չեն իրականացվել: Այն իրականացնելու համար կպահանջվի շուրջ 100.0 մլն. դրամ (հավելված 11.1):

12.4 ԳԱԶԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ

542. Մարզի տարածքում գազամատակարարումն իրականացվում է <<Հայոսգազարդ>> ՓԲԸ-ի <<Կոտայք>> և <<Աբովյան>> գազամատակարարման և գազիֆիկացման մասնաճյուղերի միջոցով:

543. 2013 թվականի հունվարի 1-ի դրությամբ մարզի 67 համայնքներից գազաֆիկացված է 62-ը: Գազիֆիկացված չեն՝ Հանքավան, Սևաբերդ, Ողջաբերդ, Սարալանջ, Բուժական համայնքները:

544. 2013 թվականին բաժանորդների թիվն ավելացել է 860-ով՝ կազմելով 61715, որից գազօգտագործող բաժանորդների թիվը 53587 է:

Աղյուսակ 12.2

Կոտայքի մարզի գազիֆիկացված քաղաքային համայնքները 01.01.2014թ. դրությամբ

Հ/Հ	Համայնքը	Կենտրոնացված գազամատակարարմանը միացված տնային տնտեսությունների տեսակարար կշիռը համայնքի տնային տնտեսությունների ընդհանուր թվում
1	Հրազդան	95
2	Աբովյան	97
3	Բյուրեղավան	70
4	Եղվարդ	85
5	Ծաղկաձոր	98
6	Նոր Հաճըն	98
7	Չարենցավան	95

Աղյուսակ 12.3

**Կոտայքի մարզի
գաղիֆիկացված գյուղական համայնքները 01.01.2014թ. դրությամբ**

Հ/Հ	Համայնքը	Կենտրոնացված գազամատակարարմանը միացված տնային տնտեսությունների թիվը
1	Ալափարս	510
2	Ակունք	400
3	Աղավնաձոր	190
4	Առինջ	1466
5	Արագյուղ	132
6	Արամուս	700
7	Արգել	688
8	Արզական	520
9	Արզնի	600
10	Արտավազ	138
11	Բալահովիտ	655
12	Բջնի	540
13	Բուժական	0
14	Գառնի	1432
15	Գեղադիր	150
16	Գեղաշեն	710
17	Գեղարդ	30
18	Գետամեջ	220
19	Գողթ	312
20	Զառ	230
21	Զովաշեն	23

22	Զովունի	961
23	Զովք	117
24	Զորավան	234
25	Թեղենիք	102
26	Լեռնանիստ	530
27	Կաթնաղբյուր	133
28	Կամարիս	420
29	Կապուտան	215
30	Կարենիս	150
31	Կոտայք	362
32	Հանքավան	0
33	Հատիս	78
34	Հացավան	152
35	Ձորաղբյուր	860
36	Մայակովսկի	421
37	Մարմարիկ	220
38	Մեղրաձոր	355
39	Մրգաշեն	272
40	Նոր Արտամետ	152
41	Նոր Գեղի	840
42	Նոր գյուղ	268
43	Նոր Երզնկա	250
44	Նուռնուս	80
45	Ողջաբերդ	0
46	Պռոշյան	914
47	Պտղնի	453

48	Զրաբեր	80
49	Զրառատ	84
50	Զրվեժ	1550
51	Գետարգել	167
52	Սարալանջ	0
53	Սոլակ	500
54	Սևաբերդ	0
55	Վերի Պտղնի	240
56	Քաղսի	440
57	Քանաքեռավան	650
58	Քասախ	1673
59	Քարաշամբ	128
60	Ֆանտան	218
Ընդամենը		23915

545. Գազամատակարարման բնագավառի հիմնախնդիրներից առաջնային է չգազիֆիկացված համայնքների գազիֆիկացումը, որը հնարավորություն կստեղծի ազգաբնակչությանը և մի շարք կազմակերպություններին օգտվել էկոլոգիապես մաքուր վառելիքից:

546. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ համայնքային բյուջեների սղության պատճառով հնարավոր չէ նշված աշխատանքներն իրականացնել համայնքների միջոցներով, խնդիրը հնարավոր է կարգավորել միայն պետական աջակցության շնորհիվ:

547. Չնայած նրան, որ վերջին տարիներին աճել է գազօգտագործողների թիվը մարզի համայնքներում, այնուամենայնիվ մարզի համայնքների գազիֆիկացման միջին ցուցանիշը 71,8 % է: Մարզի 8 համայնքներ գազիֆիկացված են 100%-ով, իսկ 5 համայնքներ ընդհանրապես գազիֆիկացված չեն /Հանքավան, Սևաբերդ, Ողջաբերդ, Բուժական, Սարալանջ/:

Աղյուսակ 12.4

Մարզի 50 % -ից ցածր գազաֆիկացում ունեցող համայնքներ

Համայնքը	Բնակելի տների քանակը	Գազաֆիկացման %-ը
Արտավազ	324	27
Կարենիս	310	48
Մեղրաձոր	798	19
Գեղարդ	126	18
Արագյուղ	286	31
Նուռնուս	168	6.5

548. Կոտայքի մարզի գազիֆիկացման 2015-2018 թվականների ծրագրով անհրաժեշտ ֆինանսական ներդրումների ընդհանուր ծավալը կազմում է 487.0 մլն դրամ, որը ներկայացված է հավելված 12.3 -ում:

13. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

13.1 Տարածքային կառավարում

13.1.1 Վարչատարածքային բաժանում

549. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման ներկա համակարգը սահմանվել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ: Համաձայն ՀՀ Սահմանադրության 11.1-րդ հոդվածի՝ ՀՀ վարչատարածքային միավորներն են մարզերն ու համայնքները: «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքի համաձայն Հրազդանի, Աբովյանի և Նաիրիի նախկին վարչական 3 շրջանների միավորումից ձևավորվեց Կոտայքի մարզը, որն ընդգրկում է 67 համայնք, որից 7-ը՝ քաղաքային և 60-ը՝ գյուղական (Հավելված 13.1):

550. ՀՀ տարածքային կառավարման գործող համակարգի մեջ, մտնում են մարզպետը, և մարզպետարանի աշխատակազմը, մարզային ենթակայության կազմակերպությունները, հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումները: Վերջինները, հանդիսանալով տարածքային կառավարման ստորաբաժանումներ և գործելով համապատասխան վերադաս մարմինների անմիջական ենթակայության ներքո, գտնվում են մարզպետի համակարգման ոլորտում:

13.1.2 Գերակայություններ և հիմնախնդիրներ

551. Հայաստանի Հանրապետության մարզերում տարածքային կառավարման ներկա համակարգի օրենսդրական հենքը կազմում են մի շարք իրավական նորմատիվ ակտեր, որոնց միջոցով էլ կարգավորվում են այդ փոխհարաբերությունները:

552. «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՀՀ Նախագահի հրամանագրով է հիմնականում սահմանվում մարզպետների իրավասությունների և լիազորությունների շրջանակները:

Սակայն տարիների փորձից ելնելով՝ անհրաժեշտություն է զգացվում տարածքային կառավարման բնագավառի հարաբերությունների կարգավորումն իրականացնել առանձին օրենքի միջոցով, քանզի օրենքով կարգավորումը կամրապնդի տարածքային կառավարման իրավական հիմքերը, կհստակեցնի պետական և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների բաշխումը, թույլ կտա խուսափել կրկնվող գործառույթներից, կապահովի մարզերում սոցիալ-տնտեսական ներդաշնակ զարգացումը:

553. Կարևոր հիմնախնդիրներից է նաև մարզի խորհրդի դերի բարձրացումը՝ հատկապես հաշվի առնելով, որ այն մարզպետարանի և ՏԻՄ-երի միջև տեղեկատվության փոխանակման, առկա հիմնախնդիրների քննարկման, գերակայությունների սահմանման, մարզի բնակչության բոլոր հատվածների հետ անմիջական կապ հաստատող, ինչպես նաև զարգացման պլանավորման

ու ծրագրերի իրականացման հետ կապված գործընթացները քննարկող կարևոր խորհրդակցական մարմին է /«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 81-րդ հոդվածով նախատեսված է, որ մարզի խորհրդի գործունեությունը կարգավորվում է նաև ՀՀ Նախագահի հրամանագրով/:

554. Տարածքային կառավարման բնագավառում 2015-2018թթ. գործունեության կարևորագույն ուղղություններն են.

- 1) Կանոնակարգել մարզպետարանի, ՏԻՄ-երի, ինչպես նաև մասնավոր հատվածում զբաղված կազմակերպությունների, ընկերությունների փոխհարաբերությունները: 2011թվականին ընդունված «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքը որոշակի օրենսդրական կարգավորումներ մտցրեց այս խնդրի հետ կապված, սակայն դեռևս անելիքներ կան: Մասնագիտական հսկողության արդյունավետ կազմակերպման համար անհրաժեշտ է մշակել և սահմանել պետության կողմից պատվիրակված լիազորությունների իրականացման կարգերն ու չափորոշիչները, ինչը կնպաստի ինչպես այդ լիազորությունների արդյունավետ իրականացմանը, այնպես էլ դրանց կատարման նկատմամբ պատշաճ հսկողության սահմանմանը:
- 2) Վերահսկողության գործառույթի հստակեցմանը զուգահեռ ավելի մեծ կարևորություն տալ մարզպետարանի կողմից իրականացվող համակարգման գործառույթներին՝ ելնելով զարգացման ու աղքատության հաղթահարման գերակայությունների տրամաբանությունից:
- 3) Վերանայել մարզի սոցիալ-տնտեսական զարգացման պլանավորման բնագավառում մարզպետարանի գործառույթները, պարտականություններն ու իրավասությունները:
- 4) ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հստակեցնել «տարածքային կառավարման մարմին» հասկացությունը, քանի որ այս բնորոշումը ամբողջական չէ:
- 5) Մշակել մարզպետարանի և մարզում գործող պետական կառավարման մարմինների միջև տեղեկատվական հոսքերի տրամադրման կարգավորման հայեցակարգ, որը թույլ կտա միասնականացնել սոցիալ-տնտեսական զարգացման խնդիրներին վերաբերող տվյալները, ստեղծել միասնական տեղեկատվական բանկ, որը կհանդիսանա մարզային կյանքի բոլոր բնագավառների համար պաշտոնական տեղեկատվության աղբյուր: Այս ուղղությամբ հատկապես կարևորվում է ԱՎԾ-ի ստորաբաժանումների հետ փոխհարաբերությունների արդյունավետության բարձրացումը:
- 6) Հստակեցնել և արդյունավետ դարձնել մարզպետարանի կողմից ՏԻՄ-երին տրամադրվող մեթոդաբանական օգնությունը, դրա տրամադրման մեխանիզմները:

13.1.3 Մարզպետարանի կառավարում

555. ՀՀ կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի N 1790 որոշմամբ հաստատված ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքը ՀՀ կառավարության հետագա որոշումներով ենթարկվեց փոփոխությունների, մասնավորապես 2014 թվականի փետրվարի 6-ի N

105-Ն որոշմամբ մարզպետարանի աշխատակազմում ստեղծվեց զորահավաքային նախապատրաստության բաժին: Մարզպետարանի աշխատակազմի նոր կառուցվածքը հնարավորություն է տալիս հիմնականում լուծել առկա հիմնախնդիրները և արդյունավետ կերպով իրականացնել մարզպետի լիազորությունները (հավելված 13.2):

556. Հետագայում այս փոփոխությունների դինամիկան պետք է շարունակել, քանի որ համակարգը պետք է համապատասխանեցվի ընթացող զարգացումներին: Կառուցվածքային փոփոխությունները պետք է դիտարկել օպտիմալության, ընդհանուր մոտեցումների պահպանման և աշխատանքների արդյունավետ կազմակերպման տեսանկյունից:

557. Պետական կառավարման համակարգի արդյունավետության բարձրացման նպատակով կարևորվում է նաև մարզպետարանի կառավարչական համակարգը ժամանակակից տեխնիկայով, համակարգչային ծրագրերով և տեղեկատվության ստացման համապատասխան միջոցներով հագեցումը:

13.1.4 Քաղաքացիական ծառայություն

558. Տարածքային կառավարման համակարգի արդյունավետ գործունեության երաշխիքներից մեկը քաղաքացիական ծառայության համակարգի մշտական կատարելագործումն է:

559. Հանրային ծառայության մյուս տեսակների համար համապատասխան օրենսդրության ստեղծումը և այդ համակարգերի կայացումը խնդիր էր առաջադրում վերանայելու քաղաքացիական, համայնքային և ընդհանրապես հանրային ծառայության հայեցակարգը: Անհրաժեշտ էր ապահովել այդ ծառայությունների միջև ներդաշնակեցումը, ձևավորել կապ՝ ծառայության մեկ տեսակից մյուսին անցնելու համար: Արդյունքում 2011 թվականին ընդունվեց «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքը, որով սահմանվեցին հանրային ծառայության սկզբունքները, կազմակերպման կարգը, էթիկայի կանոնները և այլն: Այս կարգավորումը հնարավորություն տվեց ունենալու հստակ դասակարգված պաշտոնների ցանկ՝ ըստ ծառայության տեսակների և խմբերի՝ համապատասխան պաշտոնների անվանումներով:

560. Տարածքային կառավարման համակարգի արդյունավետության բարձրացման համար անհրաժեշտ է բարելավել մարզպետի և գործադիր իշխանության մարմինների տարածքային ծառայությունների գործունեությունը: Մասնավորապես, անհրաժեշտ է նորմատիվ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու միջոցով մեխանիզմներ մշակել, համաձայն որոնց գործադիր իշխանության մարմինների տարածքային ծառայությունները պետք է տեղեկատվություն և հաշվետվություններ ներկայացնեն մարզպետին իրենց գործունեության, ինչպես նաև տվյալ ոլորտը բնութագրող ցուցանիշների մասին:

13.1.5 Էլեկտրոնային կառավարում

561. Մարզպետարանում 2009 թվականից ներդրվել է տարածքային էլեկտրոնային կառավարման համակարգը, որի արդյունքում Կոտայքի մարզն ինտեգրնետ կապում ներկայացված է պաշտոնական <http://kotayk.gov.am> կայքով: Մարզպետարանի փաստաթղթաշրջանառությունը իրականացվում է Mulberry էլեկտրոնային համակարգի միջոցով, ինչը հնարավորություն է տալիս որոշակիորեն հրապարակային դարձնել տարածքային կառավարման մարմինների գործունեությունը:

562. Համակարգի ներդրմանը զուգընթաց զգալիորեն բարձրացավ մարզպետարանի աշխատակիցների համակարգչային գիտելիքների մակարդակը: Ընդհանուր առմամբ 2010-2013 թվականներին մարզպետարանի աշխատակազմը համալրվեց համակարգչային սարքավորումներով, սակայն անհրաժեշտ է վերջնականապես լուծել համակարգիչներով և ժամանակակից կապի միջոցներով լիարժեք հագեցվածության հարցը:

563. Մարզի 2015-2018 զարգացման ծրագրի իրականացման գործընթացները ենթադրում են նաև.

- 1) ստեղծել ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվական տեխնոլոգիաների և համակարգչային սպասարկման կենտրոն,
- 2) մշակել պաշտոնական տեղեկատվության արխիվացման, պահպանման և դրանից հետագայում օգտվելու հստակ մեխանիզմ,
- 3) քաղաքացիներից ստացվող նամակների գործընթացում ներդրել սպասարկման «Մեկ պատուհանի» սկզբունքը, ինչը հնարավորություն կտա առավել արդյունավետ դարձնել բնակչության հետ մարզպետարանի փոխհարաբերությունները,
- 4) ապահովել մարզի տեղական ինքնակառավարման մարմինների և մարզպետարանի միջև գործող միասնական տեղեկատվական ցանցի կատարելագործումը:

13.2. Տեղական ինքնակառավարում

13.2.1. Համայնքային խնդիրներ

564. Համաձայն «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքի՝ Կոտայքի մարզն ունի 69 բնակավայր, որոնք ընդգրկված են 67 համայնքների կազմում: Մարզի 67 համայնքներից 7-ը քաղաքային են, 60-ը՝ գյուղական: Կոտայքի մարզում համայնքներն առավելապես կազմավորվել են «մեկ բնակավայր-մեկ համայնք» սկզբունքով: Մարզի 65 համայնքներ ընդգրկում են մեկական բնակավայր, իսկ 2 համայնքներ՝ 2 բնակավայր: Համայնքներն ըստ բնակչության թվի դասակարգման ներկայացված են աղյուսակ 13.1-ում:

Աղյուսակ 13.1

**Կոտայքի մարզի համայնքների մշտական բնակչության թվաքանակը
01.01 2014թ. դրությամբ**

Հ/Հ	Դասակարգում ըստ բնակչության թվաքանակի	Համայնքների թիվը	Տոկոսը մարզի համայնքների թվի նկատմամբ	Բնակչության ընդհանուր թիվը տվյալ համայնքներում /մարդ/	Տոկոսը մարզի բնակչության թվի նկատմամբ
1	Մինչև 100 բնակիչ	-		-	
2	101-200 բնակիչ	2	2.95	273	0.1
3	201-500 բնակիչ	5	7.5	1780	0.67
4	501-1000 բնակիչ	10	14.9	7084	2.68
5	1001-3000 բնակիչ	32	47.75	58432	22.1
6	3001-5000 բնակիչ	5	7.5	18315	6.77
7	5001-10000 բնակիչ	9	13.5	61648	23.28
8	10 000-ից ավելի բնակիչ	4	5.9	118000	44.4
	Ընդամենը	67	100	265532	100

Աղբյուրը՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության Կոտայքի մարզային գործակալություն

565. Ներկայացված աղյուսակի վերլուծությունից պարզվում է, որ մարզի 67 համայնքներից 17-ը կամ շուրջ 25.35%-ն ունեն մինչև 1000 բնակիչ, 1001-3000 բնակիչ ունեն 32 համայնքներ կամ մարզի համայնքների 47.75%-ը, 3000-ից ավելի բնակիչ ունեն 18 համայնքներ կամ ընդհանուրի 26.9%-ը:

566. Կոտայքի մարզի համայնքները օրենսդրության շրջանակներում ենթարկվել են նաև որոշակի դասակարգման: ՀՀ կառավարության 1998 թվականի նոյեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության բնակավայրերն ըստ բարձունքային նիշերի դասակարգելու մասին» N 756 որոշման համաձայն՝ մարզում կա 21 լեռնային և 5 բարձր լեռնային համայնք/ հավելված 13.1/:

567. Մարզի համայնքներում կարևորագույն խնդիր է համայնքների կարողությունների հզորացումը: Չնայած համայնքները իրավական հարթության վրա գոյություն ունեցող սուբյեկտներ են, սակայն նրանց կարողությունները դեռևս թույլ են և ենթակա են հզորացման:

568. Համայնքների կարողությունների հզորացման կարևոր նախապայման է դոտացիաների տրամադրումը: Պետական բյուջեով նախատեսված դոտացիաները բոլոր համայնքներին հատկացվում են 100%-ով: Սակայն հիմնախնդիրներից մեկը մնում է համայնքի բյուջեի սեփական եկամուտների հավաքագրման ապահովումը:

569. Երկրորդ կարևոր հանգամանքը մարզային և համայնքային մակարդակներում բավարար կարողությունների ապահովումն է կադրերի հարցում, որը թույլ կտա լիարժեք

իրականացնել լիազորությունները և առավել արդյունավետ կառավարել տեղերում: Կարողությունների զարգացման մեթոդներներից են ուսուցողական դասընթացները, որոնք պետք է շարունակվեն կազմակերպվել տեղական և կենտրոնական մակարդակով կառավարության կամ դոնորների կողմից:

570. Համայնքների բյուջեների հավաքագրման կարևոր նախապայմաններից մեկը պլանավորվող բյուջեների իրատեսությունն է և բազաների հստակությունը: Պլանավորվող ժամանակաշրջանում անհրաժեշտ է շարունակել համայնքների բյուջեներում հատկապես գույքահարկի, հողի հարկի, տուրքերի բազաների ճշգրտման աշխատանքներ:

571. Այս բնագավառում մարզպետարանի կարևորագույն խնդիրներից է պետական մակարդակում ընթացող նոր նախաձեռնությունների մասին ՏԻՄ-երին տեղեկացնելը և համապատասխան մեթոդաբանական օգնություն տրամադրելը:

572. Տեղական ինքնակառավարման համակարգի զարգացման վարչատարածքային կարևոր խնդիրներից են համայնքների սահմանների նկարագրումն ու քարտեզագրման աշխատանքները, համայնքների գլխավոր հատակագծերի կազմումը կամ դրանց ժամանակակից պայմաններին համապատասխանեցումը, համայնքների բյուջետային կարողությունների ամրապնդումն ու զարգացումը:

573. Տեղական ինքնակառավարման համակարգի 2015-2018 թվականների գերակայություններն են.

- 1) շարունակել ամրապնդել ու զարգացնել համայնքների բյուջետային կարողությունները, ինչպես նաև բարձրացնել բյուջեների հավաքագրման մակարդակը,
- 2) նպաստել միջհամայնքային համագործակցության ընդլայնմանը,
- 3) մեթոդաբանական և տեխնիկական աջակցություն ցուցաբերել համայնքներին բյուջեների կազմման ու բազաների ճշգրտման աշխատանքներում:

574. Կոտայքի մարզի զարգացումը սերտորեն կապված է մարզի համայնքների զարգացման հետ: Մարզում առկա հիմնախնդիրների լուծումը մեծ մասամբ ենթադրում է համայնքային բազմաթիվ հիմնախնդիրների լուծում: Համայնքային կարողությունների ամրապնդման և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների արդյունավետ իրականացման համատեքստում մարզի զարգացումն էլ ավելի է կարևորվում:

575. Համաձայն ՀՀ Սահմանադրության 104-րդ հոդվածի տեղական ինքնակառավարումը ոչ միայն համայնքի տեղական նշանակության հարցերը լուծելու իրավունքն է, այլև կարողությունը: Այսինքն՝ համայնքները պետք է բավարար կարողություն ունենան լուծելու տեղական ինքնակառավարման՝ օրենսդրությամբ իրենց վերապահված հարցերը և իրականացնել լիազորությունները:

576. Հայաստանում ապակենտրոնացման քաղաքականությունը հիմնականում պայմանավորված է տարածքային մարմիններից տեղական ինքնակառավարման մարմիններին որոշակի լիազորությունների և իրավասությունների փոխանցմամբ: Այս գործընթացում կարևոր է հետևյալ սկզբունքի կիրառումը՝ եթե խնդիրն ավելի արդյունավետ կարող է լուծվել համայնքներում,

ապա լիազորությունների փոխանցումը նպատակահարմար է, իսկ եթե լիազորությունների փոխանցումից հետո դրանք չեն կատարվում, այսինքն արդյունքը բացասական է, ապա այդպիսի ապակենտրոնացումը կարող է միայն վնաս բերել հանրությանը: Խնդիրն այն է, որ ապակենտրոնացումը չպետք է ինքնանպատակ լինի, այլ ապահովի օպտիմալություն և արդյունավետություն: Ապակենտրոնացման քաղաքականությունն արդյունավետ իրականացնելու համար անհրաժեշտ է համայնքների որոշակի ներուժ, որը փոքր համայնքներում բացակայում է: Այդ առումով նպատակ է դրվում խոշորացնել համայնքները՝ կոծառելով դրանց թիվը՝ միավորելով մի քանի բնակավայր մեկ համայնքի կազմում: Կառավարության կողմից խրախուսվող միջհամայնքային միավորումների ստեղծումը կարելի է համարել ապակենտրոնացման արդյունավետության բարձրացման որոշակի քայլ: Միջհամայնքային միավորումներին աջակցելու նպատակն ամրագրված է նաև ՀՀ կառավարության գործունեության ծրագրում: Նոր կազմավորվելիք միջհամայնքային միավորումները պետք է ստանան պետության ֆինանսական և տեխնիկական աջակցությունը: Այդ նպատակի իրականացման համար անհրաժեշտ է ներգրավել նաև միջազգային կազմակերպությունների ջանքերն ու կարողությունները:

577. Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ստեղծման անհրաժեշտությունից ելնելով՝ մարզի համայնքների խոշորացման խնդիրը բազմիցս քննարկվել է մարզպետարանում՝ ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն են ներկայացվել խոշորացման հնարավոր տարբերակներ, որոնք դեռևս ուսումնասիրման փուլում են:

13.2.2 Համայնքային ծառայություն

578. "Համայնքային ծառայության մասին" ՀՀ օրենքով ամրագրված են համայնքային ծառայության հիմնական սկզբունքները, կարգավորված են համայնքային ծառայության պաշտոնների և դասային աստիճանների դասակարգման, պաշտոնների նշանակման, ատեստավորման, նրանց իրավական վիճակի, կազմակերպման և ղեկավարման, ինչպես նաև դրանց հետ կապված այլ հարաբերություններ:

579. "Համայնքային ծառայության մասին" ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան համայնքների ղեկավարների և մարզպետարանի համապատասխան ստորաբաժանումների մասնակցությամբ հետ համատեղ կազմվել է համայնքների աշխատակազմերի պաշտոնների անվանացանկը: Արդյունքում՝ 2007 թվականին մարզի 67 համայնքներում հաստատվել է 588 համայնքային ծառայության պաշտոն՝ համապատասխան պաշտոնների անձնագրերով:

580. Համակարգի ներդրման քանակական ցուցանիշների վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունը ներկայացված են աղյուսակ 13.2-ում.

Աղյուսակ 13.2

ՀՀ Կոտայքի մարզի համայնքային ծառայության պաշտոնների համալրումը 2014թ. հունիսի 1-ի դրությամբ

Հ/Հ	Պաշտոնների խմբերի, ենթախմբերի անվանումը	Պաշտոնների քանակը մարզում	Այդ թվում՝		Պաշտոնների համալրման տոկոսը
			զբաղեցված պաշտոններ	Թափուր պաշտոններ	
1	Գլխավոր պաշտոններ	71	66	5	92.95
այդ թվում՝					
1.1	Առաջին ենթախումբ	3	3	0	100
1.2	Երկրորդ ենթախումբ	64	60	4	93.75
1.3	Երրորդ ենթախումբ	4	3	1	75
2	Առաջատար պաշտոններ	134	124	11	92.53
այդ թվում՝					
2.1	Առաջին ենթախումբ	32	30	2	93.75
2.2	Երկրորդ ենթախումբ	3	3	0	100
2.3	Երրորդ ենթախումբ	99	91	9	91.9
3	Կրտսեր պաշտոններ	383	357	24	93.7
այդ թվում՝					
3.1	Առաջին ենթախումբ	161	150	11	93.16
3.2	Երկրորդ ենթախումբ	140	130	10	92.85
3.3	Երրորդ ենթախումբ	82	77	3	96.25
Ընդամենը		588	549	39	93.4

Աղբյուրը՝ ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՏԾ գործունեության համակարգման վարչության տվյալներ

581. Աղյուսակից նկատվում է, որ 2014 թ. հունիսի 1-ի դրությամբ մարզի համայնքներում առկա է 588 պաշտոն, որից թափուր է 39-ը կամ մարզի համայնքային ծառայության պաշտոնների 6.6%-ը:

582. 2015-2018 թվականներին կշարունակվեն համայնքային ծառայողների վերապատրաստման, ատեստավորման և թափուր հաստիքների համալրման գործընթացները:

Համայնքային ծառայության համակարգի արդյունավետության ապահովման համար անհրաժեշտ է շարունակել իրականացնել հետևյալ միջոցառումները.

- 1) խորհրդատվական աջակցություն ցուցաբերել համայնքներին արդյունավետ գործող և ծառայության օպտիմալ կառուցվածքներ սահմանելու ուղղությամբ,
- 2) համայնքային ծառայության գործընթացի կազմակերպման ընթացքում առաջացած խնդիրների պարբերաբար քննարկում և առաջարկությունների ներկայացում ՀՀ կառավարություն:

13.2.3 Տեխնիկական ապահովվածություն

583. Տեղական ինքնակառավարման համակարգում կարևոր և դեռևս ամբողջությամբ չլուծված խնդիրներից մեկը շարունակում է մնալ համայնքների տեխնիկական զինվածության մակարդակի բարձրացումը: Համայնքները ժամանակակից տեխնիկայով և հեռահաղորդակցության համակարգերով (ինտերնետային կապ, ցանցային ծրագրեր և այլն) ապահովելը բավարար չէ այդ գործընթացի արդյունավետ իրականացման համար: Հարկավոր է նաև բարձրացնել ՏԻՄ-երի կարողությունները՝ տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման ուղղությամբ:

584. Համայնքների մեծ մասը պատշաճ տեղեկացված չեն գործող օրենսդրության փոփոխություններին, մասնավորապես տեղական ինքնակառավարման մարմինների հետ կապված փոփոխություններին: Իրավական ակտերի տեղադրումը ինտերնետում հնարավորություն է տալիս ունենալ ցանկացած իրավական ակտի էլեկտրոնային տարբերակը, որը համայնքների կողմից գործող օրենսդրության վերաբերյալ տեղեկացվածության մակարդակի բարձրացման կարևոր գործոն է:

13.2.4 Համայնքների զարգացում

585. Տարածքային զարգացման անհամաչափությունները հանրապետությունում դեռևս առկա են, հատկապես այդ տարբերությունը նկատելի է Երևան քաղաքի և Հայաստանի մարզերի միջև: Մասնավորապես, անհամաչափ տարածքային զարգացումը խնդիրներ է առաջ բերում ինչպես երկրի ներքին կայունության առումով, այնպես էլ նպաստում է տնտեսապես թույլ զարգացած տարածաշրջաններից բնակչության արտահոսքին ու մայրաքաղաքում կենտրոնացմանը:

586. Մարզի զարգացման ծրագրի կարևոր գերակայություններից է մարզի և համայնքային զարգացման ծրագրերի ներդաշնակության ապահովումը: Մարզի զարգացման ծրագիրը կարելի է բնորոշել որպես մարզի կազմում ընդգրկված համայնքների զարգացման ծրագրերի հանրագումար:

587. Մարզի զարգացման ծրագրում համայնքները պետք է դիտարկվեն որպես շահառուներ, իսկ տեղական ինքնակառավարման և պետական կառավարման մարմինները՝ կատարողներ: Այս առումով նպատակահարմար է հնարավորինս կոնկրետացնել ՏԻՄ-երի, պետական և տարածքային կառավարման մարմինների լիազորությունները և պատասխանատվությունը մարզի զարգացման ծրագրում:

588. Մարզի և համայնքների զարգացման ծրագրերի ներդաշնակության ու արդյունավետության ապահովման հաջորդ գրավականն այն է, որ առաջիկա տարիներին մարզի համայնքները, տեղական իշխանությունները համայնքային զարգացման քառամյա ծրագրերի, ինչպես նաև ոլորտային ծրագրերի մշակման ընթացքում հիմք ընդունեն և առաջնորդվեն մարզի զարգացման ծրագրով:

589. 2015-2018 թվականների ընթացքում մարզի զարգացման ծրագիրը ՀՀ կառավարության կողմից հաստատվելուց հետո տեղական ինքնակառավարման մարմինները պետք է իրենց քառամյա զարգացման ծրագրերը համապատասխանեցնեն մարզի զարգացման ծրագրերին:

590. Կոտայքի մարզի 67 համայնքներից 65-ում 2012 թվականի սեպտեմբերի 23-ին կայացան տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ, և նույն թվականի նոյեմբերի 13-ին նշված համայնքների ղեկավարներն ու համայնքների ավագանիները ստանձնեցին իրենց լիազորությունները: "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի համաձայն նորընտիր համայնքների ղեկավարների ներկայացմամբ համայնքների ավագանիները նոյեմբերի 13-ից սկսած սահմանված ժամկետում հաստատեցին համապատասխան համայնքների քառամյա զարգացման ծրագրերը և ներկայացրեցին մարզպետարան: Համայնքների քառամյա զարգացման ծրագրերի կազմման ընթացքում մարզպետարանի կողմից տրամադրվել է պատշաճ խորհրդատվություն: Չնայած նրան, որ տեղական ինքնակառավարման օրենսդրությունը համայնքային զարգացման ծրագրերի մշակման միասնական մոտեցումներ և պահանջներ չի սահմանել, այնուամենայնիվ, մարզպետարանը համայնքների ծրագրերի կազմման միասնական մեթոդաբանական ուղեցույցներ է պատրաստել և տրամադրել համայնքներին: Դրանց հիման վրա համայնքային զարգացման ծրագրերը որոշակիորեն համապատասխանեցվել են միասնական կառուցվածքային չափանիշներին, ինչի հետևանքով որոշ համայնքներում սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերը իրատեսական որոշակի հիմնավորումներ ունեն:

591. Մարզի համայնքների մի շարք հիմնախնդիրներ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից գնահատվել են առավել առաջնահերթ, որոնց լուծման համար պահանջվող ընդհանուր գումարը կազմում է 7753.0 մլն. դրամ (հավելված 13.3):

592. Նկատի ունենալով մարզային և համայնքային զարգացման ծրագրերի ներդաշնակության ապահովման անհրաժեշտությունը՝ 2015-2018 թվականներին անհրաժեշտ է իրավական հարթության վրա ունենալ համայնքների զարգացման ծրագրերի իրագործման միասնական մեթոդաբանություն, որը թույլ կտա խուսափել կրկնություններից և բարձրացնել ֆինանսական միջոցների օգտագործման արդյունավետությունը:

593. Հաշվի առնելով այն, որ բնակչությունը դեռևս ակտիվ մասնակցություն չունի ծրագրերի մշակման և քննարկման գործընթացներում՝ նպատակահարմար է, որ մարզի տարածքում

գոյություն ունեցող առավել ակտիվ հասարակական կազմակերպությունների և տեղեկատվական-վերլուծական կենտրոնների մասնակցությամբ սկզբնական շրջանում պետության աջակցությամբ, հետագայում՝ համայնքների և միջհամայնքային միավորումների միջոցով համայնքներում իրականացվեն հարցումներ և ուսումնասիրություններ՝ պարզելու բնակչության կարիքները, ցանկությունները, դժգոհությունները, ինչպես նաև սահմանել համայնքային հիմնախնդիրների լուծման առաջնահերթությունները՝ հետագայում ծրագրերում նկատված բացթողումները շտկելու, ծրագրերի իրականացման դինամիկան ապահովելու և խնդիրների լուծման հնարավորություններն ավելի իրատեսական դարձնելու համար:

594. Կարևորվում է նաև համայնքային զարգացման հիմնական ուղղությունների նախանշման փաստը: Համայնքների զարգացման կարևոր նախապայմաններ են.

1. համայնքային ենթակառուցվածքների զարգացումը (ճանապարհներ, ջրամատակարարման, ջրահեռացման, գազամատակարարման համակարգեր, կապի միջոցներ, սոցիալական և կրթական ենթակառուցվածքներ),

2. քաղաքացիական հասարակության և հանրային կազմակերպությունների ցանցի ընդլայնումը, համայնքների պաշտոնական և ոչ պաշտոնական ինստիտուցիոնալ կառուցվածքի արդիականացումը,

4. համայնքների բնակիչների իրազեկվածության մակարդակի բարձրացումը, որը հնարավորություն կտա իրականացնել, երաշխավորել և պաշտպանել նրանց մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը, որոշումների կայացման և այլ գործընթացներին,

5. համայնքների և արտաքին սուբյեկտների միջև կառուցողական համագործակցության և փոխհարաբերությունների հաստատումը,

6. միջհամայնքային միավորումների ստեղծումը:

595. Համայնքների զարգացման խնդիրների լուծմանն օգնում է նաև համայնքների ուժեղ և թույլ կողմերի վերլուծությունը, որը հնարավորություն է տալիս անհրաժեշտ գործողություններ իրականացնել թույլ կողմերը վերացնելու կամ նվազագույնի հասցնելու համար:

596. Համայնքների զարգացման ռազմավարությունը- Մարզի համայնքների զարգացման ռազմավարության առաջնահերթություններն են.

1) Տեղական ինքնակառավարման արդյունավետության բարձրացում, ՏԻՄ-երի կողմից մատուցվող ծառայությունների որակի բարձրացում, միջհամայնքային համագործակցության խթանում,

2) Տեղական ինքնակառավարման ոլորտում կառավարման հմտությունների ու ունակությունների բարձրացում, հանրային ծառայությունների տեղեկատվական կենտրոնների ստեղծում,

3) Բարձրլեռնային, լեռնային և փախստաբնակ համայնքներում ծրագրերի իրականացում,

4) Քաղաքացիների համայնքի կառավարմանը մասնակցելու խթանմանն ուղղված ծրագրերի իրականացում,

- 5) Նպաստել համայնքների ավագանիների կայացմանը և դրանց աշխատանքների հրապարակայնության ու թափանցիկության բարձրացմանը,
- 6) Բարձրացնել համայնքների բյուջեներին պետական ֆինանսական օժանդակության համակարգի արդյունավետությունը: Կատարելագործել ֆինանսական համահարթեցման մեխանիզմները,
- 7) Համայնքների համար տեղեկատվական միացյալ բանկի ստեղծում,
- 8) Աջակցություն համայնքերին՝ միջհամայնքային միավորումների ստեղծման գործում,
- 9) Համայնքային ենթակառուցվածքների (ճանապարհներ, ջրամատակարարում, գազամատակարարում) զարգացման ուղղությամբ աշխատանքների իրականացում,
- 10) Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մատուցվող ծառայությունների մատչելիությունն ու որակի բարձրացնելուն նպատակաուղղված գործողությունների իրականացում,
- 11) համայնքներից բնակչության արտագաղթի կանխման նպատակով համալիր ծրագրի մշակում և իրականացում:

13.3 Քաղաքացիական հասարակություն

597. Քաղաքացիական հասարակության լիարժեք կայացումն ու անընդհատ կատարելագործումը համարվել ու համարվում է տարբեր բնագավառների զարգացումն ապահովող կարևորագույն նախապայման՝ հիմք հանդիսանալով իրականացվող բոլոր գործընթացներում հասարակության առավել լայն շերտերի ներգրավման համար:

598. Քաղաքացիական հասարակության կայացումն ունի իր առանձնահատկությունները և պայմանավորված է սոցիալ-տնտեսական, մշակութային, պատմական, քաղաքական բնութագրերով, որոնց օպտիմալ համադրումը կարող է ապահովել քաղաքացիական հասարակության լիարժեք կայացման արդյունավետ ճանապարհ: Ընդհանուր առմամբ հասարակության մի մասը կրավորական և սպասողական դիրքորոշում ունի ընթացող գործընթացների նկատմամբ, որն ունի օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներ: Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման համակարգի գործունեության կարևոր ուղղություններից մեկը պետք է լինի այդ կրավորական դիրքորոշման վերացումը և հասարակության լայն խավերի ընդգրկումը, մասնակցությունը մարզային զարգացման գործընթացներին: Արդյունավետ կառավարման նախապայմաններից մեկը հենց ակտիվ քաղաքացիական հասարակության կայացումն ու որոշումների ընդունման գործընթացում բնակչության և քաղաքացիական ակտիվ խմբերի մասնակցության ապահովումն է: Քաղաքացիական հասարակության տարբեր խավերի մասնակցությունը կառավարման գործընթացներում ոչ միայն ժողովրդավարության ամրապնդման երաշխիքն է, այլև կարողությունների զարգացման բնագավառում կարևորագույն գործոններից մեկը:

599. Քաղաքացիական ակտիվ մասնակցությունը բնականաբար կհանգեցնի տարբեր գործառույթների առավել համակողմանի ու ընդգրկուն վերլուծությանը, ինչպես նաև լիարժեքորեն

կապահովվի հասարակության ներգրավվածությունը որոշումների ընդունման ու իրագործման ասպարեզներում:

600. Համայնքային և մարզային զարգացման ծրագրերի մշակման և իրականացման ընթացքում մասնակցային մոտեցումը կնպաստի տեղական ինքնակառավարման մարմինների կարողությունների բարձրացմանը՝ համայնքների զարգացմանն ուղղված այլընտրանքային կարծիքների հավաքագրման և համապարփակ ծրագրերի կազմման աշխատանքներում: Միևնույն ժամանակ, ՏԻՄ-երը պետք է զարգացնեն իրենց կառավարչական հմտությունները՝ մասնակցային գործընթացներն արդյունավետ համակարգելու նպատակով: Համայնքներում ՄԶԾ-ով նախատեսված միջոցառումներ իրականացնելիս, հատկապես դրանց պլանավորման, ինչպես նաև մոնիտորինգի և գնահատման ժամանակ, մասնակցային մոտեցումը կապահովի թափանցիկություն և հրապարակայնություն, ինչպես նաև կբարձրացնի բնակչության վստահությունը տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների հանդեպ:

601. 2015-2018 թվականների ընթացքում տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների առավել թափանցիկ գործունեությունն ապահովելու նպատակով, մարզպետարանի աշխատակազմի, ՏԻՄ-երի և մարզի հասարակական կազմակերպությունների ջանքերով նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

1) Մարզի տարածքում գործող ԶԼՄ-ների միջոցով հեռարձակվող պաշտոնական և ոչ պաշտոնական թողարկումներում շարունակաբար ներառել հասարակական կարծիքն ու մարզի բնակիչների կողմից արտահայտվող տեսակետները՝ այդ ամենը համադրելով պաշտոնատար անձանց կողմից ներկայացվող դիտարկումների հետ. որի արդյունքում ևս հնարավոր կդառնա ապահովել մասնակցային միտումներն ու ազգաբնակչության ներգրավումը հասարակական հնչեղություն ունեցող խնդիրների քննարկման գործընթացում:

Կարևորագույն հարցերի քննարկման ու վերլուծության նպատակով առավել հաճախադեպ դարձնել հանրային քննարկումները:

2)Պարբերաբար և համակարգված ձևով կազմակերպել մարզպետի, նրա տեղակալների և մարզպետարանում այլ ղեկավար պաշտոններ զբաղեցնող անձանց այցելությունները համայնքներ, որոնք պետք է ուղեկցվեն տեղական ինքնակառավարման մարմինների և համայնքի բնակչության հետ հանդիպում-քննարկումներով, որոնց ժամանակ մարզի ազգաբնակչությունը հնարավորություն կունենա ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն և բացատրություններ:

3)Մարզի զարգացման ծրագրի, այդ թվում՝ մարզի տարածքում պետական բյուջեի և միջազգային տարբեր կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրերի մասին պետք է պատրաստվեն հանրամատչելի տեղեկատվական թերթիկներ և առաքվեն համայնքներ:

4)Հասարակական կազմակերպությունների և զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչներին էլ պարբերաբար մասնակից դարձնել մարզի խորհրդի նիստերին, ինչպես նաև մարզպետարանում ձևավորվող ժամանակավոր հանձնաժողովների աշխատանքներին:

5) Տարբեր ոլորտների հրապարակայնության և թափանցիկության գործընթացներն առավել համակողմանի դարձնելու նպատակով անհրաժեշտ է ներդնել պաշտոնատար անձանց կողմից

հաշվետվություն ներկայացնելու նոր համակարգ, որը հասարակության առավել լայն շերտերի ընդգրկման համար կընձեռի բավարար հնարավորություններ:

602. Մարզում կոռուպցիայի դեմ պայքարի հիմնական ուղղությունը պետք է լինի մարզպետարանի, պետական մարմինների գործառույթների հստակեցումը և կառավարման համակարգի կատարելագործումը:

603. Մարզում կոռուպցիայի դեմ պայքարի շրջանակներում արդյունավետ կլինի.

1) առավելագույնս կատարելագործել և հստակեցնել պետական ծառայության հիմքերը,

2) թափանցիկ և մատչելի դարձնել պետական տնտեսական քաղաքականության իրագործման մեխանիզմները, ապահովել բնակչության լայն շրջանակների մասնակցությունը պետական հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և իրականացման գործընթացում,

3) հետևողականորեն բարձրացնել զանգվածային լրատվական միջոցների և հասարակական միավորումների դերը պետական հակակոռուպցիոն ռազմավարության քարոզչության խնդրում:

604. Կոռուպցիայի դեմ պայքարը պետք է լինի առավելագույնս հրապարակային հասարակության իրազեկման և նրա կողմից վերահսկման պայմաններում: Դա պետք է արտահայտվի ինչպես կոռուպցիայի հետևանքների, այնպես էլ կիրառված պատժամիջոցների վերաբերյալ իրազեկմամբ, ինչը կօգնի վերականգնել հասարակության վստահությունն ու հավատն արդարացի և անաչառ պետական ծառայության նկատմամբ:

605. Անընդհատ կատարելագործել քաղաքային և գյուղական համայնքներում առկա պաշտոնական ինտերնետային կայքերի հնարավորությունները, ապահովել վերջինների տեղեկատվական հագեցվածությունը, ինչպես նաև վարել համապատասխան քաղաքականություն՝ մարզի բոլոր համայնքներում համապատասխան կայքեր ունենալու նպատակով:

606. Համայնքների հնարավորություններից ելնելով հրապարակել համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի և համայնքի բյուջեի հանրամատչելի և վերլուծական ձեռնարկներ և դրանք անվճար տարածել համայնքի բնակչությանը:

607. Հասարակական կազմակերպությունների և համայնքի ակտիվ հասարակական խմբերի ներկայացուցիչներին հրավիրել համայնքի ավագանու նիստերին:

608. Առավել ընդգրկուն կերպով ձևավորել համայնքի ղեկավարի և ավագանու որոշումների՝ համայնքի տեսանելի վայրերում հրապարակման մշակույթը:

609. Հրապարակել բոլոր այն որոշումները, որոնք վերաբերում են պետության կամ միջազգային կազմակերպությունների կողմից տրամադրվող սերմացուների, վառելիքի, պարարտանյութերի և այլ նյութերի բաշխմանը:

610. Հասարակական կազմակերպությունների ջանքերով կազմակերպել բնակչության իրազեկման ծրագրեր, որոնց արդյունքում բնակչությանն իրավական տեղեկատվություն և խորհրդատվություն կտրամադրվի գույքային իրավունքների գրանցման, պայմանագրային հարաբերությունների հաստատման և բանկային վարկերի ստացման վերաբերյալ:

611. <<Տեղական հանրաքվեի մասին>> օրենքի դրույթներից ելնելով՝ նախաձեռնել և իրականացնել համայնքային հանրաքվե՝ ստեղծելով դրա նախադեպ և համայնքային հետաքրքրություն ունեցող հարցի քննարկում հանրաքվեի միջոցով:

612. Քաղաքացիական հասարակության ակտիվության ապահովման համար անհրաժեշտ է հանրային կառավարման հարաբերություններում մշտական մասնակցային դեր վերապահել գոյություն ունեցող տարաբնույթ կազմակերպություններին և հասարակական խմբերին (օրինակ, ջրօգտագործողների ընկերություններ, համայնքների միություններ, ՓՄՁ զարգացման մարզային խորհուրդ, դպրոցական խորհուրդներ և այլն):

613. Համայնքներին խրախուսելու համար մարզպետարանում ստեղծել <<Տարվա համայնք>> պաշտոնական մրցանակաբաշխություն, որը կնախատեսի որոշակի ֆինանսական և այլ տիպի օգնություններ շահող համայնքին:

614. Ցանկալի է Հանրային հեռուստատեսությամբ ունենալ <<Մարզային ժամ>> ծրագիր, որը պարբերաբար, Հանրապետության մասշտաբով մեկ ամսվա ընթացքում ընդգրկուն մեկ հաղորդում կհատկացնի յուրաքանչյուր մարզի:

615. Տեսնելով, թե ինչ գործընթաց է անցնում զարգացած քաղաքացիական հասարակությունը, հնարավոր է կանխատեսել զարգացման հնարավորությունները և փուլերը մեր մարզում:

616. Անհրաժեշտ է, որ քաղաքացին գիտակցի իր մասնակցության անհրաժեշտությունը և ակնկալի, որ իր կարծիքը լսելի և ընդունելի է, եթե այն հիմնավորված և իրատես է, գիտակցի, որ պատասխանատու է շրջապատի համար և լինի հետևողական խնդիրների լուծման հարցում:

617. Ժողովրդավարության և քաղաքացիական հասարակության կարևոր գործոն է նաև կանանց քաղաքացիական ակտիվությունն ու քաղաքացիական մասնակցությունը, բացատրելով ոչ միայն նրանով, որ մարզի բնակչության կեսից ավելին կանայք են, այլև կանայք բարձր ինտելեկտ և մեծ ներուժ ունեն:

14. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

14.1 Քարաթափումների կանխարգելում

618. Հիմնախնդրի նկարագրությունը և ներկա վիճակը-Մարզի տարածքի բարդ երկրաբանական կառուցվածքը, ռելիեֆային առանձնահատկությունները, լեռնային ապարների որոշակի կազմավորումների տարածվածությունը, կլիմայական պայմանները և սեյսմիկ իրավիճակը նպաստավոր պայմաններ են ստեղծում քարաթափերի առաջացման համար: Քարաթափերի առաջացման և զարգացման գործոններն են՝ լեռնային ապարների հողմահարումը, ինտենսիվ ճեղքավորությունը, մակերևութային և ստորգետնյա ջրերի ներգործությունը, սեյսմիկ ցնցումները:

619. Մարզի տարածքում քարաթափերի խնդրի կարգավորումն ունի ռազմավարական նշանակություն, ուստի դրա հիմնովին լուծումը պահանջում է ՀՀ կառավարության և մարզային իշխանությունների լուրջ միջամտությունը և վերահսկողությունը՝ ապահովելու համար մարզի քարաթափերի գոտիներում գտնվող բնակավայրերի կայուն զարգացումը, ենթակառուցվածքների, բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և շինությունների շահագործումը: Մարզի տարածքում ավտոճանապարհներին սպառնացող քարաթափումները գտնվում են՝ Երևան-Սևան մայրուղու 37-րդ կմ, Հրազդան-Բջնի, Չարենցավան-Արգել,Արզնի-Նոր Գեղի, Ողջաբերդ-Գառնի-Գեղարդ հատվածներում: ՀՀ Կոտայքի մարզպետարանի գործառույթները քարաթափերի կանխարգելման հիմնախնդիրների լուծման հարցում մարզպետարանը՝

- 1) համայնքի ղեկավարի ներկայացմամբ բնագավառի համապատասխան ոլորտի պատասխանատու լիազոր մարմինն է ներկայացնում տեղեկատվություն քարաթափերի, դրա հետ կապված արտակարգ իրավիճակի կամ վտանգի մասին,
- 2) կազմակերպում է անվտանգության ապահովմանն ուղղված առաջնահերթ միջոցառումներ,
- 3) կազմակերպում է գույքագրում ու միջոցառումների ծրագրերի մշակում և ներկայացնում համապատասխան ոլորտի պատասխանատու լիազոր մարմնին,
- 4) կազմակերպում է ՀՀ կառավարության կողմից ֆինանսավորվող աշխատանքների իրականացումը:

Աղյուսակ 14.1

ՀՀ Կոտայքի մարզի բնակավայրերում քարաթափերի վտանգավոր գոտիները

Հ/Հ	Բնակավայրի անվանումը	Քարաթափման տարածքը /Հա/
1	ք.Հրազդան	0.2
2	գ.Հանքավան	1.0
3	գ.Փյունիկ	1.0
4	գ.Բջնի	1.5
5	գ.Արզնի	1.0
6	գ.Նոր Գեղի	1.3
7	գ.Կարենիս	0.3
8	գ.Արամիւս	0.2
9	գ.Հացավան	1.0
10	գ.Գողթ	0.1
11	գ.Պտղնի	0.2
12	գ.Քաղսի	0.1
13	գ.Գառնի	0.2
14	Հրազդան-Երևան մայրուղու 37-րդ կմ	0.2

14.2 Բնական աղետներ

621. Կոտայքի մարզում բնական աղետներից առավել վտանգ են ներկայացնում երկրաշարժերը, սողանքները, սելավները, գարնանային վարարումների հետևանքով առաջացած ջրհեղեղները, քրաթփվածքները, ուժեղ քամիները, կարկուտը, ցրտահարությունը, մերկասառույցը, ձնաբուքը, մառախուղը, երաշտները և անտառային հրդեհները: Ուժեղ երկրաշարժի դեպքում մարզի բնակչության պաշտպանությանն ուղղված միջոցառումները իրականացվում է համաձայն ՀՀ ՈՒԺԵՂ երկրաշարժի դեպքում ՀՀ Կոտայքի մարզի գործողությունների պլանի>>, որը մշակվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հունիսի 10-ի N 919-Ն որոշման պահանջների, համաձայնեցվել է Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության հետ և հաստատվել է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2012 թվականի օգոստոսի 18 N 323-Ա որոշմամբ:

622. Մարզի տարածքում առկա սողանքային գոտիներից առավել ակտիվ և վտանգավոր սողանքային գոտիները գտնվում են Ողջաբերդի տարածքում:

623. Գարնանային հնարավոր հեղեղումները կանխարգելելու նպատակով մարզի տարածքում պետք է կատարվեն հետևյալ միջոցառումները.

- 1) Հրազդան գետի հունի մաքրում և ափապաշտպան կառույցների վերանորոգում՝ Հրազդան, Բջնի, Արզական համայնքների տարածքներում,
- 2) Մարմարիկ գետի հունի մաքրում, ափապաշտպան կառույցների վերանորոգում՝ Մարմարիկ, Մեղրաձոր համայնքների տարածքում,
- 3) Մարմարիկ գետի ձախակողմյան վտակի (Մեղրաձոր) ափապաշտպան կառույցների վերականգնում,
- 4) Հեղեղատների մաքրում Արգել, Սոլակ, Բջնի, Հացավան, Արամուս, Գեղադիր, Մրգաշեն, Կամարիս, Ակունք, Մայակովսկի, Բալահովիտ համայնքների տարածքում,
- 5) Մեղրաձոր համայնքի հեղեղատարի գլխամասերի մաքրում:

14.3. Տեխնածին աղետներ

624. Մարզում տեխնածին վթարներից են ավտովթանները, կենցաղային հրդեհները, պայթյունները, շենքերի, շինությունների հանկարծակի փլուզումները, արտադրական վտանգավոր օբյեկտներում տեղի ունեցող վթարները և պատահարները:

625. Վերոնշյալ աղետների պատճառ են հանդիսանում հիմնականում բնակչության կողմից անվտանգության կանոնների չիմացությունը և ոչ ճիշտ կիրառությունը, ինչպես նաև արտադրական վտանգավոր օբյեկտներ շահագործող անձանց կողմից տեխնիկական անվտանգության մասին ՀՀ օրենսդրության պահանջների չապահովումը:

626. Տեխնածին աղետներից խուսափելու և նվազագույնի հասցնելու համար կարևորվում է ԶԼՄ-ների և տեղական հեռուստատեսության դերը՝ բնակչության շրջանում բացատրական աշխատանքների անցկացման, անվտանգության կանոնների իրազեկման հարցում, ինչպես նաև

արտադրական վտանգավոր օբյեկտներ շահագործող անձանց մոտ տեխնիկական անվտանգության ապահովման դերի, նշանակության և կարևորության բարձրացման հարցում:

14.4 Բնական և տեխնածին աղետների ռիսկի նվազեցում

627. Բնական և տեխնածին աղետների ժամանակ բնակչության պաշտպանվածության խնդիրը պետք է միշտ լինի բարձր մակարդակի վրա:

628. Առաջին և ամենակարևոր պայմանը ռիսկերի նվազեցման գործընթացում հասարակության պատրաստվածությունն է բնական և տեխնածին աղետներին: Բնակչության պաշտպանվածության մակարդակի բարձրացման նպատակով պետք է անցկացվեն ուսումնական պարապմունքներ, սեմինարներ, ուսումնական հավաքներ, օբյեկտային վարժանքներ, տարբեր մակարդակի շտաբային ուսումնավարժություններ՝ համաձայն ՀՀ կառավարության 2003թ. հունվարի 30-ի N 134-Ն որոշման:

629. Լավ տեղեկացված բնակչությունը մեծ պատասխանատվությամբ է արձագանքում անվտանգության աստիճանի բարձրացման նպատակով իրականացվող ամեն մի գործողության:

630. Ռիսկերի նվազեցման գործընթացում կարևորվում է աղետների վերաբերյալ տեղեկատվական, վերլուծական, ինչպես նաև ազդարարման, իրազեկման աշխատանքների կազմակերպման և իրագործման դերը:

631. Համաձայն ՀՀ կառավարության 2012 թվականի հոկտեմբերի 25-ի N1351-Ն որոշման, սահմանված կարգով մարզում պետք է իրականացվեն սեյսմիկ ռիսկերի նվազեցման համար անհրաժեշտ միջոցառումներ: Մարզի սեյսմիկ ռիսկի գնահատման քարտեզի կազմման նպատակով ՄԾԶ-ով նախատեսվել է 18.0 մլն. դրամ գումար:

632. Մարզի հրշեջ-փրկարարական ջոկատները զգալի հեռավորության վրա (30-35կմ) են գտնվում որոշ բնակավայրերից, ինչը արտակարգ իրավիճակ առաջանալու դեպքում ուշացումով առձագանքելու պատճառ է հանդիսանում, ուստի անհրաժեշտ է Գառնի, Ծաղկաձոր և Բյուրեղավան համայնքներում ստեղծել հրշեջ հենակետեր, որը հնարավորություն կտա կանխել արտակարգ իրավիճակների հնարավոր հետևանքների զարգացումը, նվազագույնի հասցնել հնարավոր վնասները և օպերատիվ կերպով իրականացնել որոնողափրկարարական աշխատանքներն: Անհրաժեշտ է իրականացնել վերոնշյալ հենակետերի ստեղծման համար պահանջվող ֆինանսական միջոցների հաշվարկ և համապատասխան աշխատանքներ տանել դրանց հայթայթման ուղղությամբ:

633. Հրդեհաշիջման աշխատանքներն օպերատիվ կազմակերպելու և անցկացնելու համար մարզի բոլոր համայնքներում անհրաժեշտ է տեղադրել հրշեջ մեքենաների ջրով լիցքավորման կետեր (հիդրանտներ):

14.5 Քաղաքացիական պաշտպանության վիճակը, առկա խնդիրները և առաջարկվող միջոցառումները

634. Մարզի տարածքում բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպումն ու կառավարումն իրականացնում է մարզպետը՝ կառավարման հիմնական և պահեստային կառավարման կետերից: Հակառակորդի հարձակման սպառնալիքի ինչպես նաև ԱԻ առաջացման մասին մարզի բնակչությունը իրազեկվում է համայնքներում առկա 72 էլեկտրական չլամպների միջոցով որոնք գործում են առանձին կենտրոնացված ազդարարման համակարգի բացակայության պատճառով, իսկ այն համայնքներում որտեղ տեղադրված չեն չլամպներ ազդարարում իրականացվում է պարզագույն մեթոդներով (շարժական բարձրախոսներ, սուրհանդակներ) : Սակայն համայնքներում լարային կապի չգործելու պատճառով ազդարարումը չի գործում: Ղեկավար կազմի ազդարարումը իրականացվում է հեռախոսային և բջջային կապի միջոցով:

635. Կոտայքի մարզի բնակչության պաշտպանությունն իրականացվում է պատասպարման միջոցով, որի համար նախատեսված է օգտագործել մարզի 17 ապաստարանները, 33 հակաճառագայթային թաքստոցները , ինչպես նաև պետական և մասնավոր բնակելի ֆորդի նկուղային, կիսանկուղային տարածքները:

636. Մարզի վտանգավոր տարածքներից բնակչության տարահանումն և այլ մարզերից տարահանված բնակչության ընդունման միջոցառումները իրականացնելու նպատակով Կոտայքի մարզպետի կողմից 2013 թվականի հունիսի 27-ին ընդունվել է թիվ 275-Ա որոշում, համաձայն որի հաստատվել է մարզի Տարահանման հանձնաժողովի կազմը: Համապատասխան հանձնաժողովներ են ստեղծվել նաև մարզի 67 համայնքներում:

637. Քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացման ընթացքը վերահսկում և կանոնակարգում է մարզային փրկարարական վարչությունը: Մարզում ՔՊ ղեկավարման, ինչպես նաև փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպման և իրականացման նպատակով համաձայն ՀՀ Կառավարության 2003 թ. ապրիլի 10-ի թիվ 384 որոշման պահանջների՝ Կոտայքի մարզպետի 2011 թվականի մարտի 10-ին ընդունված թիվ 94-Ա որոշմամբ մարզպետարանի վարչությունների, բաժինների և մարզում գործող կազմակերպությունների բազայի վրա ստեղծվել են թվով 10 մարզային ՔՊ ծառայություններ, որոնք գործում են համաձայն ՔՊ ծառայությունների պլանների:

638. ՔՊ ծառայություններն են.

- 1) կապի և ազդարարման ծառայություն
- 2) ինժեներական ծառայություն
- 3) բժշկական ծառայություն
- 4) տրանսպորտային ծառայություն
- 5) առևտրի, սննդի և նյութատեխնիկական մատակարարման ծառայություն

- 6) էներգետիկայի և լուսաքողարկման ծառայություն
- 7) բույսերի և կենդանիների պաշտպանության ծառայություն
- 8) հասարակական կարգի պահպանման ծառայություն
- 9) կոմունալ-տեխնիկական ծառայություն
- 10) բնակչության հատուկ սպասարկումների ծառայություն

639. Փրկարարական և վթարավերականգնողական աշխատանքների կատարման համար ՀՀ կառավարության 2003 թվականի նոյեմբերի 13-ի թիվ 1532-Ն որոշման հիման վրա մարզպետարանի աշխատակազմի, տեղական ինքնակառավարման մարմինների, հիմնարկ-կազմակերպությունների բազայի վրա ստեղծվել են 760 կազմավորումներ, որոնցում ընդգրկվել են 3765 մարդ և համապատասխան տեխնիկա:

640. Քաղաքացիական պաշտպանության արդյունավետ կազմակերպում իրականացնելու նպատակով առաջնահերթ է հետևյալ միջոցառումների իրականացումը.

- 1) Բջջային կենտրոնացված ազդարարման համակարգի ներդրում
- 2) Պարզագույն թաքստոցների կառուցում
- 3) Գործող թաքստոցների կապիտալ նորոգում:

641. 2015-2018թթ. մարզում բնական և տեխնածին աղետների ռիսկի նվազեցման համար նախատեսված ֆինանսական միջոցները ներկայացված են հավելված 14.1-ում:

15. ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

642. Մարզի զարգացման ծրագրով նախատեսվող միջոցառումների համար անհրաժեշտ նյութական և ֆինանսական միջոցների պահանջը գնահատելու, ծրագրի իրականացման ընթացքը վերլուծելու և վերահսկելու նպատակով շատ կարևոր է մոնիտորինգի և գնահատման համակարգի ներդրումն ու արդյունավետ գործունեությունը:

643. ՄԶԾ մոնիտորինգի և գնահատման համակարգի ներդրումը մարզային մակարդակով հնարավորություն է տալիս գնահատել իրականացվող ծրագրի արդյունքները, բացահայտել և վեր հանել դրանց իրականացման ընթացքում ի հայտ եկած խոչընդոտներն ու դժվարությունները:

644. Կոտայքի ՄԶԾ-ի մշակման և իրականացման նպատակով մարզպետի համապատասխան որոշմամբ ստեղծված ոլորտային աշխատանքային խմբերի հետ մեկտեղ ստեղծվել է մոնիտորինգի գնահատման աշխատանքային խումբ՝ մարզպետի տեղակալի գլխավորությամբ:

645. ՄԶԾ-ի մշակման և կազմման նպատակով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2014 թ. ապրիլի 14-ի N 178-Ա որոշմամբ ստեղծվել է Կոտայքի մարզային զարգացման հանձնաժողով և 2014թ. ապրիլի 14-ի N 179- Ա որոշմամբ՝ 10 ոլորտային աշխատանքային խմբեր՝ անհատական կազմերով:

646. ՈԱԽ-ներում ընդգրկվել են մարզպետարանի աշխատակազմի մասնագետներ, ՏԻՄ-երի և հասարակական կազմակերպությունների ղեկավարներ ու ներկայացուցիչներ: ՈԱԽ-ները ղեկավարում են մարզպետարանի ստորաբաժանումների ղեկավարները, որոնց գործունեությունը համակարգում է մարզպետի տեղակալը:

647. ՄԶԾ-ի իրականացման աշխատանքները համակարգելու, ինչպես նաև ՄԳ իրականացման համար պլանավորված միջոցառումներն ու դրանց կատարման արդյունքները կանոնակարգելու և ամփոփելու նպատակով մշակվում է տարեկան աշխատանքային պլան (ՏԱՊ):

648. Տարեկան աշխատանքային պլանում հիմնականում ներառվում են այն ծրագրերը, որոնց իրականացման համար պատասխանատու է մարզպետարանը, ներկայացվում է ֆինանսական խնդիրների նկարագիրը, ինչպես նաև ֆինանսական միջոցներով դեռևս չապահովված ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ արդյունքների բացահայտման ռազմավարությունը:

649. Մոնիտորինգի և գնահատման աշխատանքային խմբի գործունեության արդյունքները ամփոփվում են մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնում:

650. ՄԶԾ-ն ունի մոնիտորինգի և գնահատման համապարփակ հայեցակարգ, որը բաղկացած է 4 հիմնական բաղադրիչներից.

- 1) քաղաքականության ուսումնասիրում և վերանայում

- 2) ՄՁԾ ցուցանիշների և թիրախների վերլուծություն
- 3) մասնակցային մոնիտորինգ և գնահատում (ՄՄԳ)
- 4) ազդեցության գնահատում:

651. Այս բաղադրիչների առաջին և երկրորդ տարրերն իրականացվում են մարզպետարանի ՄԳ խմբի կողմից և դրանք կարելի է համարել ներքին մոնիտորինգ և գնահատում: Իսկ երրորդ և չորրորդ տարրերը համարվում են արտաքին ՄԳ տեսակ, քանի որ դրանք հիմանականում իրականացվում են քաղաքացիական հասարակության սուբյեկտների և անկախ մասնագետների կողմից: Այս տարրերի առկայությունը թույլ է տալիս հանրության լայն շրջանակներին մասնակցելու և վերանայելու մարզի զարգացման նախաձեռնությունների, ծրագրերի կանխատեսման, իրականացման և գնահատման գործընթացները:

652. ՄՄԳ և ազդեցության գնահատումը ևս համակարգվում է մարզպետարանի ՄԳ խմբի կողմից, քանի որ այն պատասխանատու է ողջ համակարգի գործունեության համար: Սակայն այս պարագայում վերջինիս մասնակցությունը սահմանափակվում է ՄՄԳ իրականացնողներին ցուցաբերվող տեխնիկական աջակցությամբ և տեղեկատվության տրամադրմամբ՝ դրանով իսկ ապահովելով և ամրապնդելով կապը մարզային իշխանությունների և մարզի քաղաքացիական հասարակության խմբերի միջև:

653. Յուրաքանչյուր տարվա սկզբից սկսած մոնիտորինգի տվյալները օգտագործվում են ՄՁԾ-ի ՏԱՊ-ի վերանայման և մշակման նպատակով:

654. Մոնիտորինգի և գնահատման տարեկան պիկը ենթադրում է միջանկյալ և տարեկան հաշվետվությունների պատրաստում, ինչպես նաև տարեկան արդյունքների քննարկում, որի ընթացքում բոլոր ներգրավված կողմերի հետ միասին քննության են առնվում ՄԳ տարեկան հաշվետվությունը և սահմանվում են հաջորդ տարվա հիմնական խնդիրները:

16. ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

655. ՀՀ Կոտայքի մարզի 2015-2018 թվականների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրով նախատեսված աշխատանքների ու միջոցառումների ցանկն ու նրանց իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների գնահատականները ըստ ոլորտների ու առաջնահերթությունների բերված են հավելվածներում: Հավելվածներում ընդգրկված են պետական, վարկային ծրագրերով, համայնքային բյուջեի միջոցներով, ինչպես նաև մասնավոր ներդրումներով իրականացվող ծրագրերը: Հաշվի առնելով տնտեսության ներկա՝ ոչ բնական, դժվար կանխատեսվող զարգացումների ծավալումները, հավելվածներում բերված 2015-2018թթ. նախատեսվող աշխատանքների ֆինանսավորման աղբյուրները վերջնական կհստակեցվեն տվյալ տարվա ՀՀ պետական բյուջեն հաստատելուց հետո: Յուրաքանչյուր տարվա տարեկան աշխատանքային պլանները (ՏԱՊ) կազմելու ժամանակ, երբ հաստատված կլինեն տվյալ տարվա պետական բյուջեից մարզին հատկացվող ֆինանսական միջոցները և հայտնի կլինեն միջազգային կազմակերպությունների ու տեղական հիմնադրամների կողմից մարզում կատարվելիք ծրագրերը, կվերանայվեն տվյալ տարվա իրականացվելիք միջոցառումների ցանկերը՝ ըստ ոլորտների (տես՝ համապատասխան հավելվածները) և ֆինանսավորման աղբյուրների:

656. **Արդյունաբերության, ՓՄՁ ոլորտի և մասնավոր հատվածի** ֆինանսավորման համար նախատեսվում է 2289.7 մլն. դրամ (ծրագրի ընդհանուր ֆինանսավորման 3.5 %-ը):

657. Սոցիալական ոլորտների ընդհանուր ֆինանսավորումը կազմում է 19558.4 մլն. դրամ (ծրագրի ֆինանսավորման ընդհանուր գումարի 30.1%-ը), այդ թվում՝

- **Կրթության** ոլորտի ֆինանսավորման համար նախատեսվում է 11363.0 մլն. դրամ (ծրագրի ընդհանուր ֆինանսավորման 17.5 %-ը)
- **Մշակույթի** ոլորտի ֆինանսավորման համար նախատեսվում է 4128.8 մլն. դրամ (ծրագրի ընդհանուր ֆինանսավորման 6.4 %-ը)
- **Սպորտի և երիտասարդության հարցերի** ոլորտի ֆինանսավորման համար նախատեսվում է 2372.5 մլն. դրամ (ծրագրի ընդհանուր ֆինանսավորման 3.7%-ը)
- **Առողջապահության** ոլորտի ֆինանսավորման համար նախատեսվում է 740.0 մլն. դրամ (ծրագրի ընդհանուր ֆինանսավորման 1.1%-ը):
- **Սոցիալական պաշտպանության** ոլորտի ֆինանսավորման համար նախատեսվում է 954.0 մլն. դրամ (ծրագրի ընդհանուր ֆինանսավորման 1.5%-ը):

658. Գյուղատնտեսության ոլորտի ֆինանսավորման համար նախատեսվում է 675.0 մլն. դրամ (ծրագրի ֆինանսավորման ընդհանուր գումարի 1.0%-ը):

659. Բնապահպանության ոլորտի ֆինանսավորման համար նախատեսվում է 4440.6 մլն. դրամ (ծրագրի ֆինանսավորման ընդհանուր գումարի 6.8%-ը):

660. Քաղաքաշինության ոլորտի ֆինանսավորման համար նախատեսվում է 11051.1 մլն. դրամ (ծրագրի ֆինանսավորման ընդհանուր գումարի 17.0%-ը):

661. Մարզային և համայնքային ենթակառուցվածքների ոլորտի ֆինանսավորման համար նախատեսվում է 18871.3 մլն. դրամ (ծրագրի ֆինանսավորման ընդհանուր գումարի 29.1%-ը), այդ թվում՝

- **Ճանապարհաշինության ոլորտի** ֆինանսավորման համար նախատեսվում է 16592.3 մլն. դրամ (ծրագրի ֆինանսավորման ընդհանուր գումարի 25.5%-ը)
- **Ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի** ֆինանսավորման համար նախատեսվում է 1792.0 մլն. դրամ (ծրագրի ֆինանսավորման ընդհանուր գումարի 2.8%-ը)
- **Գազամատակարարման ոլորտի** ֆինանսավորման համար նախատեսվում է 487.0 մլն. դրամ (ծրագրի ֆինանսավորման ընդհանուր գումարի 0.8%-ը)

662. Արտակարգ իրավիճակներից բնակչության և տարածքների պաշտպանության ոլորտի ֆինանսավորման համար նախատեսվում է 298.6 մլն. դրամ (ծրագրի ֆինանսավորման ընդհանուր գումարի 0.5%-ը):

663.Մարզի համայնքների առաջնահերթ հիմնախնդիրների ֆինանսավորման համար կպահանջվի 7753.0 մլն. դրամ գումար (հավելված 13.3), որը կազմում է ծրագրի ընդհանուր ֆինանսավորման 12.0 %-ը:

664. ՀՀ Կոտայքի մարզի 2015-2018 թվականների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրով նախատեսված ոլորտների ամփոփ ֆինանսավորումը ներկայացված է հավելված 16-ում, ընդհանուր գումարը կազմում է շուրջ **64937.7** մլն.դրամ, որից՝

պետական բյուջեի միջոցներով	- 1723.8 մլն. դրամ
համայնքային բյուջեի միջոցներով	- 3515.5 մլն. դրամ
մասնավոր ներդրումներով	- 2289.7 մլն. դրամ
այլ աղբյուրներով	- 57408.7 մլն. դրամ

17. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ